

**ՀՀ ԳԱՎՓԻԼ ԻՍՈՓԱՅՈՒ ԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼ ՈԳԻԱՅԻ
ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Իկիլ իկյ ան Արթուր Արայի

**Ինքնիշխանությունը որպես պետորակական
ինստիտուտ
(պատմատեսական վերլուծություն)**

ԱՏԵՆԱԿՈՍՈՒ ԹՅՈՒՆ

ԺԲ.00.01 «Պետություն և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսման նախնական պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գ. Յ. Սաֆարյան

**Երևան – 2016
ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ**

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

.....3

ԳԼ ՈՒ Խ1. ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒ ԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒ ՏԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՄՊԵԿՏՆԵՐԻ ՎԵՐԼ ՈՒՃՈՒ ԹՅՈՒՆ

- 1.1 Ինքնիշխանությունը և հասկացությունները և
Էությունները11
- 1.2 Ինքնիշխանությունը և սկզբունքները և
հատկանիշները18
- 1.3 Պետական իշխանությունը և պետական ինքնիշխանությունը
հարաբերակցությունը և
հիմնախնդիրները
.....30

ԳԼ ՈՒ Խ2. ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒ ԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒ ՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՉԱՐԳԱՏՈՒՄԸ

- 2.1 Ինքնիշխանությունը ինստիտուտի ձևավորումը և զարգացումը Յիև
և Միջին
դարերում
.....36
- 2.2 Ինքնիշխանությունը հայեցակարգի զարգացումը Նոր և
Նորագույն
ժամանակաշրջանում
.....50

ԳԼ ՈՒ Խ3. ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒ ԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԳԼՈՒԲԱԼ ԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

- 3.1 Գլոբալացումը որպես արդի դարաշրջանի օբյեկտիվ
գործընթաց97
- 3.2 Միջազգային իրավունքը, վերապետականությունը և պետական
ինքնիշխանությունը
.....106

3.3 Պետական ինքնիշխանության և ազգային ինքնիշխանության
հարաբերակցության
հիմնախնդիրը
.....143

ԱՄՓՈՓՈՒՄ

.....157

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

.....161

ՆԵՐԱՆՈՒ ԹՅՈՒՆ

Թեմայի հետազոտության արդիականությունը: Ժամանակակից քաղաքական, տնտեսական, իրավական և մշակութային գլոբալացման պայմաններում առավել սրություն է դրվում պետական ինքնիշխանության հարցը՝ թե գիտական-տեսական և թե գործնական-կիրառական առումով:

Ինքնիշխանությունը որպես պետաիրավական և իրավունքի ընդհանուր տեսության կատեգորիա, միշտ եղել և մնում է իրավագիտության բարդ ու վիճահարույց հիմնախնդիրներից մեկը:

Ինքնիշխանության թեման շատ կենսահույզ է, քանզի մեծ է նրա գործնական նշանակությունը թե ներպետական և թե միջազգային հարաբերությունների պրակտիկայում: Մանավանդ, որ վերջին ժամանակներս մասնագիտական գրականության մեջ և քաղաքական-հրապարակախոսական նյութերում զգալի մաս է կազմում այն մտայնությունը, թե իբր ինքնիշխանությունը «հնացած», «իր դարն ապրած» կատեգորիա է և պետք է հանձնվի արխիվ կամ հիմնովին վերանայված լինի, թե անհրաժեշտ է լիովին կամ մասնակիորեն հրաժարվել ինքնիշխանությունից՝ որպես գլոբալացման պայմաններում տնտեսական ու քաղաքական հիմնահարցերի լուծմանը «խանգարող» հանգամանքի: Իբր ինքնիշխանությունը խանգարում է խաղաղության հաստատմանը, ատումային գենքի արտադրության նկատմամբ վերահսկողության հաստատմանը, մարդու իրավունքների պրոյեկցիաների տարածմանը և այլն:

Ինքնիշխանության «մահացման» վերաբերյալ խոսակցությունների իսկական իմաստը բացահայտվում է շնորհիվ պետությունների այն պրակտիկայի, որի համար դրանք պետք է ծառայեն որպես «արդարացում» և «տեսական հիմնավորում»:

Ինքնիշխանության հակառակորդները վկայակոչում են այն հանգամանքը, որ ինքնիշխանությունը պատմական կատեգորիա է, որն առաջացել է որոշակի պայմաններում, ուստի և չի կարող հավակնել բացարձակ իրավասակացողության: Հակառակը, գտնում ենք, որ ինքնիշխանությունը կարող է, պետք է խաղա և իսկապես դրական դեր է խաղում հանուն առաջարկման ու ժողովրդավարության հաստատման գործում:

Ինքնիշխանության հակառակորդները նշում են, որ ինքնիշխանության (կամ ինչպես պնդում են՝ բացարձակ ինքնիշխանության) և 17-18-րդ դարերի բացարձակ միապետության միջև կա պատմական կապ, և այստեղից հանգում են այն եզրակացության, թե ինքնիշխանությունը կիրառելի է 20 և 21-րդ դարերի համար միանգամայն այլ պայմաններում: Իրականում ինքնիշխանության կատեգորիայի բովանդակությունը զարգացել և հարմարվել է պատմականորեն փոփոխվող սոցիալ-քաղաքական պայմաններին: Պատմականորեն ինքնիշխանության կատեգորիան առաջացել է բացարձակ միապետության զարգացման հետևանքով (ի դեպ, վերջինս որոշակի փոփոխում եղել է ավելի առաջադիմական, քան իրեն նախորդած ավատական մասնատվածությունը): Սակայն շուտով հանդես գալով ժողովրդական ինքնիշխանության ձևով, արդեն ուղղված էր բացարձակ միապետության դեմ: Սոցիալ-դեմոկրատիան, ձգտելով իշխանության, ընդունեց ինքնիշխանության սկզբունքը անտեսելով նրա միապետական ծագումը և նրան տալով նոր բովանդակություն և ձևեր:

Ինքնիշխանության հակառակորդները ինքնիշխանությունը վերացնելու իրենց ձգտումը հաճախ քողարկում են «բացարձակ» ինքնիշխանության դեմ ուղղված հիմնավորումներով: Սակայն բացարձակ ինքնիշխանությունն երբեք չի եղել և չէր էլ կարող լինել: Դա մետաֆիզիկական կարգի կատեգորիա է կամ երևակայության արդյունք: Միշտ էլ գոյություն են ունեցել ինքնիշխանության սահմաններ, որոնք պայմանավորված են եղել տնտեսական պայմաններով, պետությունների միջազգային հաղորդակցման զարգացումը և պատմական դարաշրջանի քաղաքական պահանջներով: Այդ սահմանները փոփոխվել և փոխվում են այդ բոլոր գործոնների փոփոխման համեմատ:

Ինքնիշխանության կատեգորիան երբևիցե չի մերժել կամ մերժում այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ մեծամասնության սկզբունքը, որի կիրառումը միջազգային կազմակերպությունում անխուսափելի է, չի ժխտում միջազգային արդարադատության և պետությունների միջև տնտեսական համագործակցության զարգացումները, ատումային զենքի արտադրության նկատմամբ

միջազգային վերահսկողության անհրաժեշտությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը և այլն:

Ազգային ինքնիշխանության համար մղվող պայքարը հանուն ժողովրդավարության ու միջազգային խաղաղության մղվող պայքարի բաղադրամասն է:

Հանուն ազգային անկախության, պետական ինքնիշխանության համար մղվող պայքարը արդի պայմաններում անքակտելիորեն կապված է ժողովրդավարական պետական իշխանության համար մղվող պայքարի հետ: Ժողովուրդների հենց այդ պայքարում են դրսևորվում արդի պատմական ժամանակաշրջանում ինքնիշխանության ունեցած դրական իմաստն ու առաջադիմական նշանակությունը:

Վերոնշվածով է պայմանավորված թեմայի ընտրությունը և հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Պետական ինքնիշխանության հիմնախնդրի վերաբերյալ հայրենական իրավագիտության մեջ, ըստ էության, ուսումնասիրված չէ, բացառությամբ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» դասագրքում արժածված է ընդամենը մի քանի էջերում¹:

Պետական ինքնիշխանության հիմնախնդիրն առավել խորությամբ ուսումնասիրված է խորհրդային և հետխորհրդային ռուսական իրավագիտության մեջ, մասնավորապես՝ Ի.Գ. Լևինի, Ս.Ա. Ավագյանի, Մ.Վ. Բազլայի, Ն.Ի. Գրաչևի, Ա.Լ. Բրեդիխինի աշխատություններում²: Այս առումով, սույն ատենախոսական աշխատանքը էականորեն տարբերվում է վերոնշված աշխատություններից նրանով (բնավ չնսեմացնելով նշված աշխատությունների գիտական նշանակությունը), որ իրավունքի համընդհանուր տեսության դիրքերից, համակարգված վերլուծության է ենթարկվել պետական ինքնիշխանության հիմնախնդրի հետ կապված պատմական, իմացաբանական և

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Պատ. խմբ. Ն.Ա. Այվագյան: Երևան, 2008, էջ 116-119:

² Հետխորհրդային շրջանի աշխատություններից տես, օրինակ՝ **Грачев Н.И.** Государственные устройство и суверенитет в современном мире: вопросы теории и практики. Дисс... док. юрид. наук. Волгоград. 2009; **Бредихин А.Л.** Суверенитет как политико-правовой феномен. М., 2012 և այլն:

իրավաբանական ասպեկտները:

Սույն ատենախոսական աշխատանքը կոչված է մասամբ
լրացնել ու հայրենական իրավագիտության մեջ առկա բացը:

Յետազոտության օբյեկտը և առարկան. Յետազոտության **օբյեկտը**
պետական ինքնիշխանության ինստիտուտն է և նրա ժամանակակից
ընկալումը:

Յետազոտության **առարկան**՝ պետական ինքնաիշխանության
պատմական զարգացման հիմնական ուղենիշներն են, նրա
ժամանակակից էությունը և բովանդակությունն է:

Յետազոտության նպատակը և խնդիրները. Ատենախոսական
աշխատանքի հիմնական նպատակն է համակողմանի ուսումնասիրել
պետական ինքնիշխանության կատեգորայի հետ կապված պատմական,
տեսական և մեթոդաբանական կիրառական հիմնախնդիրների համալիր
ուսումնասիրությունն է:

Նշված նպատակին հետամուտ լինելով՝ հեղինակը փորձել է
լուծել հետևյալ **խնդիրները.**

– բացահայտել պետական ինքնիշխանության հայեցակարգի հետ
կապված պատմատեսական հիմնախնդիրները,

– լուսաբանել պետական ինքնիշխանության ժամանակակից
ընկալումը և դրա էությունը,

– վերլուծել պետական ինքնիշխանության հիմնական
հատկանիշները,

– ներկայացնել պետական ինքնիշխանության, միջազգային
իրավունքի և վերապետականության փոխարարերակցության
հիմնական կողմերը,

– բացահայտել պետական ինքնիշխանության և ազգային
ինքնիշխանության հարաբերակցության հիմնախնդիրները:

Գիտական նորույթը. Ատենախոսական աշխատանքի գիտական
նորույթը նրանում է, որ հայրենական իրավագիտության մեջ
առաջին անգամ հեղինակը վեր է հանել պետական ինքնիշխանության
հետ կապված պատմատեսական և ժամանակակից պետիրավական
հարցադրումները, դրանց համարժեք լուծումների համարմշակել է
գիտականորեն հիմնավորված առաջարկություններ, որոնք ունեն
զգալի տեսական-իրավական և պրակտիկ քաղաքականության ոլորտում

գործնական-կիրառական նշանակություն:

Բացի դրանից, հեղինակը չի սահմանափակվել միայն հիմնախնդիրների տեսական վերլուծություններով և համապատասխան ընդհանրացումներով, այլ և հետազոտության արդյունքների հիման վրա առաջարկում է ինքնիշխանության «ճկուն և հարաշարժ» հեղինակային կոնցեպցիան, որի միջոցով մի կողմից՝ կարելի է ամրապնդել ազգային-պետական ինքնիշխանությունը, մյուս կողմից՝ հնարավորություն է ընձեռում առավել ճկուն և նպատակասլաց քաղաքականություն իրականացնել միջազգային և տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներում: Այդպիսի տեսական, գործնական և մեթոդաբանական համալիր ուղղվածությունը ատենախոսական աշխատանքի առարկայական բովանդակությունն է կազմում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.
Ելնելով ատենախոսության հիմնական նպատակից և դրանից հետևող խնդիրներից՝ պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

1. Ինքնիշխանությունը պետության, ազգի և անձի որպես սոցիալական երևույթների կենսագոյության էական բնութագրիչներից է: Ինքնիշխանությունը կրող սուբյեկտները օժտված լինելով կամքի (պետական, ժողովրդական (ազգային) և անձնային ազատությամբ՝ իրենց իրավունքների սահմաններում ինքնուրույն որոշում են իրենց կեցության կարգավիճակը՝ ձևական (իրավաբանական) հավասարության պայմաններում:

2. Պետական ինքնիշխանությունն առավել բարձր պետաիրավական կատեգորիա է, քանի որ ինքնիշխան պետության առկայության դեպքում է, որ լիարժեքորեն օգտագործվում է ազգի և անձի ինքնիշխանությունը վերջիններիս ինքնիշխանությունը գտնում է պետության երաշխավորված պաշտպանության ներքո:

3. Աշխատանքում հեղինակը վիճարկում է այն տարածված տեսակետը, թե իբր պետական ինքնիշխանության հայեցակարգի հիմնադիրը \$րանսիացի իրավաբան Ժան Բոդենն է (XVIդ.): Ժան Բոդենը զարգացրել է ինքնիշխանության հասկացության իրավաքաղաքական բովանդակությունը, սակայն սույն աշխատանքի հեղինակը հանգել

Ե այն տեսակետին, որ իրավագիտության մեջ պետական ինքնիշխանության առաջին սահմանումը, որը հեռու չէ արդի գիտական սահմանումից, մշակել է XII դարի հայ մեծանուն օրենսգետ և օրենսդիր Մխիթար Գոշը՝ իր «Յայոց Դատաստանագրքում» (1184թ.): Գոշը ինքնիշխանության կարևոր հատկանիշներ է համարում պետության գերակայությունը հպատակ ժողովրդի և տարածքի նկատմամբ և անկախությունը՝ արտաքին հարաբերություններում:

4. Յասարակությունում և միջազգային հարաբերություններում պետական ինքնիշխանությունը մարմնավորում է պետական իշխանության մարմինների իրավաբանական և սոցիալական լեգիտիմությունը՝ այսինքն՝ ժողովրդի՝ որպես իշխանության աղբյուրի, անունից լուծելու երկրի ներքին և արտաքին քաղաքականության հետ առնչվող ցանկացած հարց:

5. Իրավաբանական առումով՝ պետական ինքնիշխանությունը բացարձակ և անսահմանափակ չէ: Երկրի ներսում օժտված լինելով տարածքային գերակայությամբ, ինքնիշխանությունը սահմանափակվում է իրավունքի գերակայությամբ, իսկ արտաքին հարաբերություններում՝ օժտված լինելով անկախությամբ և ինքնուրույնությամբ, այդուհանդերձ ինքնիշխանությունը սահմանափակվում է պետության կողմից վավերացած միջազգային պայմանագրերով, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով ու նորմերով:

6. Սոցիալական առումով՝ ինքնիշխանությունը սոցիալական գոյի այնպիսի վիճակ է, որը բնորոշվում է՝ ճկունությամբ, հարաշարժությամբ և փոփոխականությամբ, որոնք սակայն չեն ստվերում ինքնիշխանության օբյեկտիվ հիմնարար իրավական-քաղաքական հատկանիշները՝ տարածքային գերակայությունը, անկախությունը և ինքնուրույնությունը:

7. Ինքնիշխանությունը ոչ թե պետական իշխանության, այլ պետության օրգանական հատկանիշն է, այսինքն այն ծագում է պետության հետ և վերանում պետության հետ միասին: Միայն ինքնիշխան պետություններն են օժտված լրիվ իրավասուբյեկտությամբ, այսինքն՝ ազատ և ինքնուրույն

որոշելու պետական կառուցվածքի ձևը, կառավարման ձևը, քաղաքական վարչակարգը, սոցիալ-տնտեսական կարգը և արտաքին քաղաքականության հարցերը:

8. Ինքնիշխանությունը՝ ձևի ու բովանդակության փիլիսոփայական կատեգորիայի տեսանկյունից, ունի երկու փոխկապված բաղադրիչներ՝ քաղաքական և իրավաբանական: Ինքնիշխանություն բովանդակությունը՝ նրա քաղաքական կողմն է կամ քաղաքական ինքնիշխանությունն է, իսկ ինքնիշխանության ձևը՝ նրա իրավաբանական էությունն է կամ իրավաբանական ինքնիշխանությունը: Դրանք մեկուսի գոյություն ունենալ չեն կարող և կազմում են մեկ միասնական ամբողջական կատեգորիա՝ պետական ինքնիշխանություն:

Յետազոտության տեսական հենքը և մեթոդաբանական հիմունքները.

Ատենախոսության համար՝ որպես տեսական հենք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան հեղինակների գիտական հետազոտությունները: Այս առումով՝ հեղինակն ուսումնասիրել և վերլուծել է հայ իրավաբան գիտնականների Ն.Ա. Այվազյանի, Ն.Ա. Ասիյանի, Գ.Բ. Դանիելյանի, Գ.Գ. Յարությունյանի, Ռ.Գ. Պետրոսյանի, Վ.Վ. Ստեփանյանի, Գ.Յ. Սաֆարյանի և մյուս հեղինակների աշխատությունները:

Հեղինակն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել խորհրդային և հետխորհրդային շրջանի ռուս գիտնականների, մասնավորապես՝ Ս.Ա. Ավազյանի, Ա.Ա. Ալեքսեյի, Յու.Ա. Դենիսովի, Ա.Բ. Վենգերովի, Ի.Դ. Լևինի, Վ.Ա. Տումանովի, Վ.Ս. Ներսեսյանցի, Բ.Ն. Տոպրևի, Վ.Ն. Խրոպանյուկի, Վ.Վ. Լազարևի, Օ.Է. Լեյստի, Ա.Լ. Բրեդիհինի, Ն.Ի. Գրաչևի և այլոց աշխատություններին:

Հեղինակը կիրառել է հետազոտության տարբեր գիտական մեթոդներ՝ այդ թվում՝ համընդհանուր դիալեկտիկայի օրենքներն ու կատեգորիաները, ձևական տրամաբանության եղանակներն ու միջոցները, համեմատական-իրավաբանական և ձևական իրավաբանական վերլուծության, պատմական-համեմատական մեթոդները:

Յետազոտության տեսական և գործնական նշանակությունը.

Հայաստանի Հանրապետությունում իրականացված սահմանադրական

փոփոխությունների, ինչպես նաև տարածաշրջանի իրավաքաղաքական իրադարձությունների համատեքստում առավել կարևորվում է պետական ինքնիշխանության ամրապնդումը: Այս առումով անտեսախոսության տեսական նշանակությունն այն է, որ գիտական հետազոտության արդյունքները ինքնիշխանության տեսական և կիրառական հիմնախնդիրները՝ իրավունքի ընդհանուր տեսության տեսանկյունից և կարող են օգտակար լինել հետազոտություննասիրողների համար:

Գործնական առումով հետազոտության արդյունքները և նյութերը կարող են օգտագործվել իրավաստեղծ գործունեության, ինչպես նաև «Պետության և իրավունքի տեսություն», «Սահմանադրական իրավունք» և «Միջազգային իրավունք» դասընթացների ուսումնառության ժամանակ:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը.

Անտեսախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի միջառք գիտական հրատարակումներում:

Անտեսախոսությունը իրականացվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ քննարկվել և գրախոսվել է աշխատանքը:

Աշխատանքի կառուցվածքը. Սույն անտեսախոսական աշխատանքը բաղկացած է՝ ներածական մասից, երեք գլխից, որոնք ներառում են ութ ենթագլուխներ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

ԻՆՔՆԻՀԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՄՊԵԿՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Ինքնիշխանությունն հասկացությունն է և երկրները

Ժամանակակից քաղաքական քարտեզի վրա յուրաքանչյուր պետությունն օժտված է միայն իրեն հատուկ առանձնահատկություններով: Սակայն գոյություն ունեն ընդհանուր և ավելի խորքային հատկանիշներ, որոնք բնութագրական են ոչ միայն որևէ կոնկրետ պետությանը, այլև, այսպես կոչված, տեսականորեն պայմանավորված «իդեալական» պետությանը, առանց որի պետությունը որպես այդպիսին չի կարող լիարժեք գործել կամ նույնիսկ գոյություն ունենալ:

Այդպիսի օբյեկտիվ և խորքային հատկանիշներից մեկը՝ ինքնիշխանությունն է, որով բնութագրվում է ընդհանրապես պետությունը՝ որպես իրավաքաղաքական կազմակերպություն³:

Ինքնիշխանությունը, որպես պետության հիմնական հատկանիշներից մեկը, իր երևան գալուց հետո հրավիրել է բազմաթիվ բանավեճեր և մինչև օրս չի մշակվել ինքնիշխանության վերաբերյալ համընդհանուր հասկացության սահմանում: Ինչպես նշել է ռուս գիտնական Վ. Գեսենը «Ամենից առաջ ինքնիշխանության համար պայքարում էին թագավորները, այժմ նրա մասին վիճում են պրոֆեսորները»⁴:

Առաջինը «ինքնիշխանությունն» եզրույթը մտցվել է գիտական շրջանառության մեջ ֆրանսիացի մեծ մտածող Ժան Բոդեներ, իր «Վեց գիրք Յանրապետության մասին» աշխատության մեջ⁵:

Ինքնիշխանության հասկացության և երկրան վերաբերյալ արտահայտված բազմաթիվ տեսակետների, հայեցակարգերի և մոտեցումների բազմազանությունը ու բազմաթիվությունը, այնուամենայնիվ, ինդրո հիմնահարցերի հետազոտությունը դեռևս

³ Տե՛ս **Бредихин А.Л.** Суверенитет как политико-правовой феномен. М., 2012, էջ 5:

⁴ Տե՛ս **Гессен В.М.** Общее учение о государстве. СПб., 1912, էջ 56:

⁵ Տե՛ս **Черняк Л.Ю.** Общетеоретические проблемы государственного суверенитета: Дисс... канд, юрид, наук., Челябинск, 2007, էջ 18:

արդիական և հրատապ է⁶:

Ինքնիշխանությունը սոցիալական որևէ երևույթի (գոյի) ինքնությունը, անկախությունը և գերակայությունն է: Սոցիալական իրականության մեջ, որպես կանոն, ինքնիշխանության հիմնական սուբյեկտներն են՝ անձը, ժողովուրդը (ազգը) և պետությունը, որոնցից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները:

Անձի ինքնիշխանությունը նրա կամքի ազատության և սոցիալական նորմերի սահմաններում ինքնուրույն ու անկախ վարքագծի դրսևորումն է: Անձի ինքնիշխանությունն անսահման ու բացարձակ չէ և չի էլ կարող լինել, որովհետև որպես սոցիալական ու բանական էակ՝ անձն ապրում է որոշակիորեն կանոնակարգված հասարակության մեջ, որտեղ պարտավոր է պահպանել ինչպես գրված, այնպես էլ չգրված սոցիալական նորմերը: Այսինքն՝ անձն այնքանով է ինքնիշխան, որքանով չի խախտում, ուրիշների ինքնիշխանությունը, ազատությունը և սոցիալական նորմերը:

Ժողովրդի (ազգի) ինքնիշխանությունն ազգի օրգանական քաղաքական հատկությունն է, նրա անբաժան, անօտարելի և բնական հատկանիշը: Ժողովրդի ինքնիշխանությունը պայմանավորված է իր գոյության փաստով: Ժողովրդի ինքնիշխանության դրսևորման քաղաքական - իրավական ձևերը կարող են տարբեր լինել՝ անկախ պետականություն, ինքնավարության տարբեր աստիճաններ և այլն: Ժողովրդի ինքնիշխանության իրացման դասական եղանակը ինքնորոշման իրավունքն է, որը յուրաքանչյուր ազգի անօտարելի և բնական իրավունքն է⁷: Ազգերի ինքնորոշման իրավունքը մարդու կուլտիկ հիմնարար իրավունքներից է, որի շնորհիվ ինքնորոշ

⁶ St´ u **Doch K.** Der Souveränitätsbegriff von Bodin bis zu Fredrich dem Grossen. Berlin. 1897; **Mourenbrecher F.** Die regierenden Fürsten und die Souveränitet. München, 1839, **Laski H.** The Foundations of Sovereignty. L., 1931; **Jouvenel B.** Sovereignty. An Inquar into Political Good. N.Y., 1957; **Vyrynen R.** Sovereignty Globalization, and Transnational Social Movements. In: International Relations of the Asia-Pacific. 2001. №4; **Дорогин В.А.** Суверенитет в советском государственном праве. М., 1948; **Шевцов В.С.** Суверенитет Советского государства. М., 1972; **Манелис Б.Л.** Проблема суверенитета и ее значение в современных условиях. Ташкент, 1964; **Безуглов А.А.** Суверенитет советского народа. М., 1975; Проблемы суверенитета в Российской Федерации. М., 1996; **Марченко М.Н.** Проблемы общей теории государства и права: учебник в 2-х томах. Том 1. Государство 2-е изд., перераб. и доп. М., 2007, էջ 453-466; **Левин И.Д.** Суверенитет. СПб. 2003; **Пастухова Н.Б.** Проблемы государственного суверенитета. М., 2006:

⁷ Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին մանրամասն տե՛ս **Шевцов В.С.** Национальный суверенитет: Проблемы теории и методологии. М., 1948; **Безуглов А.А.** Суверенитет советского народа. М., 1975:

ազգը որոշում է իր ճակատագիրը: Ըստ այդ իրավունքի՝ «Յուրաքանչյուր ժողովուրդ (ազգ) իրավունք ունի ազատորեն տնօրինել իր ճակատագիրը ինքնուրույնաբար, առանց արտաքին միջամտության լուծել իր ներքին զարգացման և կառուցվածքի բոլոր հարցերը, իր հայեցողությամբ ընտրել այլ ժողովուրդների և պետությունների հետ հարաբերվելու ցանկացած ձևը»⁸: Ժամանակակից սահմանադրականությունը և միջազգային իրավունքը երաշխավորում են ժողովուրդների և ազգությունների իրավահավասարությունն ու ինքնորոշումը, տնտեսական ու սոցիալական ազատզարգացումը՝ առանց որևէ միջամտության⁹:

Ազգերի ինքնորոշման դասական և արդյունավետ տարբերակը՝ անկախ, ինքնիշխան պետականության հիմնադրումն է, քանզի պետականությունը յուրաքանչյուր ազգի հասարակական կյանքի կազմակերպման, կանոնակարգման, բնականոն զարգացման և անվտանգության ապահովման իրավաբաղադրական հենասյունն է: Պետական ինքնիշխանության հասկացության և նրա բովանդակության վերաբերյալ տեսակետները բազմաթիվ ու բազմազան են¹⁰: Ընդհանրապես, ինքնիշխանության հիմնահարցը պետության գոյության համար առանձնահատուկ նշանակություն ունի: Խնդրո հիմնահարցի նշանակությունը նաև նրանում է, որ ինքնիշխանությունը, լինելով իրավական կատեգորիա, ներառում է սոցիոլոգիական-քաղաքագիտական և տնտեսական երանգներ¹¹: Նշված երանգները ինչպես նկատեցինք պատմական տարբեր դարաշրջաններում պետական ինքնիշխանության իրական բովանդակության վրա ունեցել են հստակ և էական ազդեցություն, ինչը նաև կանխորոշել է ինքնիշխանության տեսական հայեցակարգի ձևավորման ու զարգացման հիմնական ուղեւիշները:

⁸ Տե՛ս Курс международного право. Т. 2, М., 1989, էջ 169:

⁹ Տե՛ս «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1996 թ. միջազգային պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին կետը, որտեղ մասնավորապես նշված է. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ու ժով նարնք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»:

¹⁰ Տե՛ս **Левин И.Д.** Суверенитет, М., 2003; Проблемы суверенитета в Российской Федерации. М., 1994; **Грохальски С.** Государства в решении современных глобальных проблем /Международно – правовые аспекты/. Автореф. докт. дисс. М., 1998; Котов А.К. Государственный суверенитет Республики Казахстан: политическо-правовой анализ становления и проблемы национально - государственного развития: Автореф. докт. дисс. Алматы, 1994:

¹¹ Տե՛ս **Грохальски С.** նշվ. աշխ., էջ 24:

Բազմադարյան զարգացման ընթացքում պետական ինքնիշխանության հայեցակարգը պարունակում է նրա հասկացողության վերաբերյալ բազմաթիվ սահմանումներ: Օրինակ էլ ինեկը պետական ինքնիշխանությունը դիտարկում էր որպես պետության «իրավական ինքնորոշման բացառիկ ունակություն»: «Միայն ինքնիշխան պետությունը, - նշում էր նա, - կարող է իր կողմից սահմանված և ճանաչված իրավական սահմաններում կատարյալ ազատությամբ ձևավորել իր իրավասության նորմատիվ բովանդակությունը»¹²: Ինքնիշխան պետական իշխանությունը, նրա կարծիքով, նշանակում է «անկախ և գերագույն իշխանություն, որը չի ճանաչում իրենից ավելի բարձր իշխանություն»¹³: Անգլիացի նշանավոր միջազգայնագետ Լ. Օպենհեյմի կարծիքով, պետական ինքնիշխանությունը «բարձրագույն իշխանություն է, որը կախյալ չէ ոչ մի արտաքին իշխանությունից»: «Ինքնիշխանությունը բառիս բուն իմաստով, - պարզաբանում է Օպենհեյմը, - ենթադրում է «լիակատար անկախություն և ինչպես երկրի սահմաններում, այնպես էլ նրանից դուրս»¹⁴:

Ամերիկյան սոցիոլոգիական բառարանում պետական ինքնիշխանությունը մեկնաբանվում է որպես «պետության մենաշնորհը իր իրավագործության սահմաններում օգտագործելու պետական իշխանությունը»¹⁵:

Պետական ինքնիշխանության հասկացության և նրա բովանդակության վերաբերյալ համամասն տեսակետներ կան նաև հայրենական և ռուսական իրավաբանական գրականության մեջ: Այսպես՝ իրավագիտության դոկտոր Վ. Նազարյանը գտնում էր. «սահմանադրությունն իրավաբանական կապ է հաստատում ազգի /ժողովրդի/ և նրա պետության սուվերենության միջև, պաշտոնապես ամրագրում է պետական սուվերենության ստորադաս, ծառայական դերն ազգային սուվերենության նկատմամբ, որն սկզբունքային նշանակություն ունի երկրում ժողովրդավարական քաղաքական-իրավական ռեժիմի հաստատման համար: Ազգային և պետական սուվերենության միջև եղած կապը կանխորոշված է ազգ /ժողովուրդ/

¹² Տե՛ս **Еллинек Г.** Общее учение о государстве., 1908. Էջ 363:

¹³ Նույն տեղը, էջ 347:

¹⁴ Տե՛ս **Оппенгейм П.** Международное право. Том 1, Полутом 1, М., 1948, էջ 130:

¹⁵ Տե՛ս Dictionary of Sociology and Re'latet Sciences. Totowa /New Yersey/. 1988, էջ 304:

- պէտուէթյունն հարաբերակցութեամբ, որն ամեն մի պէտուէթյան սահմանադրութեան առանցքն է¹⁶: Ինչպէս պէտուէթյան բոլոր լիազորութեաններն միակ աղբյուրը ժողովուրդն է /ազգը/, այնպէս էլ պետական ինքնիշխանութեան ծավալը և բովանդակութեանը պայմանավորված են ազգային ինքնիշխանութեամբ»:

«Ինքնիշխանութեանը, - նշում է Ի. Լևինը, - պէտուէթյան լիիշխանութեանն է իր տարածքում և անկախութեանը այլ պէտուէթյուններից»¹⁷: Ըստ Ա.Կոտովի «Ինքնիշխանութեանը պէտուէթյան հատկութեան, հատկանիշ կամ սկզբունք չէ: Ինքնիշխանութեանը հետև պետական իշխանութեանն է որակապէս լիիրավ և գործառնութեամբ՝ ինքնուրույն»¹⁸:

Բավարարվենք բերված օրինակներով և արձանագրենք, որ դրանցում պետական ինքնիշխանութեան մասին եղած ընդհանրութեաններով հանդերձ (պետական իշխանութեան տարածքային գերակայութեանն ու անկախութեանը՝ արտաքին հարաբերութեաններում) կան նաև տարածայնութեաններ հետևյալ առումներով, ինքնիշխանութեանը պէտուէթյան, թե՞ պետական իշխանութեան հատկութեանն է, այն բաժանելի է, թե անբաժան, անսահմանափակ է, թե սահմանափակ պետական ինքնիշխանութեան և ազգային ինքնիշխանութեան հարաբերութեանը, պետական ինքնիշխանութեանը խոչընդոտում է պէտուէթյունների ինտեգրմանը գլոբալ իզացիայի արդի դարաշրջանում թե ոչ և այլն: Մեր կարծիքով, անկախ նրանից, թե ինչպէս է հասկացվում պետական ինքնիշխանութեանը և նրա բովանդակութեանը, մեթոդաբանական տեսանկյունից անհրաժեշտ է քննարկել խնդրո հիմնահարցը երկու առումով ձևական - իրավաբանական և փաստացի: Յետևելով տրամաբանութեան կանոններին առաջին տեսանկյունից պետք է դիտարկել ինքնիշխանութեանը՝ որպէս պետաիրավական երևույթ կամ ինստիտուտ, իսկ երկրորդը ենթադրում է խնդրո հարցի քննարկումը նրա նյութական-առարկայական բովանդակութեան

¹⁶ Տե՛ս **Վլ ադիմիր Նազարյան**. Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան կոնցեպցիան. Երևան, 1992, էջ 12-13:

¹⁷ Տե՛ս **Левин И.Д.** Суверенитет. М., 2003, էջ 71; Шевцов В.С. Государственный суверенитет. М., 1979, էջ 5:

¹⁸ Տե՛ս **Котов А.К.** Государственный суверенитет Республики Казахстан: политическо - правовой анализ становления и проблемы национально - государственного развития: Автореф. дисс. док. юрид. наук. Алматы. 1994, էջ 28:

տեսանկյունից, որպեսզի համակողմանի պատկերացում կազմենք այդ բարդ երևույթի մասին: Ձևական-իրավաբանական առումով ինքնիշխանությունը պետության գլխավոր ու էական հատկություններն է, առանց որի վտանգվում է բուն պետության գոյությունը: «Բնական իրավունքի տեսությունը,- նշում է Գ.Ելինեկը,- արձանագրում է պետության բնականոն տիպը, որի իշխանությունը բնութագրվում է ինքնիշխանության էական հատկանիշով»¹⁹: Ա. Կոտովն իրավացիորեն նշելով, որ պետական ինքնիշխանության իմացությունը ելակետային սահմանագիծ է նոր կարգի պետությունների էությունը հասկանալու համար, այնուհանդերձ, ինքնիշխանությունը վերագրում է ոչ թե պետությանը, այլ պետական իշխանությանը²⁰: Նման տեսակետը փաստարկված չէ և արդարացիորեն քննադատվում է գրականության մեջ, քանի որ պետական իշխանությունը, որպես պետության անբաժան հատկանիշ, կարող է դրսևորվել ինչպես լիիրավ իշխանության, այնպես էլ սահմանափակ իշխանության ձևով: Սակայն իր էությունամբ պետական իշխանությունն ինքնին օժտված չէ ինքնիշխանությամբ, այլ հանձինս համապատասխան պետական մարմինների, որոնք, օժտված լինելով որոշակի լիազորություններով, իրականացնում են պետական իշխանությունը: Պետական իշխանությունն իրականացնող երեք հիմնական ճյուղերը օրենսդիրը, գործադիրը և դատականը, ինքնին երբևիցե օժտված չեն պետական ինքնիշխանությամբ, հետևաբար, պետական ինքնիշխանությունը բացառապես ամբողջ պետության անբաժան հատկանիշն է, այլ ոչ թե նրա առանձին մասերի, ներառյալ նաև պետական իշխանությունը:

Ժամանակակից սահմանադրական դոկտրինայում և պրակտիկայում, ինքնիշխանությունը որպես ամբողջ պետության անբաժան և էական հատկանիշ, շատ հաճախ նշվում է երկրի հիմնական օրենքում: Օրինակ Յայաստանի Յանրապետության սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յայաստանի Յանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է», այսինքն պետական ինքնիշխանության միակ կրողը Յայաստանի Յանրապետությունն է, այլ ոչ թե նրա

¹⁹ Տե՛ս **Еллинек Г.** Նշվ. աշխ., էջ. 355:

²⁰ Տե՛ս **Котов А.К.** Государственный суверенитет Республики Казахстан... էջ 16, 28, 31:

առանձին մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնք օժտված են միայն իշխանական լիազորությամբ:

Պետությունն իր ինքնիշխանությամբ կոչված է առավել բարենպաստ պայմաններ ապահովել ժողովրդի /ազգի/ տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային արժանապատիվ կյանքի համար, այսինքն՝ ժողովրդի ինքնիշխանության իրականացման համար: Ուստի պետական ինքնիշխանության ծավալը միշտ էլ ենթակա է որոշակի փոփոխման, այն կարող է սահմանափակվել կամ ընդլայնվել կապված ժողովրդի ինքնիշխանության իրականացման համար և ազգի առջև ծառայած խնդիրներին առավել ճիշտ ու արդյունավետ լուծումներ տալ ու համար²¹:

Այսպիսով, պետական ինքնիշխանությունը բացարձակ և անսահման չէ. նրա սահմանափակ բնույթը պայմանավորված է ոչ միայն ժողովրդի ինքնիշխանությամբ, այլև պետությունների միջազգային հանրության գոյությամբ, որի անդամ պետությունները, անվերապահորեն ընդունելով միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի գերապատվությունն իրենց ազգային օրենսդրության նկատմամբ, դրանով իսկ կամովին սահմանափակում են իրենց ինքնիշխանությունը որոշակի ոլորտներում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ «անսահմանափակ և բացարձակ պետական ինքնիշխանության» տեսական հայեցակարգը երբևիցե իրականություն չդարձավ և չէր էլ կարող դառնալ, քանի որ պետությունների «անսահմանափակ և բացարձակ» ինքնիշխանության պայմաններում անհնար է ապահովել ինչպես ներպետական կայուն ժողովրդավարական հաստատությունների և ինստիտուտների բնականոն գործառնությունները, այնպես էլ անհնար է ապահովել միջազգային անվտանգության համակարգը, միջազգային իրավակարգը և միջազգային օրինականությունը, առանց որոնց հնարավոր չէ քաղաքակիրթ աշխարհի գոյությունն ու զարգացումը:

Պետությունների ինքնիշխանությունը սահմանափակված է ոչ միայն միջազգային իրավական ակտերի գերապատվությամբ և ստանձնած պարտավորություններով, այլև տարածաշրջանային

²¹ Տե՛ս **Վլադիմիր Նազարյան**, Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան, էջ 12-13:

կազմակերպության ներքին անդամակցելով /Եվրոպական Միության, Մաքսային Միության և այլն/, համադաշնային կամ դաշնային պետական միության ներում ընդգրկվելով:

Սահմանադրական զարգացման արակտիկայում, ինչպես նշում է պրոֆեսոր Վ. Չիրկինը, դաշնային պետությունների և նրա սուբյեկտների ինքնիշխանության վերաբերյալ գոյություն ունի երկու տեսակետ, եթե դաշնությունը հիմնված է պետությունների միության վրա, ինքնիշխանությամբ կարող են օժտված լինել /հիարկետ, տարբեր ծավալով ու բովանդակությամբ/ և՛ միութենական պետությունը, և՛ նրա սուբյեկտները, իսկ եթե դաշնությունը կազմված է «ինքնավարության» հիմունքների վրա, ապա պետական ինքնիշխանությամբ օժտված է միայն դաշնությունը²²:

Այսպիսով, պետական ինքնիշխանությունը ձևական - իրավաբանական առումով ամբողջ պետության անբաժան և էական հատկանիշն է, որի տարածքային գերակայությունը ներպետական հարաբերություններում սահմանափակվում է Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով, իսկ արտաքին հարաբերություններում միջազգային իրավական նորմերով ու սկզբունքներով:

Պետական ինքնիշխանությունը փաստացի առումով ենթադրում է պետական ինքնիշխանության նյութական-առարկայական բովանդակությունն ու ծավալը, որը պայմանավորված է տվյալ պետության քաղաքական - իրավական կարգավիճակով, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և օբյեկտիվորեն գոյություն ունեցող այլ գործոններով:

1.2. Ինքնիշխանության սկզբունքները և հատկանիշները

Բացահայտելով ինքնիշխանության հասկացությունը և էությունը, անհրաժեշտ է նաև լուսաբանել ինքնիշխանության սկզբունքներն ու հատկանիշները, այսինքն՝ նրա որակական հատկությունները, որոնք թույլ են տալիս ոչ միայն բացահայտել ինքնիշխանության իմաստը, այլ նաև առանձնացնել նրանց այլ

²² Տե՛ս **Чиркин В.С.** Современное федеративное государство. М., 1997, էջ 43-44. **Грачев Н.И.** Государственное устройство и суверенитет в современном мире: вопросы теории и практики: Дис. ... док. юрид. наук. Волгоград, 2009, էջ 182-183:

պետաիրավական երևույթներից:

Ինքնիշխանության սկզբունքների տակ անհրաժեշտ է հասկանալ այն հիմնարար ելակետային դրույթները, որոնք որոշում են ինքնիշխանության էությունը, որպես սոցիալ-իրավական երևույթի:

Իրավաբանական գրականության մեջ առանձնացվում են ինքնիշխանության հետևյալ սկզբունքները.

1. ինքնիշխանության անօտարելիությունը,

2. ինքնիշխանության անսահմանափակվածությունը,

3. իշխանության գերակայությունը,

4. ինքնիշխանության անբաժանելիությունը և իշխանությունների տարանջատումը,

5. ինքնիշխանության ոչ բացարձակությունը,

6. Ժողովրդի ինքնիշխանության գերակայությունը պետական ինքնիշխանության հանդեպ²³:

Բերված սկզբունքները, մեր կարծիքով, իրենից ներկայացնում են ինքնիշխանության հատկանիշներ, այլ ոչ թե սկզբունքներ:

Մեր կարծիքով, ինքնիշխանությունը հենվում է հետևյալ հիմնարար ելակետային սկզբունքների վրա.

1. Պետական ինքնիշխանության իրավաբաղաբական բնույթը: Տվյալ սկզբունքը նշանակում է, որ պետական ինքնիշխանությունն ունի երկու չափորոշիչ. քաղաքական և իրավական, որոնք ձևավորում են պետական ինքնիշխանության միասնական հասկացությունը: Դրանց միջև եղած կապը կարելի է որոշել որպես ձևի և բովանդակության հարաբերակցություն, որում ձևը հանդես է գալիս իրավաբանական ինքնիշխանությունը, իսկ բովանդակությունը՝ քաղաքական:

2. Ներկա ժամանակաշրջանում, հատկապես եվրոպական գիտություն մեջ²⁴, ուրվագծվում է պետական ինքնիշխանության իրավաբանական կողմի գերակայությունը, որը չի համապատասխանում իրերի իսկական դրույթությունը:

3. Ինքնիշխանության գերակայություն և անկախության

²³ Տե՛ս **Дксунусов М.С.** Суверенитет: терминологизация и детерминологизация, пагубность ложной стереотипизации суверенитета в массовом сознании. Доклад, представленный в научно-экспертный совет при Председателе Совета федерации России. М., 1997, էջ 18-19:

²⁴ Տե՛ս **Кузнецова Е.** Западные концепции государственного суверенитета. М., 2001:

սկզբունքը: Այս սկզբունքը արտահայտում է պետական ինքնիշխանության երկայնակ ու բովանդակային ընդունելությունը:

4. Պետական ինքնիշխանության իրական լինելը: Այս սկզբունքը ենթադրում է, որ պետական ինքնիշխանությունը պետք է ռեալ գոյություն ունենա, հակառակ դեպքում հայտարարվում է ինքնիշխանություն, սակայն չի գործում: Դա ձևական (ֆորմալ) ինքնիշխանություն է, որը շատ փխրուն է և հնարավորություն է չունի իրականացվելու²⁵:

5. Ինքնիշխան իրավունքների ոչ սպառիչ լինելը: Այս սկզբունքը ենթադրում է, որ ինքնիշխանությունը չի հանգում որոշակի ինքնիշխան իրավունքների սպառիչ թվարկումով, քանի որ ինքնիշխան պետությունը ինքն է որոշում արտաքին և ներքին հարցերի վերաբերյալ իր մոտեցումները:

6. Պետական ինքնիշխանության անընդհատությունը: Այս սկզբունքը առաջ է քաշել ժան Բոդենը, որը ենթադրում է նրա գոյությանը պետության գոյության հետ միասին ու անբաժան: Այն ընկալվում է պետության վերացման հետ միասին:

7. Պետական ինքնիշխանության սկզբունքների հետ սերտորեն փոխկապված են նրա հատկանիշները: Այս առումով, ինքնիշխանությունը ենթադրում է, որ պետության ձևով կազմակերպված տվյալ հասարակության մեջ պետության անունից հանդես եկող հանրային իշխանությունը իր մեջ ներառում է հետևյալ անհրաժեշտ հատկանիշները.

1) Իշխանության միասնությունը, որն արտահայտված է իր համախմբում բարձրագույն պետական իշխանություն կազմող միասնական բարձրագույն մարմնի կամ մարմինների համակարգի առկայության ձևով: Այս համախմբի որպես միասնական իշխանության մարմինների համակարգի բնույթը պայմանավորված է դասակարգային հիմքի միակողմանի: Նրա իրավաբանական հատկատիչներն այն են, որ.

ա) այդ մարմինների համախմբի իրավասությունը ներառում է պետության գործառնականների կատարման համար անհրաժեշտ բոլոր

²⁵ Տե՛ս **Диденко Н.С.** Трансформация политико-правового содержания государственного суверенитета на рубеже XX-XXI вв: Теоритико-правовое исследование: Дис. ... канд. юрид. наук. Ростов-на-Дону, 2004, էջ 53-54:

լիազորությունները,

բ) այդ համակարգին պատկանող տարբեր մարմիններ չեն կարող միևնույն հանգամանքներում միևնույն սուբյեկտներին միաժամանակ պարտադրել վարքի միմյանց բացառող կանոններ:

2) Իշխանական պարտադրանքի մենաշնորհի պատկանելությունն պետությանը հանձինս նրա մարմինների, կամ դրա կենտրոնացում նրա ձեռքում: Հասարակության անդամների նկատմամբ կիրառվող իշխանական պարտադրանքը կարող է իրականացվել միայն պետության կողմից կամ պետական նպատակներով պետության կողմից համապատասխան իրավունքի շնորհման հետևանքով: Վերջին դեպքում բավարար չէ, որ պետությունը պարզապես թույլ տա կամ հավանություն տա, որ որևէ ոչ պետական կազմակերպություն իրականացնի այդ պարտադրանքը: Անհրաժեշտ է, որ տեղի ունենա անմիջական շնորհում, որի դեպքում ցանկացած իշխանական պարտադրանք դառնում է այնպիսի պարտադրանք, որը բխում է հենց պետական իշխանությունից, որն իր հայեցողությամբ կարող է տվյալ կազմակերպությանը զրկել նրա իշխանական գործառույթներից: Հակառակ դեպքում պետության ինքնիշխանությունը կլիներ սահմանափակ, քանի որ գոյություն կունենային այնպիսի կազմակերպություններ, որոնք իշխանական գործառույթները կիրականացնեին իրենց իսկ կողմից մի կողմ թողած պետությունը, և այդ դեպքում պետական ինքնիշխանության մասին խոսք անգամ չի կարող:

Իշխանական պարտադրանքի մենաշնորհի կամ կենտրոնացման սկզբունքն ուղղված է ընդդեմ սոցիալ-քաղաքական հոգնակիության սկզբունքի, որը կարող է հանգեցնել ինքնիշխանության ժխտմանը:

Ընդամին իշխանական պարտադրանքը ներառում է ոչ միայն հրամանի արձակում, այլ և ենթակա սուբյեկտների կողմից տվյալ հրամանի կատարման ապահովում սեփական ուժերով²⁶:

²⁶ Պետության կողմից իշխանական պարտադրանքի մենաշնորհն իր ձեռքը վերցնելու հարցի նշանակությունը շեշտել է դեռ Կորկունովը (Русское государственное право. 1914. т.1. Ст. 27-29): Սակայն Կորկունովը թույլ է տալիս անհետևողականություն, իշխանական պարտադրանքի մենաշնորհը դիտելով որպես պետության անհրաժեշտ հատկանիշ, որն իսկ մտած է պետության սահմանման մեջ, և միևնույն ժամանակ նշում է, թե պետության կողմից պարտադրանքի մենաշնորհացումը տեղի է ունենում լոկ էրկարատն պետական զարգացման հետևանքով: Իրականում իշխանական պարտադրանքի մենաշնորհացումը ոչ թե

3) Պետական իշխանության գերակայությունն իր տարածքի նկատմամբ, այսպես կոչված տարածքային գերակայությունն:

4) Պետության իշխանության արտաքին անկախությունն: Ինքնիշխանության բովանդակության առումով դանշանակում է, որ պետությունն իր խնդիրները և շահերը իրականացնում է արտաքին միջամտությունից ազատ կերպով, իսկ իրավաբանական ձևի առումով դա արտահայտում է այն փաստը, որ նման ազատության համար չկան արտաքին իրավաբանական սահմանափակումներ, բացի միջազգային իրավունքի այն նորմերից, որոնք համապարտադիր են բոլոր պետությունների համար:

Պետական իշխանության այդ բոլոր հատկանիշների հանրագումարն, առանց որի չի կարող լինել ինքնիշխանություն²⁷:

Որոշ հեղինակներ ինքնիշխանությունը դիտում են որպես զուտ իրավաբանական կատեգորիա: Այսպես, Յ. Քելզենը հնարավոր է համարում ինքնիշխանության գոյությունը միայն իրավաբանական հարթության մեջ: Յ. Քելզենի կարծիքով փաստացի ինքնիշխանությունն չի կարող լինել, այն բացառվում է արդեն այն պատճառով, որ գործում է պատճառականության ռեալ սկզբունքի ոլորտում²⁸: Ինքնիշխանության այդպիսի զուտ ձևական հայեցակարգը պաշտպանում է նաև Պալենկոյին, որը պնդում է, թե «ինքնիշխանությունը միայն զուտ ձևական իրավաբանական հասկացությունն է, որը մատնանշում է պետության իրավաբանորեն անվերապահ ու անկախ տիրապետությունը... Ինքնիշխանության հասկացությունը ամենևին էլ չի մատնանշում այն փաստացի հզորությունը և նյութական միջոցներն ու ուժը, որոնք գտնվում են տվյալ պետության անօրինության տակ իր ինքնիշխանությունը պահպանելու համար: Դա փաստացի հարց է, որը հույժ կարևոր է քաղաքական տեսակետից, սակայն չի վերաբերվում ինքնիշխանության իրավաբանական բնույթին»²⁹: Այդ նույն տեսության մեկ այլ կողմն են, որով իրավաբանականը կտրվում է փաստացիից ու քաղաքականից, Աֆոլտերի, Յերցֆելդի և այլոց

ընդհանրապես պետության անհրաժեշտ հատկանիշն է, այլ ինքնիշխան պետության: ²⁷ Տե՛ս **Грачев Н.И.** Государственное устройство и суверенитет в современном мире: вопросы теории и практики. Дис. ...док. юрид. наук. Волгоград. 2009, էջ 92-93:

²⁸ Տե՛ս **Чистое учение о праве Ганса Кельзена.** М., 1988:

²⁹ Տե՛ս **Палиенко Н.И.** Суверенитет. М., 1903, էջ 147:

տեսութեանը, որոնցով շեշտովում է ինքնիշխանութեան ամենակիսի էլ ոչ իրավաբանական, այլ զուտ քաղաքական բնույթը:

Մեր կարծիքով իրավաբանականի ու փաստացիի հակադրումը միանգամայն սխալ է (թեև դրանք անհրաժեշտ է տարբերակել):

Իրավաբանականը միշտ էլ որպես իր բաղադրատարր ներառում է փաստացին: Իրականութեան վրա չհիմնվող իրավունքը իրավունք չէ: Իրավասութեանը որպես իր գոյութեան նախադրյալ միշտ ունի իրավունքի սուբյեկտի առկայութեան կամ գոյութեան փաստը: Միջազգային իրավունքի ու որոտում այդ նախադրյալն արտահայտվում է արդյունավետութեան սկզբունքի միջոցով, ըստ որի ինքնիշխանութեան անհրաժեշտ հատկանիշն է պետութեան կողմից իր տարածքում սեփական գործառնականների արդյունավետ կատարումը: Ե՛լ ավելի մեծ չափով դավերաբերվում է պետական ինքնիշխանութեանը, որովհետև այս դեպքում որոշակի փաստը արդյունավետ պետական կազմակերպութեան առկայութեանը, պայման է ոչ միայն պետութեան որպես իրավունքի սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքի համար, այլև տվյալ պետութեան մեջ գոյութեան ունեցող օբյեկտիվ իրավունքի համար, քանի որ միայն պետական պարտադրանքի արդյունավետութեան շնորհիվ է այդ իրավունքը իրավունք դառնում: Պետութեան գործառնականների իրականացման արտաքին չափանիշն է հանրային իշխանութեան գործող մեխանիզմի առկայութեանը:

Իշխանութեան կառուցակարգի առկայութեանը պետութեան ինքնիշխանութեան տարրական հատկանիշն է:

Անկախութեան ու լիիշխանութեանը գոյութեան ունեն միայն այն դեպքում, երբ տվյալ պետութեան մարմինները պարտավոր չեն այդ կամ մեկ այլ պետութեան պետական իրավունքի պատճառով կամ այլ պետութեան հետևանքով առաջադրված հետևանքով ենթարկվելու այլ պետութեան մարմինների կարգադրութեանը:

Ինքնիշխանութեան ու անկախութեանը նշանակում են, որ պետութեան մարմիններն իրականացնում են հենց տվյալ հասարակութեան մեջ իշխող շահերը, բայց ոչ մեկ այլ հասարակութեան նույն կամ այլ դասակարգի (ինչը կսահմանափակեր

անկախությունը) կամ այդ նույն հասարակության մեկ այլ դասակարգի կամքն ու շահերը (ինչը կսահմանափակել լիիշխանությունը):

Ակնհայտ է, որ այս դրույթը հնարավոր չէ պատկերացնել բացարձակ, մետաֆիզիկական իմաստով: Լիովին անկախ պետությունը փաստորեն չի կարող իր հարաբերություններում հաշվի չառնել այլ պետության շահերը, չի կարող այս կամ այն չափով չգոհաբերել իր շահերը հանուն բարիդրացիական հարաբերությունների կամ անբարենպաստ հետևանքներից խուսափելու համար: Եթե պետությունը համաձայն է կնքելու ստրկացուցիչ պայմանագիր՝ խուսափելով լրիվ կործանումից, ապա այս դեպքում ևս կարելի է խոսել կամքի ու շահի մասին, այն է վատթարագույնից խուսափելու կամքի ու համապատասխան շահի մասին: Դա այն մարդու «կամքն» ու «շահն» են, որն իր կյանքը փրկելու համար իր փողը տալիս է ավագակին: Այստեղ չի կարող լինել բացարձակ ու համանշանակալից չափանիշ:

Միջազգային իրավունքում ինքնիշխանությունը նշանակում է պետության լիարժեք իրավասուբյեկտիվություն՝ իրավունակություն և գործունակություն: Միջազգային-իրավական գրականության մեջ բավական լայն տարածում ստացած «կիսաինքնիշխան պետություններ» տերմինը դժվար թե կարելի է հասկանալի համարել: Իր ծագման պահին այդ տերմինը վերաբերել է Գերմանական կայսրության կազմի մեջ մտնող պետություններին: Պատերազմից հետո այն կիրառվում էր սահմանափակ իրավունակությամբ ու գործունակությամբ պետությունների նկատմամբ: Այդպիսիք էին այն երկրները, որոնք գտնվում էին գաղութային կախման մեջ, օրինակ՝ պրոտեկտորատները, վասալական պետությունները, անիրավահավասար պայմանագրերով կամ մանդատներով կապված պետությունները: Այստեղ հանդիպում ենք միջազգային իրավունքում գաղութատիրական վարչակարգերի սրբագործման և օրինականացման փորձերի: Իհարկե, քանի դեռ գոյություն ունի գաղութատիրական համակարգ, գործող միջազգային իրավունքը չի կարող գերծմնալ տվյալ պետական կազմավորումների իրավաբանական կարգավիճակի

սահմանումից, սակայն կարիք չկա, որ մենք առանց որևէ անհրաժեշտության ընդունենք մի տերմին, որը տրամաբանական առումով չի դիմանում որևէ քննադատության և միևնույն ժամանակ ունի որոշակի քաղաքական միտում այդ կախյալ, անինքնիշխան տարածքները ինքնիշխանության մի «մասնիկով» իբր օժտվելու միջոցով շղարշելու գործերի իրական դրվածքը, դրան տալու քիչ թե շատ գրավիչ տեսք:

Պետության լիիշխանությունն ու անկախությունը դրսևորվում են պետության կողմից իր գործառույթների կատարման ժամանակ և այդ պատճառով ենթադրում են տվյալ գործառույթների իրականացումը իրավաբանորեն ապահովող համապատասխան ինքնիշխանական իրավունքների առկայություն: Դրանց թվին են դասվում այնպիսի իրավունքներ՝ ինչպիսիք են իշխանության մարմինների ստեղծման իրավունքը, արտաքին հարաբերությունների վարման իրավունքը, պատերազմող կողմ համարվելու իրավունքը, օրենսդրությամբ զբաղվելու իրավունքը, դատելու իրավունքը, իր տարածքում կարգուկանոն պահպանելու իրավունքը և այլն: Սակայն այդ իրավունքների առկայությունը, լինելով ինքնիշխանության անհրաժեշտ պայման, ինքնին դեռ բավարար չէ ինքնիշխանության ստեղծման համար: Ինքնիշխան պետություններին առանձնահատուկ է առաջին հերթին այդ իրավունքների լրիվությունը: Ոչ ինքնիշխան պետությունները, որպես կանոն, օժտված չեն լինում բոլոր պետական իրավունքներով և զրկված են լինում դրանց մի մասից, օրինակ արտաքին հարաբերությունների իրավունքից կամ ինքնուրույն պատերազմող կողմ դիտվելու իրավունքից: Սակայն ինքնիշխանության հիմնական էական բնութագիրն են լիիշխանությունը և այդ իրավունքների իրացման անկախությունը, այսինքն պետության մեջ այդ իրավունքների իշխող դասակարգի տեսակետից առավել լիարժեք տնօրինումը: Այսպիսով ինքնիշխանությունը բնութագրվում է ոչ միայն իրավունքների ծավալով, ինչն առավել էական է, այլ և այդ իրավունքների տնօրինության յուրահատուկ բնույթով կամ որակով: Ընդսմին պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ այդ իրավունքների կոնկրետ շարքը ոչ թե մշտական է, մեկ անգամ

ընդմիջ տ տրված, այլ որոշվում է հասարակության զարգացման տվյալ պատմական ժամանակաշրջանում պետության ունեցած գործառնության խնդիրը փոփոխվելով պետության գործառնության կազմի փոփոխման համեմատ: Կարող է փոփոխվել նաև առանձին գործառնության բնույթը: Այսպես, ցանկացած կողմից ագրեսիայի կոլեկտիվ ճնշման ապահովմանն ուղղված միջազգային-իրավական հաստատության ունենրի զարգացմանը զուգընթաց պետության ռազմական գործառնությունը կարող է սահմանափակվել իր տարածքի պաշտպանության ու ագրեսորի դեմ կազմակերպված կոլեկտիվ գործողության ունենրին մասնակցելու պարտավորությանը:

Ինքնիշխանության իրավունքների բովանդակության փոփոխությանը անմիջականորեն կապված է հետևյալ փոփոխության ունենրի հետ.

- 1) պետության գործառնության փոփոխության ուն,
- 2) պետության գործունեության ձևերի փոփոխության ուն,
- 3) միջազգային հարաբերության ունենրի բնույթի փոփոխության ուն:

Այդ բոլոր փոփոխություններն անմիջականորեն անդրադառնում են պետության իրավունքների ծավալի վրա: Որոշ իրավունքներ կարող են պետության իրավունքների թվից բացառված լինել, այլ իրավունքներ, որոնք վերաբերում են ինչպես միջազգային, այնպես էլ ազգային իրավունքի ոլորտներին, կարող են դառնալ անառարկա ակամ, հակառակը, առաջին անգամ դառնալ իրացվելի: Պետության իրավունքների կազմում տեղի ունեցող փոփոխություններն իրենց հերթին անդրադառնում են ինքնիշխանության կոնկրետ իրականացման վրա:

Եվ այսպես ինքնիշխան պետությունը ոչ ինքնիշխան պետություններից տարբերվում է պետական իրավունքներին տիրապետության լրիվությանը ու բնույթով:

Այս կապակցությամբ ծագում են միջարքբարդ հիմնահարցեր: Չէ որ ցանկացած պայմանագիր պետության վրա դնում է այնպիսի պարտավորություններ, որոնցից նա չի կարող ազատվել իր միակողմանի ակտով: Այս փաստարկը հաճախ է օգտագործվում ինքնիշխանության և միջազգային իրավունքի անհամատեղելիության դրույթի հիմնավորման համար: Պետության

ցանկացած պարտավորությունն որոշակիորեն սահմանափակում է այդ իսկ պետության կողմից իր գործառույթների իրականացման ազատությունը, հետևաբար, ցանկացած պայմանագիր կարելի է դիտել որպես ինքնիշխանության սահմանափակում: Եվ հենց դրանից ելնելով Օպենհեյմն ստիպված է ընդունելու, որ «անկախությունը աստիճանի հարց է, և նույն ձևով աստիճանի հարց է նաև այն, թե վերացվում է արդյոք պետության անկախությունը որոշակի սահմանափակումներով, թե ոչ»³⁰: Հարաբերական անկախության այս տեսությունը շատ ավելի վաղ զարգացրել էր Ռոզենը, որը պնդում էր, թե միջազգային պայմանագիր կնքած ամեն մի պետությունն բառիս բուն իմաստով արդեն անկախ է:

Այդ «տեսությունը» որդեգրեցին նաև ինքնիշխանությունը քննադատող «տեսաբանող» քաղաքական գործիչները, որոնցից է, օրինակ, Մակ-Նեյլը, որը ՄԱԿ-ի 2-րդ Գլխավոր ասամբլեայում հայտարարեց, թե ցանկացած պայմանագիր նշանակում է պետության հրաժարում իր ինքնիշխանության որոշակի գործառույթներից: Բայց նման փաստարկի ընդունման դեպքում վերանում է այս կամ այն պայմանագրի քաղաքական հետևանքների մասշտաբը: Ըստ էության, նման պնդումը հանգեցնում է ինքնիշխանության ցանկացած խախտումների, ընդհուպ մինչև դրավերացումը, արդարացմանը, եթե դրանք ձևակերպված են այնպիսի պայմանագրով, որը երկու կողմն էլ ստորագրել են «կամավոր»:

Մեր տեսակետից էական է միջազգային պայմանագրերում պետության իրավունքների սահմանափակման փոխադարձությունը: Միևնույն ժամանակ պետության գործառույթների հետ կապված հիմնական պետական իրավունքների օգտագործման լիիշխանությունն ու անկախությունը այն կարևոր չափանիշն է, որը թույլ է տալիս պետության ինքնիշխանությունը սահմանափակող կամ խախտող և նույնիսկ վերացնող պայմանագրերը տարբերել այն պայմանագրերից, որոնք թեև պետության վրա դնում են այնպիսի պարտավորություններ, որոնցից նաչի կարող ազատվել միակողմանի ակտի միջոցով (ինչը բխում է պայմանագրի բուն էությունից), սակայն այնուամենայնիվ չեն սահմանափակվում նրա

³⁰ Տե՛ս **Oppenheim. P.** International Law 1937, էջ 236:

ինքնիշխանությունը: Ինքնիշխանությունը չի բացառում միջազգային պարտավորությունները, սակայն ստեղծվում է պետական իրավունքների լրիվության, պետության լիիշխանության և անկախության կանխավարկածը:

Ընդամիսն պայմանագրի կնքման և միջազգային պարտավորությունների ստանձման բուն իրավունքն ինքնիշխանության առավել էական դրսևորումներից մեկն է³¹:

Ինքնիշխանության սահմանափակման մասին կարելի է խոսել մի քանի իմաստով: Մի դեպքում խոսքը ինքնիշխանության ընդհանուր հասկացության բովանդակության մեջ կամ ինքնիշխանությանից բխող իրավունքների կազմում տեղի ունեցող այն փոփոխությունների մասին է, որոնք են միջազգային իրավունքի զարգացման հետևանքով:

Այլ դեպքում, երբ խոսում են ինքնիշխանության սահմանափակման մասին, նկատի են ունենում ինչ-որ կոնկրետ պետությանը (օրինակ ռազմական պարտության դեպքում) ինքնիշխանությանից անվերապահորեն բխող այս կամ այն իրավունքից զրկելը (թեկուզ և պայմանագրի հիման վրա): Նման դեպքում ավելի ճիշտ կլիներ խոսել ինքնիշխանության իրականացման սահմանափակության մասին: Ինքնիշխանության իրականացման սահմանափակումները կարող են այնքան հեռու գնալ, որ ինքնիշխանությանից մնալով նրա ուրվականը, ստվերը, մերկ իրավունքը: Այս դեպքերում չկա ինքնիշխանության «սահմանափակում», որովհետև ինքնիշխանությունն իսկ վերացած է լինում, թեկուզ և շարունակել պահպանվել պաշտոնական ակտերի բառագործածություններում: Այլ դեպքում կարող է տեղի ունենալ ինքնիշխանության քիչ թե շատ լուրջ խախտում, բայց եթե պայմանագրային պարտավորությունները չեն դիպչում

³¹ Այս առումով բնութագրական է միջազգային արդարադատության Մշտական պալատի այն վճիռը, որը կայացվել էր «Ուիմբլդոն» շոգենակի գործով 1923թ. հունիսի 17-ին. «Անկասկած է, որ նման տեսակի պարտավորություն (այ՛սինքն որոշակի գործողություններ կատարելու կամ որոշակի գործողություններից խուսափելու պատասխանատվություն) առաջ բերող ցանկացած համաձայնագիր նշանակում է պետության ինքնիշխան իրավունքների իրականացման սահմանափակում: Բայց ինքնիշխան պետության հիմնական հատկանիշը հենց համաձայնագրեր կնքելու և իր վրա պարտավորություններ վերցնելու ընդունակությունն է»:

ինքնիշխանության սուբստանցիային, եթե դրանք էապես չեն դիպում պետության որպես անկախ ու լիիշխան կազմակերպության կողմից իր գործառույթների իրականացման նրա իրավունքին, եթե նույնիսկ, օրինակ, տարածքի այս կամ այն մասում ամրություններ կառուցելու կամ այս կամ այն ծովում նավատորմ պահելու վերաբերյալ արգելման առկայության դեպքում (1856թ. Փարիզի համաձայնագրի հոդվածները ռուսական սևծովյան նավատորմի վերաբերյալ) պետության լիիշխանությունն ու անկախությունը հարցականի տակ չեն դրվում, ապա, իհարկե, ինքնիշխանությունը պահպանվում է, թեև նրա իրականացման համար գոյություն ունեն որոշակի սահմանափակումներ, որոնք անշուշտ տհաճ են ինքնիշխան պետությանը: Տվյալ հարցում չափանիշը ինքն իսկ ռեալությունն է, որը չի կարող ներկայացված լինել պարզագույն սխեմաների տեսքով:

Ինքնիշխանության հատկություններից մեկը՝ դեռ Բոդենի և Յոբսի կողմից նշված նրա անբաժանելիությունն է: «Մասնակի ինքնիշխանություն» հասկացությունը դիտվում է որպես մի ներքուստ հակասական հասկացություն, տրամաբանական անհեթեթություն, որովհետև ինքնիշխանությունը կա՛մ լիարժեք է, կա՛մ էլ գոյություն չունի: Ինքնիշխանությունն իր մեջ պարունակում է և՛ բանասիրական, և՛ տրամաբանական առումով գերադրական աստիճան: Այսպիսով ինքնիշխանության բաժանումը հակասում է նրաբուն իմաստին:

Ըստ էության, ինքնիշխանության անբաժանելիության տեսության հեղինակները ելնում էին այն մեկնակետից, որ ինքնիշխանությունը պատկանում է ոչ թե պետությանը, այլ նրա մի որևէ մարմնի: Այսպիսով ինքնիշխանության անբաժանելիության տեսությունը պնդում էր, որ պետության մեջ բացարձակ ու անսահմանափակ իշխանությունը պատկանում է ինչ-որ մեկ մարմնի: Ինքնիշխանության անբաժանելիության նման տեսությունը ներկայիս պայմաններում պետք է մերժված լինի որպես մի անկիրառելի տեսություն:

Իսկ ո՞րն է ինքնիշխանության անբաժանելիության, կամ միասնականության, սկզբունքի իմաստը ինքնիշխանության մեր

ըմբռման դեպքում: Կարելի է արդյոք լիովին հրաժարվել ինքնիշխանության միասնականության սկզբունքից: Նման եզրակացությունը միանգամայն սխալ կլիներ:

Ինքնիշխանության միասնականության սկզբունքն ունի ամուր Զացիոնալ միջուկ, որն անհրաժեշտ է պահպանել: Միասնականությունը ինքնիշխանության անհրաժեշտ հատկությունն է: «Երկու ինքնիշխան իշխանությունն չեն կարող միաժամանակ, կողք կողքի գործել նույն պետության մեջ»: Այս սկզբունքն իր կիրառությունն է գտնում ինչպես ինքնիշխանության բովանդակային էության ուսումնասիրության, այնպես էլ նրա իրավաբանական ձևի վերլուծության ժամանակ:

Ինքնիշխանության միասնականությունն, առաջին հերթին, արտահայտում է իշխանության միակաղբյուրի՝ ժողովրդի կամքը:

Քաղաքական ինքնիշխանության միասնականությունը ամենևին էլ չի նշանակում, թե իրավաբանական ինքնիշխանության կրող կարող է լինել միայն մեն-միակ մարմին, չի նշանակում, թե ինքնիշխանությունն ունի և իրականացնում է մեկ մարմին: Քաղաքական ինքնիշխանությունն անբաժանելի է, սակայն իրավաբանական ինքնիշխանության իրականացումը կարող է ձևականորեն բաշխված լինել մի քանի մարմնի միջև:

Իրավաբանական ինքնիշխանության նկատմամբ այս կամ այն մարմնի հարաբերությունը կարող է ունենալ հետևյալ ձևը.

- 1) ինքնիշխանության տիրապետում,
- 2) ինքնիշխանության մասնակի տիրապետում,
- 3) ինքնիշխանական իրավունքների իրականացում:

Ինքնիշխանության տիրապետումը նշանակում է բոլոր ինքնիշխանական իրավունքների իրականացում կամ ինքնիշխանական իրավունքների մի մասի իրականացում ու մնացած մասի իրականացման վերահսկում: Իրավաբանական ինքնիշխանությունը տիրապետումը իր իրավաբանական բնույթի հետևանքով ենթարկվում է պետության մեջ տիրող ընդհանուր իրավական կարգերի ազդեցությանը: Այդ ինքնիշխանությունը տիրապետողը այն իրականացնում է սահմանադրական կարգով, սակայն կարող է պատասխանատու լինել իր գործողությունների ոչ թե

բովանդակության, այլ միայն կարգի համար: Ժողովրդավարական իրավական պետությունում ինքնիշխանությանը տիրապետումը կենտրոնացված է հենց ժողովրդի ձեռքում:

1.3. Պետական իշխանության և պետական ինքնիշխանության հարաբերակցության հիմնախնդիրները

Պետական իշխանության հասկացության, բնույթի և ձևերի հարցը կենտրոնական տեղ է գրավում իրավաբանական գիտության մեջ³²: Իսկ քանի որ սահմանադրական-իրավական փաստորեն բոլոր նորմերը կարգավորվում են պետական իշխանության իրականացման հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված հասարակական հարաբերությունները, անհրաժեշտություն է առաջանում բնորոշել իշխանության իրավաբանական էությունը:

Անհրաժեշտ է նկատել, որ սահմանադրություններում հաճախակի է խոսվում ուղղակիորեն ժողովրդի (կամ ազգի) իշխանության մասին, ազգային (ժողովրդական) ինքնիշխանության (սուվերենության) մասին և միշտ էլ, որ օգտագործվում են «պետական իշխանություն» ու «պետական սուվերենություն» տերմինները: Այսպես, 1997 թ. մայիսի 25-ի հանրաքվեով ընդունված Լեհաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ասված է. «Լեհաստանի Հանրապետությունում գերագույն իշխանությունը պատկանում է ազգին» (հոդ. 4): «Սուվերենությունը պատկանում է ժողովրդին, որն իրականացնում է այն Սահմանադրության ձևերում և շրջանակներում», - ամրագրված է Իտալիայի Հանրապետության Սահմանադրության մեջ (հոդ. 1): Իսկ ԳԴՀ-ի Հիմնական օրենքի 20 հոդվածի համաձայն, «ամբողջ պետական իշխանությունը բխում է ժողովրդից»: Պետական իշխանության և պետական սուվերենության մասին սահմանադրական դրույթների վերլուծությունը կարելի է շարունակել, սակայն նախանհրաժեշտ է ծանոթանալ իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեցող իշխանության վերաբերյալ հայեցակետերի հետ:

Այսպես, Վ.Ե. Չիրկինը կարծում է, որ «սահմանադրություններում օգտագործվող «ժողովրդի

³² Տե՛ս և **Лазарев В.В., Липень С.В., Саидов А.Х.** Проблемы общей теории jus. Учебник для магистрантов юридических вузов. М., 2012, էջ 111-112:

իշխանությունն» տերմինն ունի, ըստ էության, համընդգրկուն իմաստ: Այդ հասկացությունը չի սահմանափակվում պետական իշխանությամբ՝ այն ներառում է նաև սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգեբանական և շատ այլ քաղաքիչներ: Ըստ էության, խոսքը գնում է ժողովրդի ամեն ինչից անկախ իր ճակատագիրը ամբողջությամբ ու ինքնուրույնաբար տնօրինելու, իր կամքին համապատասխանող հասարակական ու պետական կարգ ստեղծելու, ցանկացած տեսակի քաղաքակրթությունն ու մշակույթ ունենալու իրավունքի մասին»³³:

Կ.Կ. Ագրանովսկին նշում է, որ ամենապարզը ձևական-իրավաբանական բացատրությունն է, ըստ որի իշխանությունը բնորոշվում է որպես իրավասությունների ամբողջություն, որով օժտված են պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք³⁴:

Առավել հաճախ իրավաբանական գրականության մեջ բնորոշվում է որպես ինչ-որ մեկին կամ որևէ մեկին ղեկավարելու, տնօրինելու հնարավորություն, ուրիշներին իր կամքին ենթարկելու հնարավորություն: Դրա հետ մեկտեղ պետական իշխանության տարրերի թվին են դասում ընդհանուր կամքն ու ուժը (հարկադրումը), որոնք ընդունակ են ապահովել հասարակության բոլոր անդամների պետական իշխանությանը հնազանդեցումը:

Յեղիևակների մեծ մասը իշխանությունը դիտում է որպես սոցիալական կյանքի ունիվերսալ հատկություն և այդ իսկ պատճառով այն կապում են իշխանավարման, մարդկանց, կոլեկտիվների և, ընդհանրապես, հասարակության վարքի վրա իշխանային ազդեցություն գործելու հետ: Ըստ այդմ գանազանում են ոչ քաղաքական և քաղաքական իշխանություն:

Ոչ քաղաքական իշխանությունը պետության մեջ անմիջական կապ չունեցող և նրա հետ չառնչվող մարդկանց միավորություններում, կազմակերպություններում ու շարժումներում գոյություն ունեցող իշխանությունն է: Ոչ քաղաքական իշխանությունը հսկադեր է կատարում քաղաքացիական հասարակությունը ղեկավարելու գործում: Նրա արտահայտման ոլորտներն առնչվում են մարդկանց հանապազօրյա պահանջմունքներին, առաջին հերթին կենցաղին,

³³ Տե՛ս **Чиркин В. Е.** Конституционное право: Россия и зарубежный опыт. М. 1998.. էջ 236:

³⁴ Տե՛ս **Аграновский К. В.** Государственное право зарубежных стран. М. 1998. էջ 19:

հոգևոր շփու մներին, տնտեսությանը: Ոչ քաղաքական իշխանությունը առավել ակտիվ է տեղական մակարդակով և սոցիալական փոքր համակարգերում (ընտանիք, կրոնական համայնք, բնակհամայնք): Կարևոր տեղ է զբաղեցնում այն նաև արտադրության ընթացքում, տնտեսության հետ կապված առևտրական, տնտեսական և այլ հարաբերություններում:

Քաղաքական իշխանությունը պետության միջոցով և պետական համակարգում, քաղաքական կուսակցություններին, կազմակերպություններին ու շարժումներին համակարգում իրականացվող իշխանությունն է: Այս կամ այլ կերպ այն կապված է պետության և պետական կարգավորման հետ, սակայն անպայման չէ, որ հանդիսանա պետական իշխանություն: Խորհրդային ժամանակներում իրավաբանների շրջանում երկար ժամանակ վեճ էր գնում քաղաքական ու պետական իշխանության հարաբերակցման վերաբերյալ: Գերիշխում էր այդ հասկացություններին նույնության կարծիքը³⁵: Դրա հետ մեկտեղ գիտնականները պնդում էին, որ քաղաքական իշխանության բովանդակությունը շատ ավելի էլայն է, իսկ պետական իշխանությունը միմիայն նրա մասնավոր արտահայտությունն է³⁶:

Առաջինը, տարբերությունը քաղաքական և պետական իշխանության միջև կայանում է իշխանային համապատասխան իրավասություններով օժտված սուբյեկտների կազմի մեջ: Պետական իշխանության անմիջական սուբյեկտների դերում հանդես են գալիս պետական իշխանության մարմինները: Իսկ քաղաքական իշխանության սուբյեկտներն են քաղաքական կուսակցությունները, քաղաքական այլ միավորումները և ընտրական գործընթացի սուբյեկտները (ընտրական միավորումներ), ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները:

Երկրորդ, իրենց իրավասություններն իրագործելու համար քաղաքական իշխանությունն ու պետական իշխանություններն ունեն տարբեր դաշտեր: Պետական իշխանության համար գործողության դաշտ է հանդիսանում բուն պետությունն ու նրա

³⁵ Տե՛ս և Подробнее: Киров В. Ц. Парадоксы государственной власти в гражданском обществе. М. 1992. Էջ 56-70:

³⁶ Տե՛ս և Тихомиров Ю. А. Социализм и политическая власть // Сов. государство и право. 1974. № 5. Էջ 17:

մարմինները: Պետական իշխանությունը տարածվում է քաղաքացիական հասարակության վրա քաղաքական իշխանության իրագործման մասով: Քաղաքական իշխանության գործունեության դաշտ է հանդիսանում գերազանցապես քաղաքացիական հասարակությունը:

Երրորդ, տարբերությունը իշխանության նշված տեսակների միջև կայանում է նաև նպատակին հասնելու համար նրանց կողմից կիրառվող մեթոդների մեջ: Իշխանության երկու տեսակն էլ օգտագործում են իշխանային ազդեցության մեթոդների բավական լայն տեսականի: Տարբերությունը լոկայն է, որ քաղաքական իշխանության սուբյեկտները չեն կարող անմիջականորեն օգտագործել պետական-իրավական ներգործության (հարկադրման) մեթոդը, որը բնորոշ է բացառապես պետական իշխանության սուբյեկտներին:

Չորրորդ, նրանք տարբերվում են իրենց լիազորությունների ծավալով: Միայն պետական իշխանության սուբյեկտներն իրավունք ունեն հրապարակել համապարտադիր բնույթ ունեցող նորմատիվ ակտեր: Տեղական ինքնակառավարման մարմինների (քաղաքական իշխանության սուբյեկտների) համանման իրավասությունը սահմանափակված է տվյալ մարմնին ենթակա տարածքի և տնօրինման առարկայի սահմաններով:

Պետական իշխանությունը բնորոշվում է հատուկ հատկանիշներով՝ ինքնիշխանությամբ, առաջնայնությամբ, ինքնուրույնությամբ, միասնությամբ:

Պետական իշխանության հետ սերտորեն կապված է «պետության ինքնիշխանություն» հասկացությունը: «...Ինքնիշխանությունը ոչ թե բուն պետական իշխանությունն է, այլ միայն նրա որոշակի հատկությունը, ըստ որի այն հանդիսանում է բարձրագույն և անկախ իրավական պետություն,- նշում է անվանի պետականագետ Ն. Ի. Պալիենկոն: - Պետական իշխանության ոլորտը որոշվում է պետության տարածքով, այսինքն՝ նրա իշխանավարության տարածքային սահմանով, այդ տարածքի սահմաններում ապրող բնակչության... և բնակչության իրավական պետությանը մատչելի

կյանքի արտաքին կողմով...»³⁷:

«Եթե մենք որևէ պետություն կոչում ենք ինքնիշխան, - շարունակում է հեղինակը, - ապա մենք դրանով արտահայտում ենք, որ այն իր տարածքի սահմաններում տիրապետում է բարձրագույն և ինքնուրույն իշխանությամբ: Այդ սահմաններում սուվերեն պետական իշխանությունը չունի ոչ իրեն հավասարը, ոչ իրենից բարձր իրավական իշխանություն այն ինքն է գերիշխում ամեն և ամենայն այլ իրավական իշխանության հանդեպ: Այդ պատճառով պետության սուվերենությունը չի բացառում այլ պետությունների սուվերենությունը, քանի որ ամեն սուվերեն պետություն սուվերեն է միմիայն իր տարածքային սահմաններում: Այդ իսկ պատճառով սուվերենությունը հաճախ կոչում են գերագույն, անկախ տարածքային իշխանություն»³⁸:

«Սահմանադրական իրավունք: Պետության ընդհանուր տեսություն» աշխատության մեջ Լեոն Դյուգին նշում է. «Ինքնիշխանությունը մեկն է»: Յենց այդպիսին են 1791 թ. Սահմանադրության III տիտղոսի ներածության 1-ին հոդված, 1793 թ. Յուզակագրի 25 հոդ. արտահայտությունները: Դա նշանակում է, որ միևնույն տարածքի վրա կարող է լինել միայն մեկ սուվերենություն և որ միևնույն անձը կարող է ենթակա լինել միայն մեկ սուվերենության: Սուվերենությունն անբաժանելի է: Սուվերենության անբաժանելիության սկզբունքը հռչակվել է Ժ. Ժ. Ռուսոյի կողմից իր Յասարակական պայմանագրի III գրքի II գլխում՝ այն հիման վրա, որ սուվերենությունը ոչ այլ է, քան կոլեկտիվ անձի կամք, ամենայն կամք անբաժանելի է, ինչպես և նրա հիմքը կազմող բուն անձը: Նա գրել է նաև այն մասին, որ սուվերենությունը անօտարելի է և անմարելի»³⁹:

Մինչև 20-րդ դարի կեսերը, փաստորեն, բոլոր ժամանակների պետական գործիչները չէին ցանկանում տեսնել այն, որ ինքնիշխանությունը հանդիսանում է միմիայն պետության հատկությունը, այլ ոչ նրա իշխանային իրավասությունների հիմքը:

³⁷ Նույն տեղը, էջ 439:

³⁸ Տե՛ս **Палиенко Н. И.** Суверенитет. Историческое развитие идеи суверенитета и ее правовое значение. М. 1903. էջ 438:

³⁹ Տե՛ս **Дюги Л.** Конституционное право. Общая теория государства. М. 1908. էջ 168:

Իրականում պետական իշխանությունը գոյանում է ժողովրդի ինքնիշխան իրավունքների արդյունքում և օժտված է իրավասություններով միմիայն այն շրջանակներում, որոնք կանխորոշված են ժողովրդի կողմից ժողովրդավարական արարողակարգին համապատասխան:

Իշխանությունն ու այն մարմնավորող մարմինները ինքնիշխանությունն չունեն, քանզի այս վերջինս հանդիսանում է զուտ պետության հատկություն: Պետության մարմինների առնչությամբ կարելի է խոսել միայն իշխանական իրավասությունների ծավալի մասին: Ամեն մի մարմնի իրավասությունների ծավալը կախված է նրանից, թե ինչպես են որոշված այդ իրավասությունների սահմանները:

Պետական իշխանությունը կարող է ինքնիշխան կոչվել պայմանականորեն, այնքանով միայն, որքանով այն մարմնավորում է պետության ինքնիշխանությունը բոլոր դեպքերում, բացի ուղղակի ժողովրդական կամքի արտահայտությունից: Ինքնիշխան իշխանությունը կաշկանդված է իրավական նորմերով, որոնք կազմում են քաղաքակիրթ հասարակության սկզբունքները, ընդ որում դա ոչ միայն ներպետական իրավունքի, այլև միջազգային իրավունքի նորմերն են: Ելնելով դրանից նույնիսկ գերագույն իշխանությունը չի կարող ձերբազատվել իրավունքից, այսինքն՝ դուրս գալ իրավական նորմերով սահմանված շրջանակներից: Սահմանելով կամ թեկուզ նույնիսկ ճանաչելով իրավական նորմերը պետությունն իրեն կապում է այդ նորմերով այն իմաստով, որ նրանք պարտադիր են դառնում ինչպես նրանց համար, ում համար նախատեսված է նրանց ազդեցությունը, այնպես էլ պետության համար ի դեմս նրապաշտոնատար անձանց⁴⁰:

Պետական ինքնիշխանությունն նշանակում է պետականորեն կազմակերպված հանրային քաղաքական իշխանության առաջնայնությունն, անկախությունն, ամբողջությունն, համընդհանրությունն ու բացառիկությունն: Պետությունը ոչ միայն ուժի և բռնության մենաշնորհ է հասարակական կյանքում, այլև այդ ուժի կազմակերպման և կիրառման իրավական ձև (կարգ և համակարգ):

⁴⁰ Տե՛ս **Михалева Н. А.** Проблемы суверенитета в Российской Федерации. М. 1994. Էջ 16-17:

Այդ ձևը կանխորոշվում է տվյալ պետականորեն կազմակերպվող հասարակության իրավունքով⁴¹:

Իրավական պետության ինքնիշխանությունը իրենից ներկայացնում է միաժամանակ և պետական իշխանությունների գերակայություն, և իրավունքի գերիշխանություն: «Օրենսդրությունը կապված է սահմանադրական կարգով, գործադիր իշխանությունը և արդարադատությունը օրենքով և իրավունքով».- ամրագրված է ԳԴՀ-ի Հիմնական օրենքի 20-րդ հոդ. 3-րդ կետում:

⁴¹ Տե՛ս նաև **Нерсесянц В. С.** Общая теория права и государства. М., 2014. Էջ 78-79:

ԳԼՈՒԽ 2
ԻՆՔՆԻԶԻՄԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՄԻ ՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ՉԱՐԳԱՏՈՒՄԸ

2.1. Ինքնիշխանության ինստիտուտի ձևավորումը և զարգացումը
Հին և Միջին դարերում

Ժամանակակից իրավագիտությանը ընդունում է, որ ինքնիշխանության գիտական հայեցակարգը մշակվել է 16-րդ դարում⁴²: Հին և միջին դարերում պետարավական պատկերացումների ակունքները ձգվում են մինչև երկրային կարգերի, մարդկանց հասարակական և պետական կյանքի կառուցվածքի ձևերի, մարդկային փոխհարաբերությունների եղանակների ու կանոնների և այլ վաղ առասպելաբանական ու կրոնական հայացքները⁴³:

Հին աշխարհի գրեթե բոլոր պետություններում (Եգիպտոս, Բաբելոն, Ասորեստան, Հայաստան, Իրան, Չինաստան, Հնդկաստան և այլն) ամբողջ իշխանությունը պատկանում էր միապետին, որի ձեռքում էր կենտրոնացված երկրի գերագույն իշխանությունը, ժամանակակից տերմինաբանությամբ՝ ինքնիշխանությունը: Պետության գլուխը (փարավոնը, թագավորը, միապետը) համարվում էր պետության գերագույն իշխանության կրողը, օրենսդիրը, գերագույն գլխավոր հրամանատարը, գերագույն դատավորը և նույնիսկ՝ աստվածների որդին կամ էլ պարզապես՝ աստված:

Օրինակ, Բաբելոնում պետության գլուխ կանգնած էր Պատեսիլ-ուգալը («աստծո կառավարիչը»), որը ոչ միայն պետական իշխանության կրողն էր, այլև գլխավոր քուրմը⁴⁴:

Համմուրաբի օրենքների ժողովածուի առաջին հոդվածում նշված էր, որ «Աստված իրեն նշանակել է կառավարելու Բաբելոնը, որպես իր որդու և ժառանգորդի»: Օրենքները Համմուրաբիին համեմատում էին արևի հետև համարում էին «Բաբելոնի արև»⁴⁵:

⁴² Տե՛ս **Грачев Н.И.** Происхождение суверенитета: Верховная власть в мировоззрении и практике государственного строительства традиционного общества. Монография. М., 2009, էջ 77:

⁴³ Տե՛ս **Լերսետյան Կ.Ս.** Իրավագիտություն: Երևան, 2002, էջ 132:

⁴⁴ Տե՛ս **Кучма В.В.** Государство и право Древнего мира. Курс лекций по истории государства и права зарубежных стран. М., 1998, էջ 11:

⁴⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 68-69:

Հռոմեական իրավագիտության համաձայն՝ պետությունը ոչ թե իրավակարգից դուրս և վեր է, այլ դրա ներսում է՝ որպես դրա բաղկացուցիչ մաս, որին ներհատուկ են ընդհանրապես իրավունքի բոլոր հիմնական հատկությունները: Այսպես, պետությունը բնորոշելով որպես ժողովրդի գործ (res populi), Ցիցերոնը պարզաբանում է, որ «ժողովուրդը ոչ թե մարդկանց՝ ինչ-որ մի ձևով միասին հավաքած, ցանկացած միավորում է, այլ մեծաթիվ մարդկանց միավորում, որոնք միմյանց հետ կապված են իրավունքի հարցերով և շահերի համընդհանրության մեջ համաձայնությամբ»⁴⁶:

Այսպիսով, ի տարբերություն Յին աշխարհի պատկերացումների, որոնցում պետությունը և նրա ղեկավարը դիտում էին որպես աստվածային ծագում ունեցող կառավարիչներ՝ անսահմանափակ իշխանությամբ: Հռոմեացի իրավաբանները պետությունը և նրա կառավարումը ջանում էին կապել իրավունքի հետ:

Միջին դարերում, երբ ամուր տիրում էր կրոնական գաղափարախոսությունը⁴⁷, այդուհանդերձ, կատարվում էին որոշակի քայլեր, որոնցում փորձում էին սահմանազատել աշխարհիկ և հոգևոր իշխանությունները, ինչպես նաև կատարել առաջին քայլերը պետական ինքնիշխանության ըմբռնման հարցում: Այս խնդրում առանձնապես առանձնանում է միջնադարյան հայ մեծանուն օրենսդիր, օրինագետ, առակագիր, խոշոր հոգևորական գործիչ Մխիթար Գոշը (XII դ.): Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ինքնիշխանության հասկացությունը Մխիթար Գոշը տվել է իր «Հայոց Դատաստանագրքում»⁴⁸:

Գոշը երկրի միասնությունը և անկախությունը տեսնում էր ուժեղ, ինքնիշխան պետականության մեջ և վերջինս կապում է թագավորի անձի հետ, «Թագաւորք այնօքիկ անուանին, որք ազգաց իւրենց ըիրեն միանգամայն եւ յայլոց հարկ առնուն, յազգաց, եւ եթէ ոչ՝ ոչ հարկիցին» (Դատ. էջ 290-300):

Ինչ խոսք, Գոշի՝ պետական ինքնիշխանության սահմանման, ինչպես նաև նրա ողջ աշխարհայեցողության վրա իր կնիքն է դրել

⁴⁶ Տե՛ս Цицерон. О государстве.1, XXV, էջ 39:

⁴⁷ Տե՛ս Графский В.Г. Всеобщая история права и государства. М., 2015, էջ 256-257:

⁴⁸ Տե՛ս Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, իրավաբանական հետազոտությունք հանդերձ ծանօթութեամբ Վահան վարդապետի Բաստամեանց, ի Վաղարշ ապատ, 1880 (այսուհետ՝ տեքստում նշելով էջերը):

ավատատիրական ժամանակաշրջանի մտածելակերպը, որն արտահայտվում է հետևյալում, առաջին, Գոշը պետական ինքնիշխանության կրողն է համարում թագավորին, քանզի թագավորն է պետության գլուխը, երկրորդ, ուրիշ ժողովուրդներին (պետության ներքին) հարկ վերցնելը նույնպես միջնադարյան միջպետական հարաբերությունների չափանիշներով դիտվում էր որպես բնականոն երևույթ: Չնայած այս միջնադարյան քողին, այնուամենայնիվ, պետական ինքնիշխանության մասին Գոշի հասկացողությունը հեռու չէ պետական ինքնիշխանության ժամանակակից գիտական սահմանումից: Ըստ Գոշի ինքնիշխանությունը՝ թագավորի գերակայությունն է հպատակ ժողովրդի նկատմամբ և անկախությունը՝ արտաքին հարաբերություններում: Սակայն պետական ինքնիշխանությունը անսահմանափակ չէ ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին հարաբերություններում: Թագավորին օժտելով պետական ինքնիշխանությամբ, այսուհանդերձ Գոշը որոշակի իրավանորմերով սահմանափակում է նրա իշխանությունը. «Դատաստանաւ վարսեցի յամենայն իրս եւ ի գործս հաւատացեալ թագաւոր» (Դատ., էջ 306): Օրենքին ենթարկվելը պարտադիր է բոլորի, այդ թվում և թագավորի համար, որովհետև քանի դեռ գործում է օրենքը, ապա այն պետք է պահպանվի «զի օրենք է և պահելի» (Դատ., էջ 228):

Այդուհանդերձ, պետական իշխանության գիտական հայեցակարգը եվրոպայում մշակել է ֆրանսիացի նշանավոր իրավաբան Ժան Բոդենը (1530-1596)՝ «Վեց գիրք պետության մասին» աշխատությունում⁴⁹:

Մինչ ինքնիշխանության մասին բողեոյան հայեցակարգի մշակումը, Մաքիավելին (1469-1527) «պետությունը» դիտում է որպես մարդկային ոգու գերագույն դրսևորում, իսկ պետությանը ծառայելը՝ մարդկային կյանքի նպատակ: Պետության անհրաժեշտությունը Մաքիավելին հիմնավորում է մարդու եսասիրական բնությամբ և այն բռնի սանձահարելու պահանջմունքով: Միաժամանակ նա նշում է. «Բնությունը մարդկանց

⁴⁹ Տե՛ս և **Грачев Н.И.** Происхождение суверенитета. М., 2008, էջ 278-279:

ստեղծել է այնպես, որ մարդիկ կարող են ցանկանալ ամեն ինչ, բայց չեն կարող հասնել ամեն ինչի»⁵⁰:

Մաքիավելի ին գիտական շրջանառության մեջ է դրել stato (պետություն) տերմինը, որով նշանակում է ոչ թե կոնկրետ պետություն, իշխանություն և այլն, այլ հասարակության քաղաքական կազմակերպությունն ընդհանրապես: Պետության ծագման հարցում նրա հայացքները հարում են հռչակավոր սոփեստ Պրոտագորասի ավանդույթներին: Պետությունն առաջացել է նախնադարյան կյանքի արհավիրքներից պաշտպանվելու պահանջմունքից: Առաջին պետությունների հիմնադիրներն էին հզորությամբ ու արիությամբ օժտված ականավոր մարդիկ, ովքեր հարգանք և պաշտամունք էին ներշնչում: Սակայն նրանց ժառանգորդները տրվեցին շքեղության, հաճույքների, ինչի հետևանքով առաջացավ բռնատիրություն, որը հանգեցնում է ապստամբությունների ու դավադրությունների:

Մաքիավելի ին առանձնացնում է պետության ճիշտ ձևերը (միապետություն, ազնվապետություն և ժողովրդավարություն), որոնց նպատակը ընդհանուր բարիքն ու պետության վեհությունն են, և սխալ ձևերը (բռնապետություն, օլիգարխիա, «անձարձակություն»), որոնցում իշխողները հոգում են միայն սեփական օգուտի մասին, ոտնահարում օրենքները քաղաքացիների անվտանգությունը, արհամարհում հասարակական բարիքը: Կառավարման որևէ ձևի հաստատումը հանուն իշխանության պայքարող քաղաքական ուժերի որոշակի հարաբերակցության արդյունք է: Նրա կարծիքով «որքան փառապանծ են հանրապետության և միապետության հիմնախնդիրները, նույնքան նողկանք են բռնապետություն ստեղծողները»⁵¹: Լավագույն կառավարումը միավորում է միապետական, ազնվապետական և ժողովրդավարական ձևերի տարրեր: Մաքուր ձևերից նա գերապատվում է ժողովրդավարությունը:

Գոյություն ունեցող քաղաքական արժեքներից Մաքիավելի ին առանձնացնում է երեքը՝ ազգային անկախությունը, ազգային անվտանգությունը և գործող, արդյունավետ սահմանադրությունը:

⁵⁰ Տե՛ս **Макиавели Н.** Государь, М., 1998, էջ 63:

⁵¹ Տե՛ս **Макиавели Н.** Государь, М., 1998, էջ 98-99:

Լավագույն նա համարում է այն սահմանադրությունը, որն իրավունքները բաշխում է միապետի, ազնվականության և ժողովրդի միջև՝ նրանց իրական իշխանությանը համաչափ: Նման սահմանադրության արկայությունը դժվարացնում է հեղափոխությունների և հեղաշրջումների իրականացումը՝ նպաստելով կայուն հասարակարգի հաստատմանը: Հակառակ պարագայում ճիշտ կլիներ ավելի մեծ իշխանությունն տալ ժողովրդին:

Միապետությունը հակադրելով բռնապետությանը Մաքիավելին ձգտում է արդարացնել բացարձակ միապետությունը, ենթադրելով, որ միապետի անսահմանափակ իշխանությունը անհրաժեշտ է «անառակ» պետության վերափոխման ու երկրի միավորման համար: Քաղաքական այդ դիրքորոշումը հրատապ էր տվյալ ժամանակաշրջանի մասնատված Իտալիայի և բուրժուական պետականության ձեավորման համար ընդհանրապես: Նրա կարծիքով, այդ պայմաններում ժողովրդավարական ինստիտուտները չեն կարող լուծել քաղաքական վերափոխումների խնդիրը: Ընդ որում, միանձնյա բռնապետությունը նադիտում է ժամանակավոր անցումային ձև:

Մաքիավելիի կարծիքով, Իտալիայի նորաստեղծ պետականությունը պետք է անցնի զարգացման երկու փուլ. 1) «Նոր Միապետի» միանձնյա իշխանության հաստատում մասնատված և երկպառակտություններից ու օտար նվաճողների կողմից արյունաքամ եղած Իտալիայի միավորման, վերափոխման և բարձրացման նպատակով, որի լուծմամբ վերանում է բացարձակ միապետության անհրաժեշտությունը, 2) չափավոր հանրապետության որպես քաղաքական իդեալի ստեղծում, քանզի կառավարման խառը ձևը մաքուր ձևերի համեմատավելի կայուն է:

Եթե գոյություն ունեցող կարգի վերափոխման և նորի ստեղծման ընթացքում իշխանությունն ամբողջությամբ պետք է տրվի Միապետին, ապա վերափոխված հասարակության, նորահաստատ կարգի պահպանումը պետք է վստահել մեծամասնությանը ժողովրդական կառավարմանը: Կարգավորված հասարակության մեջ օրենքներով «կապված» ժողովուրդն ավելի խելամիտ է, հաստատուն և օժտված է լավագույն դատողությամբ, ձայն բազմաց ձայն Աստծո:

Ժողովրդավարության անհրաժեշտ պայմանը քաղաքացիների քաղաքական ակտիվությունն է: Անառակ ժողովուրդը չի կարող ազատությունը պաշտպանել: Միայն ինքնիշխան թագավորական իշխանությունն է ընդունակ արմատախիլ անել անառակությունը և ուղղել ժողովրդին: Բացի այդ, ստրկությանը ընտելացած մարդիկ ժողովրդավարության ընդունակ չեն:

Մաքիավելիի աշխատություններում ներթափանցված է բացարձակ ինքնիշխանության գաղափարը, չնայած որ նա չի օգտագործում «ինքնիշխանություն» հասկացությունը⁵²:

Ինչպես այդ կապակցությամբ նշում է պրոֆեսոր Ի. Դ. Լևինը. «Առանց Մաքիավելիի, չէր լինի նաև Բոդենը»⁵³:

Համաշխարհային իրավագիտության մեջ առաջինը «ինքնիշխան» եզրույթը օգտագործել է ֆրանսիացի փիլիսոփա և իրավաբան Ժան Բոդենը (1530-1596):

Ժան Բոդենի աշխատությունը, որում արտահայտվեց նրա ուսմունքը պետության ինքնիշխանության մասին, Վեց գիրք հանրապետության մասին» (1576) խորագիրն էր կրում⁵⁴: Խորագիրն ուշագրավ է նրանով, որ հանրապետությունն ասելով՝ Բոդենն ի նկատի ունեցր պետությունն ընդհանրապես: Բոդենն այս երկով փաստորեն փորձում էր տեսականորեն հիմնավորել հասարակական գիտակցության մեջ սաղմնավորված ու հետզհետե ամրապնդվող այն գաղափարը, որ միայն ու միայն միապետը (թագավորը) կարող է պաշտպանել ընդհանուր պետական շահերը, միայն նա է ի գործը երկրում հաստատել քաղաքացիական համերաշխությունն ու ձևավորել փոխհանդուրժողականության մթնոլորտ:

Հիշյալ երկում քննվում են նաև մի շարք այլ խնդիրներ՝ հասարակության սոցիալական հիմքերը, պետության ձևերը, պետական հաստատությունները, պետական կառուցվածքի փոփոխությունները, պետության խնդիրներն ու գործառնությունները, իշխանությունն իրականացնելու լծակներն ու միջոցները, ինչպես նաև պետության լավագույն ձևի խնդիրը: Ըստ Բոդենի պետությունը «բազմաթիվ ընտանիքների, ինչպես նաև նրանց համար ընդհանուր

⁵² Տե՛ս **Алексеев Н. Н.** Идеи государства. СПб., 2001, էջ 226:

⁵³ Տե՛ս **Левин И. Д.** Суверенитет. СПб., 2003, էջ 214:

⁵⁴ Մանրամասն տե՛ս **Bodin J.** Les six livres de la Republique. Էջ 1986; Նույնի, The sixbooks of comenweals. Cambridge. 1962:

հանդիսացող (սեփականության) կառավարումն է»։ Ընտանիքը պետության բջիջն է, իսկ պետությունը, իբրև կազմակերպություն, ստեղծվում է պայմանագրի միջոցով։ Պետության բարձրագույն նպատակը հասարակության ներսում խաղաղության ապահովումը և նույն հասարակությունն արտաքին ոտնձգություններից ու սպառնալիքներից պաշտպանությունն է. այս բոլորն, ի վերջո, հանգեցնում են հասարակության անդամների անհատների անձնական երջանկության համար անհրաժեշտ երաշխիքների ու նախապայմանների ստեղծման։ Ընտանիքը, Բողենյան մեկնաբանությամբ, պետության նախատիպն է ու մանրակերտը։ Ընտանիքի գլուխը (ավագը, նահապետը) պետական իշխանությունն է միապետը, թագավորը։ Ինչպես ընտանիքի գլուխն է կարգավորում ներընտանեկան բոլոր հարաբերությունները, լուծում ծագող խնդիրները, նույն կերպ միապետն է ղեկավարում պետությունը։

Չամաշխարհային քաղաքագիտական և իրավագիտական մտքի ընդհանուր գանձարանում Բողենի խոշորագույն ավանդը նրա ուսմունքն է պետության ինքնիշխանության մասին։ Այս հիմնախնդրին Բողենն անդրադարձել է մանրամասնորեն, տվել ինքնատիպ ու խիստ արժեքավոր մեկնաբանություններ և հիմնավորումներ։

Ինքնիշխանությունն ասելով՝ Բողենը հասկանում է պետական իշխանության որոշակի յուրացում, դա պետական իշխանության գլխավոր բնութագիրն է։ «Ինքնիշխանությունը հանրապետության բացարձակ ու հավերժական իշխանությունն է», - գրում է Բողենը նշված «Վեց գիրք հանրապետության մասին» աշխատության մեջ։ Ըստ ֆրանսիացի մտածողի ինքնիշխանությունը ենթադրում է միասնական անտրոհելի իշխանություն, վերջինս չի կարող իր արտոնություններից որևէ մեկը վերաբաշխել կամ վերափոխանցել ինչ-որ այլ մարմինների, որոնք իր ենթակայության տակ են։ Բողենն իշխանությունը բնութագրելիս առանձնացնում է նրան առանձնահատուկ հինգ կողմերը օրենքների հրատարակում, որոնք հասցեագրվում են բոլոր հպատակներին ու պետական հաստատություններին, պատերազմի ու խաղաղության խնդրի լուծում, պաշտոնատար անձանց նշանակում, բարձրագույն

ինստանցիաների դատական գործունեություն, ներման շնորհում:

Այն հայտ է, որ պետական ինքնիշխանությունը Բողենը բնութագրում է այնպիսի հատկանիշներով, որոնցից գրեթե բոլորն ընդունում է նաև ժամանակակից իրավագիտությունը: Մասնավորապես ժամանակակից իրավաբանական գրականության մեջ ինքնիշխանությունը հատկորոշվում է պետության տարածքում պետական իշխանության գերակայությամբ ու անկախությամբ: Օրենքների հրատարակումը, պաշտոնատար անձանց նշանակումը, դատական գործառույթները, ներման շնորհումը հենց պետության ներսում պետական իշխանության գերակայության արտահայտություններ են: Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ պետական ինքնիշխանության բաղկացուցիչ է դիտարկվում նաև անկախությունն արտաքին այլ պետությունների հետ ունեցած հարաբերություններում: Նույնն է ասում նաև Բողենը ընդգծելով, որ պետության ինքնիշխանական կամարտահայտումներից է նաև պատերազմի և խաղաղության խնդիրների լուծումը: Պետական իշխանության բողենյան ըմբռնումն արդարև շատ մոտ է այն ըմբռնում-սահմանմանը, որին հասել է ժամանակակից քաղաքագիտական և իրավագիտական միտքը՝ պետական ինքնիշխանությունը տվյալ երկրի ներսում պետական իշխանության գերակայությունն է, իսկ արտաքին հարաբերություններում՝ անկախությունն ու ազատկամությունը: Բողենն իր ժամանակին միանգամայն հստակորեն լուծել էր ինքնիշխանության երկու ներքին և արտաքին կողմերի հիմնախնդիրը. առաջինը գերակայությունն է, երկրորդը՝ անկախությունը:

Ինքնիշխանության հիմնախնդրի վերաբերյալ Բողենի մոտեցումներին և ժամանակակից ըմբռնումներին անդրադառնալիս հարկ է նշել մեր կարծիքով մի էական համընկնում: Արդի իրավագիտության մեջ գոյություն ունի տեսակետ, թե ինքնիշխանությունը պետական իշխանության, ոչ թե պետության հատկություն է: Այլ կերպ ասած իրավագիտության մեջ որոշակի վերապահություն է ընդունվում ինքնիշխանության պետության հատկանիշ լինելու կարծիքը: Ըստ Բողենի քանի որ պետական

իշխանությունը ենթադրում է միապետի իշխանություն, ուստի ինքնիշխանությունը միապետական, այն է՝ պետական կամ պետության հատկանիշ է: Այսպիսով Բողենը լուծում է նաև այն հիմնահարցը, որ ինքնիշխանությունն անթույլատրելի է շփոթել իշխանության հետ:

Մենք արդեն խոսել ենք այն մասին, որ ինքնիշխանության հիմնախնդիրը Բողենին հետաքրքրում է ոչ այնքան որպես տեսական խնդիր, որքան գործնական: Փորձելով ապացուցել, որ կրոնական-քաղաքացիական պատերազմներից պառակտված Ֆրանսիային անհրաժեշտ է բացարձակ իշխանությամբ օժտված միապետ, Բողենը խնդիր ունի նաև այդ ապագա, դեռ անհայտ միապետին օժտել ինքնիշխանական անսահմանափակ լիազորություններով ու իրավասություններով: Պետական կառավարման ինքնիշխանության հարցերը քննարկելիս Բողենն անում է մի շարք կարևոր լրացումներ ու ճշգրտումներ: Անկախսովորեն իշխանությունը պարտավոր է կատարել որոշ պայմաններ՝ պահպանել աստվածային ու բնական օրենքները, և թեև իրեն վերապահված է վճռելու հպատակների կյանքի ու մահվան խնդիրները, պարտավոր է չմիջամտել -չխառնվել նրանց ներընտանեկան գործերին, պահպանել կրոնական հանդուրժողականության սկզբունքը, չգանձել հարկեր՝ առանց հպատակների համաձայնության, զի նրանք ունեն սեփականության իրավունք: Յարկ է նշել, որ այստեղ ևս մենք առնչվում ենք Բողեն մտածողի քաղաքական լայնախոհությանը: Այս հոդվածում մենք դեռ առիթ կունենանք խոսելու պետական կառավարման մեջ ժողովրդավարական տարրերի գոյության անհրաժեշտության մասին, որ հավաստում է Բողենը: Այստեղ, սակայն, արժի ընդգծել մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ Բողենի դրական դիրքորոշումը: Պետությունը որքան էլ ինքնիշխան է իր ներքին խնդիրները լուծելիս, որքան էլ անսահմանափակ է միապետական իշխանությունը, այնուամենայնիվ, Բողենի համոզմամբ, ոչ մեկին տրված չէ իրավունք՝ միջամտել քաղաքացիների ներընտանեկան գործերին: Ժամանակակից իրավագիտական տերմինաբանությամբ սա մարդու խիստ կարևոր իրավունքներից մի քանիսի պաշտպանությունն է, որ դժվար է

Երևակայել անսահմանափակ իշխանություն ամբ օժտված միապետական ռեժիմում: Մինչդեռ Բողենը դադարում է հնարավոր և անհրաժեշտ:

Պաշտոնատար անձինք իրենց պաշտոնական գործունեությունն իրականացնում են միայն սուվերենի (միապետի, թագավորի) հանձնարարությամբ: Անկախ պետական իշխանության միասնականությունն ու անբաժանելիությունը գործնականում համատեղվում են իշխանության ու կառավարման տարբերակումների հետ, որոնք միշտ էլ, որ նույնական են: Անկախ իշխանության կրողը կամ ինքնիշխան անձը ժամանակավորապես և որոշակի պայմաններով իր կողմից նշանակվող պաշտոնատար անձանց փոխանցում է որոշ գործառնյալներ: Առանց ինքնիշխան անձի (սուվերենի) համապատասխան հանձնարարությունների կամ նրա կողմից տրվող լիազորությունների պաշտոնյաները ոչինչ չեն կարող անել ոչ իրենց հպատակների, ոչ էլ հենց իրենց պաշտոնյաների հետուներեցած հարաբերություններում:

Վերադառնալով ինքնիշխանության հատկանիշներից առաջինին օրենքների հրատարակմանը, նշենք, որ, ըստ Բողենի, սաայն էական-առաջնային հատկությունն է, որով առանձնանում է սուվերենը, նրա հրատարակած ցանկացած օրենք համընդհանուր է և համապարտադիր: Արդեն նշել ենք, որ, Բողենի ըմբռնմամբ, սուվերենը հրատարակում է օրենքներ (այն մարդաստեղծ է), բայց չի ստեղծում (չի կարող ստեղծել) իրավունքներ: Բողենի ուսմունքում այս երկուսը հստակորեն տարանջատված են, քանզի, ըստ նրա, դրանք նույն որակ-բովանդակությունը չունեն, իրավունքն իր մեջ արդարությունն է կրում, օրենքը հրամանը, ուստի առաջինն (իրավունքը) անստեղծ է ի վերուստ տրված, երկրորդը (օրենքը) ստեղծական, միապետի կողմից ստեղծված: Այս նկատառումներից ելնելով էլ Բողենը միապետի իշխանությանն աստվածային ծագում չի վերագրում, չի համարում, որ այն աստվածաշնորհ է, ուրեմն՝ ժառանգական: Յետաքրքիր է, որ հերքելով միապետական իշխանության աստվածային շնորհմամբ ժառանգական լինելու տեսությունը Բողենը ցանկալի է համարում, որ միապետական իշխանությունն, այնուամենայնիվ, լինի ժառանգական: Իշխանության ժառանգական լինելու հանգամանքի մեջ Բողենը նույն այդ իշխանության կայունության, հետևաբար՝

պետությունը և հասարակություն՝ առանց քաղաքական վայրիվերումների և ցնցումների զարգանալու երաշխիքներ էր տեսնում: Բողենի այս դիտարկումը, ըստ էության լինելով վիճելի (հատկապես՝ արդի իրավագիտական բարձունքներից դիտելիս), այնուամենայնիվ, մեր կարծիքով՝ իր ժամանակի համար ունեցել է որոշակի դրական նշանակություն, նպաստել պետությունների՝ որպես զարգացած քաղաքական համակարգերի ձևավորմանը:

Ինքնիշխանությունը կամ պետական անկախ իշխանությունը, Բողենի համոզմամբ, ինքնանպատակ, առավել ևս ինքնաբավ չէ. այդ իշխանությունն անհրաժեշտ է հասարակության արդարացի կառավարման համար: Արդարացի կառավարում ահա այն գերնպատակը, որի համար որպես միջոց է դիտվում նույնիսկ միապետական իշխանությունը:

Չարկ է նկատել, որ ինքնիշխանությունը կամ միապետական անկախ իշխանությունը բացարձակեցնելով, նրան համարելով անկախ ցանկացած կառույցից (հոգևոր, աշխարհիկ), Բողենը ձգտում էր այդ իշխանությունն ազատել ցանկացած սուբյեկտիվ գործոնից, չմոռանանք, որ «միապետի բացարձակ գերիշխանությունը Բողենը հիմնավորում էր մարդու բնույթով, որն իբր թե պահանջում է հասարակության մեջ հենց միապետական կառավարման ձև»: Բողենի նման խորիմաց իրավագետը, բնականաբար, չէր կարող չանդրադարձնալ այնպիսի նշանակալից և կարևորագույն խնդրի, ինչպիսին ինքնիշխանության ի հայտ գալու, արմատավորման, նաև օտարման կամ փոխանցման խնդիրն է: «Ինքնիշխանությունը ձևավորվում է ազատ ու բնական էակների միասնության մեջ, որոնք կազմում են ժողովուրդ», - գրում է Բողենը: Ժողովրդի հիշատակումից բնավ չի ենթադրվում, թե Բողենը կողմնակից է ժողովրդաիշխանության: «Գերագույն ու մշտական իշխանությունը քաղաքացիների հանդեպ, այնուհետև շարունակում է Բողենը, - ժողովուրդը կյանքի ու մահվան իրավունքով կարող է տալ քաղաքացիներից մեկին առանց որևէ սահմանափակման, այնպես, ինչպես կարող էր անել սեփականատերը՝ որևէ մեկին ինչ-որ բան նվիրել ցանկանալով»: Ինչպես արդեն ընդգծել ենք քաղվածքի մեջ, քաղաքացիներից մեկը, բողենյան ակնարկով, հենց միապետն է: Փաստարկները, որոնք բերում է Բողենը

միապետի ինքնիշխանությունն արդարացնելու համար, դժբախտաբար, շատ հեռու են գիտական լինելուց և հենց այդ պատճառով փաստարկներ չեն այնքանով, որքանով փաստարկները ծառայում են իբրև կռվաններ որևէ հիմնավորման, մինչդեռ դրանք բողեևյան տրամաբանությանը ոչ հատուկ պարզունակ համեմատություն-բացատրություններ են: Այնպես, ինչպես երկրի վրա բնակվող բոլոր արարածների վրա թագավորում է աստված, իսկ երկնքում՝ արեգակը, այդպես էլ հասարակություն կազմող անհատների վրա պետք է լինի մեկ կառավարող: Վերջինս, ակներևաբար, ինքնիշխան միապետն է: Այսպիսով՝ Բողեևը մեզ ներկայանում է իբրև հիրավի ինքնիշխան, իր իսկ մեկնաբանմամբ՝ բացարձակ, միապետական իշխանության համոզված կողմնակից:

Այնուամենայնիվ, Բողեևը բացարձակ միապետության և պետական ինքնիշխանության խոշորագույն տեսաբաններից է: Ինքնիշխան միապետը, ըստ Բողեևի, «իրավունքի և օրենքի աղբյուրն է»: Վերջին քաղվածքը երևան է բերում ակնհայտ խզում, ավելի ճիշտ է ասել հակասություն Բողեևի հայացքներում: Յիշենք, որ իրավունքը Բողեևը դիտում է «ի վերուստ տրված», «աստվածատեղծ» օրենք, մինչդեռ վերոհիշյալ քաղվածքում այն միապետի մենաշնորհներից է: Միապետի ինքնիշխանությունը բացարձակեցնելով՝ Բողեևը կատարում է մի կարևոր ընդգծում, որը դեռ տասնամյակներ անց եվրոպական քաղաքագիտական միտքը «սրբագրելու» էր. ըստ Բողեևի՝ միապետն անփոխարինելի է, իսկ նրա իշխանությունը՝ ցմահ: Այս դրույթը հենց իր հեղինակի որոշ հայացքների հետ է հակասության մեջ. միապետի անփոխարինելիությունը ենթադրաբար կարող է նշանակել և նշանակում է նրա անսխալ ականություն, ցմահ միապետ լինելու հանգամանքն էլ իր հերթին է անուղղակիորեն ամրագրում անսխալ ականության դրույթը: Այդուհանդերձ, ֆրանսիացի մտածողը բացարձակ միապետի ինքնիշխանության իր տեսությամբ որևէ առարկություն չընդունելու չափանվերապահ դոգմատիկ չէ. նրա հայացքներում, ինքնիշխան միապետության նրա հայեցակարգում կան արիստոկրատական, նույնիսկ ժողովրդավարական կառավարման ինչ-ինչ տարրեր: Յետաքրքիրն այն է, որ պետական կառավարման մեջ արիստոկրատական տարրերի առկայությունը հնարավոր է այն

պարագայում, երբ սուվերենի կողմից ինչ-ինչ պաշտոնների են նշանակվում «նշանավորները, լավագույնները, հարուստները»: Իսկ ժողովրդավարության տարրերը պետական կառավարման մեջ կարող են թափանցել ու գոյություն պահպանել, եթե միապետը պաշտոններ գրավելու համար թույլատրում է ազատ ու բանական անհատականությունների: Այնուամենայնիվ, Բոդենը կարևորում է պետական իշխանության միանձնյա կրողը լինելու միապետի իրավունքը: Աստծո ցանկացած արարած առանձին, և բոլորը՝ միասնաբար վերցրած, գտնվում են ներդաշնակության, կարգուկանոնի մեջ, քանզի նրանց իշխում է միայն ինքը՝ տեր Աստվածը: Այդպես ինքնիշխան ներդաշնակության կենտրոն ու աղբյուր է արեգակը երկնքում: Մարդկային հասարակության մեջ (այս պարագայում առանձին պետության մեջ) կարգուկանոնի, կայունության, խաղաղության միակ երաշխավորը միապետն է: Միապետության մեջ ապահովվում են իշխանության՝ լիազորված լինելու (շատերն են խորհուրդներ տալիս) և վճռական լինելու (մեկն է որոշում) հատկությունները:

Իշխանությունն իրականացնելու միջոցների առումով Բոդենն առանձնացնում է պետությունների երեք տեսակ՝ օրինական կալվածատիրական (տերունական), բռնակալական⁵⁵:

Օրինական հանդիսանում են այն պետությունները, որոնցում հպատակները ենթարկվում են միապետների օրենքներին, իսկ միապետը բնության օրենքներին պահպանելով իր հպատակների բնական ազատություններն ու սեփականատիրական իրավունքները:

Կալվածատիրական կամ տերունական համարվում են այն պետությունները, որոնցում միապետը զենքի ուժով տիրում է մարդկանց և նրանց ունեցվածքին, սկսում է կառավարել նրանց որպես «ընտանիքների ընտանիքի հայր»:

Բռնակալական են այն պետությունները, որոնցում միապետն՝ արհամարհում է բնական օրենքները ազատ մարդկանց տնօրինելով (հրամայելով) որպես ստրուկների, իսկ նրանց սեփականությունը ինչպես իրենը:

Ինքնիշխանության հայեցակարգից ելնելով Բոդենը

⁵⁵ Տե՛ս **Bodin J.** Les six livres de la Republique Paris, 1986, էջ 86-87:

տարբերակում է միավորված պետության ներքին երկու տեսակ: Անհավասարության սկզբունքով (բռնի) միավորված պետություններում, ըստ Բոդենի, սուվերենից վասալական կախման մեջ գտնվող անդամ պետությունները չեն օգտվում ինքնիշխանության իրավունքներից: Դրանից օգտվում է միությունը, ոչ թե նրա անդամները: Պետությունների միավորման մյուս տեսակը կոնֆեդերացիան է, որը ձևավորվում է հավասարության սկզբունքների վրա. նրանում անդամ պետություններն առանձին-առանձին պահպանում են իրենց ինքնիշխանությունը:

Բոդենը, պետությունները և նրանց տեսակները բնութագրելիս, հաշվի էր առնում նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշխարհագրականը, կլիմայականը, որոնցից և արտածում էր տվյալ պետությանն ու ժողովրդին բնութագրող ինչ-ինչ կենսաբանական, հոգեբանական, էթնիկական հատկանիշներ, սոցիալական յուրահատկություններ: Ներկայացնելով իր մոտեցումները պետության տեսակների վերաբերյալ՝ Բոդենն այնուհետև գնահատականներ է տալիս: Յիշենք, որ պետության վերը նշված երեք տեսակներում էլ տիրում էր ինքնիշխան միապետը, սակայն յուրաքանչյուր առանձին դեպքում այլ էին միապետական իշխանության սահմանները և իրավասությունները: Բոդենը նախապատվությունը տալիս է այնպիսի պետության, որում միապետն ինքնիշխան է, մինչդեռ կառավարումը կրում է որոշ չափով արիստոկրատական ու ժողովրդավարական բնույթ: Այդպիսի պետությունը Բոդենն անվանում էր թագավորական միապետություն:

Վեց գիրք հանրապետության մասին» աշխատության մեջ Բոդենը բնութագրում է նաև արիստոկրատական ու ժողովրդավարական պետությունները:

Արիստոկրատական պետության մեջ, որտեղ իշխանությունը նշանավոր մարդկանց ձեռքում է, «խելոք մարդիկ» նրանց մեջ, ըստ Բոդենի, քիչ են. նրանք գործում են ոչ բավականաչափ եռանդուն, իսկ պետական որոշումների ընդունումը վտանգված է երկպառակտումներով ու խմբակային պայքարով:

Ժողովրդավարական պետության մեջ օրենքներն ու

իշխանությունները շատ են, կարծում է Բողենը, բայց կա բարոյաբույժ, ժողովուրդը՝ «բազմազվուխգազանը», որևէ լավ բան հիմնել չի կարող:

Քանի որ, ըստ ֆրանսիացի մտածողի, պետություններին մեջ լավագույնը, ինչպես վերնասվեց, թագավորական միապետությունն է, և քանի որ միապետն է պետական ինքնիշխանության միակ կրողը, բնականաբար խիստ կարևոր նշանակություն է ստանում միապետի ինչպիսի անձ լինելու հանգամանքը: Բողենն ունի միապետ-մարդու իր իդեալը, ըստ նրա՝ պետության համար իդեալական է այն միապետը, որն աստվածավախ է: Սա ամենաառաջին, ուրեմն նաև ամենազվախորհատկությունն է, ինչը ցանկալի է, որ ունենա միապետը: Բողենյան այս վերաբերմունքը հասկանալի է, քանի որ իր ժամանակի ըմբռնումով աստվածավախ մարդը միաժամանակ կրողն է շատ դրական մարդկային հատկությունների, որոնց ակունքը հավատն է: Միապետը պետք է լինի «ներողամիտ՝ մեղավորների հանդեպ, լրջախոհ իր ձեռնարկումներում, խիզախ նպատակների իրականացման ճանապարհին, հավասարակշիռ հաջողությունների մեջ, ամուր փորձություններում, հավատարիմ տրված խոստումներին, իմաստուն խորհուրդներում» և այլն:

Անդրադառնալով Բողենի և Յոբսի՝ պետության ու պետական ինքնիշխանության վերաբերյալ ուսմունքին արձանագրենք, որ Յոբսը, հրաժարվելով պետության ծագման աստվածաբանական մեկնակետից, հասարակության զարգացման իր ուսմունքում առաջ էր քաշում, ինչպես արդեն առիթ ենք ունեցել նշելու, հասարակական դաշինքի տեսությունը: Բողենի նման կամ նրա նմանողությամբ՝ Յոբսը ևս գտնում էր, որ պետության կառավարման լավագույն ձևը բացարձակ միապետությունն է, իսկ լավագույն «կառավարիչը» միապետը: Սակայն հոբսյան բացարձակ միապետությունը հատկանշվում է բազմաթիվ վերապահումներով, ինչի վերջնարդյունքում, անգլիացի քաղաքագետի ըմբռնմամբ, միապետն այլևս բացարձակ ինքնիշխան չէ: Ակներև է, որ Բողենյան ինքնիշխանությունը Յոբսյան մեկնաբանություններում ու զարգացումներում որոշակիորեն զրկվում է «բացարձակության» բնութագրիչներից, իսկ միապետն ու միապետական իշխանությունը

ներառում են նույնիսկ ինչ-ինչ «հեղափոխական սկզբունքներ»:

Բողենը ձգտում է ներդաշնակ արդարության կամ, թերևս ավելի ճիշտ է ասել, արդար ներդաշնակության: Այստեղ հարկ կանշելու իրավունքի և արդարության Բողենյան ըմբռնման տարբերություններն իր մի քանի նախորդների ըմբռնումներից: Ն. Մաքիավելին, օրինակ, իրավունքն առավելապես դիտում է իբրև միջոց պետական կարևորություն ունեցող այս կամ այն նպատակին հասնելու համար, մինչդեռ Բողենի համար իրավունքը և արդարությունը պետության գոյության գերագույն նպատակներն էին: Ավելորդ է, թերևս, ասել, որ Բողենը, պետության մեջ խիստ կարևորելով օրենքի (դրական իրավունքի) նշանակությունը, այնուամենայնիվ ընդունում է իրավունքի (բնութենական, անստեղծ, այն է աստվածային օրենքի) գերակայությունը:

Ժան Բողենի քաղաքագիտական-իրավական հայացքները Վերածննդի եվրոպայում սկիզբ առած Նոր ժամանակների քաղաքական մտքի համար բացում էին Նոր հորիզոններ, դրանք իրենց մեջ կրում էին հզոր ինտելեկտուալ լիցքեր, որոնք ունակ էին քաղաքական մտածողության հաջորդ շրջանի և հետագա քաղաքագետների համար դառնալու Նոր իրավական-քաղաքագիտական նվաճումների խթան-նախադրյալներ:

Ժան Բողենի ուսմունքը պետության ինքնիշխանության մասին իր նշանակալից ազդեցությունն է ունեցել ոչ միայն եվրոպական, այլ և ամերիկյան քաղաքական մտքի վրա:

2.2. Ինքնիշխանության հայեցակարգի զարգացումը Նոր և Նորագույն ժամանակաշրջանում

Նոր և Նորագույն ժամանակաշրջանում ձևավորվում է պետական ինքնիշխանության ամբողջական հայեցակարգը՝ հանձինս այդ ժամանակաշրջանի առաջավոր մտածողների՝ Յոհան Լոկի, Ռոսսոյի, Յեզեյի, Ելենիկի, Քելզենի և այլոց աշխատություններում:

Պետական ինքնիշխանության հայեցակարգի զարգացման խնդրում նշանակալի ավանդ ունի անգլիացի նշանավոր փիլիսոփա և քաղաքական մտածող Թոմաս Յոհանսոնը (1588-1679):

Նրա իրավաքաղաքական հայեցակարգը շարադրված է

հիմնականում «Քաղաքացու մասին ուսմունքի փիլիսոփայական հիմքը» (1642) և «Լևիաթան, կամ եկեղեցական ու քաղաքացիական պետության մատերիան, ձևը և իշխանությունը» (1651) տրակտատներում⁵⁶:

Յոբսի համաձայն խաղաղության և բնական օրենքների իրականացման երաշխիքը պետության բացարձակ իշխանությունն է, որը մարդուն հակադրում է դրանք կատարել քաղաքացիական օրենքներ հրապարակելու միջոցով: Բնական օրենքներն առնչվում են բնականության, քաղաքացիական ու ժիհետ: Բնական օրենքը որևէ բան կատարելու կամ չկատարելու ազատությունն է, դրական օրենքը հրաման, հաստատում՝ ինչ-որ բան անելու կամ չանելու: Սակայն, ի տարբերություն պայմանագրային տեսության շատ ներկայացուցիչների, Յոբսը ենթադրում է, որ ըստ բովանդակության ու նպատակադրության՝ և՛ երկրորդներն ընդհանուր առմամբ համընկնում են, քանի որ քաղաքացիական օրենքերը, ըստ էության, նույն բնական օրենքներն են՝ ամրագրված պետության հեղինակությունը և ուժով: Ավելին, իրավական և բնական օրենքների միջև տարբերությունը նա համարում է լոկայն, որ քաղաքացիական օրենքները գրված են, իսկ բնականը՝ չգրված:

Պետության կազմակերպման նպատակն է վերջ տալ «բոլորի պատերազմը բոլորի դեմ» վիճակի, ազատագրվել անպաշտպանվածության սարսափից ու բնության սպառնալիքից, որոնք բնորոշ են «անիշխանության սանձարձակ վիճակին» (բնական վիճակին): Անհատները փոխպայմանավորվածության հիման վրա ինքնակամ հրաժարվում են իրենց բնական իրավունքների և ազատությունների մեծ մասից ու բարձրագույն իշխանությունը հանձնում միակ անձին՝ պետությանը: Յենց այդ, այսինքն՝ հասարակական դաշինք կնքելու, բնական վիճակից քաղաքացիական հասարակությանն անցնելու պահին է ժողովուրդն օժտված լինում ինքնիշխանությամբ: Հասարակական դաշինք կնքելուց հետո անհատներն արդեն իրավունք չունեն պետական իշխանությունից ետ պահանջել նրանց հանձնած բնական իրավունքները⁵⁷: Այսուհետ

⁵⁶ Տե՛ս Гоббс Т. Левифан, или Материя, форма и власть государства церковного и гражданского. М., 1936:

⁵⁷ Տե՛ս Гоббс Т. Левифан, или Материя, форма и власть государства церковного и гражданского.

քաղաքացիները պետք է անշեղորեն ենթարկվեն պետության բոլոր հրամաններին, քանի որ դրանք արտահայտում են ոչ թե կամայականություն կամ անսահմանափակություն, այլ բանական անհրաժեշտություն: Ընդամիս, քանի որ դաշինք կնքող մարդիկ պահպանում են ընդհանուր շատ իրավունքներ և ձեռք բերում բազմաթիվ մասնավոր իրավունքներ, ապա «յուրաքանչյուր մարդ, ով հավակնում է որոշ իրավունքների, պարտավոր է դրանք ընդունել ցանկացած այլ մարդու համար»: Պետության ստեղծման և գերագույն իշխանությունը նրան հանձնելու պատճառը հետևյալն է. «Եթե յուրաքանչյուր մարդ կարողանար ինքն իրեն կառավարել, այսինքն՝ ապրել բնական օրենքների համաձայն, ապա ո՛չ պետության գոյության, ո՛չ ընդհանուր իշխանության հարկադիր իրականացման անհրաժեշտություն չերլինի»: Բնական ազատության փոխարեն պետության մեջ մարդը ձեռք է բերում քաղաքական ազատություն: Այն բնութագրվում է որպես «բնական իրավունքի մաս, որը մնացել է քաղաքացիներին և թույլ տրվել օգտագործել քաղաքացիական օրենքներին համապատասխան»: Ընդ որում պետության հաստատումից հետո քաղաքացիները պահպանում են այնքան ազատություն, որքան հարկավոր է լավ և խաղաղ կյանքի համար: Այդպիսով, ազատությունը քաղաքական պետության սահմանման և՛ մեկնակետն է, և՛ նպատակակետը:

Չորսի կարծիքով, հասարակական դաշինքը հանգեցնում է հասարակության ու պետության միաժամանակյա ծագման: Այլ խոսքով, հետևելով անտիկ մտածողներին (Պլատոն, Արիստոտել) նա նույնացնում է «քաղաքացիական հասարակություն» և «պետություն» հասկացությունները: «Պետություն» նաև վանում է այն հասարակությանը, որտեղ մեկ անձի (մեկ մարդու կամ ժողովի) կամքը բազմաթիվ մարդկանց համաձայնության արդյունքում համարվում է բոլորի կամքը, որպեսզի պետությունը կարողանա օգտագործել առանձին քաղաքացիների ուժերն ու հնարավորությունները համընդհանուր խաղաղությունն ու անվտանգությունը պաշտպանելու համար:

Չորսի համաձայն ինքնիշխանը ոչ մի պայմանագրով կապված չէ

Ժողովրդի հետ և սկզբունքորեն նրա առջև ոչ մի պատասխանատվություն չի կրում: Անկախ պետության ձևից ինքնիշխանի իշխանությունը բացարձակ է: Նա քաղաքացիական որևէ օրենքով կապված չէ որևէ մեկի հետ ու ոչնչով: Յոբսը իբրև կենտրոնացված պետական իշխանության կողմնակից ինքնիշխանի իշխանությունը համարում է անբաժանելի, քանզի «բաժանել պետության իշխանությունը նշանակում է կործանել այն, որքանով բաժանված իշխանությունները ոչնչացնում են միմյանց»: Ավելի, «այն ամենը, ինչ գերագույն ներկայացուցիչ ունի հպատակի նկատմամբ, և ինչ պատրվակով էլ դալիսի, չի կարող համարվել անարդարություն կամ անօրինականություն»: Իսկ հպատակները որևէ իրավունք չունեն բարձրագույն իշխանության նկատմամբ, հետևաբար վերջինը չի կարող լուծարվել մարդկանց կողմից իրավական հիմքի վրա:

Յոբսը համոզված է, որ ինքնիշխանի անսահմանափակ իշխանությունը դատապարտելի չէ. և այն չպետք է առաջ բերի մարդկանց դժգոհությունը: Ընդ որում պետության անդամների դժգոհությունը ծնող պատճառներն առավելապես կախված են հենց նրանցից և ոչ պետական իշխանությունից: «Բացարձակ իշխանության մեջ չկա ճնշող ոչինչ, եթե հաշվի առնել այն, որ մարդկային հաստատումները առանց որոշ անհարմարությունների գոյություն ունենալ չեն կարող: Եվ այդ անհարմարությունները կախված են քաղաքացիներից և ոչ իշխանությունից»⁵⁸: Նա հերքում է նաև այն միտքը, որ անսահմանափակ իշխանությունը հանգեցնում է սոցիալական բացասական հետևանքների, քանի որ, ըստ նրա, այդպիսի իշխանության բացակայությունն ավելի վատ է: Ընդ որում, պետական կառավարման ձևը ժողովրդավարական, ազնվապետական կամ միապետական, սկզբունքային նշանակություն չունի, որքանով «ժողովուրդը կառավարում է ցանկացած պետության մեջ: Միապետության մեջ ևս թելադրում է ժողովուրդը, որովհետև ժողովրդի կամքն արտահայտվում է մեկ մարդու կամքով և, որքան էլ տարիմաստ է, թագավորը ժողովուրդն է»: Առաջին հայացքից տարիմաստ այս պնդման օրինաչափությունը նա համարում է այն, որ

⁵⁸ Տե՛ս Гоббс Т. Левиафан, или Материя форма и власть государства церковного и государского, Էջ 193:

ինքնիշխանը նույնպես ենթակա է բնական օրենքների գործողությանը, ինչպես նրա բոլոր հպատակները: Ասվածից հետևում է, որ պետության բարձրագույն իշխանության բացարձակացումը բնական և քաղաքացիական օրենքների որոշ իմաստով նույնացման օրինաչափ հետևանքն է:

Յոբսի համաձայն պետության բացարձակ իշխանությունը, բացի պաշտպանականից, կոչված է կատարել նաև այլ գործառնություններ, «խրախուսել ամեն տեսակի արդյունահանությունը և արդյունաբերության բոլոր բնագավառները», հարկադրել աշխատանքը, զբաղվել դաստիարակչական-լուսավորական գործունեությամբ: Բացի այդ, պետությունն իր հպատակներիս պետք է երաշխավորի ազատություն, որը հանգեցվում է իրավունքի կատարելու այն ամենը, ինչ արգելված չէ քաղաքացիական օրենքով: Ժողովրդի բարօրությունը պետության բարձրագույն օրենքն է: Այն բնական բանականության օրենքներից մեկն է, որին ենթարկվում են նաև միապետները: Դա նշանակում է նաև, որ պետությունը լիովին չի կլանում քաղաքացիական հասարակությունը, քանզի գործառնության-նպատակային տեսանկյունից պետությունը պատասխանատվություն է կրում հասարակության բարեկեցության համար և ժողովրդի բարօրությունը համարում իր գերխնդիրը. «Որովհետև պետությունը հաստատված է ոչ թե իր համար, այլ հանուն քաղաքացիների»:

Պետությունը պարտավոր է նաև պայքարել բարձրագույն իշխանության դեմ ուղղված «խռովահույզ ուսմունքների» տարածման դեմ, որոնք թուլացնում են պետությունը: Մասնավորապես Յոբսը այդպիսին համարում է այն ուսմունքը, որի համաձայն յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ինքը որոշել, թե ինչն է բարի, ինչը չար, արդար ու անարդար, դրան համապատասխան «որ գործողություններն են լավ, և որոնք վատ»: Սակայն, նրա կարծիքով, այս պնդումը ճիշտ է բնական վիճակի համար, երբ դեռևս չկան քաղաքացիական օրենքներ, իսկ քաղաքացիական վիճակում միայն այն դեպքերի համար, որոնք սահմանված, վերապահված չեն օրենքով: Մնացած բոլոր դեպքերում «բարու և չարի չափանիշը

քաղաքացիական օրենքն է, իսկ դատավորը օրենսդիրը»: Նշված ուսմունքի վտանգավորությունը նա համարում է այն, որ մարդիկ «հակվում են վիճելու միմյանց հետ և քննարկելու պետության հրամանները, իսկ հետո ենթարկվում կամ չեն ենթարկվում դրանց կախված սեփական հայեցողությունից, ինչը բերում է խռովություն և թուլացնում պետությունը»: Ընդ որում իշխանության և օրենքի ուժը պետք է կիրառվի «ոչ թե նրանց դեմ, ով մոլորվում է, այլ բուն մոլորությունների»:

Պետությունը թուլացնող հասարակական «հիվանդությունների» շարքին Յոբսը դասում է նաև «բացարձակ իշխանությանը ընդդիմանալու ազատությունը», որը տրվում է այն մարդկանց, ովքեր հավակնում են քաղաքական իմաստունության: Նա մասնավորապես նկատի ունի «ժողովրդի ստորին շերտերից» ելածներին, որոնք, ոգեշնչված կեղծ գաղափարներով «հիմնական օրենքների դեմ» իրենց «անդադար գրոհներով անհանգստություն են առաջացնում պետության մեջ»: Յոբսը իբրև ուժեղ պետական իշխանության (քաղաքական բացարձակության) կողմնակից, պետության շահերը համարում է բարոյականության բարձրագույն չափանիշ:

Բացի պայմանագրային տեսությունից, Յոբսն առաջադրում է պետության ծագման մեկ այլ ուղի ևս: Այսպես, պետությունները ծագում են նաև բարձրագույն իշխանությունը բռնազավթելու միջոցով: Քաղաքական գաղափարների զարգացման առումով հետաքրքիր է նաև այն, որ Յոբսը բռնատիրոջին նույնպես համարում է ինքնիշխան: Անհատների կամավոր համաձայնության (հասարակական դաշինքի) հիման վրա ծագած պետությունը նա անվանում է «քաղաքական պետություն կամ պետություն հիմնված օրենքի վրա», իսկ իշխանության բռնատիրության արդյունքում ծագած պետությունը «ձեռքբերովի»:

Պետության և եկեղեցու փոխհարաբերության հարցը Յոբսը լուծում է յուրատեսակ էտաթիզմի ոգով ու պետությունն աստվածացնելով: Ընդգծելով պետության և եկեղեցու աստվածային աղբյուրը նա, մի կողմից, ենթադրում է պետության ինստիտուցիոնալ և իրավական վերնաշենքային կառուցումը

Եկեղեցու հենքի վրա, մյուս կողմից հստակ զանազանում հոգևոր և աշխարհիկ իշխանություններն ու նրանց իրավագործությունները:

Յոթերորդ պահանջում է աստվածապաշտության միասնական կարգի հաստատում, ինչը հենց պետության գործառույթն է: Խոսքը, փաստորեն, միասնական պետական կրոնի և եկեղեցու նկատմամբ պետական հովանավորության հաստատման մասին է: Ուստի «պետությանը հարկ է մշտապես ենթարկվել, ինչ էլ նա հրամայի համարել աստվածապաշտության օրենք»: Ընդ որում, պնդում է Յոթերորդ, եկեղեցին ինքնին որպես հավատացյալների միավորում, զուրկ է միասնությունից, քանզի նրանում բացակայում է միասնական օրինական իշխանությունը, այն այդպիսին դառնում է միայն պետական օրինական իշխանության շնորհիվ: Այդ իսկ պատճառով «քրիստոնեական պետություններում ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր գործերի մասին դատելու իրավունքը պատկանում է քաղաքացիական իշխանությանը»: Այստեղից էլ եկեղեցու և քրիստոնեական պետության նույնացումը: Այսպիսով, Յոթերորդ է տառիգմը խարսխված է երկու հիմքի վրա.

1) մարդաբանական մարդը չի կարող անձամբ կառավարել իր կրթերը,

2) սոցիոլոգիական հասարակությունը սոսկ մեծ և կայուն ընկերակցություն է, այսինքն՝ «քաղաքական» հասարակություն պետություն է: Ելնելով դրանից Յոթերորդ ինքնիշխանությունը, ազատությունը և իրավունքի առանձին անձից «փոխադրում է» ժողովրդի, վերջինից գերագույն կառավարչի վրա և հակառակը: Այնուամենայնիվ, նա սահմանափակում է գերագույն կառավարչի կամայականությունը բնական ազատությամբ, որը մարդիկ ունեն նաև քաղաքական վիճակում: Ընդսմին, կամայականության սահմանը ոչ թե մարդու արժանապատվությանը, այլ նրա կյանքին սպառնացող վտանգն է:

Հասարակական դաշինք կնքելու ժամանակ գերագույն իշխանությունը հանձնվում է կամ բազում մարդկանց խորհրդին, կամ մեկ անձի: Համապատասխանաբար՝ հնարավոր են կառավարման երեք ձև. 1) գերագույն իշխանությունը պատկանում է ժողովին, և յուրաքանչյուր քաղաքացի ունի ձայնի իրավունք

(ժողովրդավարություն), 2) գերագույն իշխանությունը պատկանում է ժողովին, բայց ձայնի իրավունքով օժտված է քաղաքացիների մի մասը (ազնվապետություն), 3) գերագույն իշխանությունը պատկանում է մեկ մարդու (միապետություն): Նշված հիմնական կառավարման ձևերին նա հակադրում է «խեղաթյուրված» ձևերը անիշխանություն, օլիգարխիա, տիրանիա, որոնք պետական կառույցի ինքնուրույն ձևեր չեն համարվում: Բոլոր դեպքերում իշխանության աղբյուրը ժողովուրդն է, սակայն գերագույն ինքնիշխանությունը կամովի փոխանցելուց հետո ժողովուրդը դադարում է լինել միասնական անձ և կրկին վերածվում է տրոհված զանգվածի:

Թեև Յոբսն ընդունում է կառավարման տարբեր ձևերի գոյության օրինաչափությունը, բայց գերապատվում է միապետությունը: Նրա կարծիքով, վերջինը մյուս ձևերից առավել ունակ է իրականացնելու պետության բացարձակ իշխանությունը, քանի որ «թագավորի անձը մարմնավորում է պետությունը»: Յետագայում, այս միտքը կրկնում է Սպինոզան. «Թագավորը հենց բուն պետությունն է»:

Յոբսը որպես քաղաքական բացարձակության (միահեծանության) հայեցակարգի համոզված պաշտպան, այնուամենայնիվ, որ եկեղեցին պետք է ենթարկվի պետությանը: Միաժամանակ նա կրոնը դիտում է պետական իշխանության գաղափարախոսական կարևոր գործիք ժողովրդական զանգվածներին հնազանդեցնելու համար:

Մարդուն լիովին ենթարկելով պետության բացարձակ իշխանությանը Յոբսը, այնուամենայնիվ, որոշ դեպքերում նրան տալիս է ինքնիշխանի կամքին հակադրվելու, ընդհուպ ապստամբելու իրավունք: Անհատն այդ իրավունքը ձեռք է բերում լուրջ պնդմանակ, երբ «ինքնիշխանը հրամայում է մարդուն սպանել, վիրավորել կամ խեղել իրեն, կամ չդիմադրել իր վրահարձակվողին, կամ ձեռնպահ մնալ սննդից» ու այլ իրերից, առանց որոնց անհնար է մարդու իսկ գոյությունը: Մարդն ազատ է (իրավունք ունի) նաև չխոստովանել իր կատարած հանցագործությունը ինքնիշխանիս (կամ նրա ներկայացուցչին), եթե նրան ներում չեն խոստանում: Յոբսի համաձայն «ոչ մի պայմանագիր չի կարող մարդուն պարտավորեցնել

մեղադրել իրեն»:

Ինքնիշխանի բարձրագույն իշխանության անհնազանդությանը Յոբսն օրինաչափ է համարում հետևյալ դեպքերում, ա) եթե հրաժարումը ենթարկվելուց «չի խախտում այն նպատակը, հանուն որի հաստատվել է բարձրագույն իշխանությանը, ապա մենք ազատ ենք մերժել, հակառակ դեպքում՝ ազատ չենք», բ) եթե ինքնիշխանի հրամանները հակասում են բնության բարձրագույն օրենքին ինքնապահպանման, սեփական կյանքի պաշտպանության օրենքին, քանզի ինքնիշխանը ազատ է, չի ենթարկվում միայն քաղաքացիական օրենքներին, սակայն նա ենթակա է աստվածատուր «բնական օրենքներին», որոնք «չեն կարող վերացնել ո՛չ մարդը, ո՛չ պետությունը (ինքնիշխանը)»:

Ինքնիշխանության գաղափարներն իրենց զարգացումն ու պաշտպանությունը գտան ազատական-իրավական հայեցակարգերում, մասնավորապես Ջոն Լոկի (1632-1704) իրավաքաղաքական ուսմունքում:

Պետությունն, ըստ Լոկի, մարդկանց հանրագումարն է միավորված մեկ ամբողջի (քաղաքական մարմնի) մեջ, նրանց իսկ հաստատած ընդհանուր օրենքի գերակայությամբ⁵⁹: Միայն պետությունն է մարմնավորում քաղաքական իշխանությունը, միայն նա ունի իրավունք հանուն հասարակական բարիքի ստեղծելու հասարակական հարաբերությունները կարգավորող, սեփականությանը պաշտպանող օրենքներ, ինչպես նաև համակեցության ուժը կիրառելու իրավունք օրենքները գործադրելու և պետությունն արտաքին թշնամիներից պաշտպանելու համար: Քաղաքական իշխանության հիմնական հատկանիշներից է մասնավոր սեփականության առկայությունը, այնինչ բռնապետական իշխանությունը տարածվում է նրանց վրա, ովքեր բացարձակապես զրկված են որևէ սեփականությունից:

Կամավոր ստեղծելով պետություն և ղեկավարվելով բնականությանամբ անհատները պետությանը փոխանցում են այնքան, լիազորություններ, իրավունք ու իշխանություն, որքան անհրաժեշտ ու բավարար են հասնելու գլխավոր նպատակին, որը հանգում է բոլորի և յուրաքանչյուրի կյանքի առողջության,

⁵⁹ Տե՛ս և **Локк Дж.** Избранные философские произведения, М., 1960, т.2. Էջ 72:

ազատության և սեփականության ապահովման, պաշտպանման ու իրականացման: Յետևելով «յուրաքանչյուրին հատուցել իրենը» բնափրավական սկզբունքին նա սահմանում է մարդու բնական իրավունքների շրջանակը (կյանքի իրավունք, սեփականության իրավունք, ազատություն և հավասարություն), որոնք անհատը երբեք ու ոչ մեկին չի օտարում: Ավելին, յուրաքանչյուր մարդ, ըստ բնության օրենքի, իրավունք ունի պաշտպանել «իր սեփականությունը, այսինքն իր կյանքը, ազատությունը և ունեցվածքը»⁶⁰: Պետության մեջ սեփական անօտարելի բնական իրավունքների ապահովումը մարդկանց պայմանագրային միավորման գլխավոր նպատակն է և գերագույն իշխանության ճանաչման հիմքը: Ընդ որում, բնության օրենքը շարունակում է գործել նաև պետության մեջ որոշելով ինչպես մարդու իրավունքները, այնպես էլ քաղաքական իշխանության բնույթն ու սահմանները:

Լոկի կարծիքով, մարդու անօտարելի (բնական) իրավունքների իրական պաշտպանությունն ապահովելու համար անհրաժեշտ է քաղաքական (պետական) իշխանության գործառույթային բաժանում օրենսդիր, գործադիր և ֆեդերատիվ (դաշնային) իշխանությունների, ինչպես նաև դրանց փոխգործողության և փոխլրացման մեխանիզմի մշակում: Բարձրագույն իշխանությունը օրենսդրականն է, որն էլ որոշում է պետության ձևը: Օրենսդիր իշխանությունը պատկանում է միայն ժողովրդի ներկայացուցչական մարմնին սենատին կամ խորհրդարանին, կամ որևէ այլ կոլեկտիվ մարմնի: Սակայն օրենսդիր իշխանությունը միայն «հավատարմատար է» (ներկայացուցչական): Ուստի ժողովրդին է պատկանում «գերագույն իշխանությունն արձակելու կամ օրենսդիր մարմնի կազմը փոխելու իրավունքը»⁶¹: Գործադիր իշխանությունը պատկանում է միապետին ու նախարարներին: Կառավարության լիազորությունները սահմանվում են օրենքով: Այն ենթարկվում է օրենսդիր իշխանությանը և հաշվետու է նրան: Թեև օրենսդիր մարմնի գումարման և արձակման իրավունքը պատկանում է գործադիր իշխանությանը, սակայն այդ իրավունքը նրան գերակայություն չի տալիս օրենսդիր իշխանության նկատմամբ: Բացի այդ, գործադիր իշխանությունը

⁶⁰ Նույն տեղում, էջ 89:

⁶¹ Նույն տեղը, էջ 116:

պետության ուժը չպետք է օգտագործի օրենսդիր մարմնի գումարման և աշխատանքը խոչընդոտելու նպատակով: Լոկը գրում է. «Բոլոր դիրքերում և վիճակներում կամայականության ուժի դեմ լավագույն միջոցը ուժով հակադդելն է: Առանց լիազորության ունենալի ուժի կիրառումը կիրառողին դնում է պատերազմի վիճակում որպես զավթիչի և իրավունք տալիս նրա հետ վարվել համապատասխան ձևով»⁶²: Գործադիր իշխանության (կառավարության) լիազորությունները որոշվում են օրենքով:

Իշխանության ունենալի բաժանումը Լոկը համարում է անհրաժեշտ պայման իշխանության բռնատիրումը, բռնապետության հաստատումը կանխելու համար: Ավելին, ի տարբերություն Յոբսի նաընդունում է պայմանագրի պայմանները խախտող կառավարիչների բռնապետական իշխանությանը ժողովրդի դիմադրության օրինականության ունենալի իրավասությունը ընդհուպ զինված ապստամբություն: Այդ իրավունքը դրսևորվում է ժողովրդի ինքնիշխանությամբ, որն իրավաբաղադրական կարգավիճակով բարձր է պետության ինքնիշխանության ունից, քանի որ ինչպես մինչև հասարակական դաշինքի կնքումը, այնպես էլ դրանից հետո ժողովուրդը համարվում է միակ բարձրագույն ինքնիշխանը:

Ժան-ժակ Ռուսսոյի (1712-1778) իրավաբաղադրական ուսմունքը պետության առաջացման պայմանագրային տեսության համաձայն, ենթադրում է, որ «հասարակական դաշինքը» պետությանն է փոխանցում անսահմանափակ իշխանություն նրա բոլոր անդամների նկատմամբ⁶³:

Ռուսսոյի իրավաբաղադրական ուսմունքը հիմնված է էզալիտարիզմի (հավասարության) և խոլիզմի (մասի ենթարկումն ամբողջին) սկզբունքների վրա, իսկ առանցքը սոցիալական հավասարության և ժողովրդական ինքնիշխանության հայեցակարգն է: Նա, ինչպես և XVII-XVIII դարերի շատ մտածողներ, ելնում է մարդկանց բնական վիճակի մասին ըմբռնումից, վիճակ, երբ չկային ո՛չ մասնավոր սեփականություն, ո՛չ սոցիալական անհավասարություն: Մարդկային գոյության այս շրջանում իշխում

⁶² Նոլյն տեղը, էջ 85-86:

⁶³ Տե՛ս Руссо Ж.Ж. Об общественном договоре или Принципы политического права // Трактаты М., 1969, էջ 172:

Էին փակատար ազատությունը և կատարյալ հավասարությունը, ներդաշնակությունը բնության հետ:

Ըստ Ռուսսոյի օրինական իշխանության հիմքը մարդկանց համաձայնությունն է ոչ իբրև հպատակների ու կառավարողների, այլ որպես հավասար սուբյեկտների, որն արտացոլվում է հասարակական դաշինքում:

Ռուսսոն սահմանազատում է իշխանության օրենսդիր ու գործադիր ոլորտները: Առաջինն արտահայտում է քաղաքական Օրգանիզմի կամքը, երկրորդը նրա ուժը: Քանի որ օրենսդիր իշխանությունն ամբողջությամբ ու լիովին պատկանում է ինքնիշխան ժողովրդին, հետևաբար, նրան է պատկանում գործադիր իշխանության կառավարության ձևն ընտրելու իրավունքը: Կառավարությունը հանդես է գալիս որպես ինքնիշխան ժողովրդի «վստահված անձ»: Ի տարբերություն օրենսդիր իշխանության գործադիրը չի կարող պատկանել ողջ ժողովրդին: Կառավարությունն ասելով նա հասկանում է ինչ-որ «միջնորդավորող օրգանիզմ հաստատված հպատակների և ինքնիշխանի հարաբերությունների համար, լիազորված գործադրելու օրենքները և պահպանելու թե՛ քաղաքացիական, թե՛ քաղաքական ազատությունը»:

Հասարակության բարդ կառույցում Ռուսսոն առանձնացնում է կառուցվածքային երեք միավոր. 1) «պետությունը»՝ իբրև քաղաքացիական հասարակություն, որն առաջանում է հասարակական դաշինք կնքելու արդյունքում, ժողովուրդը՝ որպես քաղաքացիական օրենքներին ենթարկվող հպատակների ամբողջություն, 2) ժողովուրդը՝ որպես ինքնիշխան, 3) կառավարությունը: Ընդ որում՝ «հենց կառավարությունում են ամփոփված այն միջնորդ ուժերը, որոնց հարաբերակցությունն էլ որոշում է ամբողջի վերաբերմունքը ամբողջի կամ ինքնիշխանի վերաբերմունքը՝ Պետության նկատմամբ»: Վերջին հարաբերությունը նա համարում է որոշիչ: Կառավարությունը հրահանգներ ստանալով ինքնիշխանից՝ դրանք փոխանցում է ժողովրդին, և որպեսզի Պետությունը մնա կայուն հավասարակշռության վիճակում, անհրաժեշտ է, որ հավասարաւթյունն լինի «կառավարության իշխանության և

քաղաքացիների իշխանության միջև»:

Ինքնիշխանությամբ օժտված է միայն օրենսդրական իշխանությունը, իսկ օրենքները ընդհանուր կամքի գործողություններ են: Ուստի ինքնիշխանությունը գործում է միայն այն ժամանակ, երբ ժողովուրդը գտնվում է ժողովում, ինքնիշխանը պետք է պարբերաբար հաստատի իր կամքի գերակայությունը:

Ինքնիշխանի և կառավարության միջև երբեմն ստեղծվում է միջանկյալ՝ պատգամավորների ներկայացուցչական իշխանություն: Այս գաղափարը պատկանում է Նոր ժամանակին: Ընդ որում, պատգամավորները ոչ թե ժողովրդի ներկայացուցիչներ են, այլ սոսկ լիազորներ: Իսկ օրենքը, որը հաստատված է անմիջապես ժողովրդի կողմից, օրենք է:

Վերլուծելով պետական կառավարման տարբեր ձևերը՝ Ռուսոն նախընտրում է հանրապետությունը, քանզի լավագույնը այն ձևն է, որի օրոք պետության պաշտոնատար անձանց ընտրում է ժողովուրդը: Կառավարության կողմից իշխանության բռնադրումը կանխելու նպատակով անհրաժեշտ է պարբերաբար գումարել ժողովրդական ժողովներ, որոնց առջև կառավարությունը պարտավոր է հաշվետու լինել իր գործունեության մասին: Բացի այդ, անհրաժեշտ է ստեղծել օրենքներ ու օրենսդրական իշխանությունը պաշտպանող հատուկ հիմնարկություն՝ տրիբունատ: Քանզի, նրա կարծիքով՝ «այնտեղ, ուր դադարում են օրենքների իշխանությունը և դրանց պաշտպանների ուժը, այդտեղ որևէ մեկի համար չի կարող լինել ո՛չ անվտանգություն, ո՛չ ազատություն»:

Ռուսոյի միշտ քաղափարներ օրենսդրորեն ամրագրվեցին 1789 և 1793 թթ. Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում և Ֆրանսիական հեղափոխության շրջանի սահմանադրական այլ փաստաթղթերում⁶⁴: Օրենքի՝ իբրև ընդհանուր կամքի արտահայտության, օրենսդիր իշխանության՝ որպես ժողովրդական ինքնիշխանության անօտարելի իրավագործության, հասարակական դաշինքի և պետության կազմակերպման մասին նրա ուսմունքը մեծ ազդեցություն ունեցավ իրավաքաղաքական մտքի և սոցիալ-

⁶⁴ Տե՛ս **Нерсесянц В. С.** История политический и правовых учений М., 2012, էջ 333. Шершеневич Г. Общая теория права. М., 1910, էջ 217:

քաղաքական արևակտիկայի հետագա զարգացման վրա:

Ռուսական նախահեղափոխական իրավագիտության մեջ ինքնիշխանության որպես պետության անհրաժեշտ հատկանիշի տեսակետը զարգացրել են Շերշենևսկի⁶⁵, Պալիենկոն⁶⁶, Իվանովսկին⁶⁷ և ուրիշներ:

Ֆրանսիայում այս տեսակետին էր էսմենը: Դյուգեն, որն ինքնիշխանության սկզբունքի առավել կատաղի հակառակորդներից էր, որպես ինքնիշխանության սահմանում, որը համապատասխանի ֆրանսիական դրական իրավունքին, առաջ է քաշում հետևյալ բանաձևը, «կառավարելու անկախ իշխանություն»⁶⁸: Անգլիայում վերլուծական դպրոցի հիմնադրի համար ևս ինքնիշխանությունը հանգում է պետությունում գերագույն իշխանությանը: Ըստ Օստինի պետության մեջ առավել բնութագրական ու էական է ինքնիշխանության և հպատակության հարաբերությունը, այսինքն գերիշխանի որպես գերագույն իշխանության դիրքը, մի կողմից, և հպատակների դիրքը մյուս⁶⁹: Այս ավանդական տեսություններն արտացոլում էին միասնական պետությունում բուրժուական տիրապետության պայմանները:

Գիտության մեջ ինքնիշխանության վերաբերյալ այլ տեսակետ էր առաջ քաշվել Լաբանդ - Ելինեկի գերմանական իրավաբանական դպրոցի կողմից: Այն, որ ի դեմս գերմանական կայսրության պետությունների առկա էին ոչ ինքնիշխան պետություններ, ստիպեց արուսական գերիշխանության այդ տեսաբաններին հրաժարվել ինքնիշխանությունը որպես պետական իշխանության էություն ղիտելուց: Ինքնիշխանությունն ասելով նրանք հասկանում էին պետական իշխանության միայն ինչ-որ հատկություն կամ ունակություն: Այսպես, ըստ Ելինեկի՝ «ինքնիշխանությունը ոչ թե պետական իշխանության անսահմանափակությունն է, այլ արտաքին ուժերով իրավաբանորեն չկաշկանդված այդ իշխանության ընդունակությունը բացառիկորեն

⁶⁵ Տե՛ս Շերշենևիչ Գ. Общая теория права. 1910, էջ 217:

⁶⁶ Տե՛ս Палиенко Н.И. Суверенитет. Ярославль, 1903:

⁶⁷ Տե՛ս Շերշենևիչ Գ. Общая теория права. 1910, էջ 217:

⁶⁸ Տե՛ս Дюги Л. Конституционное право. М., 2013, էջ 158-159:

⁶⁹ Տե՛ս Austin J. Lectures on jurisprudence. 1914, vol. 1., էջ 113:

ինքնորոշվելու»⁷⁰: Այս տեսության իմաստը անկեղծությամբ պարզաբանում է Տրեյչկեն հայտարարելով, թե Գերմանիայում ինքնիշխան է միայն Պրուսիան, իսկ մյուս «պետությունները» ինքնիշխան չեն:

Բլեքստունը, արտացոլելով բուրժուազիայի և ազնվականության միջև այն փոխզիջումը, որը բնորոշ էր Անգլիային և տեղ էր գտել 18-րդ դարի սահմանադրական միապետության ձևերում, որպես գերիշխան է դիտում անգլիական խորհրդարանը (թագավորին, պերերին և համայնքների պալատը), որին վերագրում է անսահմանափակ բռնապետական իշխանություն: Այն հանգամանքը, որ համայնքների պալատն ընտրովի է, էական չէ, որովհետև խորհրդարանի իշխանությունը անսահմանափակ ու բացարձակ է: Ճիշտ է, այս դեպքում ինքնիշխանության առաջին հատկանիշը մշտականությունը, ոչ լիովին է իրականացվում, քանի որ համայնքների պալատի անդամների լիազորությունները ժամանակավոր են: Ասկայն այդ ժամկետայնությունը սրբագրվում է այն հանգամանքով, որ պալատն իրավունք ունի (խորհրդարանի այլ մասերի համաձայնությամբ) սահմանելու և երկարաձգելու իր լիազորությունների ժամկետները: Խորհրդարանի գլխավորությունը, որն առաջին հերթին նշանակում է նրա անկախությունը ժողովրդից, վերաճվում է անգլիական իրավունքի դոգմայի, որը Դը Լուլմը ձևակերպել է անգլիական խորհրդարանի ամենազորության վերաբերյալ հետևյալ թևավոր խոսքի ձևով, խորհրդարանը կարող է ամեն ինչ, նա չի կարող միայն տղամարդուն կին դարձնել և հակառակը:

Ռուսոն ժողովրդական ինքնիշխանության վերաբերյալ իր ուսմունքով նոր էջ բացեց ինքնիշխանության վերաբերյալ ուսմունքում: Ռուսոյի ուսմունքի նորությունը ոչ թե ժողովրդական ինքնիշխանության բուն սկզբունքն էր: Եթե նույնիսկ մի կողմ թողնենք Մարսիլիաս Պադուացու և այլ միջնադարյան հեղինակների ուսմունքը, որում ընդհանրապես դեռ չի օգտագործվում ինքնիշխանության նոր հասկացությունը, այնուհանդերձ չի կարելի անտեսել այն փաստը, որ և՛ Ֆրոսին, և՛

⁷⁰ Տե՛ս **Елинек Г.** Общее учение о государстве. СПб., 1908, էջ 352:

Սափնոզայ ին ժողովրդական ինքնիշխանության սկզբունքը հայտնի է որպես ժողովրդավարության պայմաններում ինքնիշխան գերագույն իշխանության սկզբունք, ընդսմին ժողովրդավարությունը սահմանվում է որպես «այն մարդկանց համընդհանուր ժողով, որոնք միասին ունեն գերագույն իրավունք այն ամենի նկատմամբ, ինչ այն կարող է»⁷¹:

Սակայն ժողովրդական ինքնիշխանության վերաբերյալ հարցադրումները, որոնք կատարում են Յոսեֆ Կոնգրևից, և Ռուսոն մյուս, էապես տարբեր են: Յոսեֆ և Սափնոզայի համար ինքնիշխանության սկզբունքը տրամաբանորեն բխում է բնական օրենքից և իր հիմնավորումն է ստանում նրանում հասարակական պայմանագրի միջոցով: Սակայն ինքնիշխանության կրողի հարցը նրանք լուծում են ոչ թե բնական իրավունքի, այլ յուրաքանչյուր պետության դրական իրավունքի հիման վրա, ընդսմին վերջինս կախված է կառավարման ձևից միապետական, ազնվականական կամ ժողովրդավարական⁷²: Այս տեսակետն առավել ցայտուն կերպով է արտահայտված ինքնիշխանության «հատուկ սուբյեկտի» վերաբերյալ Գրեցիոլեսի ուսմունքում, ըստ որի նման սուբյեկտ կարող են լինել մեկ կամ մի քանի անձինք «համաձայն յուրաքանչյուր ազգի սովորույթների և օրենքների»⁷³: Այն ինչ Ռուսոն բնական օրենքի ազդեցությունը տարածում է նաև ինքնիշխանության կրողի հարցի վրա: Ըստ Ռուսոյի հասարակական պայմանագիրն ունի միայն մեկ արդյունք, այն է ժողովրդի ինքնիշխանության հաստատում: Պետությունում օրինական գերիշխան կարող է լինել և հենց լինում է միայն ժողովուրդը «համընդհանուր կամքի կրողը»: Ինքնիշխանությունը համընդհանուր կամքի և հենց միայն նրա իրականացումն է⁷⁴: Ոչ միայն բացարձակ միապետությունը, այլ և անգլիական տարբերակով խորհրդարանի գերակայությունը, ըստ Ռուսոյի, բռնադատվում են

⁷¹ Տե՛ս **Спиноза Б.** Богословско-политический трактат. М., 1935, էջ 231-232:

⁷² Ճիշտ է, Սափնոզան ժողովրդավարությունը համարում է պետության առավել «բնական ձևը» (նույն տեղում, էջ 314), սակայն նաև ուրջ կերպով չի զարգացնում այդ միտքը, և այն չի արտացոլում կառավարման ձևերի հարցի մեկեքսանություններում, որոնք բերված են նրա հետագա՝ «Քաղաքական տրակտատ»՝ աշխատության մեջ:

⁷³ Տե՛ս **Grotius H.** De jure belli ac pacis. Lib. I., Cap. III, VIII:

⁷⁴ Տե՛ս **Жан-Жак Руссо** Об общественном договоре. М., 1938, էջ 21:

Ժողովրդական ինքնիշխանությանը: «Անգլիական ժողովուրդն իրեն ազատ է համարում, նա չարաչար սխալվում է. նա ազատ է միայն խորհրդարանի անդամների ընտրության ժամանակ, հենց որ նրանք ընտրված են, նա դառնում է ստրուկ, նա ոչ ինչ է: Իր ազատության այն կիրառումը, որ նա կատարում է դրանից օգտվելու կարճատև պահերին, արժանի է, որ նա կորցնի այն»⁷⁵: Դրական իրավունքը կարգավորում է միայն ինքնիշխան իշխանության «գործակալների» հարցը, այսինքն գործադիր իշխանության կազմակերպման հարցը, հաստատելով կա՛մ միապետական, կա՛մ ազնվականական ձևը: Ինչ վերաբերում է այդ իշխանության կազմակերպման ժողովրդավարական ձևին, ապա այն կարող է հնարավոր լինել միայն աստվածությունների հասարակությունում, որովհետև «այդպիսի կատարյալ կառավարությունը մարդկանց հարիր չէ»⁷⁶:

Յոբսի և Սպինոզայի մի կողմից, և Ռուսսոյի մյուս կողմից, միջև եղած տարբերությունը բխում է նրանց քաղաքական դիրքորոշումների միջև եղած տարբերությունից: Յոբսը, ընդհանուր առմամբ նաև Սպինոզան իրենց առջև նպատակ են դնում բացատրելու գոյություն ունեցող պետությունը և հիմնավորելու նրա ինքնիշխան իրավունքները: Դա է պատճառը, որ նրանք հարցականի տակ չեն առնում այս կամ այն պետությունում պատմականորեն ձևավորված կառավարման ձևերը, մասնավորապես նաև անսահմանափակ միապետության ձևերը, որոնք այդ ժամանակաշրջանում դեռ վայելում էին ուժեղ կենտրոնական իշխանության կարիք ունեցող բուրժուազիայի աջակցությունը: Իսկ ահա Ռուսսոն հանդես է գալիս մի հեղափոխական ծրագրով, որով պահանջ է դրվում, որ բոլոր պետությունների կարգերն ու ձևերը հարմարեցվեն անառարկելի բնական իրավունքի վրա հիմնվող ժողովրդական ինքնիշխանության սկզբունքին:

Ժողովրդական ինքնիշխանության ուսմունքին ազնվականական հակադրում էր Յեզելի պետական ինքնիշխանության ուսմունքը: Յեզելը, որը արուսական միապետության գաղափարախոսն էր, համարում է, որ միապետի ինքնիշխանությանը հակադրվող ժողովրդական ինքնիշխանությունը «պատկանում է այն խառնաշփոթ

⁷⁵ Նույն տեղում, էջ 82:

⁷⁶ Նույն տեղում, էջ 58:

մտքերի դասին, որոնց հիմքում դրված է ժողովրդի մասին դժբախտ («waste») պատկերացումը»⁷⁷: Սակայն աճող պրոլսական բուրժուազիայի շահերը, որոնք արդեն չէր կարելի հաշվի չառնել, չէին հաշտվում տոհմային բացարձակապետության հայեցակարգի հետ: Յեզեյը խոցող խոսքեր չի խնայում նաև դրա գաղափարախոսի Յալերի դեմ: Յեզեյյան միապետությունը անգլիականացված պրոլսական դասային - բյուրոկրատական միապետություն է: Պետական ինքնիշխանությունը որպես ամբողջի ինքնիշխանություն, միասնության ինքնիշխանություն, գուգակցված միապետի «պետության անձնավորություն» հռչակամամբ⁷⁸, տալիս է դասերի, այդ թվում նաև բուրժուազիայի վրա հենվող յուրևերական պրոլսական միապետության տիրապետության անհրաժեշտ ճկուն բանաձևը:

Յեզեյից ուղիղ գիծ է ձգվում դեպի գերմանական իրավաբանական դպրոցը, որը, ինչպես հայտնի է, ամբողջովին գտնվում է պետական ինքնիշխանության դիրքերում: Յեզեյի և իրավաբանական դպրոցի միջև տարբերությունը անմիջականորեն կապված է փիլիսոփայական մեկնակետերի միջև եղած տարբերության հետ: Յեզեյյան իդեալիստական պանլոգիզմը փոխարինվեց նույնպես իդեալիստական պրագմտիզմով: Յեզեյի տեսակետից ինքնիշխանության կրողն է համաշխարհային բանականությունը մարմնավորված պետության մեջ: Իրավաբանական դպրոցի տեսակետից պետությունը իրավաբանական անձ է, որը գործում է իր մարմինների միջոցով: Իրավաբանական դպրոցը վճռական քայլ է կատարում ինքնիշխանության հասկացության իրավաբանացման ուղղությամբ: Պետական իշխանությունն ուղղված է ինչպես ժողովրդական ինքնիշխանության ժողովրդավարական տեսության դեմ, այնպես էլ, թեև շատ ավելի նվազ սրությամբ, միապետի ինքնիշխանության վերաբերյալ ուսմունքների դեմ: Այդ դպրոցի տեսաբանները չեն ժխտում միապետի պետությունում գերագույն իշխանության կրողի ինքնիշխան իրավունքները, սակայն նրանք համարում են, որ այդ իրավունքները պատկանում են միապետին որպես պետության մարմնի, բայց ո՛չ նրաստեփականության կամ անձնական իրավունքով,

⁷⁷ Տե՛ս Гегель Г. Философия права. М., Л., 1934, էջ 305:

⁷⁸ Նույն տեղում, էջ 304:

ինչպես պնդում է Չայ դելը: Ասենք, դա նրանց ամենևին էլ չի խանգարում կառուցելու «գերագույն իշխանության միապետական կրողի» հաստատություն, մի կրողի, որն օժտված է իշխանությամբ իր սեփական իրավունքի շնորհիվ: Ընդհանուր առմամբ այս տեսությունը գլխավորապես ուղղված է հենց ժողովրդական ինքնիշխանության «վտանգավորության» դեմ:

Պետական ինքնիշխանության այս իրավաբանական տեսությունը ըստ էության հաղթանակեց նաև Ֆրանսիայի երրորդ հանրապետությունում: Սակայն այստեղ այն էկլեկտիկաբար զուգակցվում էր ազգային ինքնիշխանության տեսությունների և ավանդական պատկերացումների հետ շնորհիվ այն բանի, որ նույնականացվում էին պետությունն ու ազգը, որոնք, Կառեդը Մալբերի կարծիքով, իրենցից ներկայացնում են «միևնույն անձնավորության երկու դեմքը»: Ըստ էսմենի պետությունը «ազգի իրավաբանական անձնավորումն է»:

Էսմենին և Կառեդը Մալբերին կարելի է համարել այն Ֆրանսիական տեսության ներկայացուցիչ, որը ընդունելով պետական ինքնիշխանության սկզբունքը, այն նույնականացնում էր ազգային ինքնիշխանության հետ միևնույն ժամանակ ժխտելով, գոնե Ֆրանսիական դրական իրավունքի տեսակետից, պետության ու ազգի որպես երկու ինքնիշխան իրավաբանական անձերի տարբերակման հնարավորությունը, քանի որ դա կնշանակեր ինքնիշխանության տարաբաժանում: Կառեդը Մալբերն այս Ֆրանսիական դոկտրինը հակադրում էր Լաբանդի, Ելինեկի, Մայերի ստեղծագործություններին, քանի որ նրանք համարում էին, որ պետությունը տարբեր է ազգից, անգամ եթե վերջինս դիտվի միասնական սուբյեկտի տեսանկյունից⁷⁹:

Միևնույն ժամանակ Ֆրանսիական դպրոցը (հանձինս Կառեդը Մալբերի) պետության իրավաբանական անձի հայեցակարգում տեսնում է պետության իրավաբանական էության արտահայտությունը: «Պետությունը չի կարողանա իր իշխանությունն օգտագործել քաղաքացիների նկատմամբ այլ կերպ, քան այն եղանակով, որով օգտագործում են իրավունքը, այսինքն

⁷⁹ Տե՛ս **Carre de Malberg**. Contributions à la théorie générale de l'atet. Paris, 1920, T. 1., էջ 191-192:

գործող իրավակարգին համապատասխան»:

Սակայն ֆրանսիական դոկտրինը ևս ոչ պակաս խիստ կերպով, քան գերմանականը, ազգային ինքնիշխանությունը հակադրում է ժողովրդական ինքնիշխանությանը: Կառե դը Մալբերի պնդմամբ ժողովրդական ինքնիշխանությունը անսահմանափակ ժողովրդավարության սկզբունքն է, որը մարմնավորվել է 1793թ. յակոբինյան սահմանադրության մեջ: Տվյալ սկզբունքը նշանակում է, որ պետությունում գերազույն իշխանությունը պատկանում է բոլոր քաղաքացիներին, որոնք կազմում են ժողովուրդը: Դա ենթադրում է.

1. համընդհանուր ընտրական իրավունք,
2. ժողովրդական քվեարկություն և սահմանդրական հարցերով,
3. ժողովրդական ներկայացչության լի իշխանություն և այլն:

Ժողովրդական ինքնիշխանության այս հեղափոխական սկզբունքին հակադրում է ազգային ինքնիշխանության սկզբունքը, որը մարմնավորվել է 1791թ. միապետական սահմանադրության մեջ և 19-րդ դարի բոլոր (բացի 1814թ. բուրբունյան խարտիայից) ֆրանսիական սահմանադրություններում:

Կառե դը Մալբերը որպես ազգային ինքնիշխանության սկզբունքի եղություն դիտում է այն, որ իշխանության աղբյուրն ու կրողն է միասնություն և անբաժանելի ամբողջություն վերցված ազգը կազմակերպված պետության մեջ պետության ձև, որպես պետություն: Այս սկզբունքով բացառվում է, որ ինքնիշխանությունը պատկանի ազգի որևէ մասին կամ առանձին քաղաքացիներին, այսինքն՝ բացառվում են ինչպես միապետությունը, այնպես էլ ժողովրդական ինքնիշխանության վրա հիմնվող ժողովրդավարությունը: Ինքնիշխան իշխանությունն իրականացնում են պետական մարմինները, որոնք սահմանադրության համաձայն ազգի ներկայացուցիչներն են, անգամ եթե կառուցված են հակաժողովրդավարական սկզբունքներով⁸⁰:

Այսպես, էսմենը ազգային ինքնիշխանության հետ համատեղելի է համարում կանանց զրկումն ընտրական իրավունքից, կրթական ցենզը, բազմաբանակ քվեն և այլն:

⁸⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 12-13:

Այս կերպ մեկնաբանված ազգային ինքնիշխանությունն ըստ էության համընկնում է գերմանական ձևակերպմամբ պետական ինքնիշխանության հետ, միայն այն ձևական տարբերությամբ, որ պետությունը դիտվում է որպես մետաֆիզիկական անձնավորության վերածված և իրեն կազմող անհատներից տարբերվող «ազգի» իրավաբանական կազմակերպություն կամ մարմնացում:

Բուրժուական պահպանողականության բացահայտ գաղափարախոս Օրիոլն, ընդհանուր առմամբ չընդունելով պետության որպես իրավաբանական անձի մասին տեսությունը (ըստ Օրիոլի պետությունը որպես իրավաբանական անձ է հանդես գալիս միայն արտաքին հարաբերություններում), այդուհանդերձ սերտորեն իրար հետ է կապակցում պետական և ազգային ինքնիշխանությունները: Օրիոլի ամբողջ տեսությունը տոգորված է կատաղի ատելության մեջ դեպի ժողովուրդը, զանգվածներից վախով, զզվանքով դեպի Ֆրանսիայի հեղափոխական անցյալը:

Օրիոլն, ազգը դիտելով որպես «մեկուսախմբային իմաստով վերցված սոցիալական խումբ իր ողջ սոցիալական և քաղաքական կազմակերպվածքով, ուստի և իր բոլոր իշխող դասակարգերով ու ինչպես իր կառավարությամբ, այնպես էլ իր ժողովրդական դասակարգով հանդերձ», ազգային ինքնիշխանությունը որպես նման «ազգի» ինքնիշխանություն, հակադրում է ժողովրդի որպես միայնախիսի կոլեկտիվի իշխանությանը, «որում միախառնված են բոլոր խավերն ու դասակարգերը, և որում չկա որևէ կարգ», որն իրենից ներկայացնում է «վերադարձ դեպի հորդա, հոտ, ամբոխ, վերադարձ դեպի այն, ինչը սոցիոլոգիայում անվանում են հոտային վիճակ»: Ազգը մի «մեկուսախմբային և օրգանական հայեցակարգ է, որը ներառում է կարգի սկզբունքը»: ժողովուրդը, կամ դեմոսը, «հակամեկուսախմբային և անօրգանական հայեցակարգ է»⁸¹:

Ճիշտ է, Օրիոլն ընդունում է նաև «ժողովրդական ինքնիշխանության» հնարավորությունը, սակայն այդ «ինքնիշխանությունն» արտահայտվում է միայն պետական իշխանության կարգադրություններին «միանալու իրավունքի», անձնական երաշխիքների և դատավորների կողմից ժողովրդի

⁸¹ Տե՛ս Օրիու **М.** Основы публичного права. М., 2013, էջ 449-450:

անունից իրականացվող դատական իշխանության միջոցով: Այստեղ ժողովրդական իշխանության հասկացությունից ջնջված են քաղաքական իշխանության վերջին մնացորդները: Օրինակ որպես իրավաբանական ինքնիշխանություն ընկալված «ժողովրդական ինքնիշխանությունը» հակադրում է իսկական, քաղաքական ինքնիշխանությունը, որն ընդգրկում է օրենսդրական, գործադիր և ընտրական իշխանությունը: Միայն քաղաքական ինքնիշխանությունն է ստեղծում իրավունք: Իրավաբանական ինքնիշխանությունը լավագույն դեպքում իրավունք է տալիս պահանջելու, որ քաղաքական ինքնիշխանությունը պահպանի իր իսկ կողմից ստեղծված իրավունքը: Պարզ է, որ այստեղ խոսվում է միայն ինքնիշխանության սովետի կամ պատրանքի մասին:

Այսպիսով՝ Երկրորդ հանրապետության շրջանի ֆրանսիական տեսությունները բացահայտում են ազգային ինքնիշխանության սկզբունքի ժողովրդավարական բովանդակությունը: Ըստ էության, ջնջվում է սահմանը մի կողմից ազգային ինքնիշխանության տեսության և մյուս կողմից՝ «բանականության ինքնիշխանության» գաղափարն առաջ քաշած ու այդ «բանականության» մարմնավորումը սեփականությունը քաղաքացիների «քաղաքական ընդունականության» ցուցանիշ համարող «դոկտրինյորներ» Ռոյե-Կոլարի, Գիզոյի հին տեսության մեջ:

Ինքնիշխանության բուրժուական հայեցակարգի պատմության նորագույն փուլն սկսվեց, երբ ավարտվեց առաջին համաշխարհային պատերազմը:

Դասակարգային հակասությունների սրման պայմաններում բուրժուական տեսությունն իր առջև նպատակ էր դնում հիմնավորելու բուրժուական պետության անսասանությունը միևնույն ժամանակ արտացոլելով տարբեր երկրներում բուրժուական տիրապետության մեթոդների միջև եղած տարբերությունները:

Միջիմպերիալիստական հակասությունների սրումը և զավթողագործության ու ժեղացումը ուղղակիորեն արտացոլվում են ինքնիշխանության վերաբերյալ տեսություններում: Այդ տեսությունները «հիմնավորում» են զավթողագործության և թույլ

ժողովուրդների ստրկացման նոր մեթոդները: Եթե բացահայտ ագրեսիան վկայակոչում էր իր կողմից աղավաղվող ինքնիշխանության սկզբունքը, որը սխալ կերպով մեկնաբանվում է որպես միջազգային հարաբերություններում անսահմանափակ բռնություն (\$աշիզմ), ապա զավթողագործությունը, որն իրագործվում էր այսպես կոչված «դուլարային» դիվանագիտության ավելի նուրբ մեթոդներով, իր հիմնավորումն է փնտրում ինքնիշխանությունը ժխտող կամ դրա «վերանայում» պահանջող տեսություններում:

Ընդամիս որպես քող օգտագործվում են միջազգային կազմակերպություններ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո նման կազմակերպություն էր Ազգերի լիգան: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո փորձեր էին արվում այդ նպատակով օգտագործել Միավորված ազգերի կազմակերպությունը:

Վերջին տասնամյակների բուրժուական իրավական տեսությունների բնորոշ առանձնահատկությունն է դրանց սերտ կապը տարբեր բուրժուական փիլիսոփայական դպրոցների ու հոսանքների հետ:

Գերմանիայում «դասական» իրավաբանական դպրոցը ձևավորվում էր այն շրջանում, երբ բուրժուական գաղափարախոսության մեջ զգալի չափով վարկաբեկված էր բուն փիլիսոփայության գաղափարը, երբ տիրում էր այն կարծիքը, թե առանձին ինչպես բնական, այնպես էլ հասարակական, գիտությունների զարգացման հետեանքով փիլիսոփայությունը դադարում է լինելուց մի հատուկ ու ինքնուրույն, առավել ևս առաջատար, գիտություն:

Պատկերն սկսում է փոխվել արդեն 19-րդ դարի վերջերին, երբ կապիտալիզմի նոր փուլի պայմաններում կրկին ուժ ստացած փիլիսոփայական իդեալիստական հոսանքներն սկսում են բուրժուական պետություններում զգալի ազդեցություն գործել առանձին գիտաճյուղերի, մասնավորապես բուրժուական իրավաբանական գիտության վրա: Բուրժուական իրավագիտությունը նետվում է միստիկայի և մետաֆիզիկայի հորձանուտը: Նրա առանձին ուղղությունների միջև եղած տարբերությունները անմիջականորեն արտացոլում են այն տարածայնությունները,

որոնք առկա էին տարբեր փիլիսոփայական նրբերանգույնությունների, դպրոցների միջև գաղափարախոսական ճամբարում աճող տարընթացությունների վկայությունն են: Գերմանիայում նեոկանտականությունը ոգեշնչում է Շտամլերին և Քելզենի «իրավունքի գուտ տեսությունը», ի դեպ, վերջինս կրել է նաև ֆրոյդականության ազդեցությունը: Յետագայում քելզենյան դպրոցում սկսում է ավելի ու ավելի ցայտուն կերպով դրսևորվել հուսեմլականությունը (Շրայեր), որը ներկայացված է նաև միջարքայլ տեսաբան իրավաբաններով ֆենոմենոլոգիայի կողմնակիցներով (Ռայնախ): Յուսեմլականությունն առանձնապես մեծ ազդեցություն է գործում Գուրվիչի այսպես կոչված «սոցիալական իրավունքի» տեսության վրա, որը երեսունական թվականներին քելզենականության հետ մեկտեղ դառնում է իրավունքի բուրժուական գիտության առավել ազդեցիկ հոսանքներից միկը: Եթե իրավունքի նեոկանտական դպրոցները կազմում էին բուրժուական գիտության «ծախ» թևը, հուսեմլականները կենտրոնը, ապա աջ թևն ավելի ու ավելի է հարում նոր հեգելականությանը (Բինդեո, Լորենց), որը «երրորդ կայսրությունում» դարձավ իրավունքի գերիշխող հայեցակարգը:

Ֆրանսիայում բուրժուական իրավագետների վրա ուժեղ ազդեցություն են գործում Բերգսոնի ինտուիտիվիզմը, Անգլիայում և ԱՄՆ-ում Ռոսելի և լոգիստիկական դպրոցը, պրագմատիվիզմի փիլիսոփայության մեջ ամերիկաբանության այդ բնորոշ արդյունքի տարբեր ուղղությունները:

Այսպես, ամերիկացի Քոհենը, շարադրելով Լեյբոռիստական գաղափարախոս Լասկիի տեսությունը, նշում է ոչ միայն սոցիոլոգ Բարվերի և իրավաբաններ Դյուգիի, Քրաբեի, այլև փիլիսոփա Ուիլյամ Չեմսի (պրագմատիզմի հայրը) և «ինստրումենտալիստ» Դյուգիի, հոգեբան Մակ-Դոուգուի ազդեցությունը⁸²: Այս շիլափլավին պետք է ավելացնել նաև Ռոսելին: Անկասկած կապկա Լասկիի սոցիալական հոգնականության (պլյուրալիզմ) և Ռոսելի այն սոցիալ-քաղաքական «մարզանքների» միջև, որոնք վերաբերում են իշխանության ապակենտրոնացմանը, պետական իշխանության

⁸² Տե՛ս **Cohen H. E.** Recent theories on sovereignty. 1937, էջ . 126:

փոխանցմանը կամավոր կազմակերպություններին, երբ պետությունը վերածվում է մի «միջնորդական դատարանի»: Թեև որոշ հեղինակներ փորձում են ժխտել, որ որևէ կապ կա Ռոսելի ընդհանուր փիլիսոփայական հայեցակարգի («տրամաբանական առումիզմ», «չեզոք մոնիզմ», այսինքն մախիզմի ինչ-որ տարատեսակ) և նրա սոցիալ - քաղաքական տեսակետների միջև, այնուհանդերձ Ռոսելն ինքը խոստովանել է, որ դրանց միջև կա եթե ոչ տրամաբանական, ապա գոնե «հոգեբանական» կապ:

Նորագույն փիլիսոփայական դպրոցների ազդեցությունն արագացրեց հին «դասական» իրավաբանական դպրոցի քայքայումը, որը հիմնականում տեղի էր ունենում կապիտալիստական աշխարհում սոցիալ-քաղաքական հակասությունների սրման հետևանքով: Այդ դպրոցը համապատասխանում էր այն ժամանակաշրջանին, երբ գերմանաարուսական միապետության և խոշոր ազգային-ազատական բուրժուազիայի միջև հաստատվել էր կայուն համաձայնություն: Իսկ ինչպե՞ս էր պետական ինքնիշխանության և իրավական պետության մասին ուսմունքը արտացոլում այդ փոխզիջումը: Պետական ինքնիշխանությունը հակադրված էր ժողովրդական ինքնիշխանությանը, սակայն միևնույն ժամանակ ինքնիշխան պետությունն ընկալվում էր որպես իրավական պետություն, միապետություն, որը կաշկանդված է իրավունքով: Ոչ միայն երկուսը միասին, այլև յուրաքանչյուրը առանձին վերցված իրենց վրա կրում էին այդ նույն դասակարգային փոխզիջման կնիքը: Պետական ինքնիշխանությունը միապետին իշխանության սեփականատերից վերածում էր պետության մարմնի: Մյուս կողմից ինքնիշխան պետության կաշկանդվածությունը իրավունքով ուներ պետության ինքնակաշկանդման, ինքնասահմանափակման բնույթ:

Կայսերական Գերմանիայի կործանումը, Վայմարյան հանրապետության հաստատումը և նրանում ծավալված քաղաքական պայքարը, առաջին հերթին դասակարգային հակասությունների սրումը, պարտված Գերմանիայի նոր միջազգային վիճակը, այսամենը սասանեցին «դասական» իրավաբանական հայեցակարգի հիմքերը: Դրան նպաստեցին նաև նոր փիլիսոփայական հոլերը. Մարբուրգում և Գյուրիխգենում ճարտարամտող մարդկանց ուղեղների համար

իրավաբանական դպրոցի պոզիտիվիզմը չափազանց պարզամիտ ու միամիտ էր:

Իրավաբանական դպրոցի քայ քայ ու մը տեսականորեն դրսևորվեց հետևյալ կերպ, այն կատեգորիաները ինքնիշխանություներ, պետություններ, իրավունք, որոնք իրավաբանական դպրոցը փորձում էր ներդաշնակել իրավական պետության ինքնիշխանության գաղափարի հետ, հայտնվեցին միմյանց հետ սուր հակասությունների վիճակում, իսկ իրավական պետության ինքնիշխանության մասին պատկերացումն ինքը հայտարարվեց որպես մի պատկերացում, որն օժտված է ներքին հակասություններով: Այդ հիմքի վրա տեղի ունեցավ տեսությունների որոշակի սահմանազատում, որն արտացոլում էր բուրժուական դիկտատուրայի մեթոդների հարցում եղած տարակարծությունները: Ոմանք, առաջին պլան մղելով իրավունքը, ազդարարեցին իրավունքի ինքնիշխանությունը պետությունը վերածելով իրավունքի մարմնի կամ նույնիսկ հանգեցնելով իրավունքի կամ իրավակարգի հասկացության, այն զրկելով իրական ուժի գործոնից («Macht»): Այդ կարգի են նորմատիվիստների Կրաբեի, Չոմլոյի տեսությունները, այդ կարգի է նաև Քելզենի «իրավունքի գուտ տեսությունը», որի երազանքն է կառուցել պետության ազդիտությունն առանց պետության, ինչպես կառուցվում է հոգեբանությունն առանց հոգու (անշուշտ միանգամայն շինծու նմանակում): Այստեղ իր տրամաբանական ավարտին է հասցված պետության այն իրավաբանացումը, որի հիմքն էր դրել «դասական» իրավաբանական դպրոցը: Որպես արդյունք հօդս է ցնդում պետությունն ինքը, և նրա հետևանքն ինքնիշխանությունը:

Մյուս ուղղություններն, առաջին պլան մղելով պետությունը, հաստատում են պետության ինքնիշխանությունը միևնույն ժամանակ բացեիբաց հրաժարվելով իրավական պետության հին իդեալից, շեշտը դնելով պետության ինքնիշխանության ոչ այնքան իրավական, որքան անիրավական և անգամ հակաիրավական էության վրա, ինքնիշխան պետության համար իրեն նույնիսկ հակառակ իրավունքի հաստատելու հնարավորության վրա: Այդ կարգի է Յելերի տեսությունը, որը դեռ փորձում է իր վրա ձգել «ժողովրդական գլխավորության» շղարշը, այդ կարգի է նաև «Երրորդ

կայ սրու թյան» գլխավոր պետությունը նազետը դարձած Կառլ Շմիտի բացահայտորեն ֆաշիստական բնույթ կրող «տեսությունը»: Այս տեսությունը տրամաբանական ավարտի է հասցնում պետության ուժի աստվածացումը («Macht»), ինչը բնորոշ էր նաև դասական իրավաբանական դպրոցին, և ինչի հետևանքով ի դերն է լինում իրավունքը:

Անցած դարի կեսերին բուրժուական տեսությունների բնութագրական գիծն է ինքնիշխանության սկզբունքը ժխտող հոսանքների ուժեղացումը: Դրան են հանգում նորմատիվիստները, որոնք բուրժուական իրավաբանության գլխավոր հոսանքներից մեկն են: Բայց դրան են հանգում նաև բուրժուական իրավաբանության երկրորդ գլխավոր (ոչ ֆաշիստական բնույթի) հոսանքի ներկայացուցիչները, որոնք արտաքինապես, ասես կանգնած են հակառակ մեթոդաբանական դիրքերում, այն է սոցիոլոգիստները (Դյուրհի, Լասկի և ուրիշներ): Եթե նորմատիվիստները վերանում են ինքնիշխանության փաստացի, ռեալ կողմից, ապա սոցիոլոգիստները անտեսում են նրա իրավաբանական կողմը: Երկու դեպքում էլ արդյունքը միևնույնն է. ինքնիշխանությունը վերանում է, ինչպես վերանում է նրա կրողը պետությունը՝ որպես իշխանության կազմակերպություն: Այսպիսով նորմատիվիստներն ու սոցիոլոգիստները հանգում են միևնույն եզրակացության, թեև շարժվում են տարբեր ուղիներով: Նորմատիվիզմը ձգտում է իրավունքից լիովին դուրս մղելու ամեն սոցիալականը վճռականորեն իրար հակադրելով այն, ինչը գոյություն ուներ, և այն, ինչը պետք է, որ լիներ: «Սոցիոլոգները» զգուշանում են, որ սոցիալական իրականությունից այս կարգի բացահայտ կտրվածությունը կարող է վարկաբեկել բուրժուական գիտությունը: Այստեղից էլ նրանց ձգտումը նմանակելու մարքսիզմին, ավելի ստույգ նրան հակադրելու իրավունքի և պետության իրենց սոցիոլոգիական «բացատրությունը», որում լրիվ սթոդվում է պետության դասակարգային էությունը:

Արևմտյան իրավագիտության մեջ տարբեր ձևով է «հիմնավորվում» ինքնիշխանության ժխտումը: Դրանցից առավել տարածվածներն են.

- 1) իրավական պետության տեսությունը,
- 2) իրավաբանական մոնիզմը,
- 3) սոցիալական համերաշխությունը:

Դեռ կես դար առաջ Պրայսը ինքնիշխանությունը որպես «հռոմեական» և միապետության հասկացության հակադրում էր գերմանական» ինքնակառավարումը և իրավական պետությունը:

Պրայսի տեսակետից, ինքնիշխանությունը որպես մի հասկացություն, որը անհամատեղելի է և՛ միջազգային, և՛ պետական իրավունքի հետ, այսինքն՝ ընդհանրապես պետական իշխանության որևէ կարգավորման հետ, պետք է դեն նետվի որպես բացարձակապետության վաղուց անցած դարաշրջանի հարաբերություններն արտացոլող հասկացություն:

Այս բավականաչափ մակերեսային հայեցակարգը հետագայում Քելզենի ու վիեննական դպրոցի տեսություններում զուգակցվեց ընդհանրապես տրամաբանական մոնիզմի հետ, իսկ Դյուրենի և Լասկիի տեսության մեջ սոցիալական հոգնականության հետ:

Իրավաբանական մոնիզմի պնդմամբ միջազգային իրավունքը և ինքնիշխան պետական իրավակարգը անհամատեղելի են: Այս տեղից տրամաբանորեն հետևում է երկու հնարավորություն, կամ միջազգային իրավունքի ժխտում հոգուտ ինքնիշխանության, այսինքն բացարձակ, անսահմանափակ ինքնիշխանության հայեցակարգը, որը ներկայացված է Յեգելի, Օստինի, Տոմսի, Լասոնի, իսկ նախահեղափոխական Ռուսաստանում Շերշենևիչի կողմից, կամ ինքնիշխանության ժխտում հոգուտ միջազգային իրավունքի: Յեկո դրան էլ կողմնակից են իրավաբանական մոնիստները: Տվյալ հայեցակարգի ներկայացուցիչներ են Քելզենը, Ֆերդրոսը, Սելը և 20-րդ դարի այլ իրավաբաններ, որոնք բավական ազդեցիկ դիրքեր էին զբաղեցնում իրավագիտության բնագավառում: Առաջին ուղղությունն արտացոլում է բացահայտ միջազգային ավագականության ու զավթողագործության մեթոդը, երկրորդը «հավասար հնարավորությունների», «բաց դռների» և այլ նմանատիպ կարգախոսներով քողարկվող զավթողագործության մեթոդը:

Դեռ առաջին աշխարհամարտից առաջ Յաչենկոն, նշելով մենաշնորհային կապիտալի շահերի և պետական ինքնիշխանության

միջև առկա հակասությունները, ուղղակիորեն մատնանշել է, որ «միջազգային իրավունքի սոցիալական խնդիրն է աջակցել համաշխարհային կապիտալի շահերին ընդդեմ առանձին պետությունների բացառիկության»⁸³:

Ագրեսիայի կանխման և ճնշման նպատակով Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումը, նրան միջազգային գինված ուժեր ստեղծելու իրավունքի շնորհումը, այս ամենը խորհրդանշում է ինչպես տեղաշարժ միջազգային իրավունքի բնագավառում ինքնիշխանության հարցում անխուսափելիորեն առաջ մղելով նոր հանգամանքներ:

Ինքնիշխանության նորագույն էպիգոնական տեսությունների հարցում լավ կողմնորոշվելու համար անհրաժեշտ է անդրադարձնալ այլ պրոբլեմին վերաբերող բուրժուական գիտության այն ուղղություններին, որոնք գոյություն են ունեցել 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբում:

Գերմանական իրավաբանական դպրոցը ինքնիշխանության հարցում առաջ քաշեց մի շարք դրույթներ, որոնք զգալի ազդեցություն գործեցին բուրժուական գիտության մեջ այդ պրոբլեմի ամբողջ հետազամեկնաբանության վրա:

Այս դրույթներն են.

ա) ինքնիշխանության ձևական - իրավաբանական ըմբռնումը,

բ) ինքնիշխանությունը ոչ որպես պետական իշխանությունն ինքը, այլ որպես պետական իշխանության հատկություն,

գ) այն թեզը, որ ինքնիշխանության բուն կրողը ոչ թե որևէ մարմին կամ ժողովուրդն է, այլ պետությունն ինքը վերցված որպես անձ:

Ինքնիշխանությունը որպես պետական իշխանությունն սահմանելու հարցում իրավաբանական դպրոցն այդպես էլ չեկավ միասնական կարծիքի: Այդ դպրոցի ներկայացուցիչները ձևակերպեցին ինքնիշխանության տարբեր սահմանումներ⁸⁴:

Գերմանական իրավաբանական դպրոցի գաղափարները որոշակի փոփոխումներով տարածում ստացան նաև այլ երկրներում:

⁸³ Տե՛ս **Яценко В.** Теория федерализма. Юрьев, 1912, էջ 808:

⁸⁴ Ինքնիշխանության տարբեր սահմանումների ամփոփումը տե՛ս **Палиенко Н.И.** Суверенитет, Ярославль, 1903:

Մասնավորապես Անգլիայում դրանք միահյուսվեցին քաղաքական-իրավաբանական տեսությունների այն հոսանքին, որի ակունքն էր Օստինի ուսմունքը, և որը կրում էր «վերլուծական դպրոց» անվանումը:

Օստինի ուսմունքում ինքնիշխանությունը հիմնաքարային հասկացությունն է: Գերիշխանը անկախ քաղաքական հասարակության մեջ այն գերագույն իշխանությունն է, որից բխում է պետության մեջ եղած ամբողջ դրական իրավունքը: «Դրական իրավունքով սահմանված գերագույն իշխանությունը տերմինների բացահայտ հակասությունն է»: Սակայն Օստինին դեռ լրիվ խորթ է պետական ինքնիշխանության հասկացությունը: Ինքնիշխանության կրողն է պետության մարմինը, Անգլիայում խորհրդարանը, ավելի ստույգ թագավորը խորհրդարանում: Այստեղ Օստինն ըստ էության կրկնում է Բլեքստոնի գաղափարը: Ուստի Օստինը համարում է, որ «հիրավի անկախ է ոչ թե հասարակությունը, այլ միայն այդ հասարակության ինքնիշխան մասը», այսինքն հասարակության մեջ գերագույն իշխանությամբ օժտված անձինք: Այսպիսով Օստինի տեսակետից խորհրդարանի ինքնիշխանությունը բացահայտորեն ուղղված է ժողովրդի դեմ, որը ամբողջովին պատկանում է «հասարակության ոչ ինքնիշխան մասին»: Սակայն Օստինը, արտահայտելով բուրժուազիայի տեսակարար քաղաքական կշռի աճումը, ստիպված է ընդունելու, խորհրդարանի մի մասի, այն է համայնքների պալատի, ինքնիշխանությունը միայնապիսի ինքնիշխանությունն է, որը նրան վստահվել է ընտրակազմի կողմից, այսինքն բուն համայնքների կողմից, այն բուրժուական վաճառական վերնախավի կողմից, որն էլ այն ժամանակ կազմում էր ամբողջ ընտրակազմը:

Համայնքները ինքնիշխան կամ գերագույն մարմնի բաղադրյալ մասն են և իրենց ինքնիշխան իրավունքներն իրականացնում են անմիջականորեն համայնքների պալատի ընտրության ժամանակ և բոլոր մյուս գործերում ներկայացուցիչների միջոցով⁸⁵: Օստինը չի ժխտում, որ ներկայացուցչությունը կարող է լինել երկակի բնույթի, խոսքը վերաբերում է ներկայացուցիչների օժտմանը լիազորություններով կամ վստահության հիմունքներով, կամ

⁸⁵ Տե՛ս Austin J. Նշվ. աշխ., Vol. I. Էջ 245:

բացարձակ ու անվերապահ օժտմանը: Վերջին դեպքում ներկայացուցչական մարմինը իր լիազորությունների կատարման ընթացքում լիովին փոխարինում է ընտրակազմին և օժտված է լինում ինքնիշխանությամբ: Առաջին դեպքում կարող են գործել կամ իրավաբանական, կամ բարոյական պատժամիջոցներ: Իրավաբանական պատժամիջոցների դեպքում ենթադրվում է, որ ընտրակազմն անմիջականորեն օժտված է օրենսդրական իշխանությամբ, և դատարանները կարող են անվավեր հայտարարել ներկայացուցիչների այն ակտերը, որոնք հակասում են բարձրագույն լեգիստրատուրայի ընտրակազմի ակտին: Օստինի կարծիքով Անգլիայում լիազորություններով օժտող կորպուսի և ներկայացուցչական կորպուսի կամ համայնքների և համայնքների պալատի միջև հարաբերությունները վստահության հարաբերություններ են, որոնք, սակայն, պաշտպանված են միմիայն բարոյական պատժամիջոցով: Այս առումով համայնքների պալատն օժտված է ինքնիշխանությամբ: «Թագավորը, լորդերը և համայնքների պալատի անդամները կազմում են միեռյակ («tripartite») մարմին, որն էլ հենց գերիշխան կամ գերագույն մարմին է»: Ճիշտ է, «ավելի ստույգ ասած համայնքների պալատի անդամները լուրջ այն կորպուսի կողմից լիազորված անձինք են, որը նրանց ընտրում կամ նշանակում է, ուստի և ինքնիշխանությունը միշտ պատկանում է թագավորին, պետերին և համայնքների ընտրակազմին»: Սակայն, քանի որ համայնքների պալատը ենթակա է միայն բարոյական պատժամիջոցի, ապա Օստինի ուսմունքից հետևում է, որ նա օժտված է հենց իրավաբանական ինքնիշխանությամբ: Այսպես Օստինը դեգերում է բլեքստոնյան ավանդականության և բուրժուազիայի նոր պահանջմունքների միջև:

Օստինի հայեցակարգը հիմք դարձավ քաղաքական ու իրավաբանական ինքնիշխանության տեսության համար, որը 19-րդ դարի վերջում 20-րդ դարի սկզբում զարգացրեց վերլուծական դարոցի ազատական ներկայացուցիչ Դայսին: Ըստ նրա իրավաբանական գերիշխանը խորհրդարանն է (Անգլիայում), իսկ ընտրակազմը քաղաքական գերիշխանն է: Նրա կարծիքով ընտրակազմը չի կարող դիտվել որպես իրավաբանական գերիշխան, որովհետև

դատարանները ընտրողների կամքը չեն ընդունում որպես դրական իրավունքի նորմ: «Դատավորները չեն ճանաչում ժողովրդի կամքը, բացի այն կամքից, որն արտահայտվում է խորհրդարանական ակտերի միջոցով»⁸⁶: Դայ սին կշտամբում է Օստինին այն բանի համար, որ նա խառնում է իրավաբանական և քաղաքական ինքնիշխանությունների հասկացությունները: Այն, որ մտցվեց քաղաքական ինքնիշխանության հասկացությունը, գիջում էր «ազգային ինքնիշխանության» սկզբունքին, սակայն դա բավականաչափ թվացյալ գիջում էր, քանի որ անմիջապես հայտարարվեց, որ քաղաքական ինքնիշխանության ակտերը չունեն որևէ իրավաբանական ուժ: Նման նշանակություն ունեն միայն խորհրդարանում թագավորական ակտերը:

Ընտրակազմի քաղաքական ինքնիշխանության սկզբունքը հաճախ կիրառվում է ցանկացած առաջադիմական օրենսդրության խոչընդոտման նպատակով: Մասնավորապես դրա դրսևորումներից է մանդատի սկզբունքը, որի համաձայն կարևոր քաղաքական հարցերում խորհրդարանը կարող է աջակցել կառավարության միայն այն միջոցառումներին, իսկ կառավարությունն էլ կարող է առաջարկել միայն այն միջոցառումները, որոնց անցկացման համար կա ընտրակազմի ուղղակի «մանդատը»: Այսպես, պահպանողական ընդդիմությունը իրեն անհաճո միջոցառումները, օրինակ, լեյբորիստների երկչոտ փորձերը սահմանափակելու լորդերի պալատի իրավունքները, հայտարարում է ընտրողների մանդատի վրա չհիմնվող և պահանջում է կա՛մ հրաժարվել դրանից, կա՛մ անցկացնել նոր ընտրություններ:

Անգլիական վերլուծական դպրոցի ու գերմանական դպրոցի մերձեցման ուղղությամբ քայլ կատարեց Օստինի հրատարակիչ ու մեկնաբան Բրաունը⁸⁷:

Պետական ինքնիշխանության ծավալուն իրավաբանական հայեցակարգ, ստեղծված անգլոսաքսոնական հողի վրա գերմանական տեսությունների անմիջական ազդեցությամբ, մշակել է ամերիկացի Ուիլոուբին:

Ուիլոուբիի տեսությունը ԱՄՆ-ում պետական իրավունքի

⁸⁶ Տե՛ս **Дайси Дж.** Основы государственного права Англии. М., 1907, էջ 87:

⁸⁷ Տե՛ս **Mattern W.** Concepts of State, Sovereignty and International Law. 1928. էջ 52-54:

ժամանակակից գիտության վառ արտահայտումն է, մի գիտության, որը հրաժարվել է պետական ինքնիշխանության հին ջեֆերսոնյան ավանդույթներից ու հայեցակարգերից:

Չամաճայն Ուիլոուբի տեսության պետությունը կարող է դիտարկվել տարբեր տեսակետներից, սակայն «վերլուծական քաղաքական փիլիսոփայությունը» պետությունը դիտում է որպես իրավունքի ստեղծման և իրացման գործիք («instrumentary»): Այս տեսանկյունից անհատների քաղաքականորեն կազմակերպված խումբը պետք է դիտվի որպես մի միասնություն, որն իրենից ներկայացնում է բառիս բուն իրավաբանական իմաստով անձ, այսինքն իրավաբանական իրավունքների ու պարտականությունների կրող, որը գոյություն ունի պատկերացումներում: Պետության իրավաբանական անձնավորության մասին այս պատկերացումն էլ հենց հանգեցնում է այն բանին, որ ինքնիշխանությունն ընկալվի որպես տվյալ անձի մեջ առկա բարձրագույն կամք, որը պետությանը ենթակա ցանկացած գործակալի կամ անձի իրավագործության աղբյուրն է: Ինքնիշխանությունը պետության գերագույն, իրավաբանորեն օրինականացող կամքն է («supreme legally legitimizing will»): Այդ հասկացություն բովանդակության մեջ մտնում է իրավական իրավասությունը, կամ իրավագործությունը, որը պետք է դիտվի որպես անսահմանափակ: Ինքնիշխանությունը պետության իրավական ամենագործությունն է («legal omnipotence»): Ինքնիշխանությունը ենթադրում է պետության անսահմանափակ իրավասություն: Պետությունն ինքն է որոշում իրավական կարգավորման սահմանները, մասնավորապես անձի քաղաքացիական ու քաղաքական ազատությունների ոլորտը շահերի ոլորտի հենց այն մասն է, որը պետությունը ցանկանում է տեսնել մասնավոր անձանց կամ պետության պաշտոնյաների կողմից կատարվող խախտումներից պաշտպանված: Այսպես, Ուիլոուբի տեսության մեջ, ամերիկյան իրականության ճշմամբ ու պրոսական-յունկերական կիսաքաղաքական միապետության գերմանացի գաղափարախոսների ազդեցությամբ, իսպառ վերանում են անգլոսաքսոնական «անհատապաշտության» ավանդական գաղափարները: Այստեղից արդեն հեռու չէ մինչև սուբյեկտիվ իրավունքների որպես իրավունքի

ռեֆլեքսների տեսությունը:

Եթե Ուիլոուբին ըստ Էռլթյան կրկնում է Նախորդ դարի գերմանական տեսությունները, ապա գերմանական իրավաբանական դարոցն ինքը, հանձինս Քելզենի «վիեննական դարոցի», թևակոխեց իր զարգացման, ավելի ստույգ ասած քայքայման, միևնույն ժամանակ:

Հարկ չկա հետևելու Քելզենյան տեսության միանգամայն ավելորդ իրավաբանատրամաբանական համայնքներին: Այս, մինչև ուղևոր ծուծը իդեալիստական, տեսությունը ինքնիշխանության հարցում հավատարիմ է մնում իր ընդհանուր նախադրույթներին⁸⁸: Պետության և իրավակարգի նույնականացումից հետևում է, որ պետության ինքնիշխանությունը և ոչ իրավակարգի հատկությունն է, այն է որևէ այլ իրավակարգից չարտածվելիության («Nichtableitbarkeit») հատկությունը: Ընդամին Քելզենը այդ արտածվելիությունը հասկանում է ձևականորեն: Այստեղ խոսքը ոչ թե որոշ նորմերից այլ նորմերի բովանդակության արտածվելիության մասին է (օրինակ մասնավոր նորմերի բխեցում համապատասխան ընդհանուր նորմերից), այլ իրավունքի միևնույն կամ բարձրագույն իրավակարգից մեկ այլ նորմի կամ ամբողջ իրավակարգի նշանակելիության գուտ ձևական արտածվելիության մասին, մի արտածվելիություն, որով ամենևին էլ չի պայմանավորված ավելի ցածր աստիճանի իրավակարգի «արտածվող» նորմի բուն բովանդակությունը: Այսպիսով, արտածվելիությունը իրավունքի նորմերի կապակցվածությունն է դրանց ստեղծման որոշակի կարգով, որը սահմանվում է մեկ այլ «բարձրագույն», իրավակարգի կողմից, անգամ եթե այդ «բարձրագույն» իրավակարգը ոչ մի կերպ չի կանխորոշում այդ նորմերի բովանդակությունը: Մի իրավակարգի արտածվելիությունը մյուսից Քելզենը դիտում է որպես վերջինիս կողմից որոշակի և հազորությունների փոխանցում առաջինին:

Քելզենի տեսությունը հարում է իրավունքի ինքնիշխանության, իրավունքի անդամ նորմերի գլխավորության մասին ուսմունքին: Այդ ուսմունքի ներկայացուցիչներ կարելի է

⁸⁸ Ինքնիշխանության վերաբերյալ Հանս Քելզենի ուսմունքը համակարգված ձևով ներկայացված է նրա "Des problem der Souveranitat und die Theorie des Volkerrechts" աշխատության մեջ, 1928 թ.:

համարել Կոկոշկինին⁸⁹, Ելիստրատովին⁹⁰ (նրա նախահեղափոխական աշխատություններում), Կրաբերն⁹¹: Այս տեսությունը «անտեսում» է այն հանգամանքը, որ իրավական նորմերը հենց այն պատճառով են իրավունքի նորմեր, որ սահմանված կամ թույլատրված են պետության իշխող դասակարգը ներկայացնող անձանց կողմից:

Եվ ըստ Քելզենի գերիշխող կարող է համարվել միայն նորմը, քանի որ ցանկացած կառավարող իշխանությունը ուժ ունի միայն վերադաս նորմի հիման վրա, ուստի և պետք է դիտվի միայն որպես մի բլանկետային նորմի լրացում: Եթե տվյալ նորմը չի կարող արտածված լինել մեկ այլ իրենից վեր կանգնած, նորմից, եթե նրա նշանակությունը ներդրված է իր իսկ մեջ, ապա այդ նորմը պատկանում է ամենաբարձր, ուստի և ինքնիշխան, իրավակարգին:

Չարմանալի չէ, որ պետության և իրավունքի նման ձևական ու վերացական ըմբռման դեպքում, երբ անտեսվում է ինչպես իր պետության, այնպես էլ պետությունների հաղորդակցման իրավական բնույթը, երբ պետության դասակարգային էությունը քողարկվում է իրավաբանական հնարքներով, Քելզենը վերջիվերջո հանգում է այն բանին, որ միջազգային իրավունքի և պետության միջև հարաբերությունները դիտարկում է որպես լիազորությունների փոխանցման, այսինքն «արտածվելիության», հարաբերություններ: Քելզենի տեսակետից արդյունավետության միջազգային-իրավական սկզբունքը որպես պետությունների ինքնիշխանության հատկանիշ, ոչ այլ բան է, եթե ոչ միջազգային իրավակարգի կողմից որոշակի լիազորությունների փոխանցում պետական իրավակարգին, ինչն ըստ էության նշանակում է ինքնիշխանության ժխտում հոգուտ միջազգային իրավունքի և պետության իսկ վերածում «մասնավոր իրավակարգի»:

Որոշակի վարանումներից հետո, որոնք իրենց արտացոլումն ստացան ինքնիշխանության մասին 1920թ. լույս ընծայված մենագրության մեջ, Քելզենը վստահորեն կանգնեց պետական ինքնիշխանության ժխտման դիրքերում:

Այս հարցում վիեննական դպրոցի տեսությունն աջակցություն

⁸⁹ Տե՛ս Կոկոշկին **А.А.** Лекции по общему государственному праву. М., 1912. Էջ 204:

⁹⁰ Տե՛ս Ելիստրատով **Н.** Очерки государственного права. М., 1915. Էջ 6:

⁹¹ Տե՛ս Կրաբե **А.** Die Lehre der Rechtsouveranitat, В., 1956, Էջ 47:

Ե ստանուժ Գուրվիչի «սոցիալական իրավունքի» տեսության և «ինտեգրալ իրավաբանական մոնիզմի» ներկայացուցիչ, ֆրանսիացի միջազգայնագետ Սելի տեսության կողմից: Սելը համարում է, որ ինքնիշխանության գաղափարն իսկ անհամատեղելի է իրավական միջսոցիալական համակարգի գաղափարի հետ: Սիջազգային իրավունքը չի կարող երաշխավորել պետությունների ներքին իրավասության ոլորտի անձեռնմխելիությունը⁹²:

Այս ուղիով Քելզենն իր հետևորդների հետ իրավաբանական մոնիզմի ճամբարից հասան ինքնիշխանության ժխտմանը: Սա ծայրահեղ ձևապաշտության ու նորմատիվիզմի, պետության և իրավունքի ոլորտում գոյություն ունեցող իրավական առնչությունների անտեսման, ավելի ստույգ ասած սքոլման ու աղավաղման, ուղի է:

Քելզենի բանավիճային հակառակորդն ու Վայմարյան հանրապետության առավել ազդեցիկ պետականագետներից մեկն էր Կերման Յելերը, որը ինքնիշխանության պրոբլեմին առանձին մենագրություն էր նվիրել⁹³: Յերման Յելերը պատկանում է գերմանական սոցիալ-ժողովրդավարական շարժման առավել աջ ու ազգայնամոլական տարրերի գաղափարախոսների շարքին, այն գաղափարախոսների, որոնք բացեիբաց հռչակեցին «հետ դեպի Լասալը» կարգախոսը⁹⁴: Բնականաբար, դա առաջին հերթին արտահայտվեց պետության վերաբերյալ հայեցակարգում: Յելերը չափն այնքան անցավ, որ պնդեց, թե պետության մահացման մասին Մարքսի և Էնգելսի ուսմունքը թելադրված էր մանրբուրժուական անիշխանականների հետ «մրցակցելու» անհրաժեշտությամբ: Իբր Մարքսն ու Էնգելսը չէին ուզում հետ մնալ Բակունինից և Պրուդոնից: Դա մի գարշելի փորձ էր արդարացնելու սեփական ցանկությունը հետ չմնալու պետության բուրժուական գաղափարախոսներից, արդարացնելու իր անցումը Լասալականության դիրքերը, մի գաղափարախոսության, որն իր հերթին տանում է դեպի Յելերը, որին կարելի է հանգեցնել ինքնիշխանության հելերյան հայեցակարգի մի շարք դրույթներ:

⁹² Տե՛ս **Scelle J.** *Precis du droit des gens.* P., 1959, T. II, էջ 6:

⁹³ Տե՛ս **Heller H.** *Die Souveranitat.* Berlin. Leipzig, 1927:

⁹⁴ Տե՛ս **Heller H.** *Sozialismus und Nation.* Berlin, 1925, էջ 117-118:

Այս հայեցակարգում ՅԵԼԵՐԸ հանդես է գալիս իբր ՔԵԼԳԵՆԻ ուսմունքի հակառակորդ, նա ՔԵԼԳԵՆԻՆ մեղադրում է պետության «ապաեռութենացման» մեջ: Ընդամիս այդ հարցում ՔԵԼԳԵՆԸ, ՅԵԼԵՐԻ կարծիքով, լուկ շարունակում է Լաբանդ-ԵԼԻՆԵԿԻ գիծը, որոնք պետությունը վերածել էին իրավաբանական անձի, այսինքն պատրանքի կամ, լավագույն դեպքում, վերացության: Այդ հայեցակարգերին ՅԵԼԵՐԸ հակադրում է պետության ըմբռնումը որպես ռեալ ուժի, որպես սոցիալական կյանքում վճռորոշ առյանի: Նաև ույնիսկ շեշտում է, որ գիտական իրավաբանությունը չի կարող գոյություն ունենալ «առանց սոցիոլոգիապես էմպիրիկ գործոնների հաշվառման»: Սակայն այդ գործոնները նա ընկալում է միանգամայն յուրովի, ինչպես վայել է ռեֆորմիզմի գաղափարախոսին, կտրականապես հրաժարվելով պետության մեջ դասակարգային տիրապետության գործիք տեսնելուց: Աղավաղելով իրավականությունը նա պետության մեջ տեսնում է միջնադասակարգային «հաշտության» գործիք, ինչը իբր արտահայտվում է այն բանով, որ անգամ այս կամ այն պետական օրենքի դեմ հանդես եկող բանվորները առիթը ներկայանալիս վկայակոչում են այդ նույն պետության բանվորական օրենսդրությունը դրանով իսկ իբր հայտարարելով, թե ճանաչում են պետությունը: Նրա կարծիքով այդ նույն վիճակում է գտնվում նաև ձեռնարկատերը, որը սրտապնդվելով հաշտվում է իր համար անընդունելի ձևի կառավարման կամ սոցիալական օրենսդրության հետ, որովհետև պետությունը երաշխավորում է նրա մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը: Այսպիսով իբր պետությունը հավասար չափով պետություն է և՛ ձեռնարկատերերի, և՛ բանվորների համար: Պետության սոցիալական գործառույթը, որը ինքնիշխանության ըմբռման բանալին է, «տվյալ տարածքում բոլոր հասարակական ակտերի համատեղ գործառման» ապահովումն է: Պետության հիմքում դրված է «համընդհանուր կամքը» ժողովրդի կամքը որպես միջդասակարգային և վերդասակարգային կամք, որն իբր ուղղված է ժողովուրդը կազմող բոլոր դասակարգերի համար ընդհանուր շահերին: Այս իմաստով «ժողովուրդը» ինքնիշխանության կրողն է, տվյալ տարածքում իրավակարգի

միասնությամբ երաշխավորը: Այսպիսով, պետության ինքնիշխանությունը, ըստ ՅԵԼԵՐԻ, հնարավոր է միայն որպես «ժողովրդական ինքնիշխանություն», որն իրականացվում է մեծամասնության սկզբունքի և ներկայացուցչության սկզբունքի հիման վրա: ՅԵԼԵՐԸ, ժողովրդական ինքնիշխանության առջև «խուճել-մուճել» զայնով, դասական իրավաբանական հայեցակարգի ներկայացուցիչներին մեղադրում է այն բանում, որ նրանց «պետական ինքնիշխանությունը» գործնականում հանգում է մարմինների ինքնիշխանությանը և, մասնավորապես, միապետական ինքնիշխանությանը, քանի որ պետությունը մարմիններից դուրս հնարավոր չէ պատկերացնել այլ կերպ, քան որպես միանպտուղ վերացություն: Բայց պարզ է, որ ՅԵԼԵՐԸ մի արհեստական վերացությունը փոխարինում է նույնպիսի անպտուղ վերացությամբ, ավելի ստույգ մի հնարանքով, քանի որ հնարանք են «միասնական» ժողովրդի «համընդհանուր կամքը» և ընդհանուր շահերը, մի ժողովուրդ, որն իրականում բաժանված է անհաշտ ներհակական շահեր ունեցող դասակարգերի: Այս հնարանքը քողարկում է բուրժուազիայի միանգամայն իրական դասակարգային շահը:

ՅԵԼԵՐԸ ՔԵԼԳԵՆԻՆ քննադատում է իրավունքում «ռեալիզմի» դիրքերից: Նա ՔԵԼԳԵՆԻՆ դիմադրող հարց է տալիս, ո՞վ է իրավունքը դարձնում պոզիտիվ կենդանի պատմական անհատական կամքը, թե «հիմնական նորմը»: Ցանկացած իրավունք, ցանկացած նորմ, այդ թվում և հիմնական նորմը, կարիք ունի այն կամքի, որն իրեն հաստատում է («setzt») և անցկացնում («durchsetzt»): Պետությունում այդպիսի կամք է ինքնիշխան կամքը, որն ստեղծում է իրավունքը և այդ պատճառով կանգնած է իրավունքից վեր, անհրաժեշտության դեպքում կործանում է հին իրավունքը տեղը նորն ստեղծելով: Պետությունն օժտված է ինքնիշխանությամբ այն պատճառով, որ նա տվյալ տարածքում վճռորոշ կամքի կրողն է: Վճռորոշ կամքի, կամ վճռորոշ կամային միասնության, հասկացության մեջ որպես նրա հատկանիշներ մտնում են համապիտանիությունը և գործունեությունը: Առաջին հատկանիշը նշանակում է, որ պետությունը տվյալ տարածքում հնարավորություն ունի

վերջնական վճիռ կայացնելու հասարակական կյանքի ցանկացած հարցով: Ճիշտ է, պետությանը կարող է հրաժարվել հասարակական կյանքի այս կամ այն ոլորտում միջամտություն կատարելու իրավունքից, սակայն նման վճռական միջամտության պոտենցիալ հնարավորությունը միշտ էլ ներհատուկ է պետությանը:

Գործունեությունը նշանակում է իր որոշումներն իրագործելու փաստացի հնարավորություն: Որևէ այլ կամքին ենթակայությունը բացառող այդ հատկանիշների առկայությունը որոշում է պետության ինքնիշխանությունը: Ինքնիշխան է կոչվում այն վճռորոշ միասնությունը, որը ենթակա չէ մեկ այլ համապիտանի, գործունե, վճռորոշ միասնության: Յելերի այս դատողություններում լիովին անտեսվում, քողարկվում է ինքնիշխանության դասակարգային էությունը:

Ինքնիշխանությունը ցանկացած դրական իրավունքի պայմանն է, որովհետև հասարակության բոլոր անդամներին իրավունքով պարտավորեցնելու համար անհրաժեշտ է հենց ինքնիշխան իշխանության առկայություն: «Մենք ինքնիշխանության էությունը տեսնում ենք հասարակություններին պարտադրվող բարձրագույն իրավական դրույթներ սահմանելու կարողության մեջ»⁹⁵: Ինքնիշխան իշխանությունը ցանկացած իրավական դրույթից վեր է, այն կաշկանդված է միայն «բարոյագիտական սահմանող իրավասկզբունքներով», կամ իրավական «հիմնադրույթներով», որոնք Յելերի հայեցակարգում իրենցից ներկայացնում են բնական իրավունքը նոր խմբագրությամբ: Ինքնիշխան իշխանությունը, լինելով իրավունքից բարձր, դրանով իսկ կարող է խախտել ցանկացած իրավունք, կարող է իրեն հաստատել ընդդեմ ցանկացած իրավունքի: Դարձյալ անտեսելով դասակարգային բովանդակությունը Յելերը ամեն կերպ շեշտում է ինքնիշխանության վերիրավական բնույթը որպես նրա էական հատկանիշ: Այստեղ առավել ցայտուն կերպով է դրսևորվում թելերի տարանջատվածությունը իրավական պետության ազատական հայեցակարգից: Չունի չէ, որ սոցիալ-ժողովրդավար Յելերը բացեիբաց հայտարարում է, որ ինքը պարտական է ֆաշիզմի

⁹⁵ St' u Heller H. Sozialismus und Nation. Berlin. 1925, էջ 171-172:

հայ եցակարգի ոգեշնչող Կառլ Շմիտի «օրինակելի» աշխատություններին:

Յեւեռի այդ նույն միտումները ամբողջ ուժով արտահայտված են նաև ինքնիշխանության և միջազգային իրավունքի հարաբերակցության հարցի նրա մեկնաբանություններում: Ընդհանուր, Յեւեռը խոստանում է համակցել ինքնիշխանությունն ու միջազգային իրավունքը, սակայն դա նրա ուժերից վեր է, և «պետական իշխանության ինքնիշխանության վճռորոշ միասնության» իրականության առկայության միջազգային իրավունքը վերջիվերջո չքվում է, որովհետև այդ իշխանությունը կարող է իր ինքնիշխանությունը հաստատել ոչ միայն ընդդեմ ազգային իրավունքի, այլև միջազգային: Ըստ Յեւեռի, միջազգային ոչ միայն պայմանագրային, այլև սովորույթային, իրավունքի նորմերը խարխավում են պետությունների կողմից դրանց բացահայտ կամ լռելյան ճանաչման վրա: Միջազգային-իրավական սովորույթները պարտադիր են դառնում միայն այն դեպքում, երբ դրանք կիրառվում են («Ubung») ինքնիշխան պետությունների կողմից: Այսպիսով այդ նորմերը չեն կարող պարտադիր համարվել այն պետությունների համար, որոնք հրաժարվում են դրանց ճանաչումից և կիրառումից: Ինչ վերաբերում է պայմանագրային միջազգային իրավունքին, ապա պետությանը իրավունք է վերապահվում հրաժարվելու իր կնքած պայմանագրից, և այդ իրավունքում դարձյալ առավել ցայտուն կերպով արտացոլվում է պետության ինքնիշխանությունը: Մասնավորապես դա վերաբերում է պետության պայքարին հանուն իր գոյության: Տվյալ դեպքում պետությունը կարող է չճանաչել որոշ միջազգային-իրավական նորմերի վավերականությունը, եթե դրանք վտանգում են իր գոյությունը: Դեռ ավելին, ցանկացած ինքնիշխան պետություն իրավունք ունի ազատվելու այլ պետության նկատմամբ իր ունեցած ցանկացած պայմանագրային պարտավորությունից... այդ պետությունը զավթելու ճանապարհով: Յեւեռի անդամք միջազգային իրավունքը չի կարող կարգավորել ո՛չ պետության ստեղծումը, ո՛չ էլ կործանումը: Միջազգային կազմակերպությունը ինքնիշխանության հետմիայն այն դեպքում է

համատեղելի, երբ հիմնված է իր բոլոր անդամների միահամուռության և կամավորության վրա: Եվ ՅԵԼԵՐԸ շատ հետևողական է, երբ հայտարարում է. «Գոյությունն չունեն միասնական միջազգային իրավական կարգ ու նույնիսկ ընդհանուր միջազգային իրավունք բոլոր գոյությունն ունեցող պետությունների համար համահավասար, նրանց իրեն ենթարկող իրավունքի իմաստով: Այն, ինչ կոչվում է միջազգային իրավունք, իրենից ներկայացնում է որոշակի թվով առանձին, քիչ թե շատ ընդհանուր իրավական դրույթների և ավելի մեծ թվով իրավական հիմնադրույթների հավաքածու» (ընդամին, ինչպես գիտենք, թելերը հիմնադրույթները չի վերագրում դրական իրավունքի շարքին): Այսպիսով միջազգային իրավունքը փաստորեն վերանում է կամ վերածվում «արտաքին պետական իրավունքի»: ՅԵԼԵՐԻ ցանկացած դատողության մեջ լսվում է ագրեսիան և Վերսալի բռնի վերանայումը նախապես արդարացնող գերմանական իմպերիալիզմի ձայնը:

Եթե ՅԵԼԵՐԸ տեսական բնագավառում հանդես է գալիս որպես ԲԵԼՂԵՆԻ հակառակորդ, ապա նրա դպրոցի հետագա զարգացումը (մասնավորապես ի դեմս ԱՄՆ գաղթած Նիմայերի) հանգեցրեց դրամերձեցմանը ԲԵԼՂԵՆԻ դպրոցի հետ:

Նիմայերը ՅԵԼԵՐԻ նման ժխտում է պետության անձի հասկացությունը, անգամ որպես հնարանքի կամ վերացության, և ընդունում է պետության որպես որոշակի տարածքում հասարակական ակտիվության կազմակերպող կենտրոնի դերը: Սակայն Նիմայերը մերժում է ՅԵԼԵՐԻ «ռեալիզմը» և անցնում «ակտուալիզմի» ու «ֆունկցիոնալիզմի» դիրքեր, հոսանքներ ներշնչված փիլիսոփայական (օրինակ Կասիրերի տեսությամբ) և ֆիզիկական գերժամանակակից բուրժուական իդեալիստական հայեցակարգերով, որոնք հանգում էին իրերի սուբստանցիականության, նյութականության տարրալուծմանը գործառույթներում, հարաբերություններում, գործողություններում և այլն: Որպես այն բանի «ապացույցներ», որ սուբստանցիայի, ռեալության, նյութի հասկացությունները «հնացած» են և պետք է փոխարինված լինեն «գործառույթներ», «հարաբերություններ»,

«ակտուալ ու թյուն» հասկացություններով, Նիմայերը վկայակոչում է Իյնշաեյնի ֆիզիկան, Կլոդ Բեռնարի ֆիզիոլոգիան, Քեռոլի կենսաբանական ուսմունքը ընդհուպ մինչև ժամանակակից ճարտարապետական տեսությունները: Իրավունքի տեսության առնչությամբ Նիմայերը անում է այն եզրակացությունը, թե իրավունքը գործչունի ռեալ անհատների հետ լինեն դա իրավաբանական, թե ֆիզիկական անձինք, այլ գործունի միայն «անդրանձնային փոխկապվածության» և այս կամ այն գործառույթների իրացման ընթացքում ծագող հարաբերությունների հետ: Իրավունքի համար այդ հարաբերություններից և կապերից դուրս անձեր չկան: Դավերաբերում է նաև պետությանը: Պետությունը միայն որոշակի տարածքում հասարակական ակտիվության համադասող կենտրոն է: Ինքնիշխանությունը միայն «այն գաղափարի իրավական ձևակերպումն է, որ սոցիալական կյանքի ընդհանուր համաժամանակեցումը պահանջում է պլանավորման համապիտանի սխեմաներ, ինչն արվում է միայնախիսի կազմակերպության միջոցով, որը կարող է ընդգրկել մշակույթի բոլոր կողմերը և այդ պատճառով էլ ենթադրում է կազմակերպող մարմին («agency»), որն ըստ ներուժային հզորությամբ գերազանցի տվյալ հասարակական ոլորտում գործող մյուս բոլոր ուժերը»: Այս երկար խոսքի կարճ իմաստն այն է, որ դասակարգային պետությունում ինքնիշխանությունն իբր ապահովում է այն գործառույթների իրականացումը, որոնցում շահագրգռված է ամբողջ հասարակությունը: Ընդսմին պետական ինքնիշխանությունը վերագրվում է պլանավորող ու կազմակերպող գործունեության, որը հատուկ չէ բուրժուական պետությանը, մինչդեռ ուղղակի ճնշման գործառույթը և ռազմական գործառույթը անհետացել են: Միջազգային կապերն առաջանում են այն պատճառով, որ որոշակի սոցիալական գործառույթներ դուրս են գալիս առանձին պետությունների շրջանակներից և իրականացվում են պետության համադասված ուժերով: Միջազգային իրավունքը միջպետական գործառույթային համադասման օրենքներն են: «Պետությունը գործում է որպես սոցիալական համադասման միասնության կազմակերպություն: Այդ կազմակերպությունը

գործում է մե՛րթ մեկուսի, մե՛րթ համադասվածությամբ» (այլ կազմակերպությունների հետ):

Նիմայերը իրավունքը պատկերացնում է ոչ թե որպես պարտադրման վրա հենվող նորմ, պահանջ, այլ որպես «մի կարգ, որը հատուկ է անհատների իրական համադասված վարքին»: Բնական է, որ միջազգային իրավունքը ևս գործում է ոչ թե որպես կարգավորիչ ուժ, այլ որպես պետությունների կողմից իրենց գործառույթների կատարման ժամանակ նրանց համադասված գործողությունների իմանենտ օրենք: Ըստ էության, դա առանձին պետության մասշտաբով վերաբերում է նաև պետության ներքին իրավունքին: Պետության հիմնական տարրը՝ իշխանությունը, տարրալուծված է «գործառույթի» մեջ: Ինքնիշխանությունը կորցնում է իր իշխանական էությունը՝ վերածվելով գործառույթների կազմակերպության: Ելնելով Քելզենին արտաքսապես հակադիր դիրքերից, այն է՝ ծայրահեղ հակաևորմատիվիզմի դիրքերից, Նիմայերն ըստ էության հանգում է միջազգային և ազգային իրավունքների փոխհարաբերությունների միևնույն կառուցվածքին, որի դեպքում ինքնիշխանության սկզբունքն անհետանում է:

Նիմայերի գիրքը կոչվում է «Իրավունք առանց ուժի»: Ինչպես տեսանք, Նիմայերը իրավունքի և ինքնիշխանության հասկացություններից վանում է իշխանական-ևնորմատիվային գործոնը: Նիմայերի կողմից նորմատիվիզմի «քննադատությունը» նույնքան սխալական է, որքան սխալական է նորմատիվիզմն ինքը: Օրենք-ևնորմին դիպվածական օրենքի միջև տարբերությունների գոյությունը ժխտելով Նիմայերը վերացության է հասցնում Ելինեկի փաստացի նորմատիվային ուժի մասին ուսմունքը: Նրա «տեսությունը» կանաչ լույս է վառում ցանկացած փաստացի վիճակի, մասնավորապես բացահայտ բռնության գործադրմամբ ստեղծված վիճակի, օրինականացման համար: Եթե իրավունքը ուժի վրա հենված չէ, ապա ո՞ն էլ հենված չէ իրավունքի վրա:

Այս խղճուկ Էկլեկտիկան լուսաբանում է պետական իշխանության և ինքնիշխանության «հողմափարությունը», որը բավականին լայն տարածում է ստացել ժամանակակից գիտության

մեջ և արդի բուրժուական պետություններում մենաշնորհային կապիտալի դիկտատուրան տարբեր կարգի «հասարակական գործառույթներով» քողարկելու առավել հնարավոր եղանակն է:

Այս առումով Նիմայերի «տեսությունը» անշուշտ սահմանակցվում է ինքնիշխանության ժխտման ավելի վաղ շրջանի հոգնականական տեսություններին, որոնք կապված են Պրայսի, Դյուգիի, Լասկիի անունների հետ: Վերջինիս հոգևոր հայրերից մեկն է անգլիացի սոցիոլոգ Բարկերը, որը հասարակության մեջ իշխանական հարաբերությունների բնութագրման համար մտցրել է մի նոր տերմին արլիարխիզմ (բազմիշխանություն): Այս տեսությունները եությունը հանգում է ինքնիշխանության «մոնիստական» հայեցակարգի և «սոցիալ-քաղաքական հոգնականության» հակադրությանը, ընդսմին վերջինս շեշտում է, որ պետության մեջ գոյություն ունեն հասարակական խմբավորումներ համայնքներ, արհեստակցական կազմակերպություններ և այլն, որոնք պետության առջև հանդես են գալիս որոշ ինքնուրույնություններ: Պետությունը, հայտարարում է Լասկին, միայն մեկն է այն խմբերից, որոնց պատկանում է անհատը: Նման հակադրության տեսական նախադրյալն է այն բանի ժխտումը, որ պետությունն ունի իրավաբանական անձի բնույթ, ինչպես նաև այն, ինչը շատ կարևոր է Դյուգիի և Լասկիի համար, որ պետությունը նույնացվում է մարդկանց այն խմբի հետ, որն իրականացնում է իշխանությունը, այսինքն՝ բառիս լայն իմաստով վերցված կառավարության հետ: «Իրականում պետության կամքը կառավարության կամքն է այն ձևով, որով նա ընդունվում է այն քաղաքացիների կողմից, որոնց վրա այդ կառավարությունն իշխում է»⁹⁶, «Կառավարությունը պետության իսկական սիրտն է», «Ժամանակակից քաղաքական պայքարում պետության ինքնիշխանությունը նշանակում է կառավարության ինքնիշխանություն»: Բայց բանի որ ժամանակակից պետությունում չի կարելի խոսել կառավարության անսահմանափակ ինքնիշխանության մասին, ինչպես դա եղել է բացարձակ միապետության դեպքում, ապա ճիշտ կլիներ ինքնիշխանության

⁹⁶ Տե՛ս **Laski H.** A grammar of politics. L. 1925 էջ 56.

մասին ընդհանրապես չխոսել: Դեռ ավելիև. Լասկիի պնդմամբ ժամանակակից պետությունում դժվար է ցույց տալ, թե ով է իրական կառավարողը, ուստի և ինքնիշխանությունը դառնում է մի այնպիսի բան, որը «մարդու համար տեսանելի չէ»:

Դյուգիեն պնդում է, որ ինքնիշխան «պետությունը մահացել է կամ մերժիմահ վիճակում է»: Նա կանխագուշակում է, որ մոտ ապագայում կհաստատվի մի այնպիսի քաղաքական կարգ, որում «իսպառ վերացած կլինի պետական իշխանության հասկացությունը»⁹⁷:

Համաձայն Դյուգիի պնդման, որով լրիվ աղավաղվում է ժամանակակից բուրժուական պետության իրական էությունը, պետությունը վերցված որպես իշխանական ուժ, իր տեղը կգիջի այնպիսի պետության, որն «սպասարկում է կարիքները և ապահովում ժամանակակից մեկուսախմբային կյանքի համադասումը»: Դյուգիի համար ինքնիշխանության ժխտումը կապված է պետության իրավաստեղծ դերի ժխտման հետ: Պետությունը ոչ թե ստեղծում է իրավունք, այլ միայն «հաստատում» է այն որպես հասարակական համերաշխության նորմ, որն իրենից ներկայացնում է այն նորմը, որը սրբազործում է անգամ պետության համար անձեռնմխելի մասնավոր սեփականության անսասան իրավունքը: Իրավունքը պետության համար նույնքան պարտադիր է, որքան և քաղաքացիների համար: Դա է պատճառը, որ «ինքնիշխան պետական իշխանության գոյության նկատմամբ հավատը չի համապատասխանում որևէ ռեալության և պետք է անհետանա»:

Ի տարբերություն ավելի ուշ շրջանի ամերիկացի հեղինակ Ուիլոուբից, որը Բորելի և Գենելի նման ժխտում էր ինքնիշխանությունը միջազգային իրավունքում և ընդունում դրա առկայությունը պետական իրավունքում, Դյուգիեն հնարավոր է համարում միջազգային իրավունքում այդ կատեգորիայի գոյության օրինականությունը, սակայն վճռականապես ժխտում է ներպետական ինքնիշխանությունը որպես մի հասկացություն, որը հավասարազոր է բռնությանը:

Դյուգիի կողմից ինքնիշխանության ժխտումը արդյունք էր այն

⁹⁷ Ст' у Дюги Л. Социальное право, индивидуальное право и преобразование государства, М., 2013. С. 32, 146.

ազդեցութեան, որ նրա վրա գործել էին սինդիկալիստները, իսկ
Լասկիի կողմից ժխտումը տրեդ-յունիոնիզմի ազդեցութեան
հետևանք: «Տրեդ-յունիոնը՝ որպես այդպիսին, ոչ մի կապ չունի
մորմոնների եկեղեցու հետ: Այն, որպես մի ինքնաբերական
երևույթ, կանգնած է իր սեփական ոտքերի վրա: Նա կարող է
համագործակցել պետության հետ, բայց դա նրա համար
անհրաժեշտություն չէ»: Լասկին տեսնում է հասարակության մեջ
«տնտեսական ֆեդերալիզմի» զարգացում, իշխանության բաժանում
առանձին ասոցիացիաների ու միությունների միջև, որոնցում իբր
կարող է դրսևորվել նաև բանվորի ակտիվությունը: Այսպիսով
ինքնիշխանության ժխտումը թելադրվում է տրեդ-յունիոնների
ինքնուրույնությունը, բանվոր դասակարգի տնտեսական
կազմակերպման ինքնուրույն բնույթը հաստատելու, այդ
կազմակերպումը քաղաքական պայքարից տարանջատելու ձգտմամբ:
Դրա հետ մեկտեղ Լասկին, հատկապես իր ուշ շրջանի
աշխատություններում, այդ թվում «Խոհեր հեղափոխության մասին»
գրքում, պնդում է, թե ինքնիշխանությունը անհամատեղելի է
միջազգային կազմակերպության, համաշխարհային շուկայի և այլ
նման երևույթների ու կազմակերպությունների հետ:

Իրավունքի սոցիոլոգիաի դեմս Դյուգիի և Լասկիի մերձենում
է քաղաքական հոգնականության տեսության հետ: Նրանց միավորում
է ընդհանուր միտումը տապալելու «լևիաթան»-պետությանը և
գործունեության լայն դաշտ ապահովելու սինդիկատների, տրեդ-
յունիոնների և այլ նմանատիպ կազմակերպությունների համար: Դա
ցայտուն ավելի կամ քողարկված կերպով արտահայտված
սինդիկալիզմ է, բանվոր դասակարգի քաղաքական պայքարի
նենգափոխում տնտեսականի, քաղաքական պայքարի նկատմամբ
դրսևորված անթաքույց ժխտողականություն: Լասկին պետությանը
վերագրում է լավագույն դեպքում «համադասող գործակալության»
դեր:

Այդ միտումների բնորոշ դրսևորումն է Ա.Գուրվիչի
«իրավաբանական հոգնականությունը»: Գուրվիչը համարում է, որ
պետության կողմից ստեղծվող իրավունքին զուգահեռաբար
գոյություն ունի նաև արտապետական («extraetatique») իրավունք, որի

ձևերից մեկը, ըստ Ա.Գուրվիչի, «բանվորական իրավունքն» է, որը հիմնվում է ձեռնարկատերերի ու բանվորների միջև, իբր առանց պետության մասնակցության, կնքվող կոլեկտիվ պայմանագրերի վրա⁹⁸: Դրանով իսկ քողարկվում է պետության որպես կապիտալիզմի պաշտպանի և կապիտալիստական շահագործման համակարգի երաշխավորի դերը:

Միացյալ Նահանգներում այդ ուղղությանը ներկայացրած ստացան սոցիոլոգիական պետականագիտության կողմից (Բերդ, Մեռիեմ, Կոհեն), որը սերտորեն սահմանակցում էր տարբեր բուրժուական սոցիոլոգիական ու հոգեբանական դպրոցների հետ: Պետության երևույթները ուսումնասիրվում են «խմբային հոգեբանության» տեսանկյունից, ընդամին այդ «խմբային հոգեբանության» առարկա են դառնում և՛ քաղաքական իշխանությունը, և՛ իրավունքը, և՛ ինքնիշխանությունը: Ավելի ստույգ ասած՝ վերջին հասկացությունները դուրս են մղվում սոցիոլոգիայի և սոցիալական հոգեբանության այնպիսի կատեգորիաներով, ինչպիսիք են «ազդեցությունը», «հասարակական կարծիքը», «ճշունքը», «իշխանության տեսնիկան», «իշխանության սիմվոլիկան», «սոցիալական գործառույթը», «կայունացուցիչը», «քաղաքական վերահսկողությունը» և այլն: Թեև ամերիկյան պետությանագիտության բնագավառում ձևավորված այս ուղղությանը ներկայացրած եղավ դրանով իսկ բացահայտելու պետական քաղաքականության «անտեսանելի» գործոնները, թաքուն լծակները, նրա «ձեռնածվական կողմերը» (Կոհեն), այսինքն կուսակցական մեխանիզմը բոսիզմը, հովանավորչությունը, լոբբին և ամերիկյան ժողովրդավարությանը բնորոշ այլ գծերը, սակայն այդ նույն ժամանակ քողարկվում էր ժամանակակից քաղաքական հասարակության կյանքում ուղղակի պետական պարտադրման դերը: Այսպես, ըստ Կոհենի, ինքնիշխանությունը պետք է հանգեցվի «ուղղորդման և ղեկավարման, անհատների և անհատների խմբերի միջև հավասարակշռության պահպանմանն ու նրանց շահերի հաշվեկշռվածության ապահովմանը»: Պետությունը դասակարգի դիկտատորայի գործիքից վերածվում է դասակարգերի միջև ծագող

⁹⁸ Տե՛ս **Gurvitch A.** Le temps present et l'idee du droit social. Paris, 1932, էջ 211-212.

վեճերում մի հասարակական անկողմնակալ դատավորի դեր խաղացող կազմակերպության: Լրիվ աղավաղվում է իմպերիալ իստական պետությունում առկա հարաբերությունների իրական պատկերը, որին բնորոշ են բյուրոկրատիայի և ռազմականացված շրջանների հզորության աճումը, պետական ապարատի և կապիտալ իստական մենաշնորհի սերտաճումը: Կոհենն ինքն էլ ստիպված է ընդունել, որ «պատերազմի ժամանակ միլիոնավոր քաղաքացիների տրված Երյուրացնել այն վերջավոր իրավունքների հիմնարար բնույթը, որոնց տիրապետում է պետությունը ինչպես նրանց, այնպես էլ նրանց ունեցվածքի նկատմամբ: Նրանց տրված էր հասկանալ, թե որքանով են նրանց իրավունքները կախված ինքնիշխան պետության լռելյայն կամ արտահայտված համաձայնությունից: Ապագա քաղաքական գիտությունը կարտացոլի այդ գնահատականը»⁹⁹: Այս կերպ իրականությունն ինքը հերքեց սոցիալական հոգնականության, ինչպես նաև իրավաբանական մոնիզմի ու ինքնիշխանությունը ժխտող այլ բուրժուական տեսությունների կառուցումը և ապացուցեց պետության ինքնիշխանության անառարկելի ռեալությունը:

Պետական ինքնիշխանության հայեցակարգի մշակման խնդրում նորագույն ժամանակաշրջանում էական ներդրում ունի գերմանացի գիտնական Գևորգ Ելինեկը (1851-1911)¹⁰⁰: Նա հիմնավորեց այն դրույթը, համաձայն որի՝ ինքնիշխանությունը իրավական հասկացություն է, որ պետական իշխանության անկախությունը ցանկացած այլ իշխանությունից կամ հեղինակությունից միշտ իրավական բնույթ ունի, այլ ոչ թե փաստական: Նա ապացուցում էր, որ «ինքնիշխանությունը՝ դիտարկելով որպես իրավունքի վեր իշխանություն, հակասում է ինքնիշխանության տեսության պատմական զարգացմանը»¹⁰¹: Բացի դրանից, «ինքնիշխանությունն ոչ թե բացարձակ սուլ պետական կառուցորիա է»¹⁰²: «Ինքնիշխանությունը, ըստ Ելինեկի, այնպիսի հատկություն է, որը չի կարող մեծանալ կամ փոքրանալ»¹⁰³:

⁹⁹ Տե՛ս **Cohen H. E.** Sovereignty // The future of government in US. 1942:

¹⁰⁰ Տե՛ս **Георг Еллинек** Общее учение о государстве . Санкт-Петербург, 2004:

¹⁰¹ Տե՛ս նույն տեղը, էջ 458:

¹⁰² Տե՛ս նույն տեղը, էջ 468:

¹⁰³ Տե՛ս նույն տեղը, էջ 477:

Այսպիսով, Ելիսեկը իրավաբանական պոզիտիվիզմի դիրքերից մշակեց ինքնիշխանության ժամանակակից հայեցակարգի կարևորագույն դրույթներից մեկը՝ ինքնիշխանության անբաժանելիությունը, որի համաձայն ինքնիշխան պետությունը բոլոր հարաբերություններում «ինքնին իշխանագործ է»:

Ինքնիշխանության անբաժանելիության հայեցակարգին միջարք հետազոտողներ առաջարկեցին ինքնիշխանության բաժանելիության մասին: Այսպես, Ն. Ն. Ալեքսեևի կարծիքով. «Եթե ինքնիշխանությունը ըմբռնենք որպես բարձրագույն հատկանիշ, ապա այդպիսի իմաստով ինքնիշխանությունն անբաժան է: Սակայն այդ դեպքում գործ ունենք միայն բնական հասկացության հետ»¹⁰⁴: Յետևաբար, ըստ ծավալի ինքնիշխանությունը բաժանելի է, քանի որ «կազմակերպված իշխանությունը պետք է, վերջիվերջո, ունենա հիերարխիկ կառուցվածք»¹⁰⁵:

Այսուհետև Ն. Ն. Ալեքսեևը նշում է, որ «ինքնիշխանությունը չի նշանակում նաև միասնականություն, անբաժանություն, անսահմանություն և անօտարելիություն, ինչպես ուսուցում է ինքնիշխանության դասական տեսությունը»¹⁰⁶:

20-րդ դարի սկզբներին ինքնիշխանության դասական տեսությունը ենթարկվեց վերանայման և առաջարկվեց ինքնիշխանությունը դիտարկել համալիր հարցերի համատեքստում:

Վերանայման հետևանքով առաջացան միջարք հայեցակարգեր՝ «ապակենտրոնացված ինքնիշխանություն», «սոցիալ-քաղաքական ինքնիշխանություն», «սահմանափակ ինքնիշխանություն»: Այսպես, Գ. Լասկին օգտագործելով այն հանգամանքը, որ պետությունը քաղաքական կազմակերպություններից միակը չէ, որ իրականացնում է իշխանական գործառույթներ: Այսպիսի գործառույթներ են իրականացնում նաև տարբեր հասարակական-քաղաքական կազմակերպություններ (կուսակցություններ, արհմիություններ, կրոնական կազմակերպություններ և այլն): Այստեղից նա առաջարկում է ապակենտրոնացված ինքնիշխանության

¹⁰⁴ Տե՛ս **Алексеев Н. Н.** Идея государства, М., 2012, էջ 189:

¹⁰⁵ Նույն տեղը, էջ 167:

¹⁰⁶ Նույն տեղը, էջ 219:

հայ եցակարգը¹⁰⁷:

Ժամանակին Մ. Ուայթմենը ընդգծում էր, որ «ինքնիշխանություն ուսմունքը» 20-րդ դարի կեսերին ենթարկվեց խիստ քննադատության միջազգային-իրավաբանների կողմից (Քելզեն, Բրայերլի, Ռայթ, Ֆրիդման, Ֆերդրոս, Լաուտերպախտևայլն):

Մասնավորապես, Լ. Քելզենը գտնում էր, որ պետական ինքնիշխանությունը փաստացի իրավական կատեգորիա չէ, այլ հիպոթետիկ, վերացական դատողություն¹⁰⁸:

Քելզենի բացասական վերաբերմունքը ինքնիշխանությանը բխում էր նրա միջազգային իրավունքի գերապատվության հայեցակարգից և ընդգծում էր, որ ինքնիշխանությունը և կոլեկտիվ անվտանգությունը անհամատեղելի են, հետևաբար պետք է հրաժարվել պետական ինքնիշխանությունից և ճանաչել միջազգային իրավունքի և իրավակարգի առաջնայնությունը ներպետական իրավունքից¹⁰⁹:

Պետական ինքնիշխանության հակառակորդներից է նաև 2. Բրայերլին: Ըստ նրա միջազգային իրավունքը և «պետության բացարձակ իշխանությունը» անհամեմատելի են, իսկ ինքնիշխանությունը պարզապես խոսք է¹¹⁰:

Կ. Ռայթը գտնում է, որ ՄԱԿ-ի Կանոնադրությունում ամրագրված միջազգային սկզբունքները և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթները ենթադրում են արմատապես վերանայել պետական ինքնիշխանության դասական հայեցակարգը և այն համապատասխանեցնել արդի միջազգային հարաբերությունների տրամաբանությունը¹¹¹:

Ու. Ֆրիդմենը ուղղակիորեն նշում է, որ ներկայումս ազգային պետությունը և ազգային ինքնիշխանությունը խորը ճգնաժամ է ապրում¹¹²:

Ինչ խոսք, ներկայիս համաշխարհային տնտեսական, քաղաքական, իրավական գլոբալացման, ինչպես նաև ազգային իրավական

¹⁰⁷ Տե՛ս **Laski H.** Studies in Law and Politics. L. 1932. Էջ 237:

¹⁰⁸ Տե՛ս **Kelsen H.** Principles of International Law. N. Y. 1952, Էջ 440-442:

¹⁰⁹ Տե՛ս **Kelsen H.** Collective Security Under International Law. Washington, 1957, Էջ 45:

¹¹⁰ Տե՛ս **Briesly J. L.** The Basis of Obligation in International Law. Oxford. 1958, Էջ 16, 48, 254, 349:

¹¹¹ Տե՛ս **Wright Q.** The Study of International Relations. N. Y., 1955, Էջ 145:

¹¹² Տե՛ս **Friedmann W.** The Changing Structure of International Law. L. 1964. Էջ 31-34:

համակարգերի ինտեգրման պայմաններում առաջանում են որոշակի հիմնախնդիրներ կապված պետական ինքնիշխանության պահպանման հետ: Այս բարդ հիմնահարցում, մեր կարծիքով, անհրաժեշտ է կշռադատված և ողջախոհ մոտեցումներ՝ մի կողմից հաշվի առնելով ժամանակի օբյեկտիվ գործընթացները (գլոբալացումը ինտեգրումը), մյուս կողմից՝ անկախ պետականության և ինքնիշխանության պահպանման անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽՅ
ԻՆՔՆԻՇԻԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՅ ԱՐՑԸ ԳԼՈՐԱԼ ԱՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

1. Գլոբալացումը որպես արդի դարաշրջանի օբյեկտիվ գործընթաց

Արդի դարաշրջանի բնութագրիչներից է միջազգային գլոբալ իզացիայի գործընթացը, որն աստիճանաբար ավելի ու ավելի ընդարձակում է իր գործունեության սահմանները տնտեսական, քաղաքական, իրավական, մշակութային և այլ ոլորտներում: Այս գործընթացն իր անխուսափելի ազդեցությունն է թողնում նաև պետական ինքնիշխանության վրա¹¹³:

Ուշագրավ են պրոֆեսոր Վ. Չորկինի եզրահանգումները, որոնք հանգում են հետևյալին¹¹⁴.

- աշխարհակարգի վեստֆալյան համակարգի վրահարձակումները և ցանցային կառավարման սկզբունքների արմատավորումը գլոբալ խնդիրների լուծման գործում:

- նոր մարտահրավերների ու վտանգների պայմաններում դրանց դեմ պայքարի համառոտ ստույգ մարդու սահմանադրական իրավունքների նկատմամբ ոտնձգությունները, այդ իրավունքների ոտնահարման «օրինականացումը» ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում:

- երրորդ սպառնալիքը կապված է «սոցիալական պետության» սահմանադրական սկզբունքի իրացման հիմնահարցի հետ:

- չորրորդ սպառնալիքը պայմանավորված է իրավական բարեփոխումների դանդաղ ընթացքի կամ դրանց բացակայության հետ, որը հատկապես վերաբերում է անցումային համակարգերին:

«Նոր հազարամյակ մարդկությունը թևակոխեց վերափոխարման անհրաժեշտությամբ և հասարակական

¹¹³ Մանրամասն տե՛ս **Лукашук И. И.** Глобализация, государство, право, XXI век. М., 2000; Глобализация, государство, право, XXI век. По материалам выступления. М., 2004:

¹¹⁴ Տե՛ս **Зорькин В.** Роль конституционного суда в обеспечении стабильности и развития Конституции //Конституционное правосудие, 2004, N2, էջ 15-28; **Зорькин В.Д.** Об угрозах конституционному строю в XXI веке и необходимости проведения правовой реформы в России // Журнал российского права. 2004, N6, էջ 3-17: Նույնի, **Право в условиях глобальных перемен.** М., 2013, էջ 133-134:

տեսութեան կանոնակարգման ու կայուն զարգացում երաշխավորելու լուրջ փնտրտուքներով, - նշում է Գ. Յարոնյանը: Շրջանառության մեջ դրված «գլոբալիզացիա», «ուսիվերսալիզմ», «միջազգային ժողովրդավարություն», «համաշխարհային համակարգ», «վերաբնակման Սահմանադրություն» և բազում այլ հասկացություններ պահանջում են ոչ միայն իմացական, այլև իրավագիտական ու քաղաքագիտական խոր իմաստավորում, ժողովրդավարական պետության հիմնական սկզբունքների հետայնպիսի բաղդատում, որպեսզի որոշակիացվեն կայուն և քաղաքակիրթ զարգացման չափանիշներ ու այդ ոլորտում միջազգային արդյունավետ գործակցության շրջանակները»¹¹⁵:

Արդի ժամանակաշրջանում գլոբալիզացիայի գործընթացն առավել շոշափելի ներգործություն ունի ինքնիշխան տերությունների, ժողովուրդների և ազգերի, ինչպես նաև յուրաքանչյուր անձի նկատմամբ: Գլոբալիզացիան դարաշրջանի տնտեսական և քաղաքական զարգացումներից բխող օբյեկտիվ գործընթաց է, որն ունի ինչպես դրական (տնտեսական, քաղաքական, իրավական ինտեգրման և ուսիվերսալացման գործընթացները), այնպես էլ բացասական (սոցիալական, արդարություն, էկոլոգիական իրավունքների և այլ ոլորտներում նշմարվող բացասական հետևանքները) կողմերը¹¹⁶:

Յետևաբար խնդիրը նրանում է, որպեսզի նշված ոլորտներում գլոբալիզացիայի գործընթացի բացասական հետևանքները հասցվեն առավել նվազագույնի միջազգային հարաբերություններում պահպանելով համերաշխություն, արդարություն, իրավահավասարություն, շրջակա միջավայրի խելամիտ օգտագործման հանրաճանաչ սկզբունքներն ու նորմերը:

Այս հանգամանքը անհանգստացրել է նաև ՄԱԿ-ին, որն ընդունել է հատուկ ծրագիր «Գլոբալիզացիան մարդկային դեմքով», որտեղ մասնավորապես նշված է. «Նոր դարաշրջանում գլոբալիզացիայի մարտահրավերը նրանում է, որ կասեցնի գլոբալ շփումների

¹¹⁵ Տե՛ս **Յարոնյան Գ.**, իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքներ, Երևան, 2003, էջ 5:

¹¹⁶ Տե՛ս **Симония Н.А.** Глобализация и неравномерность мирового развития //Мировая экономика и международные отношения. М., 2001, №3, էջ 36-37:

զարգացումը: Մարտահրավերը նրանում է, որ մշակվեն կանոններ և ինստիտուտներ տեղական, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում առավել արդյունավետ կառավարման համար, որպեսզի պահպանվի գլոբալ շուկաների առաջնայնություները և միաժամանակ ստեղծվի անհրաժեշտ տարածություն, որտեղ մարդկային, համայնքային և բնական պաշարները ծառայեն ոչ միայն շահույթ ստանալու, այլ և մարդկանց համար»¹¹⁷:

Գլոբալ իզացիայի սոցիալական ասպեկտները համաշխարհային հանձնաժողովի զեկուլյցի մեջ նշվում է, որ գլոբալ իզացիայի վնասակար հետևանքներն առաջանում են դրա ոչ օպտիմալ կառավարման պատճառով: Սակայն վերլուծելով գլոբալ իզացիայի ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքների առաջացման հիմնական պատճառները, կարող ենք պնդել, որ գլոբալ իզացիայի բացասական կողմերը ամենևին էլ նրա վատ կամ ոչ օպտիմալ կառավարման հետևանք չեն, այլ դրա իրականացման եղանակների և մեթոդների մեջ են, որոնց միջոցով ոտնահարվում են միջազգային հանրության շատ սուբյեկտների պետությունների, ժողովուրդները ինչպես նաև յուրաքանչյուր անձի իրավունքներն ու օրինական շահերը¹¹⁸: Խնդիրը նրանում է, որպեսզի այդ հսկայածավալ գործընթացները, որոնք տեղի են ունենում հիմնականով տնտեսության ոլորտում, պիտի կանոնակարգվեն և ընթանան միջազգային իրավակարգի շրջանակներում: Գլոբալ իզացիան ծնունդ է միջազգային գործունե շփումների, իսկ վերջինս, Ռ. Յորինգի դիպուկ բնորոշմամբ, պատմության բարձրագույն օրենքի է¹¹⁹: Սակայն գլոբալ իզացիայի դրական երևույթները պետությունների, ժողովուրդների և յուրաքանչյուր անհատի համար կարող են երաշխավորված լինել միայն մեկ պայմանով, եթե դրանք ձևավորվում են իրավական տարածության մեջ և հիմնվում են արդարության, հավասարության ու սոցիալական համերաշխության սկզբունքների վրա: Այսինքն, գլոբալ իզացիան առանց իրավական հենքի (ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական) առաջացնում է կամայականություն (անկախ

¹¹⁷ St 'u Globalization with a human face-Human Development Report. UNO, 1999, 1.4.

¹¹⁸ Մանրամասն տե՛ս **Кочатов Э. Г.** Глобализация: теория, методология, практика, М., 2002; **Понарин А.С.** Испытание глобализмом. М., 2002 և այլն:

¹¹⁹ St 'u **Шеринг Р.** Дух римского права на различных ступенях его развития. СПб., 1875, Ч 1, էջ 6:

հետապնդած նպատակներին) և ոտնահարում է մարդու իրավունքները:

Գլոբալացման պայմաններում, մեր կարծիքով պետական ինքնիշխանության հարցը քննարկելիս, մեթոդաբանորեն ճիշտ և տեսականորեն արդարացի կլինի, եթե ինքնիշխանությունը դիտարկենք նաև որպես ինքնավար իրավաբաղադրյալ կատեգորիա:

Լոնդոնում 1987թ. հրատարակված «Միջազգային իրավունք» մենագրության մեջ տրվում է ինքնիշխանության հետևյալ ձևակերպումը. «Գործելու ամբողջական հնարավորությամբ կամ, այլ խոսքով ամբողջական միջազգային անհատականությամբ պետություններն ինքնիշխան են: Լիարժեք իշխանության պետությունն ունի գործողություններին և արժեք ազատություն և սեփական քաղաքացիների հետ հարաբերվելիս (անձնական ինքնիշխանություն), և, սեփական տարածքի հետ կապված (տարածքային ինքնիշխանություն), օգտագործելու հանրային սեփականությունը (ջրային տարածությունները օդային տարածքը), այլ պետություններին հետ մտնելու իրավական հարաբերություններին մեջ, իր քաղաքացիների համար պահանջել հարգանք այլ պետություններում և դառնալ ունիվերսալ բնույթի բոլոր միջազգային կազմակերպությունների անդամ»¹²⁰:

Երկրորդ աշխարհամարտի ավարտից ի վեր, 1940-ական թթ. վերջերից սկզբնավորված միջպետական և ոչ կառավարական կազմակերպությունների հարաճուն դերակատարությունը միջազգային ասպարեզում մասնակի «սովերեյն» պետությունների ավանդական դերակատարությանը և, նաև որպես քաղաքացիական հասարակության կարևորագույն սուբյեկտ, նրանց հարաճուն դերակատարությունը արդեն պետություններին ներքին կյանքում և ոչ էլ վերաբերում է միջազգային իրավունքի աստիճանական զարգացման ու կոդիֆիկացման արդյունքում միջազգային համակարգից և միջազգային իրավունքի նորմերից պետություններին կախվածության մեծացմանը: Ինչպես նշում է Ի. Ի. Լոուկաշուկը, Երկրորդ աշխարհամարտից հետո արմատական փոփոխության է ենթարկվել միջազգային իրավունքի հասկացության դասական իմաստը: Չարստացվել ու ընդարձակվել է

¹²⁰ Տե՛ս **N.A. Matyan Green**, International Law, 3rd edition, PITMAN publishing, London, 1987, էջ 31:

դրա բովանդակությունը: Կատարվել է հեղափոխություն և պետությունների գիտակցության մեջ միջազգային հանրության առջև նրանց ստանձնած պարտավորությունների հետ կապված: Կոդիֆիկացման և պրոգրեսիվ զարգացման արդյունքում միջազգային իրավունքը ձեռք է բերել նոր որակ, դարձել է իրավական նորմերի բարձր կազմակերպված համակարգ: Գլոբալ փոխկախվածության նոր պայմաններում իրավունքը կոչված է փոխարինելու ուժի քաղաքականությանը որպես միջազգային հարաբերություններում պետությունների հիմնական գործիք¹²¹:

Սակայն խոսքն այստեղ վերաբերում է միանգամայն այլ բնույթի քաղաքական զարգացումների, մասնավորապես, երկբևեռ աշխարհակարգի բացակայության և պայմանավորված ուժերի գլոբալ հավասարակշռության պայմաններում «մարդու իրավունքների, ժողովրդավարական արժեքների վտանգվածության, քաղաքացիական մշակույթի բացակայության, միջազգային խաղաղությանը և միջազգային կարգին սպառնալու» հիմնավորումներով առանձին պետությունների ներքին գործերին միջամտելու այլ պետությունների և ռազմաքաղաքական դաշինքների գործողություններին, որոնք հանդիսանում են գործող միջազգային իրավունքի ի դեմս նրա մի շարք հիմնարար սկզբունքների, կոպիտ խախտման դրսևորում:

Գործող միաբևեռ աշխարհակարգի պայմաններում արեմտյան երկրների և ՆԱՏՕ-ի կողմից իրականացվող ոչ լեգիտիմ գործողություններին և քաղաքական սուբյեկտիվիզմի դրսևորումներին գիտական հիմնավորում տալու նպատակադրումով սառը պատերազմին հաջորդած շրջանում ասպարեզ իջան մի շարք հրապարակումներ, որոնք հարցադրումներ էին պարունակում նոր աշխարհակարգի պայմաններում միջազգային համակարգի և, առաջին հերթին, գործող միջազգային իրավունքի նորմերի վերանայման առումով: Օգտվելով սառը պատերազմում արևմտյան ժողովրդավարության հաղթանակով պայմանավորված աշխարհում ուժերի գլոբալ հարաբերակցության վերջինիս համար շահեկան վիճակի ընձեռած հնարավորություններից, սկսեցին հնչեցվել

¹²¹ Տե՛ս **Лукашук И. И.** Глобализация, государство, право, XXI век. Изд. Спарк, Москва, 2000 г., էջ 231-232:

քարոյական նորմերի վրա հիմնված միջազգային նոր կարգի սահմանման (moralpolitik) հնարավորության և անհրաժեշտության մասին հրապարակումներ¹²²: Ժամանակակից արևմտյան քաղաքական տեսաբան Չեյմս Գոուլն 2000թ. հանդես եկավ ինքնիշխանության մեկնաբանման հեղափոխական մոտեցմամբ կարծիք հնչեցնելով, որ «ինքնիշխանությունը միջազգայնացվել է: Ինքնիշխանության արտաքին չափումը, որն այս կամ այն չափով կայուն էր մնացել վեսթֆալյան խաղաղության և ի վեր, կատարելապես վերամեկնաբանվել է սառը պատերազմին հաջորդած տարիներին: Ավելի համառոտ քաղաքական միավորի հանդեպ գերագույն իշխանությունը այլևս խարսխված է ոչ թե ժողովրդի, այլ միջազգային կարգի հանդեպ պետության վնասակար ազդեցությունն չունենալով վրա»¹²³: Այն հանգամանքը, որ միջազգային խաղաղությանը սպառնալիք ներկայացնելու մեկնաբանության մեջ հնարավոր է միջամտել ինքնիշխան պետությունների ներքին գործերին, խախտում է ինքնիշխան պետության էական բնութագրիչներից մեկը, այն է գերագույն իշխանությունը սեփական տարածքում, և դրանով իսկ խնդիր է դնում պետության ինքնիշխանության նոր ընկալման: Սա, ըստ էության, հանդիսանում է պետության ինքնիշխանության բովանդակության արմատական փոփոխությունն ենթադրող մոտեցում, որը, սակայն, ընկած է քաղաքական ռեալիզմի դասական հասկացությունների նախահիմքում: Մասնավորապես, քաղաքական ռեալիզմի նորօրյա ներկայացուցիչ Մարկ Ամստուցը 1999թ. տպագրված հոդվածում առանձնացնում էր քաղաքական ռեալիզմի երեք կենտրոնական բնութագրիչներ սեփական շահի գերակայությունը, ընդլայնվող շահը ապահովելու ուժը (հզորությունը) և միջազգային հանրության հասկացությունը որպես «ինքնազնության համակարգ»¹²⁴: Նկատելի է, որ միջազգային հանրության «ինքնազնության համակարգ» լինելու հիմքում դրվում է միջազգային քաղաքականության մեջ ժողովուրդների և

¹²² Այդ թվում մտե՛ս **Leonard Binder** The Moral Foundation of International Intervention, Policy Paper # 22, University of California, The Institute on Global Conflict and Cooperation, February 1996:

¹²³ Տե՛ս **James Cow** A Revolution in International Affairs?, Security Dialogue, Vol. 31(3), September 2000, էջ . 296:

¹²⁴ Mark Amstutz, International Ethics, Lanham, MD: Rowman & Littlefield, 1999, էջ 439:

պետությունների կողմից սեփական շահերը առաջ մղելու և այդ թվում նաև «ինքնապաշտպանվելու» բնական իրավունքը:

Առհասարակ, զարգացնելով «ինքնիշխանության միջազգայնացման» իր գաղափարը Չեյմս Գոուլն պետության ինքնիշխանության հիմնահարցերը քննարկում է պետությունների կողմից սեփական շահերի ապահովման իրավունքի համատեքստում, որը դրսևորվում է գործող միջազգային կարգի պահպանման ձգտման մեջ որպես, առաջին հերթին, սեփական շահերի և անվտանգության ապահովման կարևորագույն միջոց: «Այդ իսկ պատճառով ինքնիշխանությունն այլևս սրբազան չէ այն չափով, ինչպիսին այն երբևէ եղել է»¹²⁵:

Ըստ այդմ, սեփական շահերի ապահովումը անմիջականորեն կապելով պետությունների «ինքնապաշտպանության իրավունքին» Չեյմս Գոուլն հղում է անում գործող միջազգային իրավունքին ի դեմս ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի, որտեղ հստակ ամրագրված է. «Սույն կանոնադրությունը ոչնչով չի խաթարում անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության անկապտելի իրավունքը Միավորված ազգերի կազմակերպության որևէ անդամի հարձակման դեպքում, քանի դեռ Անվտանգության խորհուրդը չի ձեռնարկել միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման միջոցառումներ: Անդամների կողմից իրենց ինքնապաշտպանության իրավունքն իրականացնելու մասին անմիջապես հաղորդվում է Անվտանգության խորհրդին, և դա, սույն կանոնադրության համաձայն, ոչ մի կերպ չի ազդում Անվտանգության խորհրդի հեղինակության ու լիազորության ներքին վրա ցանկացած ժամանակ ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք նա անհրաժեշտ կհամարի միջազգային խաղաղությունն և անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու համար»¹²⁶: ՄԱԿ-ի կանոնադրության սույն հոդվածի շարադրանքից պարզ երևում է, որ, սահմանելով ինքնապաշտպանության իրավունքը որպես պետությունների անկապտելի իրավունք, և ընդգծելով միջազգային խաղաղության ու

¹²⁵ Տե՛ս **Henrik Syse** Ethics, Sovereignty, and Self-Defence, A Rejoinder, International Peace research Institute, Oslo (PRIO), Norway. Security Dialogue, Vol. 31 (4), December 2000, էջ 439:

¹²⁶ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, հոդված 51, Երևան, 2003, էջ 30:

անվտանգության գլխավոր երաշխավորի ի դեմս ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, կարգավիճակը, 51-րդ հոդվածում հստակ չի սահմանվում, թե ինչ պետք է հասկանալ «հարձակում» ասելով կապված ինչ պես նրատեսակի, այնպես և չափանիշների հետ: Երկրորդ աշխարհամարտից ի վեր միջազգային իրավունքի ձեռքբերումներից մեկը պետք է համարել այն, որ գործող միջազգային իրավունքը և նրա առանցքը կազմող Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընդունված ՄԱԿ-ի կանոնադրությունը արգելում են պետությունների միջև պատերազմը: Արդեն իսկ հիշատակված սառը պատերազմի վերջին տարիներին 1987թ. Լոնդոնում հրատարակված «Միջազգային իրավունք» մենագրության մեջ ինքնիշխանության վերաբերյալ տրվող ձևակերպման մեջ նշվում է. «Նախկինում այն (ինքնիշխանությունը) ընդգրկում էր նաև պատերազմ վարելու իրավունքը. այսօր այն, ինչ մնում է, ուժի գործադրման իրավունքն է կոնկրետ հանգամանքներում, ինչպես նաև չեզոք մնալու իրավունքը միջազգային իրավունքի այլ սուբյեկտների միջև հարաբերություններում»¹²⁷: Ակներև է, որ կոնկրետ հանգամանքներում ուժի գործադրման իրավունքի հստակ չսահմանումը միջազգային իրավունքում կարող է հանգեցնել պետությունների կողմից դրաիրացման իրավունքի «չարաչափան»:

Ելնելով այն իրողությունից, որ ներկայիս աշխարհում պետությունները վտանգվում են ոչ միայն արտաքին ագրեսիայի դեպքում, այլև այլ դեպքերում Ջեյմս Գոուն առաջարկում է ընդլայնել պետության կողմից ինքնապաշտպանության իրավունքի շրջանակները: Միջազգային կարգին և աշխարհում խաղաղությանն սպառնացող վտանգը վերացական հասկացությունն է և տարբեր պետությունների կողմից կարող է մեկնվել որպես իրենց կենսական շահերի դեմ սպառնալիք և հիմք դառնալ «իր հանդեպ սպառնալիքի չեզոքացմանը» միտված ձեռնարկումների համար: Սակայն այստեղ միջազգային քաղաքականության տեսանկյունից առաջ են գալիս մի շարք սկզբունքային հարցադրումներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները, ո՞վ կարող է պետությանը մեղադրել միջազգային կարգին սպառնալիք ներկայացնելու մեջ, և

¹²⁷ Տե՛ս **N.A. Maryan Green**, նշվ. աշխ. էջ. 31:

արդյո՞ք նման սպառնալիքի իրական առկայության պայմաններում որևէ կոնկրետ պետության կամ ռազմաքաղաքական դաշինք իրավասու է ինքնուրույն ռազմական գործողության ներժառայել առանց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշման, որտե՞ղ է սկսվում պետության ինքնապաշտպանության առաջին օղակը, կամ, այլ կերպ՝ միջազգային զարգացումների ո՞ր մակարդակամ տվյալ պետությունը կարող է վկայակոչել իր ինքնապաշտպանության իրավունքի իրացման լեգիտիմությանը, արդյոք, առանց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշման, ինքնապաշտպանական նպատակներով ռազմական գործողության ներքին ձեռնարկումը չի տանի համաշխարհային քաղաքական անարխիայի, երբ կյանքի կկոչվեն նախապետական ժամանակաշրջանի Յոթսյան ընկալումները, և ուժեղ պետությունները ինքնապաշտպանության իրավունքը կիրացնեն սեփական շահերը հետապնդելու համար, որքանո՞վ է իրատեսական նման իրավունքի ամրագրումը միջազգային իրավունքում կամ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդից զատ, այլ կառույցների կամ պետությունների «միջազգային կարգի ապահովողի» կամ, մեր գնահատմամբ, «միջազգային ժանդարմի» կարգավիճակի շնորհումը, համաշխարհայնացում ապրող աշխարհում, որտեղ իրենից միանգամայն հեռու իրականացվող գործողության ներքին միջնախնայի սկստիրապետող քաղաքական կարգը և քաղաքական արժեքները այս կամ այն չափով չեն կարող չվնասել որևէ կոնկրետ պետության շահերը, որքանո՞վ է վերջինս իրավասու գործողության ներքին ձեռնարկել, եթե ընդունենք, որ պատերազմական օրենքներով ինքնապաշտպանությունն այլևս չի սկսվում դասական սցենարով, այն է՝ տվյալ պետության տարածք արտաքին ագրեսիայով:

Այնքանով, որքանով այս հարցադրումները շոշափում են տվյալ պետության քաղաքական կարգավիճակի ի դեմս նրա ինքնիշխանության ոտնահարման, խնդիրը, նրանք առնչվում են իր «ինքնապաշտպանության» իրավունքն իրացնող պետության կամ ռազմաքաղաքական դաշինքի քաղաքական կարգավիճակին ձեռնարկել միակողմանի գործողության ներքին: Այստեղ հարցերի հարց է դառնում քաղաքական լեգիտիմության խնդիրը:

Առհասարակ, սկսած 1940-ական թթ. երկրորդ կեսից, միջազգային իրավունքի հետագա զարգացումն արտաբուստ պետությունների ինքնիշխանության աստիճանական փոքրացման տպավորությունն է ստեղծում, սակայն իրականում միջազգային իրավունքի համընդհանուր նորմերի ընդունումը պետությունների փոխկախվածության մեծացման վկայությունն է, ինչը բնապատմական գործընթաց է, և այս պարագայում ՄԱԿ-ի առանցքային դերակատարությամբ գործող միջազգային իրավունքը հավասարապես հղում է անում բոլոր պետություններին: «Իրար հակառակ երկու դիրքորոշումները հետևյալներն են: Ոմանք կարծում են, որ միջազգային իրավունքը պարզապես լեգալ իստական փաստարկների հավաքածու է հիմնավորելու պետությունների գործողությունները, որի նկատմամբ այն անհրաժեշտ է համարում խուսանալել: Մյուսները, ընդհակառակը, գտնում են, որ այդ իրավունքը խաղում է կամ պետք է խաղաորոշիչ դերակատարությունն պետությունների վարքի մեջ. դա ազգերի փոխհարաբերությունների միակ լեզուն է, իսկ նրանց միջև պայմանագրերը համաշխարհային փոխազդեցությունների կարգավորման հիմնական գործիքը»¹²⁸:

Միջազգային իրավունքի զարգացման և հետագա կոդիֆիկացման ընթացքը, բնականաբար, մասամբ «ստվերել» և «ստվերելու» է պետությունների ինքնուրույն դերակատարությունը: Յեռնակարային առումով նույն ՄԱԿ-ի լեգիտիմաթյան բարձրացման առումով թերևս կարելի է փոփոխել Անվտանգության խորհրդի մշտական անդամների կազմը այն դարձնելով ավելի ներդաշնակ ներկայիս աշխարհում ուժերի իրական հավասարակշռությանը, սակայն պետության ինքնիշխանությանը ժամանակակից մարտահրավերը հանդիսանում է ոչ թե ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ, այլ սեփական նախաձեռնությամբ այլ պետությունների ինքնիշխանության դեմ ոտնձգության դրսևորումը, որի փայլուն վկայությունն են 1990-ական թթ. մինչ այսօր Իրանում, Բոսնիա-Յերցեգովինայում, Կոսովոյում, Աֆղանստանում և երկրագնդի այլ հատվածներում սանձազերծված պատերազմները, երբ առանձին դեպքում փորձ արվեց հետին թվով

¹²⁸ Ст'ю Современные международные отношения и мировая политика, отв. ред. А. В. Торкунов, Москва: «Просвещение», 2004, стр. 164:

լեզվի տիմացնել կատարված գործողությունները հետին թվով ստանալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումը:

3.2. Միջազգային իրավունքը, վերաբնակամությունը և պետական ինքնիշխանությունը

Ինքնիշխանությունը ենթադրում է ինչպես պետության լիիշխանությունն իր տարածքում (ինչը կազմում է ներքին ինքնիշխանության մի մասը, կամ ինքնիշխանությունն է պետաիրավական իմաստով), այնպես էլ որևէ այլ պետությունն իր անկախությունը ինչպես արտաքին (արտաքին ինքնիշխանություն), այնպես էլ ներքին գործերում (ներքին ինքնիշխանության մի մասը): Անկախությունը ինքնիշխանությունն է միջազգային-իրավական իմաստով:

Այսպիսով միջազգային-իրավական իմաստով ինքնիշխանությունը շատ ավելի լայն հասկացություն է, քան արտաքին ինքնիշխանությունը:

Պետաիրավական ինքնիշխանության և միջազգային-իրավական ինքնիշխանության միջև եղած տարբերությունը միևնույն առարկայի վերաբերյալ տեսակետների տարբերությունն է: Քանի որ միջազգային իրավունքին հետաքրքրում են միայն պետությունների միջև առկա հարաբերությունները, ապա նա իր համար հնարավոր է համարում վերացարկվել ոչ միայն պետաիրավական հարաբերություններից, մասնավորապես պետության ինքնիշխանության իրավաբանական արտահայտման ձևից, այլև այն հարցից, թե որ դասակարգը կամ դասակարգերն են քաղաքական ինքնիշխանության կրողները: Ի դեպ, այդ վերացարկումը լրիվ վերացարկում չէ: Միջազգային իրավունքն ակամա բախվում է նման պրոբլեմների հետ, երբ հեղափոխությունը հարցականի տակ է դնում պետության բուն նույնականությունը, ուստի և միջազգային պարտավորությունների ուժը միայնապիսի պետության համար, որում հեղափոխության հետևանքով տեղի են ունեցել մի դասակարգի տիրապետության տապալում ու մեկ այլ դասակարգի տիրապետության հաստատում է իրավաբանական ինքնիշխանության ձևի արմատական փոփոխություն:

Մեր տեսակետից քաղաքական ինքնիշխանության կրողի փոփոխության հետևանքով ստեղծվում է մի նոր պետություն այլ պատմական տիպի պետություն:

Իսմենը պնդում է, թե պետությունն ունի իրավաբանական հավերժություն, անփոփոխ է պետության ձևի ցանկացած փոփոխման դեպքում, նրա այս տեսակետի հիմքում դրված է այն, որ Էսմենը չի հասկանում կամ անտեսում է ինքիշխանության ու պետության դասակարգային էությունը: Չեչենը համարում է, թե պետության նույնականությունը խախտվում է միայն այն դեպքում, երբ վերանում է ազգը: Սակայն Իսմենը բացահայտում է իր դրույթի գլխավոր շարժառիթը, երբ դրանից այն հետևությունն է անում, թե «պետության անունից կնքված բոլոր դրամական պարտավորությունները պահպանում են իրենց ուժը անգամ այն դեպքում, երբ վերացած է լինում այն պետական կարգը, որի ժամանակ դրանք կնքվել էին»¹²⁹: Այստեղ ակներևաբար դրսևորվում են այն ռանտյենների շահերը, որոնք իրենց կապիտալը ներդրել են հեղափոխությամբ հղի պետությունների արտասահմանյան փոխառությունների մեջ:

Սակայն ժխտելով այդ պետությունների նույնությունը այնուամենայնիվ պետք է նկատի ունենալ, որ նոր պետությունը գտնվում է հին պետության հետ այնքան սերտ ժառանգորդական կապերի մեջ, որ կարող է իրավաբանորեն դիտվել որպես հին պետության որոշ իմաստով իրավահաջորդը, որպես նրա անմիջական շարունակությունը:

Սոցիալական հեղափոխությունը տեղի է ունենում որպես պետություն կազմակերպված հասարակության ներսում և որոշակի տարածքում: Սոցիալական հեղափոխության ներգործության հետևանքով փոխվում է պետության միջազգային իրավունքի տեսակետից նշանակալից երեք «տարրերից» իշխանությունն, բնակչությունն, տարածք, միայն մեկը իշխանությունն, որը ձեռք է բերում նոր դասակարգային բովանդակություն ու նոր ձևեր: Ինչ վերաբերում է երկրորդ տարրին բնակչությանը, ապա սոցիալական հեղափոխությունը, նրա դասակարգային կառուցվածքում

¹²⁹ Տե՛ս **Эсмен Н.** Основные начала государственного права. М., 1989. Էջ 4:

կատարելով Էական փոփոխություններ, ընդհուպ մինչև որոշ հին դասակարգերի լիովին վերացումը, այդուհանդերձ անմիջականորեն չի փոխում բնակչության մարդկային կազմն ու նրա ազգությունը: Իհարկե, պետության Է՛լ ավելի կայուն տարրն է նրա տարածքը: Սոցիալական հեղափոխության հետևանքով ստեղծված նոր պետությունում հին պետության մարդկային ու տարածքային տարրերի պահպանմամբ է հենց պայմանավորվում այդ պետությունների միջև որոշակի ժառանգորդական կապի գոյությունը: Այդ է պատճառը, որ հին պետության այն գործողությունները, որոնք կրում են ազգային բնույթ, օրինակ ազգատարածքային միասնության իրականացումը, իրենց ուժը պահպանում են նաև նոր պետության համար:

Պետության նույնության հարց ծագում է նաև պետական տարածքի փոփոխման ժամանակ: Թեև տարածքի որպես հանրային-իրային իրավունքի օբյեկտի տեսությունը առայժմ առկա է միջազգային իրավունքի մի շարք նորմերում, այդուհանդերձ հանրաճանաչություն է վայելում այն գաղափարը, որ պետության տարածքի փոփոխությունը պետության բուն անձի փոփոխում է: Եթե այդ փոփոխությունները չնչին են, պետության մյուս տարրերի անփոփոխության դեպքում (իհարկե, բնակչության այն փոփոխման հաշվառմամբ, որն անմիջականորեն հետևում է տարածքի փոփոխման) կարելի է խոսել միևնույն պետության տարածքային փոփոխությունների մասին: Չարցն ավելի է բարդանում, երբ տարածքային փոփոխության հետևանքով պետության տարածքն ու բնակչությունը կրկնապատկվում կամ եռապատկվում են (ինչպես, օրինակ, առաջին աշխարհամարտից հետո կատարվեց Ռուսիայի կամ Չարավսլավիայի հետ), կամ հակառակը, երկու, երեք կամ ավելի անգամ կրճատվում են (ինչպես, օրինակ, առաջին համաշխարհային պատերզմից հետո տեղի ունեցավ Ավստրիայի և Չոլենգարիայի կամ ներկայումս ԽՍՀՄ և Չարավսլավիայի փլուզման դեպքում): Տարածքի նման փոփոխումը, ինքնին չփոխելով ինքնշխանության կրողի դասակարգային էությունը, նշանակում է նրա մարդկային կազմի, իսկ երբեմն նաև պետության էթնիկական բնույթի ու կոնկրետ շահերի Էական փոփոխություն և դրանով իսկ կարող է ձեռք բերել

որոշակի նշանակություն են նաև ինքնիշխանության պրոբլեմի համար:

Քանի որ ինքնիշխանության կրողի դասակարգային բնույթը չի փոխվել, էապես չէին կարող փոխվել նրա արմատական շահերը երկրի ներսում: Այդ պատճառով նոր կազմ ունեցող պետությունում շարունակում է գործել հին իրավունքը, կարող է, պահպանվել նաև նախկին պետական կարգը: Նոր կազմ ունեցող պետությունն ըստ էության չի կարող հրաժարվել նաև այն ֆինանսական պարտավորություններից (կամ այդ պարտավորությունների մի մասից, եթե խոսքը վերաբերում է մի պետության, որի տարածքն ու բնակչությունը էապես կրճատվել են) և կարող է չհրաժարվել նաև այլ պետությունների նկատմամբ ունեցած ֆինանսական պահանջներից, քանի որ ինքը ժառանգել է նախկին պետության կողմից ստացված այն նյութական օգուտները, որոնցից ծագել են տվյալ պարտավորությունները, և իրավունք ունի գանձելու նրա պարտքերը: Սակայն այլ է գործը, երբ խոսքը վերաբերում է գուտ քաղաքական, ռազմական ու տնտեսական պարտավորություններին: Պետության կազմի փոփոխությունը կարող է արմատապես փոխել և՛ նրա արտաքին քաղաքական կապերն ու շահերը, և՛ ռազմական հնարավորությունները այնպես, ինչպես նրա տնտեսական շահերն ու հնարավորությունները: Հին դաշինքները կարող են կորցնել իրենց իմաստը, իսկ պարտավորությունները կարող են դառնալ անկատարելի: Ուստի և նոր կազմով պետությունը չի կարելի համարել կապված իր նախորդի քաղաքական, ռազմական կամ տնտեսական պարտավորություններով: Պարտավոր է արդյոք այն պետությունը, որը ձեռք է բերել մեկ այլ պետության տարածքի մի մասը, իր վրա վերցնել նաև նրա ֆինանսական պարտավորությունների մի մասը: Մեզ թվում է, որ դա չի կարելի համարել ընդհանուր կանոն: Եթե տվյալ պետությանն անցել է մի մարզ, որը նախկին պետության սահմաններում ենթարկվում էր ազգային ճնշման և գործնականում անմասն էր եղել նախկին պետության ինքնիշխանությանը, ապա չկա որևէ իրավաբանական հիմք, որ այդ մարզը, ինչպես նաև այն պետությունը, որի կազմում նա ներառվել է, համարվեն նախկին պետության պարտավորություններով կապված: Մենք համարում ենք, որ այս

հարցը, լինելով քաղաքական հարց, պետք է յուրաքանչյուր առանձին դեպքում իր լուծումը ստանա ըստ կոնկրետ պարտավորությունների, շահագրգիռ կողմերի միջև համաձայնությամբ: Այստեղ չի կարող լինել որևէ ընդհանուր կանոն: Քաղաքական տարբերակների բազմազանությունը թույլ չի տալիս, որ բոլոր հնարավոր դեպքերի համար մշակվի որևէ բացարձակ ու միասնական իրավաբանական նորմ: Որպեսզի լուսաբանենք այն հանգամանքը, որ դրական միջազգային իրավունքն ստիպված է լինում հաշվի առնել նաև իրավաբանորեն անորսալի պարագաները, բերենք այն փաստը, որ Սեն-ժերմենի պայմանագիրը, որով Ավստրո-Յունգարիայի ֆինանսական պարտավորությունները դրվել էին նրա բոլոր ժառանգ-պետությունների վրա, նրանց բոլորին բացի իսկ Ավստրիայից, ազատեց ռազմական փոխառության վերաբերյալ պարտավորություններից դրանով իսկ ընդունելով, որ Ավստրո-Յունգարիայի սլավոնական ու մյուս բոլոր ոչ գերմանական ազգերը չեն կարող պատասխանատվություն կրել պատերազմի համար, թեև իրավաբանական ինքնիշխանությանը ձևական մասնակցության տեսակետից շատ դժվար կլիներ որևէ տարբերություն նկատել գերմանացիների, չեխերի, լեհերի և այլ ազգերի միջև: Պետք եղավ, սակայն, հաշվի առնել հենց գերմանական տարրի փաստացի տիրապետությունը:

Այս թռուցիկ օրինակները ցույց են տալիս, որ միջազգային իրավունքը չի կարող լիովին վերացարկվել պետության մեջ ինքնիշխանության կրողի հարցից:

Ինքնիշխանության պրոբլեմի հետ կապված հարցերի համալիրից առավել դժվար հարցերից է այն, թե ինչպես է ինքնիշխանությունը հարաբերվում միջազգային իրավունքին: Համատեղելի է արդյոք ինքնիշխանությունը միջազգային իրավունքի որպես պետությունից վեր կանգնած իրավունքի հետ: Կարո՞ղ է արդյոք լինել այնպիսի իրավունք, որն ինքնիշխան պետության համար լիներ պարտավորեցնող: Կարո՞ղ է արդյոք ինքնիշխան համարվել մի պետություն, որը կաշկանդված է իրենից վեր կանգնած իրավակարգով: Այս թեմայով կահարուստ գրականություն, որում կարելի է գտնել այստեղ նշված հարցերին տրվող ամենատարբեր

պատասխանները: Որոշ բուրժուական իրավաբաններ (Ֆերդրոս, Քելզեն, Սել), ընդունելով միջազգային իրավունքի անառարկելի նշանակությունը, հանգում են ինքնիշխանության որպես մի «հնացած» հասկացության ժխտմանը: Ընդամին նրանք առաջարկում են ինքնիշխանությունը փոխարինել պետության ներքին իրավասության հասկացությամբ, մի իրավասություն, որը սահմանափակվում է միջազգային իրավունքի կողմից:

Այսպես Քելզենն իր վերջին աշխատություններից մեկում պնդում է, թե «միջազգային-իրավական իմաստով ինքնիշխանությունը նշանակում է պետության իրավական իշխանություն կամ իրավասություն, որը սահմանափակված է կամ կարող է սահմանափակված լինել միայն միջազգային իրավունքով»¹³⁰:

Այս հարցում վիեննական դաբոնցին սերտորեն մերժելով է Գուրվիչի «սոցիալական իրավունքի» տեսությունը, որը միջազգային իրավունքը դիտում է որպես մի հատուկ ձևի գուտ սոցիալական իրավունք, որը ամբողջ միջազգային հանրությունը ինտեգրում է վերածելով իրավաբանական հանրության, և լիովին որոշում է այդ հանրության անդամ պետությունների իրավասությունը¹³¹:

Ըստ Սելի «ինքնիշխանության գաղափարն իսկ անհամատեղելի է իրավական միջսոցիալական համակարգի գաղափարի հետ... Ցանկացած իրավակարգ իրավասություն ունի միայն այն բնագավառներում, որոնք չեն կարող դիպչել ամբողջի համերաշխությանը երբեք երաշխիք չունենալով, որ այդ բնագավառները կմնան անձեռնմխելի»¹³²: Ըստ Սելի «լինել պետական ինքնիշխանության հասկացության կողմնակից նշանակում է ժխտել միջազգային իրավունքը»: Այս ցանկին կարելի է ավելացնել անգլիացի միջազգայնագետ Բրայեռլիի, ֆրանսիացի Սորելլեի և շատ ուրիշների անուններ:

Որոշ հեղինակներ (Լասոն, Յոռն), ինքնիշխանությունն ու միջազգային իրավունքը հայտարարելով միմյանց բացառող

¹³⁰ Տե՛ս **Kelsen H.** Peace throught Law. princeton, 1941:

¹³¹ Տե՛ս **Gurvitch A.** Le Temps present et l'idee du droit social. Paris, 1932:

¹³² Տե՛ս **Scelle J.** Precis du droir de gens. 1934. Liv. II Էջ . 11, 6:

կատեգորիաներ, հասնում են միջազգային իրավունքի բացահայտ ժխտմանը լավագույն դեպքում հնարավոր համարելով միայն միջազգային բարոյականության, կամ «արտաքին պետական իրավունքի», գոյությունը:

Միջազգային իրավունքի որպես բարոյականության տեսակետին էին նաև Օստիերը, Շերշենևիչը և ուրիշներ:

Ըստ էության այդ նույն տեսակետին է նաև Ուիլոուբին, որի կարծիքով ինքնիշխան պետությունները կարող են «այնպիսի համաձայնությունների մեջ մտնել, որոնցով ստեղծվում են ոչ թե իրավաբանական, այլ քաղաքական կամ բարոյական պարտավորություններ»: Հիշեցնենք, որ սկզբում Քելզերը այդ երկու տեսակետն էլ համարում էր հավասարապես օրինական և, հետևաբար, հավասարապես պայմանական: Սակայն հետագայում նա վճռականորեն ընդունեց միջազգային իրավակարգի ճանաչման տեսակետը:

Մենք դեռ կվերադառնանք այդ ամբողջ պրոբլեմի կոնկրետ քննարկմանը, երբ ուսումնասիրելու լինենք միջազգային անվտանգության կազմակերպման հարցը: Այստեղ բավարարվենք լոկ ընդհանուր բնույթի դատողություններով:

Իրական կյանքում ինքնիշխան պետությունը հանդես է գալիս ոչ թե որպես մեկուսի պետություն, այլ որպես միջազգային հարաբերությունների մասնակից: Միջազգային իրավունքն ու ինքնիշխանությունը ոչ միայն համատեղելի են, այլ և իրենցից ներկայացնում են տրամաբանորեն անհրաժեշտ շտկում, ենթադրում են միմյանց:

Իրոք, ինքնիշխանությունը անկախությունն է այլ պետություններից: Հետևաբար այն ենթադրում է այդ պետությունների գոյությունը և դրանց միջև որոշակի հարաբերությունների առկայություն: Այնտեղ, որտեղ կան հարաբերություններ, պետք է գոյություն ունենա այդ հարաբերությունների սկզբունքը: Դիցուք, յուրաքանչյուր պետություն իր հայեցողությամբ է հաստատում այլ պետությունների հետ իր հարաբերությունների կարգն ու բովանդակությունը հաշվի չնստելով ոչ մի նորմի հետ, անտեսելով

մյուս պետության ներքին շահերը: Բայց դակնշանակի, որ վերանում է ոչ միայն միջազգային իրավունքը, այլև ինքնիշխանությունը, որովհետև պետության ինքնիշխանությունը լիովին կախված կլինի ուրիշ ավելի ուժեղ, պետության հայեցողությունից, ընդամին վերջինս իրեն չի համարում կաշկանդված իրավունքի որևէ նորմով, բացի այն նորմերից, որոնք ինքն է սահմանել: Միջազգային իրավունքի ու պետության ներքին ինքնիշխանության նկատմամբ բռնությունը գուցակցող \$աշխատական պետության պրակտիկան այս առումով բավականին համոզիչ է:

Մյուս կողմից եթե ընդունենք, թե պետության ամբողջ արտաքին վարքը պարտադրաբար որոշվում է ինչ-որ գերակա նորմերով, ապա դակնշանակի, որ վերանում են և՛ ինքնիշխանությունը, և՛ միջազգային իրավունքը որպես մի իրավունք, որը կարգավորում է անկախսուբյեկտների միջև հարաբերությունները:

Ինքնիշխանության և միջազգային իրավունքի ձևակատարամասնական հակադրումը չի կարող ի հայտ բերել նրանց իրական, դիպեկտիկական հարաբերակցությունը: Որոշ իմաստով միջազգային իրավունքը ինքնիշխանության ժխտում է: Սակայն դա դիպեկտիկական ժխտում է, որը ոչ թե վերացնում է ինքնիշխանությունը, այլ դառնում է ինքնիշխանության ու միջազգային իրավունքի միասնության հիմք:

Միջազգային իրավունքը ոչ թե ինքնիշխանության ձևակատարամասնական ժխտումն, այլ նրա համափոխանացումը, նրա վերածումը անկախ պետությունների միջև հարաբերությունները կարգավորող ընդհանուր (թեև ոչ միակ) սկզբունքի: Ինքնիշխանության սկզբունքը ոչ թե միջազգային իրավունքի ժխտումն է, այլ այդ իրավունքի որպես միջազգային իրավունքի, ի տարբերություն ազգայինից, բնույթի յուրօրինակության բացահայտումն է:

Ինքնիշխանության և միջազգային իրավունքի հասկացությունների ու հարաբերությունների հիմքում մենք պետք է առաջին հերթին ենթադրենք կայուն ու մշտական դասակարգային շահը:

Պետությունը, հետևաբար և նրա ինքնիշխանությունը ոչ թե

ինքնանպատակ են, այլ որոշակի համամարդկային և դասակարգային նպատակների իրականացման միջոց: Պետությունն իր նախանշանակումը կատարում է իր ներքին ու արտաքին գործառնությունների իրականացման ճանապարհով: Արտաքին գործառնությունների տեսակետից միջազգային իրավունքը այն նվազագույն անվտանգությունն է, առանց որի պետությունը չի կարող գոյատևել: Պետության ռազմական գործառնությունների իրականացումը, մասնավորապես իշխող դասակարգի դիրքերի պաշտպանությունը դրսից կատարվող հարձակումներից, ենթադրում է անկախ պետությունների համակարգում սեփական անկախության հաստատում, բայց դա նշանակում է նաև մյուս պետությունների անկախության և ինքնիշխանության ճանաչում, այսինքն միջազգային իրավունքի ճանաչում:

Այսպիսով դասակարգային տիրապետության շահերը, որոնք մարմնավորում է պետությունը, պահանջում են ինքնիշխանության հաստատման հետ մեկտեղ և դրա հետ սերտորեն կապված նաև միջազգային իրավունքի որպես ինքնիշխանության հաստատման անհրաժեշտ միջոցներից մեկի ճանաչում: Միջազգային իրավունքի բուն ձևավորումը պատմականորեն կապված էր «քրիստոնեական աշխարհի միասնության» վերաբերյալ պատկերացումներից հրաժարման հետ, որը կատարվեց զարգացող կապիտալիստական հարաբերությունների հիմքի վրա ինքնիշխան ազգային պետությունների առաջացման հետևանքով:

Այլ բան ենթադրելը կնշանակեր որպես մեկնակետ ընդունել ինքնիշխանության բացարձակ անսահմանափակության մասին ոչ գիտական, անհիմն պատկերացումը: Հենց նման պատկերացումից էլ միանգամայն տրամաբանական ճանապարհով բխեցվել էր այն եզրակացությունը, որ ըստ էության ինքնիշխան կարող է համարվել միայն մեկ պետություն, քանի որ մեկ այլ պետության ինքնիշխանությունը իր իսկ գոյության փաստով կնշանակի առաջին պետության ինքնիշխանության սահմանափակում: Եվ գուր չէ, որ նեոֆրիզական Հ.Նելսոնը հանգում է այն եզրակացությանը, թե «մի պետության ինքնիշխանությունը անմիջականորեն բացառում է

մյուս բոլոր պետությունների ինքնիշխանությունը»¹³³: Բայց դա ըստ էության անսահմանափակ բացարձակ ինքնիշխանության, այսինքն միջազգային իրավունքով չկաշկանդված ինքնիշխանության, տեսության հանգեցում է անհեթեթության, նման ինքնիշխանության անհնարինության ապացուցում:

Սակայն ինքնիշխանության ու միջազգային իրավունքի վերաբերյալ վերը ասվածից չի կարելի անել այն եզրակացությունը, թե միջազգային իրավունք ստեղծում է առանձին պետությունը ելնելով իր սեփական շահերից: Դա կնշանակեր միջազգային իրավունքի հանգեցում արտաքին պետական իրավունքի: Ինչպես հայտնի է, հենց այդպիսի տեսություններն էին դեռ շատ վաղուցվանից լայն տարածում ստացել Գերմանիայում: Արդեն վաղուց Տոռնը պնդում էր, թե «միջազգային իրավունքը իրավաբանական իմաստով իրավունք է միայն այն դեպքում և այնքանով, որքանով այն պետական իրավունք է», թե ինքնիշխանությունն ու միջազգային իրավունքը միմյանց բացառող հասկացություններ են: Նույնն է պնդում նաև հեգելական Լասոնի հին հայեցակարգը, ըստ որի «պետությունը որպես որոշակի ժողովրդի իրավակարգ, պետք է լիովին անկախ լինի իրենից դուրս եղած ցանկացած կամքից կամ օրենքից... Այն (այսինքն պետությունն կոչված բարոյական անձը) բացարձակապես կաշկանդված չէ այն ամենով, ինչն իրենից դուրս է»¹³⁴: Յետագայում այդ տեսությունները դարձան «արտաքին պետական իրավունքի» տեսությունը պատրաստակամորեն ընդունած հիտլերյան Գերմանիայի միջազգային հանցագործությունների «հիմնավորում»¹³⁵:

Տվյալ տեսությունները տանում են դեպի Յոբսն ու նրա ժամանակակիցները, որոնք պնդում էին, թե պետությունների միջև հարաբերություններում պահպանվել է բնական վիճակը և տիրում են բնական իրավունքի որպես ամեն ինչի նկատմամբ յուրաքանչյուրի իրավունքի սկզբունքները: Դրան էր համապատասխանում նաև այն հայեցակարգը, ըստ որի

¹³³ Տե՛ս **Nelson H.** Die Rechtswissenschaft ohne Recht. Leipzig. 1917. Էջ 60:

¹³⁴ Տե՛ս **Kelsen H.** das Problem der Souveranitat. Էջ. 196:

¹³⁵ Տե՛ս **Schecher K.** Deutsches Aussenstaatsrecht. Berlin, 1933, Էջ 41-42:

ինքնիշխանությունը պետության դեպի դուրս ընդարձակվելու անսահմանափակ կարողությունն է, որը համապատասխան է միայն տվյալ պետության ուժին: Սակայն նման տեսության հեղինակները ցուցաբերում էին բացահայտ անհետևողականություն ընդունելով, որ «բուլղոբին ընդդեմ բուլղոբի այդ պատերազմը» վերջիվերջո հանգեցնում է անհատի բնական իրավունքի վերացմանը, սակայն նույնափսի եզրակացության չգալով պետության վերաբերյալ:

17-րդ դարում նման տեսությունները որոշ չափով արտացոլում էին պետությունների փոխհարաբերությունները բացարձակապետության դարաշրջանում: Սակայն այդ ժամանակ արդեն միջազգային հաղորդակցման շահերը առաջ էին քաշում նոր պահանջներ, որոնք այդ նույն դարաշրջանում իրենց արտահայտությունն ստացան միջազգային իրավունքի հիմունքների զարգացման ձեռով:

19-րդ և 20-րդ դարերում միջազգային, և առաջին հերթին տնտեսական, հարաբերությունների անհամեմատ ավելի ինտենսիվ զարգացումը պայմանավորվեց այդ ժամանակաշրջանում միջազգային իրավունքի լայն զարգացումը:

Միջազգային իրավունքն ու բարոյականությունը բխում են և չեն կարող չբխել միջազգային հաղորդակցության փաստից, որի ժամանակ առանձին պետության ինքնիշխանությունը վերափոխվում է յուրաքանչյուր անկախ պետության ու բուլղոբ անկախ պետությունների ինքնիշխանության դրանով իսկ ոչ թե վերացնելով, այլ միօրինակացնելով ինքնիշխանության սկզբունքը:

Այսպիսով ինքնիշխան պետականությունը, մի կողմից, և միջազգային իրավունքը մյուս, թեև թե՛ հարաբերակցված, թե՛ փոխկապված են իրար, այդուհանդերձ ո՛չ իրավաբանորեն, ո՛չ փաստացի կերպով միաբերելի չեն: Այդ անարտածելիության վճռորոշ ստուգումը «experimentum crucis»-ը, մի կողմից, նոր ինքնիշխան պետության ճանաչումն է նրա երկու առումներով միջազգային-իրավական ճանաչումն է, մյուս կողմից միջազգային իրավունքի ճանաչումն է նոր ինքնիշխան պետության կողմից:

Կախված են արդյոք նոր անկախ պետության ինքնիշխան

իրավունքները նրա որպես պետության միջազգային ճանաչումից: Միջազգային-իրավական ճանաչումը շատ էական նշանակություն ունի պետության կողմից արտաքին ինքնիշխանության իր իրավունքներն իրացնելու հնարավորության տեսակետից, սակայն միջազգային իրավունքը չի կարող այդ ճանաչումն օժտել ոչնչից պետություն կամ ինքնիշխանություն ստեղծելու մոգական ուժով:

Առաջին հերթին ընդունվում է, որ պետականությունն ու պետության ինքնիշխանությունը կախված չեն այլ պետությունների կողմից դրանց ճանաչումից: «Կասկածից վեր է, որ բուն պետականությունը կախված չէ ճանաչումից», հայտարարում է Օպենհայմը: Չճանաչումը չի կարող հիմք լինել պետության տարածքային տիրապետության խախտման, ռազմական ներխուժման և նման այլ ձեռնարկումների համար:

Այնուհետև, միջազգային իրավունքի տեսակետից ճանաչումը չի կարող լինել այս կամ այն պետության կամայականության արդյունք: Պետությունը պետք է ճանաչված լինի, եթե բավարարում է միջազգային իրավունքով ձևակերպված որոշակի պայմանների: Նման դեպքում մյուս պետությունները չեն կարող հրաժարվել ճանաչումից չխախտելով միջազգային իրավունքը: Այդ պայմաններն ըստ էության հանգում են տվյալ տարածքում պետական իշխանության արդյունավետությանը: Սովորական լեզվով ասած դա նշանակում է, որ միջազգային իրավունքը ճանաչում է պետությունը, եթե այն իրոք որ գոյություն ունի: Կելզենականների ձևապաշտական տրամաբանության համաձայն միջազգային-իրավական ճանաչումը նշանակում է, որ միջազգային իրավունքը որոշակի լիազորություններ է փոխանցում պետական իրավակարգին որպես միջազգային իրավունքի ածանցյալի, և որ ճանաչող պետություններին վերագրվում է միջազգային իրավակարգի մարմինների դեր: Բայց եթե իրերի իրական դրվածքը չնենգափոխվի վերացական իրավաբանական ձևի, ապա չի կարելի չհանգել այն եզրակացության, որ խոսքը վերաբերում է ոչ թե որոշակի փաստի, այն է պետության գոյության, ստեղծմանը, այլ որոշ իմաստով միջազգային իրավունքին պարտադրվող փաստի ճանաչմանն ու նրա օրինականացման կողմից:

Մյուս կողմից կարող է արդյոք նորաստեղծ պետությունը հայտարարել, թե ինքը չի ճանաչում պետությունների միջև հարաբերությունների միջազգային-իրավական կարգավորման սկզբունքը:

Ինքնիշխանության սկզբունքը միջազգային իրավունքի սկզբունք է, սակայն այն նաև պետական իրավունքի սկզբունք է, իսկ պետական իրավունքը ո՛չ կարող է միաբերվել միջազգային իրավունքի, ո՛չ էլ արտածված լինել նրանից, և հակառակը: Նրանք, ովքեր փորձում են ինքնիշխանությունը հանգեցնել միմիայն միջազգային իրավունքին, անխուսափելիորեն գալիս են ինքնիշխանության վերացմանը կամ նրա վերածմանը պետության ներքին իրավասության, որը լիովին սահմանված է լինում միջազգային իրավունքով: Նրանք, ովքեր փորձում են ինքնիշխանությունը հանգեցնել միմիայն պետական իրավունքին, գալիս են միջազգային իրավունքի վերացմանը, նրա վերածմանը միջազգային բարոյականության կամ արտաքին պետական իրավունքի: Երկու տեսակետներն էլ հիմնված են դիպլոմատիկական փոխկապվածության մեջ գտնվող բարդ կոնկրետ սոցիալական իրականության անտեսման վրա:

Ինքնիշխանության սկզբունքի ռեալությունն ու կենսականությունը պայմանավորված են ոչ թե սուբյեկտիվ ցանկություններով կամ կամայական կառուցավորումներով, այլ տարբեր տիպի պետություններից, անկախ ու կախյալ ժողովուրդներից կազմված ժամանակակից հասարակության զարգացման ռեալ, օբյեկտիվ պայմաններով: Ինքնիշխանության սկզբունքի կենսականությունը պայմանավորված է այն բանով, որ ինքնիշխան պետությունների պատմական դերը դեռ չի ավարտվել, որ ինքնիշխան պետականության զարգացումը այսօր էլ դեռ մնում է համաշխարհային պատմության առաջընթացի գլխավոր նախադրյալներից ու պայմաններից մեկը, որ ինքնիշխանության պաշտպանական քողի տակ ծագում ու հասունանում են հասարակական կյանքի նոր առաջադիմական ձևեր, ինչը նշանակում է, որ մարդկային հասարակությունը առաջընթաց է ապրում, երաշխավորվում է ազգային զարգացման ազատությունը, որն այդ

առաջընթացի անհրաժեշտ նախադրյալներից ու պայմաններից մեկն է, և ժողովուրդների միջև կայուն խաղաղությունը կարող է ապահովվել միայն ինքնիշխանության փոխադարձ հարգման հիմքի վրա:

Այս ամենի հիման վրա կարելի է ձևակերպել հետևյալ դրույթները. 1) միջազգային իրավունքը ուրույն իրավական համակարգ է, 2) այն կարգավորում է ինքնիշխան պետությունների միջև հարաբերությունները, 3) ինքնիշխանությունը չի բացառում միջազգային իրավունքի խախտման համար պատասխանատվությունը:

1. Միջազգային իրավունքը ոչ թե վարքային կամ տեխնիկական, այլ իրավական նորմերի հանրագումար է: Միջազգային իրավունքի իրավաբանական բնույթն արտահայտվում է մասնավորապես այն միջոցով, որ դրանով տրվող պարտականությունները հիմք են ծառայում մյուս պետությունների հարաբերակցվող իրավապահանջների համար և նրանց իրավունք են տալիս այս կամ այն ձևով հակազդելու այդ պարտականությունների խախտումներին: Նա չի կորցնում իր իրավական բնույթը նաև այն դեպքերում, երբ չեն լինում պարտադրման կամ պատժման մարմիններ: Որովհետև նա այդ առանձնահատկությունը կիսում է պետական իրավունքի, համենայն դեպս նրա մի զգալի մասի հետ: Միջազգային իրավունքի նորմերի պարտադիրությունը ընկալվում է որպես ոչ միայն բարոյական, այլև իրավաբանական պարտադիրություն, որով արդարացվում են պատժամիջոցները:

Միջազգային իրավունքը իրավունք է նաև այն իմաստով, որ ստանում է պետության հավանությունը, թեև չի սահմանվում առանձին պետության կողմից:

Միջազգային իրավունքը ինչ-որ արտաքին ուժի կողմից պետություններին դրսից պարտադրած իրավունք չէ: Յուրաքանչյուր պետություն, որը մասնակցում է պետությունների միջազգային հաղորդակցմանը, դրանով իսկ մասնակցում է նաև ինչպես սովորույթային, այնպես էլ համաձայնական միջազգային իրավունքի ստեղծմանը պայմանագրերում դրահաստատման միջոցով, պրակտիկայի մշակման կամ թույլատրման միջոցով:

Միջազգային հաղորդակցություններում դրսևորվում է

պետությունների արտաքին քաղաքականությունը, որը ներքին քաղաքականության շարունակությունն է և չի կարող նրանից կտրված լինել, և որը նրանման արտահայտում է պետությունների իշխող դասակարգերի շահերը: Սակայն դրանից չի կարելի անել այն եզրակացությունը, թե միջազգային իրավունքը արտաքին պետական իրավունքն է կամ այս կամ այն առանձին պետության ազգային իրավունքի շարունակությունը: Որովհետև եթե պետությունը ներքին հարաբերությունները կարգավորում է միակողմանի կարգադրությունների հիման վրա, ապա այդ նույնը չի կարելի ասել արտաքին հարաբերությունների դեպքում: Առանձին պետությունը չի կարող միջազգային իրավունքը սահմանել միակողմանիորեն: Ամեն մի պետություն կարող է առաջարկել, որ այս կամ այն կանոնը ընդունվի որպես միջազգային իրավունքի նորմ, պետությունը կարող է իր քաղաքականությամբ նպաստել, որ իր դասակարգային էությունը համապատասխան միջազգային իրավունքում զարգանան այս կամ այն միտումները, սակայն միջազգային իրավունքի նորմ կարող է դառնալ միայն այն կանոնը, որի վերաբերյալ կամյունս ինքնիշխան պետությունների, այդ թվում նաև այլ տիպի պետությունների, բացահայտկամ լռելյայն համաձայնությունը:

2. **Միջազգային-իրավական կարգավորման առանձնահատկությունների ու սահմանների հարցը կրկին առաջ է բերում բարդ հիմնահարցերը՝ կապված միջազգային իրավունքի (կամ միջազգային իրավակարգի) և ինքնիշխանության (կամ պետական իրավակարգի) փոխհարաբերության հետ:**

Առաջին և միանգամայն բնական հարցն այն է, թե ով է հաստատում միջազգային-իրավական կարգավորման առանձնահատկություններն ու սահմանները: Ինքնիշխանության «դասական» հայեցակարգի տեսանկյունից ինքնիշխան պետությունն ինքն է որոշում միջազգային-իրավական կարգավորման սահմանները: Կելզենի և Տերդրոսի գլխավորած վիեննական դպրոցի տեսակետից պետական իրավակարգը միջազգային-իրավակալական կարգի շրջանակներում գոյություն ունեցող «մասնակի կարգ» է, որը սահմանում է պետության իրավասությունը, և որին հանգում է ինքնիշխանությունը: Այս տեսակետից իրավասությունը

պատկանում է միմիայն միջազգային իրավունքին: Այս տեսակետի տրամաբանական զարգացումն է Ռ.Գուգենհայ մի տեսությունը, ըստ որի և՛ միջազգային-իրավական կարգը, և՛ պետական-իրավական կարգը մի ինչ-որ բարձրագույն իրավական կարգի մասնակի կարգերն են, ընդսմին այդ բարձրագույն կարգի հիմնական խնդիրն է միջազգային իրավունքի և պետական իրավունքի իրավասությունների սահմանազատումը¹³⁶: Սակայն, քանի որ նա ընդունում է, որ այդ բարձրագույն կարգի մարմիններն են միջազգային-իրավական կարգի մարմինները, ապա այդ տեսության առնչությամբ ուժի մեջ է մտնում հին մեթոդաբանական կանոնը, որն անթույլատրելի է անհարկի ձևով բազմապատկել էությունները («*entia praeter necessitatem non sunt multiplicanda*»): Չէ որ, շարունակելով մտքի նման ընթացքը, կարելի է հորինել մի նոր համընդգրկուն իրավակարգ, որի մասերը կլինեն վաղ դիտարկված բոլոր իրավակարգերը, և այդպես շարունակ: Դրանով հիմնահարցը ոչ թե լուծվում է, այլ ավելի կնճռոտ է դառնում:

Առաջին հայացքից իրավասության պրոբլեմն ունի հսկայական նշանակություն: Եթե միջազգային իրավունքը կարող է անսահմանափակորեն ընդարձակել իր ոլորտը, ապա այլես ինքնիշխանության մասին խոսք անգամ չի կարող լինել: Մյուս կողմից եթե միջազգային իրավունքի սահմանները կախված են յուրաքանչյուր ինքնիշխան պետության հայեցողությունից, ապա ընդհանրապես չի կարելի խոսել միջազգային իրավունքի մասին: Սակայն այս պրոբլեմը մտացածին ու արհեստական է: Նա առաջ է գալիս այն դեպքում, երբ միջազգային իրավունքի և ազգային իրավունքի փոխհարաբերությունների ոլորտը մեխանիկորեն տեղափոխվում է այն պրոբլեմը, որը ծագում է դաշնային պետությունում դաշնության ազգային իրավունքի և անդամ պետության ազգային իրավունքի փոխհարաբերությունների ոլորտում:

Մի կողմից, միջազգային իրավունքի ու ազգային իրավունքի միջև հարաբերակցության և, մյուս կողմից, դաշնության իրավունքի ու անդամ պետությունների իրավունքների միջև

¹³⁶ Տե՛ս **Guggenheim R.** Zur Verhältniss vom Volkerrecht zum Landesrecht // *Revue Internationale de la Theorie de Droit*. 1936.N7. Էջ. 91:

հարաբերակցության հենց այդ համեմատությունն է կատարում Սելը: Բայց նման տեղափոխությունը բացահայտ տրամաբանական սխալ է պարունակում:

Դաշնության դեպքում խոսքը վերաբերում է այնպիսի իրավասության սահմանազատմանը, որն ամբողջովին գտնվում է միևնույն հարթության մեջ, այն է պետաիրավական հարթության մեջ: Դաշնության հարցերի շրջանի և անդամ պետության հարցերի շրջանի միջև սկզբունքային տարբերություններ չկան: Դա է վկայում թեկուզ այն փաստը, որ իրավասության սահմանազատման հարցը ամեն մի դաշնությունում յուրովի էլ ուժովում:

Բացի այդ, դաշնությունում կան նաև մարմինների երկու համակարգ, մի կողմից դաշնության օրենսդիր, գործադիր ու դատական մարմինները, մյուս կողմից անդամ պետության օրենսդիր, գործադիր ու դատական մարմինները:

Այլ է միջազգային ու ազգային իրավունքների փոխհարաբերությունների հիմնահարցը: Այս ճյուղերը գտնվում են ասես տարբեր հարթություններում: Միջազգային իրավունքի իրավասությունը կազմող հարցերի շրջանը որոշվում է նրա կողմից կարգավորվող հարաբերությունների ծավալով այն է պետությունների միջև հարաբերությունների բնույթով և այդ կարգավորման հատուկ նպատակներով ու խնդիրներով: Մեկ այլ հարթության մեջ է պետական իրավունքով կարգավորվող հարցերի շրջանը: Ճիշտ է, այդ հարթությունները ոչ թե զուգահեռ են, այլ հատվող, սակայն իրավասության սահմանազատման դժվարությունները, որոնք առաջ են գալիս այդ հատման հետևանքով, այդուհանդերձ սահմանափակ բնույթի են և շոշափում են միայն այն հարցերը, որոնք, գտնվում են ներքին քաղաքական ու արտաքին քաղաքական հարաբերությունների, միջազգային ու ազգային պրոբլեմների «սահմանաձուլում»: Միջազգային ու ազգային իրավունքի որոշ վիճելի հարակից հարցերի գույությունը չի փոխում ընդհանուր պատկերը, որին բնորոշ է ինչպես անառարկելիորեն միջազգային իրավունքին վերաբերող հարցերի առկայությունը, այնպես էլ անառարկելիորեն ազգային իրավունքին վերաբերող ու Միավորված ազգերի կազմակերպության

Կանոնադրու թյան 2-րդ հոդվածի 7-րդ կետի չափանիշ, հազիվ թե պետք է որակել որևէ բառային բնորոշմամբ: Այն նախապես թողու թյան գիրք է շնորհում հզոր պետություններին, որոնք թույլ պետություններին համեմատությամբ շատ ավելի մեծ հնարավորություններ ունեն համաձայնական միջազգային իրավունքի բովանդակությունը որոշելու համար: Կամա թե ակամա Քելզենը դառնում է բացահայտ իմպերիալիստական կողոպուտի ջատագով օրինականացնելով միջատությունը ուրիշ պետության ցանկացած ներքին գործերին, եթե միայն դա «ձևակերպված» է համապատասխան պայմանագրով:

Այս կամ այն հարցի «ըստ իր էության» պատկանելությունը ներքին իրավագործությանը կամ միջազգային իրավունքին որոշվում է ոչ թե այն բանով, թե շոշափվում է արդյոք այդ հարցը երկու կամ ավելի պետությունների միջև կնքված պայմանագրով, այլ այն բանով, թե տվյալ հարցի նման կարգավորումը պետությունների միջազգային-իրավական պարտականությունն է, թե ամբողջապես կախված է տվյալ պետությունների կամքից: Պետության ներքին գործերը այն գործերը չեն, որոնք պետությունն իրավունք չունի դարձնելու միջազգային կարգավորման օբյեկտ, այլ այն գործերն են, որոնք նա պարտավոր չէ դարձնելու նման կարգավորման օբյեկտ: Հենց այդ վերջին պայմանն է շեշտում այն հանգամանքը, որ խոսքը վերաբերում է մի առարկայի, որն «ըստ իր էության» պատկանում է պետության ներքին իրավասությանը և միջազգային կարգավորման օբյեկտ է դարձել միայն այդ պետության համաձայնությամբ, անշուշտ, իր կնքած պայմանագրերով այդ պետության կապվածության փաստից բխող բոլոր հետևանքներով հանդերձ:

Կարող են առարկել, որ այն հարցը, թե պարտավոր է արդյոք պետությունը տվյալ հարցը կարգավորել միջազգային-իրավական կարգով, թե պարտավոր չէ, լուծվում է հենց միջազգային իրավունքի նորմով: Սակայն գործող միջազգային իրավունքի առանձնահատկությունն այն է, որ նա հրաժարվում է այնպիսի հարցերի կարգավորումից, որոնք, ըստ էության, վերաբերում են պետությունների ներքին իրավասությանը, ամենևին էլ չտալով

Նման հարցերի սպառնիչ ցանկը: Նման հրաժարումը ոչ թե սահմանադրում, այլ միայն ստեղծում է ինքնիշխան պետության անկախ «վերապահված մարզի» միջազգային-իրավական երաշխիքը: Վերը ասվածից պարզորոշ կերպով հետևում է, որ խոսք անգամ չի կարող լինել այդ դոմենը միջազգային իրավունքի անդրադարձման կամ նրա ինչ-որ ածանցյալի վերածելու մասին: Պետությունների իրավունքների ճշգրտման իմաստով ՄԱԿ-ի Կանոնադրությամբ տրվող ձևակերպումը առաջընթաց քայլ էր միջազգային իրավունքի կողմից բացառապես պետության իրավասության վերագրվող հարցերի վերաբերյալ Ազգերի լիգայի համաձայնագրի 15-րդ հոդվածում տրված ձևակերպման համեմատությամբ:

Կարելի է պնդել, որ, օրինակ, պետության սոցիալ-տնտեսական կարգի հարցի լուծումն «ըստիրեության» պատկանում է պետության ներքին իրավասությանը: Մի պետության միջամտությունը ուրիշ պետության կողմից այդ հարցի լուծմանը, այդ հարցում իր կամքի պարտադրումը թեկուզև պայմանագրի կամ «վերականգնման օգնության» միջոցով մնում են միջամտությունն այն գործերին, որոնք ըստ իրենց «բնույթի» կամ «ըստ էության» ներքին գործեր են:

Որոշ բուրժուական հեղինակների կարծիքով ներքին իրավասության սահմանների հարցը կարող են լուծել միայն միջազգային իրավակարգի մարմինները: Դեռ 1934 թ. Սելը պնդում էր, թե «երբեք չի կարելի աչքաթող անել այն հանգամանքը, որ «վերապահված մարզ» («*domaine reservee*») ամենևին էլ չի նշանակում «ինքնիշխանության մարզ», և որ Ազգերի լիգայի խորհրդի կամ, հնարավոր է, Արդարադատության պալատի որոշումից է կախված, թե պետք է արդյոք այս կամ այն որոշակի պայմաններում կառավարության իրավասությունն անգամ այդ մարզում դիտվի որպես դիսկրեցիոն, և որ սահմաններում է նա այդպիսին լինում»¹³⁷:

Այդ տեսակետին է համապատասխանում նաև Միջազգային իրավունքի ինստիտուտի կողմից 1932 թ. ընդունված բանաձևը, ըստ որի «պետության իրավասությունը որոշվում է միջազգային իրավունքով»:

¹³⁷ Տե՛ս Scelle J. նշվ. աշխ. էջ 80:

Քելզենն իր դիտողություններում, որոնք արել է Ազգերի
լիգայի պայմանագրի 15-րդ հոդվածի ձևակերպման վերաբերյալ, և
որոնք կարող են կիրառված լինել նաև Միավորված ազգերի
կազմակերպության Կանոնադրության նշված հոդվածի նկատմամբ,
պնդում է, թե չկան հարցեր, որոնք իրենց բուն էությունը գտնվում
են «բացառապես պետության ներքին իրավագործության
շրջանակներում»: Ցանկացած հարց կարող է դառնալ միջազգային
պայմանագրի առարկա և դրանով իսկ դուրս գալ պայմանավորվող
պետությունների ներքին իրավագործության շրջանակներից:
Ցանկացած առարկա կարող է գտնվել «բացառապես» պետության
ներքին իրավագործության շրջանակներում և այնքան ժամանակ,
քանի դեռ չի ենթարկվել սովորության կամ համաձայնական
միջազգային իրավունքի որեէ նորմի¹³⁸:

Իհարկե, յուրաքանչյուր պետությունն հենց իր
ինքնիշխանության բերումով կարող է այս կամ այն պատճառով
հրաժարվել որեէ ներքին հարցի միակողմանի կարգավորումից դա
անելով այն նպատակով, որ տվյալ հարցում ձեռք բերվի մի քանի
պետությունների գործողությունների համաձայնեցվածություն
կամ փոխադարձություն: Դեռ ավելի, հայտնի են նաև այնպիսի
միջազգային պայմանագրեր, որոնցով կատարվում էր պետության
ինքնիշխանության ուղղակի սահմանափակում ներքին կամ արտաքին
գործերի վերահսկողությունը մի պետությանից մյուսին
փոխանցելու միջոցով, կամ անկախությունից լրիվ հրաժարում
հոգու տմեկ այլ պետության: Քելզենի տեսակետից դա նշանակում է
միայն որոշ հարցերի «փոխադրում» ազգային իրավունքի ոլորտից
միջազգային իրավունքի ոլորտ: Այդ տեսակետից մի պետության
միջամտությունը մեկ ուրիշ պետության ներքին գործերին
դադարում է միջամտություն լինելուց, եթե դա ձևակերպված է
պայմանագրով:

1. Միջազգային իրավունքը հրամայական կարգով կարգավորում
է միջազգային հաղորդակցման միայն առավել ընդհանուր
սկզբունքները, որոնք անհրաժեշտաբար բխում են տվյալ պատմական
փուլում հասարակության զարգացման հաստատուն կերպով

¹³⁸ Տե՛ս **Kelsen H.** Peace through Law. Էջ 33:

կայ ու նացած բարոյական ու քաղաքական պահանջմունքներից և արտահայտում են պետության ունեցած ամբողջ կուլտիվի կամքն ու շահը այդ պետության ունեցած տիպերի տարբերության լրիվ հաշվառմամբ: Մյուս բոլոր հարցերում այն հղում է պարտավորվող կողմերի ինքնիշխանական համաձայնության վրա հիմնվող պայմանագրին: Պայմանագիրը շարունակում է մնալ որպես միջազգային իրավունքի կարևորագույն աղբյուր արտահայտելով ինքնիշխանության ճանաչումն իր կողմից:

2. Միջազգային իրավունքը չի միջամտում պետության ունեցած ներքին գործերին կամ պետության և նրա քաղաքացիների միջև գոյություն ունեցող հարաբերություններին, բացի այն դեպքերից, երբ այդ հարաբերություններն իրենց էության բերումով կարող են դառնալ պետության ունեցած միջև բարդությունների առաջացման պատճառ: Բայց այդ դեպքում ևս խոսք կարող է լինել միայն պայմանագրային պլանի մասին (օրինակ ազգային փոքրամասնությունների իրավունքների պահպանմանը վերաբերող պայմանագրերը):

3. Միջազգային իրավունքի այն նորմերը, որոնք կարգավորում են ինքնիշխան պետությունների միջև հարաբերությունները, չեն կարող ունենալ մի պետության կողմից մեկ այլ պետության պարտադրվող նորմի բնույթ: Այստեղից էլ հետևում է, որ մի պետություն չի կարող ենթակալ ինչևէ մեկ այլ պետության դատական մարմինների իրավասությանը, ինչպես նաև նրա ազգային իրավունքին (կանոններից առանձին բացառություններ): Յուրաքանչյուր պետություն սկզբունքի հետևանքով է, որ մի պետության դատարանները չեն կարող վիճարկել մեկ այլ պետության այն ակտերը, որոնցով կարգավորվում են այդ պետության ինքնիշխանական իրավունքների ոլորտին վերաբերող հարցերը: Միջազգային իրավունքի այն նորմերը, որոնցով կարգավորվում են ինքնիշխան պետությունների միջև հարաբերությունները, կամ միջազգային հաղորդակցման առավել ընդհանուր սկզբունքներն են, որոնք պարտադիր են բոլոր պետությունների համար, և հետևաբար չեն կարող բխել մի որևէ պետությունից կամ պետությունների խմբից և անգամ նրանց մեծ մասից, կամ էլ պետությունների

փոխհամաձայնության վրահիմնվող նորմեր են: Վերջիններս թվին են դասվում նաև այն նորմերը, որոնք սկիզբ են առնում կամավոր անդամության սկզբունքով ստեղծված միջազգային կազմակերպության մարմիններից: Միջազգային իրավունքում մեծամասնության սկզբունքը կարող է ունենալ միայն սահմանափակ կիրառություն:

Որոշ հեղինակներ, օրինակ, Յեյլբրոնը, ավելի վաղ նաև Օպենհայմը, համարում էին, որ միջազգային իրավունքը չի հակասում ինքնիշխանությանը, քանի որ ենթադրում է պետության ենթարկումը միայն բարձրագույն իրավակարգին, բայց ոչ բարձրագույն ուժին («Gewalt»):

Ըստ վիեննական դպրոցի ինքնիշխանությունը ենթարկվում է միմիջային միջազգային իրավունքին: Ինչպես ավելի վաղ անդել է Ա.Կոկոշկինը, ինքնիշխանությունը բացառում է ենթարկումը որևէ մեկին, բայց չի բացառում ենթարկումը որևէ մի բանի (այն է իրավունքին)¹³⁹:

Այս տեսակետից ինքնիշխանությունն անհամատեղելի է միջազգային զինված ուժերի ստեղծման հետ, ինչպես դա նախատեսվում է Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ: Այս տեսակետը պետք է մերժված լինի: Այստեղ կարևորը ոչ թե պարտադրանքի կատարողն ու կրողն են, այլ դրա բնույթը:

4. Պետության ինքնիշխանական իրավունքների լիիշխանության, անկախության ու լրիվության կանխավարկածը: Պետության ինքնիշխանական իրավունքների լիիշխանության, անկախության ու լրիվության սահմանափակումը պետք է հիմնված լինի սովորության կամ համաձայնական միջազգային իրավունքի հրահանգների վրա:

Լոտոսի գործի վերաբերյալ Միջազգային դատարանի մշտական պալատի վճիռը սահմանում էր, որ «պետության անկախության սահմանափակումները չեն կարող ճշմարտունակված լինել»: Միջազգային իրավունքի սկզբունքն այն է, որ ապացուցման բեռնը նկնում է այն պետության վրա, որն ուզում է օգուտ քաղել այլ

¹³⁹ Տե՛ս **Кокшкин А.А.** Лекции по общему международному праву. 5-ое изд. М., 1912. Стр. 204.

պետության անկախության սահմանափակումից¹⁴⁰:

Այսպիսով ինքնիշխանությունը ճիշտ, ոչ դոգմայական ըմբռնմամբ չի բացառում միջազգային իրավունքը, այլ պայմանավորում է միջազգային-իրավական կարգավորման բնորոշ առանձնահատկությունները:

Պետությունը կարող է վկայակոչել իր ինքնիշխանությունը ոչ թե իր համար միջազգային իրավունքի պարտադիրությունից խուսափելու նպատակով, այլ այն պահանջները մերժելու համար, որոնք չեն համապատասխանում միջազգային-իրավական կարգավորման վերը նշված պայմաններին: Սա է իրական պետության իրական ինքնիշխանությունը, որը միայն հեռավոր նմանություն ունի վերացական ինքնիշխանությանը, որը դոգմատիկների կողմից հասցվել էր բացարձակի, ոչ թե իրավաբանական, այլ ավելի շատ մետաֆիզիկական նորմի աստիճանի:

5. Ռեալ ինքնիշխանությունը չի բացառում պետության պատասխանատվությունը միջազգային իրավունքը խախտելու համար: Ինքնիշխանության դասական դոկտրինը անպատասխանատվությունը դիտում է որպես ինքնիշխանության հիմնական ու առավել էական հատկություն: «Անպատասխանատվությունը ինքնիշխանության էական հատկանիշն է» («L'irresponsabilite - c'est be proper de la souverainete»), հայտարարում է հայտնի բանաձևը: Այդ անպատասխանատվությունը տարածվում էր և՛ ներպատական, և՛ միջպետական հարաբերություններին վրա:

Ինքնիշխանության ընդհանուր հայեցակարգում, որում այն դիտվում էր որպես պետության գերագույն մարմնի անսահմանափակ իշխանություն, վաղ ժամանակներում անպատասխանատվությունը ընկալվում էր որպես պետության գերագույն մարմնի և առաջին հերթին միապետական գերիշխանի անպատասխանատվություն: Անպատասխանատվությունը բացառում է որևէ իրավաբանական պարտականություն և հետևաբար նաև իրավաբանական հաստատում: Սակայն ներկայումս արդեն չի կարելի հիմք ընդունել ինքնիշխանության այդպիսի ըմբռնումը:

Պետական իրավունքի ոլորտում պետության որպես

¹⁴⁰ Տե՛ս **Schwarzenberger G.** International Law. L. 1945. Էջ 47-48:

ի ն ք ն ի շ խ ա ն ու թ յ ա ն կ ր ո ղ ի ա ն պ ա տ ա ս խ ա ն ա ս վ ու թ յ ու ն ը ա ն առ ա ր կ ե լ ի
է , ք ա ն ի ո թ ա ն հ ե թ ե թ Է ն ր ա ի ր ա վ ա ք ա ն ս կ ա ն պ ա տ ա ս խ ա ն ա տ վ ու թ յ ու ն ը ,
ո վ ի ն ք ն Է մ ե ն ա շ ն ո թ ի ձ ն ո վ հ ա ս տ ա տ ու մ ա զ գ ա յ ի ն ի ր ա վ ու ն ք ը և ,
հ ե տ ն ա ք ա ր , ն ա ն ի ր ա վ ու ն ք ն եր ն ու պ ար տ ա կ ա ն ու թ յ ու ն ն եր ը :
Ի ն ք ն ի շ խ ա ն պ ե տ ու թ յ ու ն ը չ ի կ ր ու մ ի ր ա վ ա ք ա ն ս կ ա ն
պ ար տ ա կ ա ն ու թ յ ու ն ն եր ա յ ն ա ն ձ ա ն ց ն կ ա տ մ ա մ ք , ո թ ո ն ք պ ա տ կ ա ն ու մ
ե ն ի թ ի ր ա վ ա ս ու թ յ ա ն ը : Պ ար տ ա կ ա ն ու թ յ ու ն ն եր կ ար ո ղ Է թ ու ն ե ն ա լ
մ ի ա յ ն պ ե տ ու թ յ ա ն ա յ ս կ ա մ ա յ ն մ ար մ ի ն ը , դ ա ո չ թ ե գ եր ի շ խ ա ն ի
պ ար տ ա կ ա ն ու թ յ ու ն ն եր ե ն , ա յ լ պ ար տ ա կ ա ն ու թ յ ու ն ն եր գ եր ի շ խ ա ն ի
առ ջ և , ո թ ո ն ք կ ար ո ղ ե ն մ ի ժ ա մ ա ն ս կ լ ի ն ե լ ն ա ն
պ ար տ ա կ ա ն ու թ յ ու ն ն եր առ ա ն ձ ի ն ք ա ղ ա ք ա ց ի ն եր ի առ ջ և :

Ե թ ե մ ե ն ք չ ե ն ք հ ա մ ար ու մ , ո թ տ վ յ ա լ մ ար մ ի ն ն եր ը պ ար տ ա վ ո թ ե ն
պ ա հ պ ա ն ե լ ու գ ո ն ե ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն ն ո թ մ եր ը , ա պ ա դ ր ա ն ո վ ի ս կ
հ ա ն գ ու մ ե ն ք պ ե տ ա կ ա ն ի ր ա վ ու ն ք ի ք ա զ մ ա թ ի վ ն ո թ մ եր ի
ի ր ա վ ա ք ա ն ս կ ա ն ք ն ու յ թ ի ժ խ տ մ ա ն ը , ն ո թ մ եր , ո թ ո ն ք ն մ ա ն դ ե պ ք ու մ ո չ
ո ք ի ո չ մ ի ք ա ն ի չ ե ն պ ար տ ա վ ո թ ե ց ն ի : Ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն ն ո թ մ եր ի
վ եր ա ք եր յ ա լ ա յ դ ա ի ս ի տ ե ս ա կ ե տ ար տ ա հ ա յ տ ե լ ե ն ք ա ց ար ձ ա կ
ի ն ք ն ի շ խ ա ն ու թ յ ա ն ո թ ո շ գ ա ղ ա ի ար ա խ ո ս ն եր : Ա յ ս պ ե ս . Օ ս տ ի ն ը
ս ա հ մ ա ն ա դ ր ու թ յ ու ն ը հ ա մ ար ե լ Է մ ի ա յ ն « դ ր ա կ ա ն
ք ար ո յ ա կ ա ն ու թ յ ու ն » , ո թ ը , եր ք խ ո ս ք ը վ եր ա ք եր ու մ Է ի ն ք ն ի շ խ ա ն
ի շ խ ա ն ու թ յ ա ն կ ո ղ մ ի ց դ ր ա խ ա խ տ մ ա ն ը , հ ա ս տ ա տ վ ու մ Է ք ա ց առ ա պ ե ս
ք ար ո յ ա կ ա ն վ ա վ եր ա ց մ ա մ ք : Ն ր ա տ ե ս ա կ ե տ ի ց գ եր ի շ խ ա ն ի ո չ
ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն ս կ տ ը կ ար ո ղ Է և ս օ թ ի ն ս կ ա ն հ ա մ ար վ ե լ , ո թ ո վ հ ե տ ն
օ թ ե ն ք ը չ ի կ ար ո ղ պ ար տ ա դ ր ե լ գ եր ի շ խ ա ն ի ն ¹⁴¹ : Ս ա կ ա յ ն ե թ ե ո թ պ ե ս
մ ե կ ն ս կ եր ա ղ ն դ ու ն վ ի պ ե տ ու թ յ ա ն ք ար ձ ր ա գ ու յ ն մ ար մ ի ն ն եր ի
պ ար տ ա կ ա ն ու թ յ ու ն ն եր ը կ ա ն ո ն ս կ ար գ ո ղ ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն ն ո թ մ եր ի
ո չ մ ի ա յ ն հ ա յ տ ար ար ա կ ա ն կ ա մ ք ար ո յ ա կ ա ն , ա յ լ և ի ր ա վ ա ք ա ն ս կ ա ն
ք ն ու յ թ ի ը ն դ ու ն ու մ ը (ի ս կ ս ա հ մ ա դ ր ու թ յ ա ն ա յ դ ա ի ս ի ք ն ու յ թ ը ,
չ ն ա յ ա ծ Օ ս տ ի ն ի վ եր ը ք եր վ ա ծ տ ե ս ա կ ե տ ի ն , կ ա ս կ ա ծ ի ց վ եր Է) , ա պ ա
տր ա մ ա ք ա ն ս կ ա ն ա ն հ ր ա ժ ե շ տ ու թ յ ա մ ք պ ե տ ք Է ը ն դ ու ն վ ի ն ա ն , ո թ
պ ե տ ու թ յ ա ն ք ար ձ ր ա գ ու յ ն մ ար մ ի ն ն եր ը ի ր ա վ ա ք ա ն ո թ ե ն ու ն ե ն
պ ար տ ա կ ա ն ու թ յ ու ն ն եր , ու ս տ ի և կ ր ու մ ե ն պ ա տ ա ս խ ա ն ա տ վ ու թ յ ու ն :
Ի ն ք ն ի շ խ ա ն ու թ յ ա ն ը մ ա ս ն ս կ ի ց լ ի ն ե լ ու հ ե տ ն ա ն ք ո վ ա յ դ

¹⁴¹ Տե՛ս Austin J. նշվ. աշխ. էջ . 267-268:

մարմիններից մի քանիսը կարող են ինչ-որ չափով ազատվել որոշ պատասխանատվությունից (մասնավորապես իրենց գործողությունների բովանդակության առումով), սակայն, մյուս կողմից, այդ ինքնիշխանության իրավաբանական բնույթը անհրաժեշտաբար առաջ է բերում որոշակի պատասխանատվություն մասնավորապես այդ գործողությունների կարգի համար, ուստի և պատիժ, խոսք կարող է լինել միայն տվյալ պատժի քիչ թե շատ եական թերությունների մասին: Պատիժը միշտ էլ ենթադրում է մի այնպիսի մարմնի գոյություն, որն ունակ լինի իրագործելու այդ պատիժը: Պետության բարձրագույն մարմնի առնչությամբ այս իմաստով վերցված պատժի հասկացությունը հակասական է, եթե իհարկե այդ մարմինը չի նմանվի Չեխովի ունտեր-սպայի այրուն, որն ինքն իրեն էր քոթակել: Մյուս կողմից ժխտել իրավունքի այն նորմերի պաշտպանվածությունը պատժամիջոցով, որոնք կարգավորում են այդ մարմինների գործունեությունը, կնշանակեր ժխտել նման նորմերի իրավաբանական բնույթը և դրանով իսկ օրինականացնել կամայականությունը: Դեռ ավելի, դա կնշանակեր ոչ թե ինքնիշխանության երաշխիք, այլ, հակառակը, ինքնիշխանության վերացում, որովհետև այդ դեպքում իրական, քաղաքական գերիշխանի ինքնիշխանությունը իրավաբանական տեսակետից կլիներ անսահման, իրավաբանական ինքնիշխանության մարմինների հանդեպ անպաշտպան:

Մի շարք պետությունների դրական իրավունքը ուղղակիորեն նախատեսում է պատժամիջոցների կիրառում այն մարմինների հանդեպ, որոնք կապ ունեն ինքնիշխանության հետ: Այսպես. ԱՄՆ-ի կոնգրեսի ոչ սահմանադրական ակտը կարող է անվավեր ճանաչվել Գերագույն դատարանի կողմից (իսկ չէ որ ակտի անվավեր ճանաչումը կամ նրա չեղյալ հայտարարումը և՛ քաղաքական, և՛ պետական իրավունքի ոլորտում) մի տեսակի պատժամիջոց են, ԱՄՆ-ի նախագահը կարող է պաշտոնանկ արվել «impeachment»-ի կարգով: Սակայն հարկ է ընդունել, որ այդ կարգը ինքնին դեռ չի ապահովում պատասխանատվությունը և պատիժը, քանի որ այն դրանք կապակցում է ինքնիշխանությանը մասնկացող առանձին մարմինների միջև ծագած հակասություններին: Կարելի է տեսականորեն պատկերացնել մի

դեպք, երբ կոնգրեսն ընդունել է բացահայտորեն հակասահմանադրական ակտ (օրինակ նախագահին կամ իր անդամների լիազորությունները ցմահ է հայտարարել), իսկ նախագահը այդ որոշման վրա արգելում է չի դրել, և Գերագույն դատարանն էլ այն անվավեր չի հայտարարել (թեկուզ այն պատճառով, որ տվյալ օրենքի վերաբերյալ հայց չի ներկայացվել): Կարելի է արդյոք նման դեպքում պետության բարձրագույն մարմինները համարել անպատասխանատու և որևէ պատժամիջոցի ոչ ենթակա:

Այս բոլոր հանգամանքները անհնարին են դարձնում և՛ պատժի սահմանումը, և՛ պատժի պարտադիրությունը, և հենց դա է տվյալ սահմանադրական նորմերի տարբերությունը սահմանադրական իրավունքի այլ նորմերից, օրինակ ենթակա իշխանության մարմինների գործունեությունը կարգավորող նորմերից, ինչպես նաև քաղաքացիական կամ քրեական իրավունքի նորմերից: Դրանով է պայմանավորված պատիժների անկատարությունը: «Leges imperfectae»- ոչ թե պատիժ չնախատեսող օրենքներ են (դա կլինեին ներքին հակասություն), այլ թերի պատժամիջոցներով օրենքներ:

Ժողովուրդների իրավագիտակցությունը միշտ էլ պետությունները համարել է իրենց միջազգային պարտավորությունների խախտման համար պատասխանատու: Միանգամայն հասկանալի է, որ այդ պարտականության սուբյեկտը ոչ թե այս կամ այն մարմինն է, այլ պետությունն ինքը, որի անունից էլ գործում է համապատասխան մարմինը: Անձերի փոփոխումը և անգամ պետության մարմինների կառուցվածքի փոփոխությունը, հների վերացումը և նորերի ստեղծումը ինքնին չեն ազդում պետության պարտականությունների վրա:

Եթե պետությունը կարող է միակողմանի ակտով չեղյալ հայտարարել քաղաքացիների կամ կազմակերպությունների նկատմամբ ունեցած իր պարտավորությունները, ապա այլ է գործը արտաքին պարտավորությունների դեպքում, քանի որ պետությունը չի կարող միակողմանի ակտով ազատվել դրանից (պետության նույնության պահպանման դեպքում): Այստեղ խոսքը սովորության կամ համաձայնական իրավունքի հետևանքով անվիճարկելի պարտավորությունների մասին է:

Միջազգային իրավունքը միշտ էլ ընդունել է, որ այդ պարտավորությունների խախտումը բավարար հիմք է միջազգային իրավունքը խախտող պետության նկատմամբ պատժամիջոցների կիրառման համար, ընդհուպ մինչև պատերազմը: Ընդսմին անառարկելի է համարվում այն հանգամանքը, որ պատժամիջոցները կիրառվում են կամ պատերազմը մղվում է ոչ թե իր պարտավորությունները խախտած պետության այս կամ այն մարմնի դեմ, այլ իր կատարած իրավախախտման համար պատասխանատվություն կրող պետության դեմ:

Միջազգային իրավունքում պատժի հիմնահարցը ինչպես իրավաբանորեն, այնպես էլ փաստացի կերպով ոչ պակաս բարդ է, քան պետական իրավունքում: Պետական իրավունքում խոսքը վերաբերում է սահմանդրությունը և օրենքը խախտած բարձրագույն մարմինների պատասխանատվության մասին: Միջազգային իրավունքում խոսքը միջազգային իրավունքի նորմը խախտած պետության պատասխանատվության մասին է: Միջազգային իրավունքում միանգամայն հնարավոր է իրավաբանական ընթացակարգը, եթե իրավախախտումների դեպքում այն նախատեսված է միջազգային իրավունքով, և պատժամիջոցների կիրառումը կարող է կրել իրավաբանորեն ձևակերպված գործողության բնույթ: Սակայն վերջինս ենթադրում է այնպիսի իրավասու միջազգային-իրավական մարմնի գոյություն, որը փաստի միջազգային-իրավական իրավախախտման առկայությունը, սահմանի և իրագործի պատժամիջոցը: Նման մարմնի տրամաբանական հնարավորությունը նախադրված է միջազգային իրավունքի բուն էության մեջ: Սակայն այդ հնարավորությունը սկսել է իրացվել, միայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հանձինս Միավորված Ազգերի Կազմակերպության (դրա իրացման թույլ աղավաղված ակնարկն էր Ազգերի լիգան): Նման կազմակերպություններ չլինելու դեպքում իր պարտավորությունները խախտած պետության դեմ հիմնական պատժամիջոց էին համարվում շահագրգիռ պետության կողմից ձեռնարկված բռնաճնշումները, ընդհուպ մինչև պատերազմը:

Իրավախախտ պետության դեմ պատերազմը տեսականորեն իրենից ներկայացնում է միջազգային հարաբերություններին ոլորտում

ձեռնարկված քաղաքական գործողությունն, որը գտնվում է իրավախախտման և հաշտության պայմանագրում ձևակերպված իրավաբանական պատժամիջոցի միջև, ինչպես դա ներպետական իրավունքի ու նորտի համապատասխան հարաբերությունների դեպքում էր: Սակայն որպես պատժամիջոց ձեռնարկված պատերազմն ու ներշատթերություններ:

Նախ պատերազմում պետությունը հանդես է գալիս որպես իր գործում դատավոր: Բարոյաքաղաքական տեսակետից հարկ է և անհրաժեշտ է ամեն մի պատմական դարաշրջանում տարբերակել արդարացի և անարդար պատերազմները: Հաճախ իրավաբանական տեսակետից «արդարացի» պատերազմ է համարվել ագրեսիան, հարձակումը մեկ այլ պետության վրա: Երկու պատերազմող կողմերը հաճախ հայտարարում էին, թե պայքարում են հանուն հակառակորդի կողմից ոտնահարված «արդարության» վերականգնման: Դեռ Հունաստանը, զարգացնելով արդարացի և անարդար պատերազմների տեսությունը, ընդունել էր, որ իրավաբանական տեսակետից իրավացիության հարցի լուծումը կապված է մեծ դժվարությունների հետ: Վատելը (18-րդ դարում), ելնելով պետությունների հավասարությունից և անկախությունից, ինչի հետևանքով պետությունները չեն կարող լինել միմյանց համար դատավոր, ստիպված եղավ հանգելու այն եզրակացությանը, որ միջազգային-իրավական տեսակետից հնարավոր է մի այնպիսի պատերազմ, որում երկու կողմն էլ օրինական հիմքերով դիմում են զենքի¹⁴²: Ի դեպ, վիեննական դպրոցի իրավաբանական ձևապաշտությունը հասնում է այն բանի, որ հնարավոր է համարում երկու կողմից էլ «արդարացի պատերազմը»: Համենայն դեպս, միջազգային իրավունքը միևնույն վերջին ժամանակները հրաժարվում էր պատերազմի արդարացիության և անարդարացիության որոշման որևէ չափանիշից և փաստորեն հավանություն էր տալիս ցանկացած պատերազմի ցանկացած կողմ դնելով պատերազմի օրենքների պաշտպանության տակ: Միջազգային իրավունքի տեսակետից հնարավոր չէր որևէ տարբերություն դնել արդարացի և անարդար պատերազմների միջև միջազգային իրավախախտման համար

¹⁴² Տե՛ս **Vattel M.** Le Droit des Gens. P., 1921, III. Էջ 40, Տե՛ս ևս **Ваммель М.** Международное право. М., 1923, Էջ 92-93:

պատժամիջոց պատերազմի և պատերազմ ագրեսիայի միջև:

Պատերազմում յուրաքանչյուր պետությունն հանդես էր գալիս ոչ միայն որպես իր գործում դատավոր, այլև որպես արդարադատության կատարածու: Այլ կերպ ասած միջազգային իրավունքը թույլ էր տալիս, որ տուժածն ինքը (ավելի ստույգ իրեն տուժած կողմ համարողը) ի կատար ածի դատավճիռը (որն ինքն էլ հենց կայացրել էր): Սակայն նա տուժածին չէր տրամադրում այնպիսի ուժ, որն անհրաժեշտ էր պատժամիջոցի իրագործման համար, և հետևաբար, պատիժը կարող էր իրագործված լինել միայն այն դեպքում, երբ տուժած պետությունն ինքն էր ունենում նման ուժ: Դա ըստ էության նշանակում էր անպատելիություն և, թույլ իրավունքների խախտում: Միայն ուժեղագույնը կարող էր ի կատար ածել օրինական պատիժը: Իրավունքը կարող էր օգտագործել միայն նա, ով ուժ ուներ:

Իրավունքի կախումն ուժից չի կարելի դիտել որպես միայն միջազգային իրավունքի առանձնահատկություն: Իրավունքի ցանկացած ոլորտում իրավունքի նորմերի պահպանումն ու իրավախախտողի դեմ պատժամիջոցների կիրառումը ենթադրում են այնպիսի ուժի առկայություն, որը գերազանցեր հնարավոր կամ իրական իրավախախտողի ուժը: Սակայն իրավունքի ցանկացած ոլորտում նման ուժի առկայությունը ապահովված է շնորհիվ այն բանի, որ իրավունքը սահմանվում կամ հաստատվում է պետության կողմից, որը տվյալ հասարակությունում եղած ամենահզոր կազմակերպությունն է: Մինչդեռ միջազգային իրավունքն ստեղծվում է պետությունների կոլեկտիվի կողմից, որը մինչև վերջին ժամանակներս չուներ ուժի այնպիսի կազմակերպություն, որը գերազանցեր ցանկացած հնարավոր կամ իրական իրավախախտողի ուժը:

Այս ամենը բնութագրում է մինչև հիմա գործած միջազգային իրավունքում պատժամիջոցների կիրառման անկատարությունը: Որպես հետևանք ստեղծվել էր այն կարծիքը, թե հենց սցո անկատար պատժամիջոցներն են միայն համատեղելի ինքնիշխանության սկզբունքի հետ: Նման տեսակետը միանգամայն անհիմն է: Քանի որ ընդունված է միջազգային իրավունքում պատժամիջոցների

կիրառման թույլատրելիությունը, ինչը երբեք էլ կասկած չի հարուցել, և քանի որ այդ պատժամիջոցները չեն դիտվում որպես ինքնիշխանության սկզբունքին հակասող երևույթ, ապա այստեղից կարելի է անել միայն այն եզրակացությունը որ այդ պատժամիջոցները պետք է լինեն կատարյալ ու արդյունավետ, որ դրանց թերությունները պետք է վերացվեն, որ միջազգային-իրավական պատիժների կազմակերպումը պետք է զարգանա պետությունների կոլեկտիվի պահանջմունքների և ընդհանուր շահերի զարգացման համապատասխան:

Ինքնիշխանության սկզբունքը ոչ թե վերացնում է պետության պատասխանատվությունը, այլ միայն դրան հաղորդում է մի յուրահատուկ բնույթ: Այսպես, նրանից բխում է, որ հնարավոր չէ պետությունը դատական պատասխանատվության կանչել որևէ ազգային դատարանում կամ ըստ որևէ օտար ազգային իրավունքի: Որովհետև, ինչպես տեսանք, միջազգային-իրավական կարգավորումը բացառում է որևէ ինքնիշխան պետության ենթարկումը մեկ այլ պետության կամքին: Պետության պատասխանատվությունը ոչ թե դատական, այլ քաղաքական պատասխանատվություն է: Սակայն դատիրավորությանը ենթակա չլինելու այս կանոնը տարածվում այն մարմինների կամ անձանց վրա, որոնք կատարել են միջազգային իրավունքի հանցավոր խախտում:

Եթե ինքնիշխանությունը չի վերացնում պետության պատասխանատվությունը, ապա առավել ևս չի կարելի խոսել միջազգային իրավունքի խախտման համար պետության մարմինների անպատասխանատվության մասին: Չէ որ այդ մարմինները իրենց անպատասխանատվությունը հիմնավորելու համար կարող են վկայակոչել միայն այն հանգամանքը, որ իրենք ինքնիշխան պետության մարմիններ են: Պետության ինքնիշխանությունը չի կարող միջազգային քրեական պատասխանատվությունից փրկել նաև պետությունների այն ղեկավարներին, որոնք չարամտորեն խախտել են միջազգային իրավունքի նորմերը:

Ճիշտ է, այդ հարցում հանդիպում ենք որոշ իրավաբանական դժվարությունների, որոնք, սակայն, թվացյալ են: Բավական տարածված է այն տեսակետը, թե, քանի որ ինքնիշխանությունը

պետության ոչ ենթակայությունն է ուրիշ պետության ազգային դատարանի դատափրավասությունը, ապա և անձանց ու մարմինների ակտերը, լինելով պետության ակտեր, կարող են ենթակա լինել միայն տվյալ պետության դատափրավասությունը հանձնես նրա դատական մարմինների, և դրանց ենթարկումը այլ պետության կամ միջազգային դատարանի դատին կարող է կատարվել միայն այն պայմանագրի հիման վրա, որին մասնակից է միջազգային իրավախախտում կատարած պետությունը:

Քելզենը հնարավոր է համարել զարգացնել նման հայեցակարգ 1944 թ., երբ ծագեց աշխարհի և մարդկության դեմ կատարած հրեշավոր ոճրագործությունների, միլիոնավոր անմեղ մարդկանց ինչպես քաղաքացիական բնակչությունը, այնպես էլ ռազմագերիներին, բնաջնջելու համար պատերազմի հանցագործներին պատժի ենթարկելու հարցը: Քելզենը այսպիսի դատողություններ էր անում. «Տուժած պետության դատարանի կողմից անձանց հետապնդումը այնպիսի գործողությունների համար, որոնք համաձայն միջազգային իրավունքի այլ պետության ակտ են, հավասարազոր է այլ պետության նկատմամբ իրավասության իրագործմանը և ընդհանուր միջազգային իրավունքի այն կանոնի խախտմանը, որը հայտարարում է, որ ոչ մի պետություն ենթակա չէ այլ պետության»:

Քելզենը առանձնապես կարևոր է համարում այդ սկզբունքի պահպանումը պատերազմական պայմաններում: «Այն կանոնը, որի համաձայն պետության կողմից պատասխանատվությունը բացառում է այդ իրավախախտումը կատարած անձի պատասխանատվությունը, իր իսկ էությունամբ կոչված է կարևոր դեր խաղալու ոչ միայն խախաղ, այլ և պատերազմական ժամանակ: Այդ սկզբունքը այն անձանց անհրաժեշտ պաշտպանությունն է, ովքեր որպես իրենց պետության մարմիններ պարտավոր կամ լիազորված են կատարելու այն գործողությունները, որոնք պետության շահերի տեսակետից անհրաժեշտ են համարվում»¹⁴³:

Սակայն Քելզենը չի ժխտում պետության գործողությունների համար անհատական պատասխանատվության ենթարկման

¹⁴³ Տե՛ս **Kelsen H.** Peace Thought Law. 1, 1968:

հնարավորությունը: Նա միայն պահանջում է, որ պահպանվի ձևականությունը, այն է որ ցանկացած ձևով ձեռք բերվի պետության համաձայնությունը:

Նախ պետք է նշել, որ մինչև հիմա ճանաչված միջազգային իրավունքի տեսակետից պատերազմում մի պետությունը հանդես է եկել որպես մյուս ինքնիշխան պետության նկատմամբ պատժամիջոցի կիրառման իրավունքի կրող: Եթե ինքնիշխանությունը չէր բացառում պետության իրավունքը ձեռնարկելու միայնապիսիլուրջ ու համընդհանուր պատժամիջոց, ինչպիսին պատերազմն է, ապա կարևոր է արդյոք պատերազմի պայմաններում բացառել նաև պետության իրավունքը կիրառելու շատ ավելի պակաս լուրջ ու սահմանափակ պատժամիջոց:

Իհարկե, պատերազմը չի օրինականացնում հակառակորդի ինքնիշխանության անտեսումը: Ըստ պատերազմի ժամանակակից իրավունքի պատերազմող կողմերն իրար դիտում են որպես ինքնիշխան պետություններ: Սակայն պատերազմն անխուսափելիորեն հանգեցնում է ինքնիշխանության իրականացման լուրջ փոփոխականների: Չէ որ ինքնիշխանության ճանաչումը չի խանգարում մի պետությանը բռնազավթելու մյուս պետության տարածքը, այնտեղ ստեղծելու իր վարչությունը, ռազմական դատարաններ և այլ մարմիններ իհարկե միաջազգային իրավունքի պահպանմամբ, իսկ այդ ամենը ամենևին էլ համատեղելի չէ սովորական, բնականոն ձևով զործառող ինքնիշխանության հետ: Այսպիսով չի կարելի պնդել, թե պատերազմի ժամանակ ինքնիշխանությունը տակավին անհամատեղելի է թշամի պետության հակաիրավական գործողությունները կատարած ռազմական հանցագործների նկատմամբ արդարադատություն գործելու հետ:

Քելզենն ինքն էլ չի ժխտում նման իրավասության հնարավորությունը: Սակայն նա այն կախման մեջ է դնում բուն պետության համաձայնությունից, որն արտահայտվում է զինադադարի կամ հաշտության պայմանագրի կնքման ժամանակ: Ընդսմին Քելզենն ընդունում է նման համաձայնության գուտ ձևական բնույթը: «Չէ որ դժվար չէ նման համաձայնություն ստանալ

զինադարի ակտում կամ պարտված պետության հետ կնքված հաշտության պայմանագրում», գրում է նա:

Կարելի է համաձայնվել այն բանում, որ հաշտության պայմանագրի կնքման և դրանով իսկ պետության ինքնիշխանության բնականոն գործառնության վերականգնման ու այդ փաստի փոխադարձ ճանաչման պահից ի վեր մի պետության իրավասությունը նախկին թշնամական պետության գործողությունները կատարած ռազմական հանցագործների նկատմամբ հնարավոր է միայն այն դեպքում, երբ դա հաշտության պայմանագրի մեջ դրված է որպես կանխապայման: Բայց արդյոք դա նշանակո՞ւմ է, թե պետությունները, քանի դեռ գտնվում են պատերազմի վիճակում, պարտավոր են ճանաչել ու միջազգային իրավունքի դեմ ամենահրեշավոր հանցագործությունները կատարած հանցագործների անձեռնմխելիությունը միայն այն պատճառով, որ դեռ պատերազմում են նրանց դեմ: Իսկ ինչպե՞ս վարվել Քելզենի կողմից չնախատեսված այն դեպքում, երբ պատերազմն ավարտվում է ոչ թե հաշտության պայմանագրով, այլ անվերապահ կապիտուլացմամբ: Ի դեպ, միջազգային իրավունքի և՛ տեսությունը, և՛ պրակտիկայով ընդունվում է, որ ռազմագերիները քրեական պատասխանատվություն են կրում մինչե գերի ընկնելն իրենց կողմից կատարված հանցագործությունների համար անկախ հաշտության պայմանագրից: Քելզենը համարում է, որ նման իրավագործությունը հնարավոր է ոչ թե սովորության, այլ միայն համաձայնական միջազգային իրավունքի հիման վրա: Ստացվում է այնպես, թե սովորության միջազգային իրավունքը չի ընդունում պատժամիջոցների կիրառումն այն անձանց նկատմամբ, որոնք մեղավոր են ինչպես սովորության, այնպես էլ համաձայնական միջազգային իրավունքի բոլոր սկզբունքների և հիմունքների խախտման մեջ: Ճշմարիտ է, որ սովորության միջազգային իրավունքն ուղղակիորեն չի ձևակերպում համապատասխան լիազորությունները, բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե նա դրանք չի ընդունում: Տվյալ դեպքում այդ իրավունքն իրեն հավատարիմ է մնում չձևակերպելով ո՛չ որոշակի պատժամիջոցներ, ո՛չ էլ պատասխանատվության ենթարկելու որոշակի ընթացակարգ: Դրանք բխում են այն իրական պայմանների

Ե ու թյ ու ն ի ց , ո Ր ո ն ց առ կ այ ու թյ ամբ հ ն ա ր ա վ ո Ր Ե ն դ առ ն ու մ և պատասխանատվության ենթարկումը, և՛ պատժամիջոցները, պայմաններ, ո Ր ո ն ք չ Ե ն կ ար ո ղ վ աղ ո Ր ո ք ն ախատեսված լ ի ն ե լ , ի ն չ պ Ե ս չ Ե ն կ ար ո ղ վ աղ ո Ր ո ք ն ախատեսված լ ի ն ե լ պատասխանատվության ենթարկման ու պատժամիջոցների կիրառման նպատակահարմարությունը կամ բուեն ռեալ հնարավորությունը: Կարելի է ասել, որ մինչև առաջին աշխարհամարտը տեղի ունեցած պատերզմների պրակտիկայում դա կարևոր չի եղել: Սակայն գերմանական իմպերիալ իզմի կողմից կատարված հրեշավոր, չլսված ոճրագործությունները, հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում, ինչպես նաև ճապոնական միլիտարիզմի հանցագործությունները չէին կարող անպատիժ մնալ, եթե ի հարկե միջազգային իրավունքը և արդարության ու մարդասիրության հասկացությունները չեն վերածվել անբովանդակ գաղափարների «գրնգուն պղնձի և շաչ ող ծնծղայի»:

Յ Ե ն ց այ դ ն կատարումներից էլ բխում է այն հարցի լուծումը, թե որն է այն նյութական իրավունքը, որով պետք է այդ դեպքերում ղեկավարվեն արդարադատության մարմինները: Սովորութային միջազգային իրավունքի որպես «leges imperfectae»-ի նորմերը չեն ներառում որոշակի պատժամիջոցներ: Բայց քանի որ դատապարտման համար հիմք է ծառայում այն վարքը, որն առաջին հերթին հակասում է հենց սովորութային միջազգային իրավունքին, ապա անհրաժեշտ է համարել, որ հենց այդ իրավունքն է դրված ռազմական հանցագործների դատապարտման հիմքում: Իսկ ինչ վերաբերում է պատժամիջոցի որոշման աղբյուրին, ապա դա կարող է լինել համաձայնական միջազգային քրեական իրավունքը, կա՛մ ազգային իրավունքը, կա՛մ նույնիսկ դատավորների իրավագիտակցությունը: Դա այն հարցն է, որը մենք սույն աշխատության մեջ կարող ենք անտեսել: Մեզ համար կարևոր էր միայն հաստատել, որ ինքնիշխանությունը անձեռնմխելիություն չէ: Ինքնիշխանությունն իրականացվում է միջազգային իրավունքի շրջանակներում, իսկ ինքնիշխանության և միջազգային իրավունքի հասկացությունները հարաբերակցական հասկացություններ են, որոնք անհրաժեշտաբար ենթադրում են միմյանց:

Առանձին պետության ներքին ինքնօգնության համակարգից միջազգային կազմակերպության միջոցով ագրեսիայի կոլեկտիվ ճնշման համակարգին անցումը ոչ միայն չի թուլացնում, այլ ավելի հիմնավոր է դարձնում ագրեսիայի, միջազգային հանցագործության ներքին համար պետության ներքին ու նրանց ղեկավարների պատասխանատվության վերաբերյալ այստեղ բերված դատողությունները:

Ինքնիշխանությունը ամենևին էլ չի նշանակում միջազգային իրավունքը խախտելու իրավունք: Որովհետեւ որտեղից արդյոք կարող է ծագել իրավախախտման իրավունքը: Եթե այն հիմնվում է տվյալ պետության ներքին իրավունքի վրա, ապա այլ ինքնիշխան պետության համար այն չի կարող պարտադիր լինել: Բայց այն չի կարող հիմնված լինել նաև միջազգային իրավունքի վրա, որովհետև ոչ մի իրավունք չի կարող թույլ տալ իրեն խախտել: Եթե պետությունը ինքնիշխանությունը վկայակոչում է միջազգային իրավունքը խախտելու նպատակով, ապա դրանով իսկ կորցնում է իր ինքնիշխանության հաստատման համար միջազգային իրավունքը վկայակոչելու իրավունքը:

Միևնույն ժամանակ պետք է ամենայն վճռականությամբ մերժել արևմտյան գրականության մեջ լայն տարածում ստացած այն հայեցակարգը, ըստ որի միջազգային իրավունքում պետության պատասխանատվության սկզբունքի զարգացումն իբր հանգեցրեց պետության ինքնիշխանության սկզբունքի վերացմանը: Իրականում մենք այլ բան ենք տեսնում, բոլոր մեծ, թե փոքր, պետությունների ինքնիշխանության պաշտպանությունը ընդհուպ մինչև պետության պատասխանատվությունը մեկ այլ պետության ինքնիշխանությունը անարգելը, ավելի ու ավելի մեծ չափով և աստիճանով դառնում է արդի միջազգային իրավունքի վճռորոշ գործոնը: Օրինակ Իրաքի կողմից Քուվեյթի նկատմամբ ձեռնարկված ագրեսիան, և բազմազգ ուժերի պատժիչ գործողությունները 1991թ.: Նորությունը այն սկզբունքի առաջ քաշումն է, որ համաձայն մեր օրերի միջազգային իրավունքի այդ պաշտպանությունը չպետք է կատարվի միջազգային ասպարեզում ուժերի կամայական խաղի միջոցով, յուրաքանչյուր պետության կողմից պատերազմի «իրավունքի» անհատական

անսահմանափակ օգտագործման միջացով, կամ իրենց ներ-
եսասիրական շահերից գործող պետությանների կոնցեռնի ակտի-
միջոցով, կամ այնպիսի սկզբունքների օգտագործմամբ, ինչպիսին է
ուժերի հավասարակշռության սկզբունքը, և այլն: Առաջներում էլ
նման կարգը եղել է պետությանների ինքնիշխանության
պաշտպանության բավականին անկատար միջոց և հաճախ օգտագործվել
է հենց հակառակ նպատակներով: Դրա վկայությունն են
իմպերիալիստական պետությանների կողմից կատարված
զավթումները, որոնց հետևանքով նրանք մինչ այդ ինքնիշխան
պետությանների վրա հաստատում էին իրենց տարբեր ձևերի
տիրապետությունը, անիրավահավասար պայմանագրերը, մանդատները
և այլն: Առանցքի տերությունների համաշխարհային ագրեսիան
անհերքելիորեն ապացուցեց հին միջոցների լրիվ
անպիտանիությունը, քանի որ դրանք անկարող եղան կանխել ահավոր
համաշխարհային աղետը և եվրոպայի ժողովուրդների ժամանակավոր
սարկացումը հիտլերյան հրեշի կողմից: Նոր պայմաններում
պետությանների ինքնիշխանության պաշտպանության գործում
էական դեր խաղալու են կոչված կոլեկտիվ անվտանգության
միջազգային կազմակերպությունները: Ավելի ու ավելի պարզ է
դառնում, որ բոլոր խաղաղասեր պետությանների
ինքնիշխանության պաշտպանությունը պահանջում է միջազգային
իրավունքի ամրապնդում ու ժողովրդավարական զարգացում: Մյուս
կողմից հետպատերազմյան շրջանի որոշ քաղաքական
իրադարձություններ ցույց են տալիս, որ տեղի ունի նաև հակառակը
միջազգային իրավունքի հիրավի ամրապնդումը հնարավոր է միայն
պետությանների իսկական ինքնիշխանության ապահովմամբ և այն
ազգերի ինքնիշխանության ճանաչմամբ, որոնք մինչև օրս զուրկ
էին իրենց ազգային ինքնիշխանությունից կամ գտնվում էին այն
կորցնելու սպառնալիքի տակ:

Իհարկե, միջազգային իրավունքի զարգացումը հանգեցնում է
նաև ինքնիշխանության որոշ իրավական սահմանափակման: Բայց
այստեղ գործում է դիալեկտիկական բանաձևը, որն արտահայտում է
միջազգային կյանքի զարգացման արդի փուլը, սահմանափակում
ամրապնդման համար: Միայն դիալեկտիկական մոտեցման դեպքում է

հնարավոր դառնում միջազգային իրավունքի և ինքնիշխանության հարաբերակցման պրոբլեմի լուծումը:

Իհարկե, խոսքը ինքնիշխանության հավերժացման մասին չէ: Չի բացառվում, որ միջազգային կյանքի զարգացումը հանգեցնի միջազգային համագործակցության կազմակերպական ձևերի ընդլայնմանը: Սակայն նման զարգացումը, հնարավոր է միայն որոշակի սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալների իրականացման դեպքում: Դրան կարող է հանգեցնել ժողովուրդների զարգացումը ժողովրդավարության ուղիով, ինչը նպաստում է միջազգային հակասությունների և միջպետական հակամարտությունների ու ընդդիմամարտությունների վերացմանը: Եվ պետք է անմիջապես նշել նաև այն հանգամանքը, որ նման զարգացման քաղաքական նախադրյալներից մեկն է պետությունների ինքնիշխանական հավասարության հաստատումը որպես անհրաժեշտ պայմանի ժողովուրդների միջև այն վստահական հարաբերությունների հաստատման համար, առանց որոնց հնարավոր չեն թե՛ ժողովուրդների իրական մերձեցումը, թե՛ միջազգային համագործակցության ձևերի ընդլայնումը: Այդ պատճառով այստեղ ևս կգործի դիպեկտիկական բանաձևը, առանձին պետությունների ինքնիշխանության ամրապնդում այն նպատակով, որ ապագայում, երբ դրահամար ամբողջ աշխարհում

հասունացած լինեն սոցիալական ու տնտեսական պայմանները, նախապատրաստվեն միջազգային համագործակցության նոր ձևեր: Միջազգային հարաբերությունների զարգացման ներկայիս փուլում հանուն կայուն ու արդարացի խաղաղության մղված պայքարում առաջնահերթ նշանակություն ունի հենց պետությունների ինքնիշխանության ամրապնդման ու պաշտպանության խնդիրը:

«Վերպետականություն» հասկացություննը մտավ միջազգային հարաբերությունների տեսության և պրակտիկայի մեջ 20-րդ դարի 40-50-ական թվականներին¹⁴⁴:

Առաջին անգամ պաշտոնական փոստաթղթում հիշատակվել է «վերպետականություն» տերմինը 1948թ. Եվրոպական կոնգրեսի

¹⁴⁴ Տե՛ս **Моисеев А. А.** Надгосударственность в международном праве. - «Государство и право», 2007, № 8, էջ 67, **Королев М. А.** Наднациональность с точки зрения международного права. 1997, № 2, էջ 11-17:

բանաձևում, որը նվիրված էր Գերագույն Եվրոպական դատարանի ստեղծմանը, նշված էր. «Մարդու իրավունքների երաշխավորման համար անհրաժեշտ է վերաբնակման մարմին, որն իրականացնի դատական իրավագործություն»¹⁴⁵: Բանաձևի վերլուծությունն ից հետևում է, որ նման միջազգային կազմակերպությունը ստորադասության կարգով պետք է բարձր լինի անդամ-պետություններից:

Վերաբնակմանության մասին հիշատակվող հաջորդ փաստաթուղթը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռ. Շոլմանի 1950 թ. մայիսի 9-ի հռչակագիրն է¹⁴⁶: Նշված հռչակագրում արտահայտված «վերաբնակմանություն» տերմինը հետագայում օգտագործվեց 1951թ. Փարիզի պայմանագրում (Աժուխի և պոլսի Եվրոպական միավորման մասին)¹⁴⁷:

Այնուհետև «վերաբնակմանություն» տերմինը հիշատակվում է 1952 թ. մայիսի 27-ի «Եվրոպական պաշտպանական համայնքի մասին» պայմանագրում¹⁴⁸, Եվրոպական քաղաքական համայնքի պայմանագրի նախագծում¹⁴⁹:

Արդի դարաշրջանի օբյեկտիվ գլոբալ զարգացումները ստիպում են կառավարման ազգային ինստիտուտներին և մարմիններին իրենց մի շարք լիազորությունները փոխանցել վերաբնակման կազմակերպություններին, մասնավորապես՝ տնտեսական ոլորտում¹⁵⁰:

Միջազգային կազմակերպությունների գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ ավանդաբար ներառական իրավասությանը ենթակա մի ամբողջ շարք հարցեր կարգավորվում

¹⁴⁵ Տե՛ս **Cartou L.** Le Marche commun et le droit public. Paris, 1959, էջ 34:

¹⁴⁶ Տե՛ս **Lindeiner-Wildau K.** Von La supranationalite en tant que pnncipe de droit. Leyden, 1970, էջ . 39:

¹⁴⁷ Տե՛ս **Смирнов И.А.** "Общеввропейский дом" и европейское правовое пространство // Московский журнал международного права. 1992. №3; **Bonnetfous E.** L'Europe en face de son destin. Paris, 1955, էջ 165:

¹⁴⁸ Տե՛ս Fact Sheets on the European Parliament and Activities of the European Community. Luxembourg, 1987, էջ 87:

¹⁴⁹ Տե՛ս Fact Sheets on the European Parliament and Activities of the European Community. Luxembourg, 1987, էջ 93:

¹⁵⁰ Տե՛ս **Шибанова Е.Л.** Право международных организаций. М., 1986. էջ 65-71; **Фещенко А.С.** Проблема наднациональности в деятельности международных организаций и международное право. Дисс. ... канд. юрид. наук. М., 1988. էջ 178. **Моисеев А.Л.** Международные финансовые организации. Правовые аспекты деятельности. М., 2003. **Черниченко С. В.** Теория международного права. В 2-х т. Т. 2 М., 1999. էջ 69. **Королев М. А.** Наднациональность с точки зрения международного права // Моск. журнал международного права. 1997. №2. էջ 14:

են միջազգային կազմակերպությունների կողմից¹⁵¹:

Միջազգային հարաբերություններում վերաբնակյալ մարմնի կամ կազմավորման գոյության հիմքը համարվում է «միջազգային կազմակերպությունների շրջանակներում որոշակի մեխանիզմը», որը հնարավորություն է տալիս անդամ-պետությունների համար ընդունել պարտադիր նշանակություն ունեցող կանոններ (սորմեր)¹⁵²:

Անշուշտ, պետություններից վեր կանգնած ինքնիշխան ապարատ գոյություն ունի, սակայն հիմնադրելով միջազգային կազմակերպություն (օրինակ, ՄԱԿ-ը, Եվրոպական Միությունը, ԵԱՀԿ-ն և այլն) պետություններն իրեն ինքնիշխան լիազորությունների մի մասը կամովին փոխանցում են նրան և վերջինս կարգավորում է միջպետական բնույթի հարաբերություններ¹⁵³:

Նման միջազգային կազմակերպությունները ձեռք են բերում դաշնային կամ համակողմանի պետություններին բնորոշ հատկանիշներ՝ վերաբնակյալ սահմանադրություն և հիմնադիր իրավական ակտեր, վերաբնակյալ կառավարման, օրենսդրական և արդարադատության մարմիններ, ընդհանուր քաղաքացիություն և դրամական շրջանառություն և այլն¹⁵⁴:

¹⁵¹ St' u **Eagleton C.** International; Government 3-d.ed New York, 1957, էջ 554:

¹⁵² St' u **Черниченко С.В.** Государство как личность, субъект международного права и носитель суверенитета // Росс, ежегодник международного права. СПб., 1995. էջ 37. **Фещенко А.С.** Явление наднациональности международных организаций // Советский ежегодник международного права. 1987. М., 1988. էջ 159-171, 163; **Смирнов И.А.** Международно-правовые проблемы теории и истории европейского единства. М., 1992. Василенко В. А. Основы теории международного права. Киев, 1988. էջ 173; **Чобан А.А.** Государственный суверенитет (Теоретико-правовой аспект). Дисс. ... канд. юрид. наук. М., 1993. էջ 110-111. Տմ.: **Hey P.** Federalism and Supranational Organizations. Pi-terns for New Legal Structures. London, 1966; Harm/T.C Fea-eralism. Courts and legal System: The Emerging Constitution the European Constitution the European Community// American Journal of International London, Law. 1986. Vol. 34. էջ 229; **Юмашев Ю.М.** Внешнеэкономические связи ЕЭС национальности в международном праве // Сов. гос. и право. 1981. №11. էջ 89-90:

¹⁵³ St' u **Костенко М.Л. Лавренова Н.В.** К вопросу о наднациональности и особенностях права ЕС // Европейская интеграция: правовые проблемы. Кн. первая / Под ред. Топорнина Б.Н., Ковлера А.И., Славина М.М., Крыловой И.С. М., 1992. էջ 48:

¹⁵⁴ St' u **Моне Ж., де Голь Ш., Шуман Р. и др. Monnet J.** A Grand Design for Europe. Luxembourg, 1988, էջ 17-18; **Кривых О.В.** Правовая модель международных организаций универсального характера по решению глобальных проблем. М., 1996. էջ 80. Տմ.: **Hay F.** Federalism and supranational organizations: patterns for new legal structures. London, 1974. էջ 264-297; **Hans E.** The Uniting of Europe. London, 1958. Lindbergy L. The political dynamics of European Economic integration. Stanford. 1963; **Кузнецов В.И.** Проблемы теории и практики международного права в процессах европейской экономической интеграции. М., 1981. էջ 74. **Rosenstil F.** Le Principe de " Supranationalitu". Essai sur les rapports de la politique et du droit. Paris. 1962. էջ 60, 69. **Фещенко А.С.** Явление наднациональности международных организаций //Сов. ежегодник международного права. 1987. М., 1988. էջ 162. Valki L. Sovereignty, Supranationality and Decision-Marking in the Common Market // Questions on Internatioanal Law. Budapest, 1970, էջ 259:

Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ վերաբերյալ միջազգային կազմակերպության գոյության փաստը, վերջին հաշվով, պայմանավորված է միջազգային իրավունքի գլխավոր սուբյեկտների՝ ինքնիշխան պետությունների կամարտահայտությունից; Ոչ միայն նրանց ստեղծման փաստը, այլև լիազորությունների ծավալը, ֆինանսական, կազմակերպական և այլ հարցերը սահմանվում ու հաստատվում են ինքնիշխան պետությունների կամավոր համաձայնությամբ: Այս առումով կարելի է եզրահանգել, որ պետությունների ինքնիշխանության ծավալը ոչ թե նվազում կամ փոքրանում է, այլ պետություններն իրենք են որոշում իրենց ինքնիշխան լիազորությունների իրականացման եղանակները, ձևերը ու մեթոդները: Հետևաբար, պետությունները երբևիցե չեն դադարում ինքնիշխան պետություն լինելուց:

3.3 Պետական ինքնիշխանության և ազգային ինքնիշխանության հարաբերակցության հիմնախնդիրը

Պետականության պատմական գծերից մեկն է ինքնիշխանության և ազգի միջև կապը, կամ, այլ կերպ ասած, ազգային գործունը որպես ինքնիշխան պետության կազմավորման սկզբունք:

Այդ կապն ունի խորին սոցիալ-տնտեսական արմատներ: Այն պայմանավորված է կապիտալիզմի զարգացման և ժամանակակից ազգերի ձևավորման միջև եղած հարաբերակցությամբ: Հայտնի է, որ ազգերի ձևավորումը տեղի է ունեցել ավատատիրության քայքայման և կապիտալիզմի ձևավորման շրջանում լինելով այդ գործընթացի ուղղակի հետևանքը: Ազգային կապերը ծագել են որպես բուրժուական կապեր: Դա, իհարկե, պետք է հասկանալ այն իմաստով, թե մինչև կապիտալիզմի զարգացումը մարդկանց միջև ընդհանրապես չեն եղել այնպիսի կապեր, որոնք պայմանավորված լինեին ընդհանուր ծագման մասին իրական կամ երևակայական պատկերացումներով, խոսակցական բարբառների, մշակության ավանդույթների աջակցությամբ և այլ նմանատիպ հանգամանքներով:

Ավատատիրության դարաշրջանի այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են «Սասնա ճռեր», «Ասք Իգորի ճակատամարտի մասին» կամ «Երգ Ռուանդի մասին» Էպոսները, ստրկատիրական պետության այնպիսի հուշարձան, ինչպիսին է Էսքիլեսի «Պարսիկներ» ողբերգությունը, ակներևաբար հակառակն են ասում: Լեզվի և մշակույթի ազգային ընդհանրությունը դատարկ տեղում չի բուսնել: Ազգային լեզուներն ու մշակույթները ձևավորվել են այն լեզվական ու մշակութային նյութի հիմքի վրա, որը հասարակությունը կուտակել էր նախորդ դարաշրջաններում, և միայն դրա շնորհիվ են նրանք կարողացել համապատասխան տնտեսական պայմաններ ստեղծվելուց հետո կատարել իրենց հասարակական ու պատմական խնդիրը հանդես գալով որպես ազգային համախմբման գործոններ: Էսպերանտոն կամ վոլյայոն կը չէին կարողանա դառնալ ազգային լեզու:

Իր կողմից հաստատվող տնտեսական ընդհանրության շնորհիվ կապիտալիզմը իր հայտնաբերած էթնիկական հարաբերությունները վերափոխում է ազգային կապերի դրանով իսկ նպաստելով ազգերի որպես լեզվի, տարածքի, տնտեսական կյանքի, ինչպես նաև մշակույթի ընդհանրության ձևով արտահայտվող հոգեկան կերտվածքի ընդհանրության վրա խարսխվող, պատմականորեն կազմավորված կայուն մարդկային հանրությունների ձևավորմանը:

Այդ հանրությունները ձգտում էին վերածվելու քաղաքական հանրությունների: Պետությունը ազգերից հին է երկու պատմական ֆորմացիայով: Էթնիկական գործոնը կարող էր դեր խաղալ նաև նախակապիտալիստական ֆորմացիաներում, երբ որոշվում էին պետության սահմանները: Այն հասարակությունը, որում սկզբնապես առաջացել է պետությունը, եղել է տոհմը, կամ ժողովուրդը, որը խոսել է միևնույն լեզվով կամ բարբառով: Սակայն միևնույն լեզվով խոսող և իր էթնիկական ընդհանրությունը գիտակցող ժողովուրդը, կախված պայմաններից, երբեմն ստեղծում էր ոչ թե մի ընդհանուր պետություն (ինչպես Եգիպտոսն էր), այլ մի քանի (ինչպես հին Իսրայելը) կամ բազմաթիվ մեկուսի պետություններ (ինչպես Հին Հունաստանը): Մյուս կողմից գավթումների շնորհիվ ստեղծվում էին պետություններ, որոնք

Ներկայացնում էին ամենատարբեր ցեղերի ու ժողովուրդների խառնակույտ (Ասորեստան, Պարսկաստան):

Եվրոպայում ազգային պետությունների ստեղծման միտումը նկատելի է դառնում արդեն ավատական-դասային միապետությունների շրջանում: Ձևավորվող ազգը հանձինս նրանում տիրապետության հավակնող դասակարգի պահանջում էր պետական ձևերի ու սահմանների հարմարեցում իր զարգացման պահանջմունքներին: Արշակունյաց Յայաստանը 3-4-րդ դարերում ազգային պետություն էր, Մոսկովյան պետությունը ռուսական ազգային պետություն էր 15-րդ դարում: Նույնը կարելի է ասել Անգլիայի և փոքր-ինչ պակաս չափով Ֆրանսիայի մասին: Նման միտումը էլ ավելի մեծ թափով երևան եկավ ավելի ուշ շրջանում բացարձակ միապետության ժամանակներում, երբ այդ միապետությունն իրացրեց ավելի բարձր աստիճանի ազգային միասնությունը, որն այդ շրջանում ներկայացված էր ոչ միայն բուրժուազիայով, այլև արքունիքի շուրջ խմբավորված ազնվականությամբ: Ձևավորվող ազգային լեզուները դուրս են մղում նախկին մեռած գրական լեզուները: 17-րդ դարում Մոսկովյան Ռուսիայում ավագ երեց Ավակումը զգուշացնում էր. «...չխորշեք խոսակցական լեզվից, քանզի սիրում եմ մեր բնական ռուսաց լեզուն»: Եվրոպայի մյուս ծայրում Սերվանտեսը հիշեցնում է, որ «մեծն Յոմերոսը գրել է ոչ լատիներեն, նահույն էր... բոլոր հին բանաստեղծները գրել են միայն այն լեզվով, որը յուրացրել են մոր կաթի հետ... և եթե դա այդպես է, ապա խելացի կլիներ այդ սովորույթը տարածել բոլոր ազգերի վրա, որպեսզի գերմանացի բանաստեղծները իրենց համար ամոթալի չհամարեին իրենց լեզվով գրելը, ինչպես և կաստիփացի և անգամ բասկ բանաստեղծները...»: Գյոթեի Ֆաուստը, միջնադարի հոգևոր կապանքներից ձերբազատվող նոր մարդու այդ կերպարը, զբաղված է հարազատ գերմաներեն լեզվով Սուրբ Գրքի թարգմանությամբ:

Այս լեզվական ու գրական շարժման մեջ նկատվում են մի շարք բնորոշ միտումներ, որոնք այն մերձեցնում են այդ դարաշրջանի քաղաքական շարժմանը: Նրանում ծագում է բոլոր ժողովուրդների (այդ թվում և բասկերի) մայրենի լեզվի, հարազատ մշակույթի

իրավունքի գաղափարը: Շեշտվում է լեզվի ժողովրդայնության, ժողովրդի, խոսակցական լեզվի հետ նրա կապվածության պահանջը: Այդ է ասել մեծն չեխ Յոհան, դեռ 15-րդ դարում, իսկ Լյուդերը պահանջում էր «նայել հասարակ մարդու բերանին», որպեսզի հասկանալ, թե ինչ պես պետք է խոսել գերմաներեն:

Յոհաննիս Կոլարը հոլանդացի ճանապարհորդ էր, որ «ժողովուրդն է իր լեզվի ինքնիշխան տերը, նա է տնօրինում այն, ինչ պես ալոդի, և պարտավոր չէ ճանաչել ու որևէ տիրոջ»:

Սակայն ժողովրդայնության պահանջը զուգակցվում է մեկ այլ պահանջի հետ՝ ազգային միասնության և, հետևաբար, լեզվի միօրինակացման, համազգային լեզվի որպես ազգային համախմբման գործիքի ստեղծման համար ժողովրդական բարբառների օգտագործման պահանջը:

Ազգային լեզվի ստեղծման գործում զգալի դեր է խաղացել պետությունը, որին անհրաժեշտ էր միասնական պաշտոնական լեզու, որը հասկանալի լիներ լայն շրջաններին: Պատահական չէ, որ հենց կայսերական գրասենյակի լեզուն դրվեց կուլթերի կողմից Սուրբ Գրքի գերմաներեն թարգմանության հիմքում, մի թարգմանություն, որը դարձավ ազգային գրական գերմաներենի նորմ: Դեռ 14-րդ դարում Անգլիայի խորհրդարանը որոշում էր ընդունել, որ բոլոր դատաբնությունները պետք է կատարվեն անգլերեն լեզվով, և խորհրդարանում էլ շրջանառության մեջ է դրվում այդ լեզուն: Ֆրանսիայում 1539 թ. Վիլիե Կոտրեի հրամանագրով Ֆրանցիսկ 1-ին ամբողջ Ֆրանսիայի տարածքում դատավարության և վարչարարության համար սահմանեց բացառապես ֆրանսերենի օգտագործումը:

Արևելյան Եվրոպայում բացարձակապետությունն ստեղծում է բազմազգ պետություններ, որովհետև պաշտպանության նպատակով մեծ կենտրոնացված պետությունների ստեղծման պահանջմունքը կապիտալիստական զարգացումից առաջ է անցնում:

Արևմտյան Եվրոպան արդեն բացարձակապետության շրջանում կազմավորում է ազգային պետությունների մի համակարգ Իսպանիա, Պորտուգալիա, Ֆրանսիա, Անգլիա, Յուգոսլավիա: Դրա հետ մեկտեղ Կենտրոնական Եվրոպայում պահպանվում է Գերմանիայի և Իտալիայի

ազգային մասնատվողությունը:

Սակայն Արևմտյան Եվրոպայում էլ կալվածատիրական հողատիրության շահերին ծառայող բացարձակապետությունն անկարող եղավ լուծելու բուն իմաստով ազգային պետությունն ստեղծելու խնդիրը: Դա կարելի է լուսաբանել այնպիսի դասական բացարձակապետական պետության օրինակով, ինչպիսին Ֆրանսիան է: Թեև Ֆրանսիան իր քաղաքական միավորման գործընթացն ավարտին էր հասցրել դեռ 16-րդ դարում, սակայն ընդհուպ մինչև 1789 թ. տարբեր նահազներում պահպանվել էին կառավարման ու իրավունքի որոշ տարբերություններ, անգամ լրիվ ծավալով չէր իրացվել միասնական ազգային լեզվի, ստեղծման խնդիրը: Բնութագրային է այն փաստը, որ ինտենդանտները երբեմն արգելում էին համաֆրանսիական լեզվի դասավանդումը գյուղական դպրոցներում, քանի որ ֆրանսերեն գրել ու կարդալ սովորած գյուղացիները հեռանում էին գյուղերից և տեղափոխվում քաղաք արհեստանոցներում, մանուֆակտուրաներում աշխատելու համար, ինչը վնաս էր պատճառում կալվածատերերին: Ազգային միավորման ավարտման խնդիրը բաժին հասավ ֆրանսիական բուրժուականության հեղափոխությանը, որի լեզվաքաղաքականությունը պետության բուրժուական կենտրոնացման քաղաքականության մի մասն էր: Այստեղ մի առանձնակի հստակություն է հայտնվում, մի կողմից, ազգային լեզվաքաղաքականության ու ազգային պետության պահանջների և, մյուս կողմից, ժողովրդավարության ու ժողովրդական ինքնիշխանության գաղափարների միջև կապը:

Կենտրոնական Եվրոպայում անգամ քաղաքական միավորումը, տեղի ունեցավ արդեն 19-րդ դարի բուրժուական հեղափոխության ընթացքում:

Ազգը մարմնավորվում է պետական ձևերի մեջ, պետությունը դառնում է ազգային, դա է բուրժուական դեմոկրատական պետությունների կազմավորման առանձնահատկություններից մեկը:

Պետությունը ազգային հիմունքներով կառուցելու անհրաժեշտությունն իր արտահայտություն է ստացել 19-րդ դարում և ձևակերպել ու հիմնավորել են Մանչինին, Ռենանը, Գրադովսկին և ուրիշներ: Ազգության սկզբունքը, որին հաճախ հաղորդվում է

ազգերի ինքնորոշման պահանջի բնույթ, իր բովանդակությամբ ու նշանակությամբ կտրուկ կերպով տարբերվում է ազգերի ինքնորոշման իրավունքի հանրաճանաչ սկզբունքից: Ազգության սկզբունքը ձևակերպվում է որպես ցանկացած հանգամանքներում միաազգ պետության նպատակահարմարության վերաբերյալ մի վերացական դոգմ: «Մեկ ժողովուրդ մեկ պետություն» սկզբունքը հռչակվում է հավերժական ճշմարտություն: հատկանշական է, որ Մանչինին ազգության սկզբունքը մեկնաբանում է անձի անօտարելի և անկապտելի իրավունքների մասին բնաիրավական ուսմունքի նմանությամբ ազգությունը դիտելով որպես մի յուրատիպ անձնավորություն: Ազգության սկզբունքը ազգի հավերժական, անօտարելի և անկապտելի իրավունքն է:

Բուրժուաժողովրդավարական հեղափոխությունների շրջանում ազգության սկզբունքն ուղղված էր ընդդեմ պետական սահմանների, որոնք բացարձակապետության կողմից հաստատվել էին համաձայն օրինականության սկզբունքների (ավատադինաստիական շահերի արտահայտում) կամ հավասարակշռության սկզբունքի (այսպես կոչված պետական շահի արտահայտում) և այլն: Դա ավատաբացարձակապետական պետականությունը բուրժուականի փոխակերպվելու, ավատատիրական պետությունից բուրժուականի անցնելու գործընթացի բաղադրյալ գործոնն էր ժողովրդական ինքնիշխանության սկզբունքի հետ հարաբերակցվելով որպես նրանից ուղղակի արտածում: Այդ սկզբունքը նույնպիսի նշանակություն է ունեցել նաև 19-րդ դարի սկզբից մինչև 20-րդ դարի սկիզբը Կենտրոնական Եվրոպայում տեղի ունեցած բուրժուական պատերազմների ու հեղափոխությունների շրջանում, թուրքիայի լծից ազատվելու համար բալկանյան ժողովուրդների վարած պատերազմների ու շարժումների շրջանում, ինչպես նաև «Ասիայի գարթոնքը» նշանավորող արևելյան հեղափոխություններում, որոնք տեղի էին ունենում 20-րդ դարի սկզբում:

Արդի դարաշրջանում ազգության սկզբունքը, որը ձևակերպված է որպես ազգային-ազատագրական շարժումների կողմից առաջ քաշվող ազգային ինքնորոշման սկզբունք, օբյեկտիվորեն ուղղված

Է իմպերիալ իստական բազմազգ պետության դեմ, որին հակադրում է ազգային պետությունների ստեղծման պահանջը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում «նոր կարգերի» ու «եվրոպական» տարածության հիտլերյան գաղափարախոսները, որոնց գլխավորում էր Յիտլերն ինքը, պնդում էին, թե «փոքր պետությունների դարն արդեն անցել է»: հիտլերյան «տեսաբան» Շայները գրել է. «Գերմանական տեսությունը վերջին տարիներին ելնում էր հիմնականում ազգային պետության հայեցակարգից, մի պետություն, որը հիմնվում է ազգային սկզբունքի վրա, որի սահմանները համընկնում են ազգային սահմանների հետ: Սակայն այն պահանջը, որ յուրաքանչյուր ժողովուրդ ունենա իր անկախ պետությունը, արդեն չի համապատասխանում եվրոպական տարածությունը համախմբելով մի խոշոր տարածական կազմավորման վերածելու անհրաժեշտությանը, մի այնպիսի կազմավորման, որտեղ առաջատար ազգերին պետք է պատկանա այլ տեղ, քան այդ տարածական կարգում ներառված փոքր ժողովուրդներին: Եկել է այն պահը, երբ պետք է կրկին մեծացվի պետական ձևի ինքնուրույն նշանակությունը առաջատար ազգի ազգային միջուկի սահմաններից դուրս եկող իշխանության համալիրի կառուցման համար»¹⁵⁵: Յատկանշական է, որ հենց այդ ժամանակ ավստրիական սոցիալ-ժողովրդավար Պուլակը, գտնվելով վտարանդիության մեջ, գրել է. «փոքր պետությունների ժամանակներն անցել են, քանի որ նրանց տնտեսական անկախությունը բացարձակապես անհնար է դարձել, և նրանց քաղաքական ինքնիշխանության վերականգնումը կնշանակեր պատմության մեջ մեկ քայլ հետկատարել»¹⁵⁶:

Որոշ գաղափարախոսներ ապացուցում էին, թե ազգային պետությունները դատապարտված են արդեն իսկ այն տնտեսական օրենքի հատնանքով, որով կանխորոշվում է մեծ ձեռնարկության հետփոքր ձեռնարկության մրցակցության անհնարինությունը:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայում ու Ասիայում ստեղծվեցին նոր ազգային պետություններ: Դա ազգային ազատագրման այն ուղու մի փուլն էր, որն անցան սլավոնական ժողովուրդները գերմանական լծից, արաբ ժողովուրդը թուրքիայի

¹⁵⁵ Տե՛ս Zeitschrift für die gesammte Staatswissenschaft, 1941. B. 101. H. 2, էջ . 264:

¹⁵⁶ Տե՛ս Новое время. 1947. N 42. էջ 8:

լծից ազատվելու համար և այլն: Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքը եղավ ազգային սկզբունքի կենսունակության նոր հզոր հաստատումը, որն արտահայտվեց հիտլերյան Գերմանիայի, ճապոնական իմպերիալիզմի և իտալական ֆաշիզմի կողմից ստրկացված ժողովուրդների (Ալբանիա, Յաբիստան) անկախության վերականգնման, ազգային լեհական պետության ստեղծման, ազգային սկզբունքին Ուկրաինայի և Բելոռուսիայի արեմոյան սահմանների համապատասխանեցման, պետությունների ազգային կազմի ավելի մեծ համասեռության ապահովման նպատակով ձեռնարկված մի շարք միջոցառումների իրականացման և այլ ձևերով: Պատերազմից հետո հզոր ազգային-ազատագրական շարժում ծավալվեց գաղութային երկրներում: Այդ շարժումը, հանգեցրեց ազգային պետականության հիմքերի ստեղծմանը Ինդոնեզիայում, Յնդկաչինում, Յնդկաստանում, Բիրմայում, Ֆիլիպիններում, Պաղեստինում, ազգային անկախության տարրերի աճմանը Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում: ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն ինամակալության վարչակարգը որպես իր վերջնական նպատակներից մեկը նախատեսում է ինամակալ պետությունների անկախությունը:

Դարեր շարունակ ընդհուպ մինչե ներկայիս օրերը, ազգային շարժումները, որոնք ընդհանում էին հանուն ինքնորոշման մղվող պայքարի կարգախոսով, առաջադիմական դեր էին խաղում սկզբում ավատատիրական բացարձակապետության դեմ մղված պայքարում, ապա իմպերիալիզմի ինչպես ավագակաբարո գերմանական ծավալապաշտության, այնպես էլ հետպատերազմյան շրջանում հետադիմության ու ծավալապաշտության դեմ: Այդ պայքարն իր արտահայտությունն էր ստանում ինքնիշխանության սկզբունքի հետադադրական շարժումների սերտկապի միջոցով:

Ազգության սկզբունքի երևան գալու հետ ինքնիշխանությունը ձեռք է բերում ևս մեկ գործոն ազգայինը: Դասակարգի տիրապետությունն արտահայտվում է ոչ միայն պետական ինքնիշխանության, ձևական «ժողովրդական ինքնիշխանության», այլ և ազգային ինքնիշխանության ձևով:

Պետության լիիշխանությունը, անկախությունը,

միասնականությունը, ժողովրդական ներկայացուցչության հաստատությունները, այդ ամենը արտահայտում են նաև ազգային ընդհանրությունը, ազգային զարգացման և քաղաքական ինքնիշխանությունը կրող դասակարգի հովանու ներքո տեղի ունեցող ազգային համախմբման շահերը:

Այժմ ինքնիշխանության միջոցով իրենց իրավաբանական արտահայտումն ու իրավական պաշտպանությունն են ստանում ազգը, ազգային զարգացման ազատությունը, ազգային անկախությունը:

Ազգային գործունը որոշակի դեր է խաղացել նաև բացարձակապետական ինքնիշխանության ձևավորման գործում, բացարձակ միապետությունը լուծեց մեծ ազգերի քաղաքական միավորման ու նրանց անկախության հաստատման խնդիրը: Սակայն այդ ինքնիշխանության իրավաբանական ձևը բավականին անհամապատասխան կերպով էր արտահայտում ազգային գործունը, և հաճախ նույնիսկ նրանց միջև ծագում էին սուր հակասություններ, դինաստիական շահը հետին պլան էր մղում ազգային շահը:

Արդյունաբերական կապիտալիզմի դարաշրջանի բուրժուական պետություններին կողմից ստեղծված նոր իրավաբանական ձևերը, արտահայտելով բուրժուական ազգային դասակարգային տիրապետությունը, միևնույն ժամանակ նաև ավելի համապատասխան ձևով էին արտահայտում ազգային գործունը: Այդ շրջանում բուրժուական պետությունը կազմավորվել էր որպես ոչ թե դինաստիական, այլ ազգային պետություն: Ինքնիշխանության սկզբունքն ավելի խոր ու ավելի հաստատուն հիմք էր ստանում հանձին ազգի որպես բուրժուական հասարակության համար ավելի օրինաչափ ձևի հանրության, որը համապատասխանում էր հասարակության զարգացման ու պատմական առաջընթացի շահերին: Եթե բացարձակապետության պայմաններում ինքնիշխանության սկզբունքն ուղղված էր կայսեր, պապի և խոշոր ավատատերերի հավակնություններին դեմ, ապա նրան փոխարինման եկած բուրժուական հասարակության պայմաններում ինքնիշխանության որպես ազգի ինքնիշխանության սկզբունքն ստանում է նոր ուղղվածություն: Բուրժուական հեղափոխությունների ու պատերազմների ժամանակաշրջանում այն առաջ էր քաշվում ընդդեմ

ավատաբաց արձակապետական դինաստիական պետության, որը հավերժացրել էր, մի կողմից, ազգերի մասնատումը (Գերմանիա, Իտալիա) և, մյուս կողմից, բազմացեղ պետական կազմավորումները (Ավստրո-Յուգոսլավիա): Իմպերիալ իզմի դարաշրջանում այդ սկզբունքն ուղղված էր իմպերիալիստական բազմազգ պետությունների, գաղութային ճնշման համակարգի դեմ և միավորվում էր ժողովրդավարության ու առաջադիմության համաշխարհային ուժերի հետ: Ազգային գործոնը նոր կենսական ուժ էր տալիս ինքնիշխանության սկզբունքին այն կապելով նոր ժամանակի կարևորագույն ու առաջադիմական միտումներից մեկի ժողովուրդների ազգային ինքնորոշման միտման հետ:

Իսկ ինչպե՞ս են հարաբերակցվում ազգի ինքնորոշման իրավունքը և ինքնիշխանությունը: Սխալ կլիներ պարզապես նույնացնել այդ հասկացությունները: Ինքնիշխանությունը պետության իրավաբանորեն իրացված անկախությունն է, իսկ ինքնորոշման իրավունքը կարելի է պատկերացնել նաև որպես ո՛չ իրավաբանորեն, ո՛չ էլ փաստացի ձևով դեռ չիրացված իրավունք:

Ինքնորոշման իրավունքը ծագել է որպես իրավաբանական իմաստով «իրավունք», միջազգային իրավունքում այն դարձել է ազգերի՝ որպես իրավաբանական իմաստով համընդհանուր ճանաչում ստացած սուբյեկտիվ իրավունք: Արդի միջազգային իրավունքն ընդունում է, որ արդեն գոյություն ունեցող պետությունն ունի ինքնորոշման իրավունք, և այդ իմաստով (քանի որ խոսքը վերաբերում է ազգային պետության իրավունքին) այն իրոք համընկնում է ինքնիշխանության հետ, քանի որ այս դեպքում ինքնորոշման իրավունքն արդեն իրացված է: Գործող միջազգային իրավունքը ընդունում է, որ կարող է իր պետությունը կազմավորել ու իրավաբանական իրավունք ունենալ այնպիսի ժողովուրդ, որը չունի պետություն:

Իսկ ո՞րն է ազգի ինքնորոշման իրավունքի էությունը: Այն բավականաչափ բարդ է: Նախ. դա բարոյաբաղաբանական պահանջ է, այսինքն ժամանակակից հասարակության կյանքի ու զարգացման օբյեկտիվ պայմաններով պայմանավորված նորմ: Այդ պահանջն արտացոլում է որոշակի պատմական փաստը, այն է առանձնահատուկ,

կայ ուն մարդկային հանրությունների ամուր տնտեսական, տարածքային, լեզվական ու մշակութահոգեբանական կապերով բնութագրվող ազգային ընդհանրությունների ձևավորման ռեալ փաստը: Մարդկային հասարակության զարգացման պահանջմունքների բերումով այդ հանրությունները պետք է դառնան քաղաքական հանրույթներ: Այդ ազգային հանրության ներսում ձևավորվում է նրա անդամների հզոր կոլեկտիվ կամքը ուղղված ինքնուրույն քաղաքական հանրույթի կամ, ընդհանուր ձևով ասած, այն բանին, որ իրենց պետական պատկանելության հարցը իրենք լուծեն: Այդ կամքն արմատավորված է ազգային հանրության բուն էության մեջ: Ազգային ընդհանրությունը ներառում է հասարակական կյանքի կարևորագույն կողմերը տնտեսությունը, մշակույթը, լեզուն, աշխարհագրական միջավայրը: Դա նշանակում է, որ էական հասարակական և անձնական արժեքներն ու բարիքները մայրենի լեզուն, հայրենի մշակույթը, տնտեսական կապերը, միջավայրը, անգամ հարազատ բնական պատկերները, ունեն ազգային երանգավորում: Ամեն մի ազգ, միևնույնն է մեծ թե փոքր, ունի իր որակական առանձնահատկությունները, իր յուրահատկությունը, որը պատկանում է միայն իրեն, և որը չունի ոչ մի այլ ազգ: Այդ առանձնահատկությունները այն ներդրումն են, որը յուրաքանչյուր ազգ կատարում է համաշխարհային մշակույթի ընդհանուր գանձարանի մեջ և լրացնում, հարստացնում է այն:

Ազգերի ինքնորոշման իրավունքը ներառում է ոչ միայն անջատվելու և ինքնուրույն ինքնիշխան պետություն ստեղծելու իրավունքը, այլև ընդհանուր համաձայնությունամբ այլ ազգությունների հետմիավորվելու իրավունքը:

Մեր դարաշրջանի բարոյաքաղաքական նորմերի ընդհանուր համակարգի շրջանակներում ինքնորոշման իրավունքը այն բարոյաքաղաքական պահանջն է, որ յուրաքանչյուր ազգի տրվի ռեալ հնարավորություն ինքնուրույն լուծելու իր ճակատագրի, իր անկախ պետությունն ստեղծելու կամ չստեղծելու հարցը: Դա պետական ինքնիշխանության նկատմամբ ազգի բարոյաքաղաքական իրավունքն է: Նման պահանջն իր մեջ կրում է նաև գոյություն ունեցող պետությունների գնահատականը: Միայն այն բազմազգ

պետությունն է համապատասխանում ներկայիս բարայոքադաբական նորմերին, որը հիմնված է ոչ թե իր սահմաններում այն ազգերի բռնի պահման վրա, որոնք ձգտում են առանձնանալ ու և ստեղծել ու ինքնուրույն պետություններ, այլ ժողովուրդների կամավոր միավորման վրա: Այլ կերպ ասած ինքնորոշման իրավունքի սկզբունքը պետք է դրված լինի ոչ միայն ազգային, այլ և բազմազգ պետությունների հիմքում: Այդ պահանջն ուղղված է ինչպես պետական, այնպես էլ միջազգային իրավունքին: Այն նշանակում է, որ պետությունն իր ներքին իրավունքում պետք է ճանաչի իր ազգային մասերի իրավունքն անջատվելու և կազմելու ինքնիշխան պետություններ: Այն միջազգային իրավունքից պահանջում է ճանաչել այն նոր պետությունները, որոնք ստեղծվում են որպես ազգի կողմից իր ինքնորոշման իրավունքի իրականացման հետևանք, և պետք է որպես ագրեսիա ճանաչի այն ուղղակի գործողությունները, որոնց նպատակն է ճնշել իրենց փաստացի պետական իշխանությունն ստեղծած ազգերի ինքնորոշման ձգտումը:

